

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

**ՊԱՅՔԱՐ  
ՀԱՆՈՒՆ  
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ**

Հատոր Ա

ԵՐԵՎԱՆ 2003

947.925 2015 00

V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ՊԱՅՔԱՐ  
ՀԱՆՈՒՆ  
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

Ա. ՀԱՏՈՐ

A 88707



ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԳ 941(479.25)

ԳՄԳ 63.3(2Հ)

Փ 311

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:*

**Փափազյան Ավետիս.**

Փ 311 **Գայլար Ջանուն արդարության (Ա. Ջալալ):**

Եր., Ջանգալ-97, 2003, 288 էջ:

*Գիրքը քննադատում է հայկական հարցի և հայոց ցեղասպանության վերաբերյալ հեղինակի 1994-2002 թթ. Նոս Անջելեսի հայկական մամուլում լույս տեսած հոդվածներ, գրախոսություններ, թուրքերենից թարգմանություններ, զննուցումներ, և ժամանակագրություններ, որոնք նոր լույս են սփռում Արդուլ Համիդյան բռնատիրության և նրիտրուրների կառավարության կողմից դատապարտված կազմակերպված արևմտահայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածների մասին:*

*Ջալալի տեղ է հատկացված թուրք պատմագրության կողմից հայոց ցեղասպանության պատմության խնդրաքննությունների քննադատություններ:*

*Նախատեսված է մասնագետների և ընթերցողների լայն շրջանների համար:*

Փ 0503020913 2003 թ.  
0003(01) 2003

ԳՄԳ 63.3(2Հ)

ISBN 99930-2-750-2

© «Ջանգալ-97», 2003 թ.

© Փափազյան Ա., 2003 թ.

Այս գրքի հովանավորութիւնը ստանձնեցին՝

**ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՓԻԵՌ ԵՎ ԱՍՊԵՏՈՒՀԻ  
ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԸ**

Իրենց քրոջ ամուսնու՝  
**ԵՂԻԱ ՀԱԼԵԲՅԱՆԻ**  
անմար հիշատակին:

Հեղինակը հայտնում է իր խորին  
չնորհակալութիւնը  
հարգարժան մեկենասներին



Եղիա Հալեքյանը ծնվել է 1927 թ. Սիրիայի Հալեք քաղաքում, Մեծ Եղեռնի արհավիրքներից փրկված մի աղքատ, բայց հայկականությամբ լցված համեստ և աշխատասեր ընտանիքում:

Չնայած ուսման հանդեպ իր ունեցած մեծ փափագին, ընտանեկան ծանր պայմանները թույլ չեն տվել շարունակելու այն և փոքր հասակից Եղիան լծվում է ոսկերչական արհեստին, իսկ այնուհետև մասնագիտանում նրկաթագործության մեջ:

Մակասագրական քերումով չի իրականանում Եղիա Հալեքյանի հայրենիք ներգաղթելու երազանքը և բախտի քմահաճույքով, ավելի ճիշտ աշխատանքային ավելի լավ պայմաններ ստեղծելու միտումով, հաճախակի փոխադրվում է արաբական մի նրկրից մյուսը, այդ թվում՝ Լորդանան, Սաուդյան Արաբիա և Լիբանան: Բայց ի վերջո Լիբանանի քաղաքական ծանր իրավիճակը ստիպում է նրան վերջնականապես տեղափոխվելու Լոս Անջելես:

Վախճանվել է 2001 թ. մարտի 2-ին:



**ԵՂԻԱ ՀԱԼԵԲՅԱՆ**

## ԱՌԱՋԱԲԱՆ

Լրացավ Հայոց Մեծ Նդեռնի 88-ամյա տարելիցը:

Այո՛, 88 մղձավանջային տարիներ անցան այդ ահավոր եղեռնային օրերից, երբ երիտթուրքների կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության հետևանքով, արևմտահայությունը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջև:

1914-1918 թթ. Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում երիտթուրքական «Իթթիհատ Վեթերալի» («Միություն և Առաջադիմություն») կուսակցության կողմից դաժանորեն ծրագրված և կազմակերպված զանգվածային ջարդերին զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայեր:

Դժբախտաբար անցել են 88 երկարածիգ տարիներ, բայց դեռևս միջազգային չափանիշով չի մամայված և դատապարտված մարդկության դեմ ուղղված այդ ծանրագույն հանցագործությունը:

Անցած տարիների ընթացքում, թուրք պատմագրությունը չարամտորեն աղավաղել և նենգափոխել է իրականությունը, և այսօր էլ շարունակում է նույնը կատարվել թե՛ պատմաբանների և թե՛ պետական գործիչների կողմից: Այսպես.

Ֆրանսիայի Հանրապետության Խորհրդարանը հայոց ցեղասպանության փաստը ընդունելուց հետո

(Հունվար 18, 2001 թ.) Թուրքիան աշխուժացրեց իր անհիմն էարողչությունները այն ուրանալու ասպարեզում և սկսեց էլ ավելի «զոռոծնական» էալիեր կատարել հայոց ցեղասպանությունը ժխտելու ուղղությամբ:

Առաջին հերթին, Թուրքիայի Խորհրդարանին առընթեր ստեղծվեց գիտական մի խորհուրդ, իսկ Անկարայի, Ստամբուլի և էրզրումի մեջ հիմնվեցին հայկական հարցի ուսումնասիրության կենտրոններ:

«Հայկական հետազոտությունների» այդ հիմնարկներում ընդգրկվեցին բուրբ պատմաբաններ, պաշտոնաթող դիվանագետներ և այլ մասնագետներ, որոնք զբաղվելու էին իրեն թե հայկական հարցին վերաբերող նշմարտությունը համաշխարհային համրությանը իրագեկ դարձնելու համար:

Հակահայ էարողչական հիմնարկություններ ըստեղծվեցին ման 2002 թվականին: Այսպես, մայիսի վերջերին, Թուրքիայի Ապահովության Խորհրդի մախաճեռնության ստեղծվեց «Հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարելու հանձնաժողով»: Այս հանձնաժողովի առաջին միջոցառումը եղավ այն, որ 2002-2003 թթ. հրատարակվող դասագրքերի մեջ զետեղվեն հայկական պնդումները հերժող տեղեկություններ: Հետագա միստերի ընթացում որոշվեց կառուցել հատուկ թանգարան, ուր ցուցադրվելու են օսմանյան արխիվների փաստաթղթերը, որպեսզի ջրեն «այսպես կոչված հայոց ցաղասպանության պնդումները»:

2002 թ. օգոստոս ամսվա սկզբներին, Թուրքիայի Վանի մահանգում ստեղծվեց «Առաջին համաշխարհային պատերազմի ընթացում հայկական ջոկատների ջարդերին ենթարկվածների միություն» կազմակերպությունը: Այս կառույցի ստեղծման նպա-

տակը նույնպես «Հայոց ցեղասպանության վերաբերող անհիմն պնդումներին դեմ պայքարելն էր»:

Այս միջոցառումներին զուգընթաց սկսեցին լույս տեսնել նաև հակահայրովամղականությանը գրքեր, որոնք նույնությանը կրկնում են թուրքական պատմագրության 88 տարիների ընթացքում արտահայտած սխալ և անհիմն տեսակետները:

Մի խոսքով, Թուրքիան տեսապես պայքար է մղում ֆոդարկելու այդ ողբերգական դեպքերը, աղավաղելու պատմական հշմարտությունը և ընդհանրապես հերքելու հայերի ցեղասպանությունը ամբողջ Օսմանյան կայսրությունում:

Թուրքական այս կեղծիքների և ուրացումների մասին մեր նկատառումները հետևյալն են.

— Առաջին, հայերի կոտորածը ո՛չ մահմեդական մոլեռանդության բռնկում էր և ո՛չ էլ միջցեղային թշնամության դրսևորում, այն կամխամտածված պետական ֆաղափականություն էր, որն իրականացրին Միություն և Առաջադիմություն» կուսակցության ղեկավարները:

Երկրորդ, խնդաթյուրելով իրականությունը թուրք պատմաբանները անտեսում են շատ կարևոր մի փաստարկ, որ հայությունը տեղահամվեց այնպիսի շրջաններից, գյուղերից և ֆաղափներից, որոնք շատ հեռու էին գտնվում նականատամերձ գոտուց:

Երրորդ, իրականում արևմտահայության ինքնապաշտպանությունը այս շրջանում ոչ թե ապստամբություն էր, այլ գոյության կռիվ: Հայերը գեներալի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորվելու վրտանգի առաջ: Տվյալ ժամանակ, յուրաքանչյուր հայի հիշողության մեջ թարմ էին, ոչ միայն արդուլիսամիդյան շրջանի Սասունի սարսափելի ջարդերը, այլև 1909 թվականի Ադանայի հայության կոտորածները:

Չորրորդ, թուրք պատմաբանները մոռացութեան են տալիս, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին կառավարութեանը զորակոչի ենթարկեց հայ երիտասարդներին թուրքական բանակում ծառայելու համար: Փաստերը վկայում են, որ հենց սկզբից հայ զինվորներին զինաքափեցին և ուղարկեցին տաժանակիր աշխատանքի և այնուհետև ենթարկեցին զանգվածային սպանութեան:

Հինգերորդ, զարմամալի է, որ թուրք պատմաբանները նույնիսկ անտեսում են իրենց նախորդների սվյալներն ու գնահատականները հայերի կոտորածի մասին: Թուրքական աղբյուրների շարքում հայերի ցեղասպանության վերաբերյալ կարևոր փաստագրական նյութեր կան հատկապես երիտթուրքների 1918-1920 թթ. կ. Պոլսում տեղի ունեցած դատավարության արձանագրություններում, որոնք լիովին հավաստի են և անվիճելի: Այս դատավարության նյութերը առ այսօր գաղտնի են պահված թուրք հասարակութունից: Ինչո՞ւ, որովհետև այնտեղ փաստարկներով ցույց է տրված իրականությունը: Դատավարության ընթացքում, արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցները՝ ծածկագիր հեռագրերը, մամակները, հրամանները, ինչպես նաև ականատեսի վկայությունները լիովին բացահայտում են, որ կոտորածները կանխամտածված բնույթ են ունեցել, կազմակերպվել են կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից և անմիջականորեն իրականացվել «Հատուկ կազմակերպության» (Թեշվիլաթ-ը Մահաուսե) բանտերից ազատած արյունարբու հրոսակներու կողմից:

Վեցերորդ, Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի տարածքում պատմական հնություն ունեցող հուշարձանները տարեց-

տարի ֆանդովում են և անհետանում: Թուրք պատմա-  
բաններն ու պետական գործիչները պետք է լավ իմա-  
նան, որ պատմա-մշակութային արժեքների ոչնչա-  
ցումն էլ ցեղասպանություն է համարվում:

Յոթերորդ, միջազգային օրենքների համա-  
ծայն, ցեղասպանության հետևանքով նվաճված հողա-  
տարածքները չեն կարող որևէ երկրի օրինական մա-  
սը կազմել: Այդպիսի հողատարածքը պատկանում է  
այդ հողի վրա հազարամյակներից իվեր գոյատևած  
բնիկ ժողովրդին: Տվյալ դեպքում՝ հայ ժողովրդին:

Եզրակացնելով նշեմք, որ 88 երկարածից տա-  
րիներ անցան 20-րդ դարի սկզբին երիտթուրքերի  
կառավարության պարագլուխների կողմից մտահը-  
ղացված և գործադրված այդ ահավոր արարքից, բայց  
պայժարը շարունակվում է:

Հայ ժողովուրդը տևապես պայժարել է և պայ-  
ժարելու է, որպեսզի միջազգային չափանիշով պաշ-  
տոնապես մանաչվի և դատապարտվի հայերի ցեղա-  
սպանությունը և արդար հատուցում ստանա նրա հո-  
ղային, արյան և նյութական պահանջատիրությունը:

Գիրքը նվիրվում է Մեծ Եղեռնի 88-րդ տարե-  
լիցին:

**Ա. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅ ԵՎ ՕՏԱՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ  
ԵՐԿԵՐՈՒՄ**

**ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆԸ  
ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՄԵԾ ՀԱՅԱՍԵՐ՝  
ԻԼՋԵ ՖՐԱՊԱՆԻ ՄԱՍԻՆ**

*Թերթում եմ 1908-1909 թվականների «Ազդակ» շաբաթաթերթի առաջին տարվա հրատարակության հավաքածուն և թիվ երկուսում ուշադրությունս է գրավում արդուիհամիդյան շրջանի արևմտահայության հալածամեթոդների հետ առնչվող մի հոդված, որը պատկանում է դարասկզբի գերմանուհի գրող և հասարակական գործիչ՝ Իլզե Ֆրապանի գրչին: Նշեմ, որ այն առաջարկում է հրատարակել է Ռուբեն Զարդարյանը, որոշ տեղեկություններ տալով գերմանուհի այդ մեծ հայասերի մասին: Ի միջի այլոց հայ ամվանի հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը (1874-1915), նույնպես զոհ գնաց Մեծ Եղեռնի ընթացքում, ախորի նանապարհին:*

*Այնուհանդերձ ուզում եմ գիտելիքներս ավելի խորացնել և ավելի իմանալ Իլզե Ֆրապանի կենսագրության և նրա գիտա-հասարակական գործունեության մասին: Շտապ բացում եմ հայերեն հանրագի-*



տարանը, սակայն ոչ մի բան չեմ գտնում այնտեղ  
մրա մասին: Ուստի նպատակահարմար եմ գտնում  
որոշ կրճատումներով ընթերցողին ներկայացնել Ռու-  
բեն Զարդարյանի գնահատամէի խոսքը Իլգն Ֆրա-  
պանի մասին և այնուհետև բերել հոդվածը մույնու-  
թյամբ:

\* \* \*

...Ուրկէ՛ ուր մայրական գորովը զէպի մեզ այս  
կին գրողին, որ արդէն գերման գրականութեան կրցած է  
տալ մօտաւորապէս երեսուն հատորի չափ արուեստի ու  
գեղեցկութեան գործեր, — նորավէպ, վէպ, թատերգու-  
թիւն:

Իլգն Ֆրապան չէր կարող չի սքանչանալ փոքրաթիւ  
ժողովուրդի մը աւելի փոքրաթիւ այն անձնուէրներու  
վրայ՝ որ կ'երթային հսկայական ուժի մը դէմ, համաձայն,  
հայաջինջ ու սասանեցնող բռնակալութեան մը աչքերուն  
մէջ նայելով անվարօրէն, կ'երթային մահուան՝ գիտակից  
անձնուրացութեամբ, կեանքի ստոյիկեան արհամարհան-  
քով, լիայոյս, լիահաւատ:

Ժողովուրդ մը՝ որ իր մէջ շտեմարանած ունէր գա-  
ղափարի ու մեծութեան այսքան բարոյական գորութիւն,  
ժողովուրդ մը՝ որ ընդունակ էր իր արիւնջովը ողողելու  
ամբողջ պետութիւն մը՝ Ազրիանապոլիսէն մինչեւ Սա-  
սուն, Վանէն մինչեւ Զմիւռնիա, պիտի ապրէր եւ պէ՛տք  
էր որ ապրէր:

Ահա «Հայոց Հարցը» գրքոյկը՝ զոր տիկին Իլգն  
Ֆրապան կը գրէ յուզումով, ցասումով եւ բողոքի շուն-  
չով եւ որ իր ատենին արձագանգ կը գտնէ ամբողջ եւ-  
րոպական մամուլին մէջ:

Ահա երկրորդը՝ «Հայոց Հարցը եւ Ծարիզմը», երկու  
հակառակորդներ պատմական բեմին վրայ, մէկը գոհը|

միւսը դահին, առաջինը գէպի լոյսը ձգտող, երկրորդը գոհ այն խաւարէն՝ որով կը խեղդէ այդ լոյսը ինչպէս իր երկրին անսահման տափաստաններուն վրայ, նոյնպէս սահմանէն ասդին՝ հայկական լեռնաշղթաներուն մէջ:

Իլզէ Ֆրապան՝ շրուականանալով հայ կեանքէն հիւսած իր վէպիկներով ու բազմաթիւ յօդուածներովը, չբաւականանալով իր գրչին հմայիչ կարողութեամբը՝ որ իր ազդեցութեան տակ պահած է միշտ գերման ընթերցող հասարակութեան ամէնէն էլիք գասակարգը, ուզած է, աւելի ընդարձակօրէն, աւելի գործնական ու անմիջական եղանակով մը ծառայելու համար Հայոց այդ հարցին՝ վազել մէկ քաղաքէն միւսը՝ բանախօսելու, բացատրելու, լուսարանելու համար հեռաւոր Հայաստանի մէջ թաւալող մեծ ողբերգութեան դիւցազնական շարժառիթներն ու նիւթը: Իրբեւ բանախօս՝ իր արի եւ ազնիւ ձայնը հնչած է ժընեւի, Պեռնի, Յիւրիիսի, Համպուրկի — իր ծննդավայրին —, Եէնայի եւ Լայքցիկի ամպրոններէն՝ ի նպաստ հայ ժողովուրդին, ի նպաստ անոր ազատութեան եւ իրաւունքներուն:

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

## ԻԼԶԷ ՖՐԱՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

(ՆԱՄԱԿ «ԴՐՕՕԱԿՅԻՆ»)

Երբ որ ննչուածն այս տեղ՝ աշխարհում  
Դատ ու իրաւունք բնաւ չի գտնում,  
Երբոր բռնութեան լուծը գարշելի  
Դառնում ստրկիմ անհանդուրժելի,  
Նա իր ձեռքերը երկիմք է մեկնում,  
Եւ վստահօրէն այնտեղից իլում  
Իր իրաւունքներն յաւիտեմական,

Որո՞նք երկնքի աստղերի նման  
 Անշարժ, անվախճան ամհունին փարած՝  
 Մնում են այնտեղ յաւիտեան կայտուած.  
 Բնութեան նախնի վիճակն է հասնում,  
 Երբ մարդը մարդիմ ոսոխ է դառնում:  
 Երբ էլ ճար չունենէ, սրիմ ենք դիմում,  
 Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում  
 Ընդդէմ մեզ նմշող ամարգ բռնութեան,  
 Պաշտպանում ենք մեր կիմ ու երեխան:

(ԾԻԼԼԵՅ, «ՏԷԼ»)

**Մեծարգոյ Պարոններ,**

Քնած թէ արթուն ժամանակ հալածում է ինձ դըժ-  
 բախտ, բռնաբարուած, եւրոպական քրիստոնեայ ազգերից  
 անարգօրէն ու դաւաճանօրէն լքուած Հայաստանի արիւ-  
 նտ ուրուականը: Հայերի կրած տառապանքները արտա-  
 յայտում են ընդվզումի մի աղաղակով, օգնութեան ու  
 վրէժխնդրութեան մի միայնակ կոչումով եւ իմ բանա-  
 կանութիւնը չի ուզում հասկանալ, իմ սիրտը չի ուզում  
 հաւատալ, որ այդ դարհուրելի աղաղակը ոչ մի արձա-  
 դանդ չի գտնում իմ հայրենիքում, որ Գերմանիան այսօր  
 հանդիսանում է սպառ, անկենդան մի ազատած, որից չի  
 կարելի ակնկալել ոչ մի կարեկցութիւն դէպի տանջուող-  
 ները, ոչ մի հասկացողութիւն յուսահատ մաքառողների  
 համար, ոչ մի ոգևորութիւն դիւցազնաբար նահատա-  
 կուողների դիմաց: Օգնութեան մասին խօսք անգամ չի  
 կարող լինել:

Այո՛, այսօրուան Գերմանիան տխուր մի աշխարհ է:  
 Վիլհելմ Բ.ի բարեկամութիւնը թուրք բռնապետութեան  
 հետ դառն պտուղներ է բերում մեզ: Մի ոճրագործ ան-  
 տարբերութիւն, մի թուլասիրտ անզաղափարականութիւն  
 է մտել մեր մէջ: Եւ սակայն երբեմն մեր ժողովուրդը  
 սողորուած էր մարդկային ազատագրութեան մեծ գաղա-

փարներով եւ գերմանացի մի բանաստեղծ էր այն, որ ազատութեան վսեմ երգը Հնչեցրեց, եւ որ բոցաշունչ խօսքերով երգեց «Լիլհելմ Տէլ»ը՝ վաւերական բոլոր ազգերի եւ բոլոր ժամանակների համար:

Հարկ կայ՝ մտաբերելու այսօր, որ մեր ազնուագոյն բանաստեղծի, Շիլլէրի ազատական դրաման, «Տէլ»ը, մի ժամանակ բուռն ոգեւորութիւն ու մրցակցութիւն է յարուցել Գերմանիայում:

Հարկ կայ՝ անդրադառնալու այդ հանգամանքի վերայ, որպէսզի այս գծուձ ու ողորմելի ժամանակներում չխեղդուենք այն դառնութիւնից, որ զգում ենք հարազատ ազգակիցների դիմաց:

Մեծարդոյ պարոններ, թոյլ տուէ՛ք ինձ Շիլլէրի ոգին դուրս կանչել, որպէսզի նա — հակառակ այժմեան գերմանացիներին, որոնք ամենապարզ մարդկայնութեան խնդիրներում անգամ չեն համարձակոււմ իրենց ձայնը բարձրացնել, եթէ կառավարութիւնը արգելում է այդ — ասէ՛ ձեզ, թէ՛ ինչպէս մենք գերմանացիներս՝ Շիլլէրի մէջ մարմնացած մեր ազգային անհատականութեան շնորհիւ խորապէս կը կարեկցէինք ձեր տարաբախտ ժողովրդին, թէ՛ ո՛րքան խանդազին մենք կը բաղձայինք Հայաստանի ասպտամբութիւնն ու ազատագրութիւնը, եթէ այսքան մանրացած չլինէինք այսօր մեր պարագմունքների շնորհիւ, չափազանց գձուձ, աւա՛ղ, մի ուրիշ ժողովրդի հերոսական շրջանը ըմբռնելու համար:

Այսօր իշխում է առեւտրականը, եւ մեր աշխարհը, որ ինքն իրեն քաղաքակիրթ է անուանում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հակայական հնափաճառանոց: Մտխել ու շահել — այս է նրա համար միակ կարեւորագոյն բանը: Եւ անթիւ մնայուն զօրքերը կանգնած են միայն նրա համար, որ հովանաւորեն հարուստ վաճառականին, հայթայթեն նրան արտահանութեան համար նորանոր վայրեր:

Եւ անզօր Հնչում է շուկայի այդ ժխորի մէջ միշտ

փառարանուած եւ երբեք չլսուած ձայնը մարդկայնութեան, արդարութեան եւ ըմբոստացման:

Այդպէս է իրերի վիճակը պառաւ Եւրոպայում: Իսկ դուք, մինչեւ նախնական առաապելական ժամանակները հասնող ձեր ժողովուրդը, մեզ հետ համեմատած՝ արիւնով թարմ է, երիտասարդ: Դուք դեռ ունիք հերոսներ, դուք ունիք նահատակներ, որոնք շողշողում են աստղերի պէս մեծ ու պայծառ, ամենաարիւնտ երկնակամարի տակ: Ամենաահռելի խժուժութիւնների ներքոյ, աշխարհիս ամենատմարդի ճնշումների տակ Հայաստանի մէջ ծնունդ են առել գործեր բիրւիական կշռի եւ մեծութեան: Ես ուսումնասիրել եմ Հայոց տառապանքների ու նահատակութեան սոսկալի տեղեկագիրները եւ մինչդեռ իմ սիրտը արիւնոտում էր հանդէպ Հայածուածների ու մորթուածների ճակատագրին՝ ես միաժամանակ ցնցում էի հիացմունքից ու բերկրանքից: Մի հոյակապ դրամա էր ներկայանում իմ առջեւ: Մի կողմից՝ արիւնուշտ, անսանական ամբարտաւանութիւն ու մոլեռանդ բարբարոսութիւն, միւս կողմից անձուրաց զոհողութիւն, երկաթէ դիմացկունութիւն մի յառաջդիմական բարձր քաղաքականութեան ձգտող մեծապէս օժտուած ազգութեան:

Ես տեսել եմ Հայ հերոսների ու նահատակների պատկերները — հերոսներ որոնք չէին խոնարհուած, չէին անձնատուր լինում, որոնց չէր սարսափեցնում ո՛չ մոլեռանդութիւնը եւ ո՛չ ալ վայրագութիւնը, եւ որոնց փառահեղ կեանքն ու պանծալի նահատակումը վկայ են մի անընկճելի, ինքնակայ ժողովրդային ուժի, վկայ են Հայկական ցեղի անջնջելիութեան: Պատկերներ Ֆիզիքական ուժի ու արիութեան, եւ պատկերներ՝ ընտիր գեղեցկութեան — այդ երիտասարդները դանգրաւոր մօրութենքով, սուր եւ ցայտուն դիմագծերով, լի վճռականութեամբ եւ խտացած կամեցողութեամբ, — այդ պատանիները, գրեթէ տակաւին մանուկներ՝ խոշոր, նրբագեղ, կեանք ու տքի կայծակող

աչքերով... մի ճշմարիտ հերոսացանք...

Հասցա Հայ կինները, այդ քաջարի, մեր եւրոպուհի-ներինց միանդամայն տարրեր՝ շնորհալի սերունդը: Նրանք չի՞ն որ կատարել են գործեր, որոնց պատմելու միջոցին սրտեր են բարախում: Ոչ մի բանաստեղծ չէր կարող յղանալ աւելի գորեղ մի բան, քան վրէժխնդրութեան այն գործը որ կատարեց մանկահասակ, աներկիւղ Սոթերը, սեփական ձեռքով դաշունազարկ անելով իր պատիւը բռնաբարող քրդական պեա՛ Շէրիֆ աղային: Յաւերժական փա՛ռք նրա անուան ու յիշատակին: Յաւերժական փառք, նաեւ այն Հայ կիններուն, որոնք խիզախեցին քանզի Սասունի լեռնավայրում կառուցուած գորանոցները, ճիշդ այնպէս, ինչպէս մի ժամանակ, շուէյցարական գիւղացիները փլատակեցին Յուինդ-Ուրի ամուր գղեակը, որ թըշնամին կանգնեցրել էր Ուրի կանտոնում՝ երկիրն անպատիժ կերպով տարկացնելու եւ թալանելու համար:

Որ այստեղ կանացի ձեռքեր են կատարել աւերումի այդ գործը — դա աւելի եւս բարձրացնում է նրա արժէքն ու նշանակութիւնը:

Բայց փառքի փայլը ճառագայթում է նաեւ այն Հայ կանանց վրայ, որոնք յուսահատութիւնից մահ էին փնտռում, որոնք ձեռք՝ ձեռքի տուած, շարան՝ շարան նետում էին Սփրատի այլիքները՝ իրենց սեփական մահով մեռնելու համար եւ ոչ այն մահով, որ պատրաստում էր անողորմ, ամարդի թշնամին: Այդ նահատակութեան համար եւս Շիրլէրի «Տէլ»ը տալիս է մի սրտաշարժ նմանութիւն: Այնտեղ իրօսում է շուէյցարական գիւղացի Շասուֆախէրը իր ամուսնու՝ քաջ ու խելացի Գեարուզի հետ, որը յորդորում է նրան դէպ ի գիւմադրութիւն, ապստամբութիւն: Շասուֆախէր տատանում է — սիրում է նա իր ամուսնուն: Նա ասում է:

— Մենք տղամարդիկս կարող ենք մեռնել արիարար կռուելով, ի՞նչ կը լինի, սակայն, ձեր ճակատագիրը:

Եւ Գեարուդ աներկիւղ պատասխանում է նրան.

— Ամենաթոյլ էակի առջեւ բաց է մնում վերջին ճանապարհը, եւ մի թռիչք այս կամուրջի բարձրութիւնից կ'ազատէ ինձ:

Այստեղ Շուէյցարիան 1308ի, այնտեղ՝ Հայաստանը մեր ժամանակների, եւ սակայն մէկ է նահատաղիւրը, մէկ է զգալու եւ դործելու եղանակը:

Եւ մինչ իմ սիրտը կակծում է այդ քան ազնիւ, ոչընչացուած կեանքերի, այդ քան հպարտ, թափուած արիւնի դիմաց՝ մի սիրտփիչ միտք է փայլատակում իմ գլխում, հաստատուն մի յոյս՝ որ հայ ազգի վիճակը յուսահատական չէ, որ անկարելի է յուսահատուել մի ազգի նակատագրից որը ընդունակ է արտադրել այդպիսի դէմքեր:

— Հայերը իրենց սքանչելի մտաւոր յատկութիւններով եւ հազարաւոր տարիների ընթացքում հաստատուած նկունութեամբ՝ մի ժողովուրդ են, որին պատկանում է ապագան Փոքր Ասիայում:

Այդպէս լինելու է: Այդպէս պէտք է լինի: Եթէ ուրիշները թնդանօթներ ունեն, հայերը ունեն ուղեղներ, իսկ պատմութիւնը կազմւում է ոչ թէ թնդանօթներով, այլ ուղեղներով: Իւրաքանչիւր մի քար գէնք է դառնում, հենց որ մի ժողովուրդ ապստամբում է հարստահարիչներին ոչնչացնելու համար(1)

ԻԼՁԷ ՅԲԱՊԱՆ

## ԱՆԳԼԻԱՅԻ ՊԱՏՄԱԲԱՆ Հ.Ա. ԳԻՔՈՆՍԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1915-23 թթ. Հայերի ցեղասպանության վերաբերող նյութերի շարքում խիստ կարևոր են տվյալ ժամանակվա Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքական և դիվանագիտական գործիչների, պատմաբանների, հրատարակախոսների, զանազան բնագավառի գործիչների հայտնած հավաստի տեղեկությունները, որոնք շարադրված են ակադեմիկական վկայությունների հիման վրա: Դրանց թվում են 1913-1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն, հայտնի քաղաքական գործիչներ և պատմաբաններ՝ էդվարդ Ս. Լիդելլը, Բերնոն, Հենրի Հարիսոն Ռիզսը, Ադա Չեմբերսը և շատ ուրիշներ:

Փաստագրական նյութերով հրատարակված խիստ կարևոր են նաև պատմաբան և հրատարակախոս Հերբերտ Ադամս Գիրոնսի (1880-1934) վկայությունները: Նա 1908-1913 թթ. եղել է Թուրքիայում, որպես New York Herald ամերիկյան թերթի թղթակից, ինչպես նաև դասավանդել է Տարսոնի ամերիկյան քոլեճում: Թուրքիայում դանվելու տարիներին, Դոկա Գիրոնսը բազմիցս ականատես է եղել սուլթանական և երիտթուրքական իշխանությունների կազմակերպած Հայերի ջարդերին: Նրա զրչին են պատկանում բազմաթիվ հրատարակախոսական հոդվածներ և ուսումնասիրություններ:

1915 թ. սկզբին (The Blackest page of Modern His-



tory, New York-London) «Ժամանակակից պատմութեան սեւագույն էջը» խորագրով անգլերեն լույս տեսած նրա գիրքը Հայոց Մեծ Եղեռնի մասին, անմիջապես թարգմանվեց և հրատարակվեց ռուսերեն (Սան Պետերբուրգ) և հայերեն՝ (Նյու Յորք) լեզուներով: Նրա կարեւոր աշխատութիւններից կարելի է հիշատակել նույնպես անգլերեն հրատարակված «Օսմանյան կայսրութեան կազմավորումը» սովորածավալ աշխատութիւնը, որը թարգմանվել և հրատարակվել է նաև օսմաներեն, արարատառ թուրքերենով:<sup>1</sup>

«Ժամանակակից պատմութեան սեւագույն էջը» գրքում դուրս Գիրտնսը հիմնականում խոսում է 1915 թ. սեղի ունեցած Հայերի տեղահանութեան և կոտորածների մասին: Այսուհանդերձ, որպէս ականատես նա կանգ է առել նաև Ադանայի 1909 թվականին սեղի ունեցած Հայերի կոտորածների ողբերգական դեպքերի շուրջ:

Այս գիրքը բաղկացած է ներածութիւնից, 4 գլուխներից և եզրակացութիւնից:

#### ԳԼՈՒԽ Ա.

Այստեղ խոսում է 1915 թ. երկամսեայ ժամանակահատվածի ընթացքում Հայերի բռնի տեղահանութեան և կոտորածների մասին, այն բնութագրելով որպէս հետևողական և խրնամքով պատրաստված մի ծրագիր բնաջնջելու համար Հայ ազգը Օսմանյան կայսրութիւնում: Գիրտնսը վկայում է. «Վեց ամսի ընթացքում սպանվել է մեկ միլիոն Հայ: Զորքերի քանակը և նրանց ջարդելու միջոցներն անօրինակ են նորագույն պատմութեան մեջ»:

#### ԳԼՈՒԽ Բ.

Հայերը երբեք չեն սպառնացել թուրքիայի անվտանգութեանը: Ապստամբութեան վարկածը ուղղակի պատրվակ էր Հայերին տեղահանելու և կոտորելու համար:

## ԳԼՈՒԽ Գ.

Դարերի ընթացքում հայերը խիստ կարևոր դեր են խաղացել Օսմանյան կայսրության բարօրության և բարգաձաճման խնդրում: Ապացուցված է, որ քրիստոնյան և մահմեդականը կարող են ապրել խաղաղ և համերաշխ թուրքիայում:

## ԳԼՈՒԽ Դ.

Գերմանական կառավարությունը կարող էր արգիլել երիտթուրքերի հայալինը քաղաքականությունը, բայց այն որոշել էր ոչ մի միջոց չձեռնարկել: Լուրջ փաստեր կան հավատալու, որ գերմանական կառավարությունը, եթե չէ քաջալերած, ապահովաբար ծափողջուևած է հայերի անհետացումը Փոքր Ասիայից, որպեսզի Գերմանիայի քաղաքական և տնտեսական ծրագիրը դյուրությամբ գործադրվի Օսմանյան կայսրությունում:

Հերբերտ Գիրոնսը Հետազայում, 1921 թ. հրապարակած իր հրապարակախոսային հոդվածներում մեղադրեց և դատապարտեց նաև Ծրանսայի թուրքամետ քաղաքականությունը կիլիկիան թուրքերին հանձնելու կապակցությամբ: Այդ նենգ քաղաքականությունը նյութական և մարդկային նոր զոհերի պատճառ դարձավ կենդանի մնացած կիլիկահայերը պարտադրաբար Հեռացան իրենց հարազատ բնակավայրերից և քվեցին աշխարհի չորս կողմերը:

Այս գրքի հայերեն հրատարակության առթիվ առաջարան է գրել Դոկտ. Յ. Թիրեաքյանը (Օգոստոս 1, 1916), ուր ըստ արժանվույն բարձր է գնահատել Գիրոնսի գիրքը, ինչպես նաև հայերեն թարգմանությունը կատարած երկու հայ երիտասարդ ուսանողներին՝ Ա. Սաղաթելյանին և Ե. Մորլյանին:

Հարկ է նշել, որ հայերեն մի այլ թարգմանություն լույս է տեսել նաև 1917 թ. Թիֆլիսում, Ա. Թոփչյանի

Թարգմանութեամբ:

Ստորև Գիրտնախի վերոհիշյալ գրքից որոշ կրճատումներով ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում 1916 թ. Հայոց Յեղասպանութեան վերաբերող Ազգիս նյութերը:

\* \* \*

...1915 Ապրիլին, Պոլսէն հրամաններ զրկուեցան Փոքր Ասիոյ տեղական իշխանութիւններուն, ի գործ դնել կարելի եւ յարմար ամէն միջոց, կանխառ. անդամալուծելու հայերու կողմէ փորձուելիք ապստամբական որեւէ ձեռնարկ:

Տեղական իշխանութեանց շեշտուած էր թէ՛ հայեր կայսրութեան ապահովութեան ծայրայեղ վտանգ կը սպառնային, եւ ազգային պաշտպանութիւնը կը պահանջէր ՀՐԱՄԱՅԱԿԱՆՕՐԷՆ կանխազգուշական խստութիւն, հայերը անվնաս դարձնելու:

Կարգ մը վայրերու տեղական իշխանութիւններ պատասխանեցին թէ՛ իրենք նշմարած չէին ո՛րեւէ կասկածելի գործունէութիւն հայերու կողմէ, եւ յիշեցուցին կառավարութեան, թէ հայերը ո՛չ մէկ վնաս կրնային հասցնել, քանի որ գէնք չէին կրեր, եւ արդէն ամենէն կորովի արական տարրը բանակին մէջ կը գտնուէր: Կան թուրքեր, որոնք ամօթի եւ զթութեան տեսակ մը զգացում ունին: Բայց թուրք պաշտօնեաներուն մեծազոյն մասը պատրաստակամ եւ եռանդազին՝ Պոլսէն եկած թելադրութիւնը կատարեց: Անաստողներ փոխուեցան:

Եւ հայկական ջարդերու նոր թուական մը սկսաւ...:

Նախ այս ձեռնարկը կարելի ամենաքիչ դժուարութիւններով գործադրելու համար, դեռեւս քաղաքներու եւ գիւղերու մէջ մնացած հայ բնակչութեան ուժեղ տը-

դամարդիկը ազդարարութիւն ստացան հաւաքուիլ յարմարագոյն վայր մը, ընդհանրապէս քաղաքէն դուրս։ Ժանտարմներ եւ ոստիկաններ այս հրամանին գործադրութեան խտախ հակեցին։ Ոչ ոք աչքէ վրիպեցաւ։ Զանոնք ժողուելէ վերջ, բոլորն ալ սուրէ անցուցին։ Գործադրութեան այս մեթոտը հնարաւոր էր փոքր տեղերու մէջ, առհասարակ Մեծ քաղաքներու մէջ սակայն, Պոլսոյ հրամանները, այսքան ճիշդ ու արագ կերպով կատարելը կարելի չէր միշտ։ Հայ երեւելիներ, փողոցներու վրայ կամ իրենց տուներուն մէջ, սպաննուեցան։ Ներքին քաղաքներու այրեր չուրիչ քաղաք՝ ղրկուեցան։ Քանի մը ժամէն վերադարձան պահապանները՝ առանց իրենց բանտարկեալներուն... Մովեզբեհայ քաղաքներու հայեր նաւակներով «ուրիշ նաւահանգիստ» մը տարուեցան։ Նաւակները զարմանալիօրէն շուտ վերադարձան՝ պարսուած իրենց ճամբորդներէն։

Յետոյ, որպէսզի երկաթուղիի ճամբաներու շինութեան համար գործածուող հայ գինուորներ կարող չըլլան որեւէ հաւանական դժուարութիւն յարուցանել՝ կ'աշխատեցուէին իրարու մղոններով հեռու կէտերու վրայ, 300-էն 500 հոգի պարունակող խմբակներու բաժնուած։ Թուրք կանոնաւոր բանակի զօրադունդեր ղրկուեցան շուտով «հայ յեղափոխութիւնը նուաճելու»։ Յանկարծակի յարձակում կրեցին բանուորական այդ փոքրիկ խմբակները, որոնք չարաչար կ'աշխատէին թիւերով, լծակներով եւ փետասաներով։ Այս «տապաւորներ»ը ծակծկուեցան զնդակներով՝ դիտանալէ առաջ թէ ի՞նչ կը պատահէր... Մէկ քանին, որ յաջողեցան փախչիլ՝ հետապնդուեցան հեծեալներէ կամ թրատուեցան...

Մայիսէն մինչեւ Օգոստոս՝ Օսմանեան կառավարութիւնը մեթոտիկ կերպով հետապնդեց ծրագիր մը՝ աւելի դժոխային քան յուսեցոյն ջարդը։ Փոքր Ասիոյ իւրաքանչիւր նահանգ հեռաղրուեցաւ՝ բովանդակ հայութիւնը

Միջազեռք տեղահան ընել: Հրամանը որո՛չ էր եւ ժանրա-  
մասն: Մոռացութեան մասնուելու շափ աննշակ գիւղակ  
մը չկար: Մուկնտիկներ աղղարարեցին, թէ ամէն հայ,  
այսինչ որոշ ատենին, պէտք է պատրաստ ըլլայ մեկնելու  
անծանօթ վայր մը: Մերեր, հիւանդներ եւ յղի կիներ  
բացառութիւն չէին կազմեր: Միայն հարուստ վաճառա-  
կաններ, գրամատչրներ եւ գեղաղէմ կիներ արտօնուած  
էին ազատ մնալ՝ մահմետական կրօնքը ընդունելու  
պայմանաւ: Սակայն — յախտենական յարգա՛նք իրենց —  
հատ հատ անձեր միայն օգտուեցան փախուստի այս մի-  
ջոցէն: Երկու օրէն մինչեւ վեց ժամ տրուած էր պատ-  
րաստութեան համար: Տնական առարկաներ, անասուն  
կամ աւելորդ զգեստ արգիւում էր տանիլ: Անկողինի  
կազմած եւ կերակուրի պաշար՝ ուժը ներածին շափ  
կարելի էր վերցնել, ուսին վրայ դրած: Եւ պիտի քաշէին  
հետոտն՝ կիզիչ արեւին տակ, անջրջի ձորերէն եւ  
ձիւնապատ լեռներու կիրճերէն: Ու հարկ էր տոկա՛լ ճամ-  
բորդութեան մը՝ երեքէն մինչեւ ութ շաբաթ—:

Տեղահանութեան հրամանը տակաւին շտապուած  
քրիստոնեայ գիւղերէ անցնելու պարադային, կարաւանը  
արտօնուած չէր ընդունիլ կերակուր եւ կամ որեւէ հո-  
գածութիւն: Մերեր, հիւանդներ եւ փոքր մանուկներ ին-  
կա՛ն ճամբաներուն եզերքը, անգամ մըն ալ չելլելու  
պայմանաւ...: Երկունքի մէջ եղող կիներ սուիններով եւ  
խարազաններով առաջ կը քշուէին, մինչեւ որ մահը  
ազատէր գիրենք: Միրուն աղջիկներ կը խլուէին հարեմ-  
ներուն համար, կամ, պահապաններու կողմէ կը բռնա-  
բարուէին ամէն օր՝ սպասելով մահուան, իբր գթառատ  
ազատարարի: Անոնք որ կրնային, անձնասպան եղան:  
Մայրեր, խելագար՝ գետը նետեցին իրենց զաւակները,  
անոնց տառապանքին վերջ տալու: Անօթութիւն, ծարաւ,  
լքում եւ ամօթ հարիւր հազարներով կիներ մահուան  
գիրկը տարին:

Նախ օրէ օր, յետոյ ժամ առ ժամ նօսրացաւ խղճալի կարաւանը: Ամէն ոք յուսահատ միայն մահուան փափաքեցաւ, քանզի հնա՞ր է որ յոյսը ապրի նամբորդութեան մը մէջ որ վախճան չունի: Նոյնիսկ ամենէն զօրաւորին քով ուժ մնալ կարելի՞ է: Դժոխք առաջնորդող այս նամբէն, աջ կամ ձախ խոտորողներ, հրացանազարկ կամ սուխնահար եղան: Անոնք որ փախչելով, յաջողեցան ազատուիլ պահապաններու ձեռքէն, քիւրտերէն եւ հեծեալ զիւզացիներէ հետապինդ՝ գետին փռուեցան...:

Ու երիտասարդ թուրքեր դեռ կը շարունակեն որոնել հայ յեղափոխութիւնը հո՛ն, Փոքր Ասիոյ մէջ:

Վերի պարբերութիւնը հազիւ աւարտած էի, երբ տունս եկաւ անգլիացի կին մը, զոր տարիներէ ի վեր կը ճանչնամ: Ան մէկ ամիս առաջ թողած է Ատանան: Իր պատմութիւնը յարեւմտան է ուրիշներու պատմածին: Ես ունիմ նոյնօրինակ փաստեր՝ ամերիկեան, անգլիական, գերմանական, զուիցբերիական ականատասներէ, որոնց վկայութիւնները զիրար կը հաստատեն:

Անգլիուհին ինծի այսպէս պատմեց. —

«Տեղահանութիւնը տակաւին կը շարունակուի: Ներքին նահանգներէն սկսած մինչեւ Պաղատաթի երկաթուղիի երկայնքին՝ անցնելով Ատանայի մէջէն՝ անոնք կը զրկուին դէպի մահուան ուղևորութիւն: Երկաթուղին, ամէնուր որ գոյութիւն ունի, բնաջնջումի գործը փութացընելու կը ծառայէ՝ աւելի արագ քան այդ վայրերը, ուր կարաւանները կը յառաջանան ոտքով: Ա՛հ, երանի՛ թէ միայն ջարդէին լմնցնէին, ինչպէս համիտեան օրերուն: Ատանայի երկաթուղիի կայարանէն դիտելի հայ կիներ, որոնք, մանկիկները թելերնուն վրայ բարձրացուցած, «ջո՛ւր» կը խնդրէին: Հացի ախորժակ չէր մնացած այլևս անոնց մէջ: «Միայն ջո՛ւր, պո՛ւտ մը ջո՛ւր» կ'աղերսէին... Զրհան մը կար: Մունկի եկած՝ խնդրեցի պահապանէն թոյլատրել ինծի կաթիլ մը ջուր տալ: Կառախումբը

չարժեցա՛ւ իսկոյն: Եւ վերջին լսածս կորուսեալներու  
աղիոցորմ հառաչն էր... Ասիկա մէկ անգամ չէ  
պատահած: Գրեթէ ամէն օր նոյն երեւոյթը կը կրկնուէր:  
Լորտ Պրայս, 800,000 զոհե՛ր կ'ենթադրէ: Լա՛ւ, այժմ թիւը  
մէկ միլիոնի հասած ըլլալու է: Կրնա՞ք երեւակայել մարդ-  
կային արարածներ, որ նոյնիսկ վայրենի անասունները  
այսպիսի մահով մը մահացնեն...»:

Բայց Ուաշինկթընի թուրք դեսպանը տակաւին կը  
յայտարարէ թէ, այս պատմութիւնները «չինծու» են եւ  
թէ «կիներ եւ պատիկներ չեն սպաննուած...»: (Տե՛ս էջ 16-  
37)<sup>2</sup>

## ՄԻ ՀԱՏՎԱԾ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՄԻ ԴԱՏԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայոց Յեղասպանությանը վերաբերող փաստագրական վավերագրերի և ուսումնասիրությունների շարքում խիստ կարևոր նշանակություն ունեն տվյալ ժամանակվա ղերմանացի գործիչների հաղորդած տեղեկությունները, ուր հավաստի փաստերով աշխարհին են ներկայացված 1915 թ. ծանրագույն ողբերգության պատասխանատուները:

Նրանց թվում իր առանձնահատուկ տեղն ունի ղերմանացի արևելագետ, հոգևոր և հասարակական անխոնջ գործիչ Յոհաննես Լեփսուսը (1858-1928):

Դեռևս արդուլհամիդյան բռնատիրությունից շրջանում, Սասունում և այլուր տեղի ունեցած հայերի կոտորածների մասին նա բազմաթիվ փաստեր է հավաքել և 1896 թ. հրատարակել «Հայաստանն ու Եվրոպան» վավերագրական գիրքը<sup>1</sup>, իսկ Մեծ Եղեռնի ողբերգական դեպքերի մասին Լեփսուսը 1919 թ. հրատարակեց փաստաթղթերի մեծարժեք մի ժողովածու՝ «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» խորագրով<sup>2</sup>։ Այս ժողովածուի մեջ ընդգրկված նյութերը, այդ թվում Գերմանիայի և Թուրքիայի ղեսպանների, հյուպատոսների ու այլ պաշտոնական անձանց գաղտնի գեկուցազրերը, ականատեսների վկայությունները անհերքելիորեն հաստատում են որ երիտթուրքերի կազմակերպած հայերի բռնի տեղա-



հանությունն ու կոտորածները նպաստակ ունենին ոչընչացնել Հայ ժողովրդին և այդ հանցագործության մեջ իր առյուծի բաժինն ունեւր նաև Գերմանիան:

Ե. Լեփսիուսի ծավալած հայանպաստ գործունեության ասպարեզում կարևոր տեղ է զբաղում նաև Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ընթացքում ներդրած ջանքերն ու հատկապես ճշմարտության բացահայտմանը նվիրված նրա անկողմնակալ ելույթը:

Հայտնի է, որ 1921 թ. հունիսի 2-3ը Բեռլինի նահանգային Երրորդ դատարանում տեղի ունեցավ Հայ ժողովրդի Եեղասպանության դիմադրող հանցագործներից մեկի՝ Թալենաթ փաշայի սպանության համար ամբաստանված, ուսանող Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը:

Դատավարության վերջում, մեղադրյալ Սողոմոն Թեհլիրյանը լիովին արդարացվեց և ազատ արձակվեց դատարանի հետևյալ որոշման հիման վրա-

«Հանցավոր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլիրյանը 1921-ի մարտ 15-ին, Շարլոտտենբուրգի մէջ դիմադրյալ կերպով մարդ մը, Թալենաթ փաշան սպաննած ըլլալուն համար: Ո՛՞՞»<sup>3</sup>

Երկու օր տեղած այս դատավարության նիստերին, որպես վկա մասնակցում էր նաև Յոհաննես Լեփսիուսը: Նրա ընդարձակ ելույթը խիստ բովանդակալից էր, անկողմնակալ և ճշմարտացի, հիմնված փաստագրական նյութերի հիման վրա:

Ստորև բերում ենք մի հատված այդ վկայությունից, ուր լիովին ազատուցվում է երիտթուրքերի գործադրած ջարդարարական քաղաքականութունը Հայ ժողովրդի նկատմամբ: Միմիայն մի ճշտում պիտի կատարենք Ե. Լեփսիուսի նշած հայերի թվաքանակի մասին:

Բնականաբար Ե. Լեփսիուսը ճիշտ է նկատել, որ «բացարձակ ստույգ ազգահամար չկա Թուրքիո նման երկրի մը մեջ»: Բանն այն է, որ Աբդուլ Համիդի

բռնատիրութեան շրջանում և հետո, երբ հայկական հարցը դարձավ միջազգային շահարկման առարկա, թուրք պետական գործիչները, այդ թվում և պատմաբանները, բարենորոգումների անհրաժեշտութիւնը ավելորդ համարելու միտումով, դիտավորյալ սկսեցին ամեն ջանք թափել նվազեցնել հայերի թվաքանակը Օսմանյան կայսրութիւնում: Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ հաշվառման ընթացքում բազմաթիւ հայկական գյուղերի բնակչութիւնը դուրս է մնացել գրանցումից: Հայ և օտարազգի պատմաբանների ու մասնագետների տվյալները այս խնդրում բերել են այն նկրակացութեան, որ նախապատերազմական շրջանում հայ ազգաբնակչութեան թվաքանակը Օսմանյան կայսրութիւնում եղել է 2.5 միլիոն մարդ: Իսկ զոհված հայերի թվաքանակի մասին խօսելիս մատնանշվում է, որ Մեծ Եղեռնի ընթացքում նահատակվել են ավելի քան 1.5 միլիոն հայեր<sup>4</sup>:

\* \* \*

«Ընդհանուր տեղահանութիւնը որոշեց Երիտասարդ Թուրքերու կոմիտէն. Թալէաթ փաշան, իրրեւ ներքին գործոց նախարար, (միւս կողմանէ նաեւ Էնվէր փաշա իրրեւ պատերազմական նախարար) հրամայեց ևս օգնութեամբ Երիտասարդ Թուրքերու կոմիտէի կազմակերպութեան ի գլուխ հանուեցաւ: Տեղահանութիւնը, ընդհանուր աբսորը, որ արդէն 1915 Ապրիլին սրոշուած էր, կը յարէր Թուրքիոյ ամբողջ հայ ժողովրդեան, քիչ բացառութեամբ, զոր ղեռ պիտի յիշեմ: Թուրքիոյ բնակչութեան մէջ կար՝ պատերազմէն առաջ՝ 1,850,000 հայ: Բացարձակ ստոյգ մարդահամար չկայ բնականաբար Թուրքիոյ նման երկրի մը մէջ: Յիշեալ թիւը կը ստանանք եղած վիճակագրական աստղձէն, որ կը համաձայնի հայ

Պատրիարքարանի ազգահամարին: Հայ բնակչութիւնը սիրուած պատերազմէն առաջ եւրոպական Թուրքիոյ (Կ-Պոլիս, Ադրիանապոլ, Ռոստոթօ) եւ ասիական Թուրքիոյ վրայ (Անատոլու, Կիլիկիա, Հիւսիս-Ասորիք, Միջագետք):

Հայոց մեծազոյն մասը կ'ապրէր արեւելեան Անատոլու, Հայկական Լեւոնաշղթային վրայ, ազդին հին Հայրենեաց, վեց վիլայէթներու մէջ. Կարին, Վան, Բաղէշ, Տիարպեքիր, Սերաստիա եւ Խարբերդ: Արեւմտեան Անատոլու, Կ-Պոլսոյ դիմաց, Մարմարայի Հարաւային եզերքը կը կազմեն բնակչութեան մէկ զօրաւոր բեկորը: Հարաւային Անատոլուի մէջ Կիլիկիա՝ (Տարսուսի տափաստանով եւ Ադեքսանդրիոյ ծովախորշին շուրջ գտնուող սահմանակից Հիւսիսային ասորական երկիրներով) մէկ մասն էր Հայկական հին Հայրենիքին:

Անատոլուի ամբողջ Հայ բնակչութիւնը բարձրագոյն Հրամանով տեղահանուեցաւ դէպի Հիւսիսային եւ արեւելեան եզրը Միջագետքի տնապատին, Տէր էլ Զօր՝ Ռակկա, Մեսիէնէ, Ռաս Իւլ Այն, մինչեւ Մոսուլ:

Մերձաւորապէս, 1,400,000 Հայեր տեղահան եղած են: Ի՞նչ կը նշանակէ այս աքսորը:

Թալէաթի կողմէ ասորագրուած Հրամանագրի մը մէջ սա խօսքը կը գտնուի. «Աքսորաւորն է՝ Ոչնչութիւն»: Համաձայն այս Հրամանագրին, հոն տարուեցաւ արեւելեան Անատոլուի նահանգներէն դէպի Հարաւ տեղահան եղող ամբողջ բնակչութեանէն միայն 10 առ հարիւրը աքսորաւոր Հասան. մնացած 90 առ հարիւրը Համբան արդէն սպաննուեցան, բացի ոստիկաններէն վաճառուած եւ քիւրտերէն աւելանգուած կիներէն ու աղջիկներէն, մնացածն անօթութեանէ եւ ուժասպառութեանէ մեռան: Այն Հայերէն, որոնք արեւմտեան Անատոլուէ, Կիլիկիայէ եւ Հիւսիսային Ասորիքէ անապատի եզրը քուեցան, Հաւաքատեղիներու մէջ հետզհետէ Հարիւր Հազարաւոր մարդկանց նկատելի բազմութիւն մը Հաւաքուեցաւ:

Ասոնք յեռոյ մեծ մասամբ, սխտեմաթիկ սովով ու պարբերական ջարդերով ոչնչացան: Երբ Հաւաքատեղիները նոր խումբերով կը լեցուէին, այնպէս որ մարդկանց ալ տեղ չէր մնար, գունդ առ գունդ անապատ կը տարուէին եւ հոն կը մորթուէին: Թուրքեր յայտնած են, թէ անգլիացւոց օրինակով՝ Հանդէպ Բուրերու Հարաւ Ափրիկէի մէջ, իրենք Հաւաքատեղիներու գաղափարին եկած են: Պաշտօնապէս կը յայտարարուէր, թէ արքայները նախագգուչական կարգադրութիւններու կը ծառայեն, անհատապէս սակայն Հեղինակաւոր անձեր բոլորովին յայտնի կերպով կը ծանուցանէին, որ Հայ ազգը ոչնչացնել էր նպատակը:

Ըսածս կը հետեւի նաեւ այն վաւերաթուղթերէն, որոնք կայսերական Դեսպանութեան եւ արտաքին գործոց նախարարութեան արձանագրութիւններէն Հրատարակեցի, մանաւանդ գերման Հիւպատոսներու եւ Կ. Պոլսոյ գերման դեսպաններու զեկոյցները<sup>52</sup>:

## ՄԱՐԴԻԿ, ՈՐ ՊԵՏՔ ԶԼ ՄՈՌԱՅՎԵՆ ՓՈԼ ԴԵՇԱՆԵԼ

2001 թ. հունվարի 30-ին, Ֆրանսիայի նախագահ՝ Ժաք Շիրաքը և վարչապետ Լիոնել Ժոսֆենը վավերացրին Խորհրդարանի և Մերակույտի կողմից որդեգրված՝ «Ֆրանսիան Հրապարակայնորեն ճանաչում է 1915-ի հայերի ցեղասպանությունը» օրենքի ուժ ստացած բանաձևը:

Երկար սպասված այս մարդասիրական արդարացի որոշման կազակցությունը, այսօր մեկ անգամ ևս խորը երախտագիտությունը պիտի հիշենք Ֆրանսիայի առաջադեմ պատմաբաններին, քաղաքական և հասարակական գործիչներին անունները, որոնք 1915 թ. Մեծ Եղեռնի ողբերգության առաջին օրվանից ցատուժով մեղադրեցին և դատապարտեցին Հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող այդ մեծ ազետը և ամեն ջանք գործադրեցին կանխելու այն:

Ահա նրանցից մի քանիսի անունները, վերթոր Հյուկո, Անատոլ Ֆրանս, Անթուան Մեյե, Ժաք դը Մորգան, Հանրի Բարբրի, Ռընե Պիևո, Լուի Արագոն, էմիլ Դումերկ և ուրիշներ:

Այնուհանդերձ կան և եղել են այնպիսիները, որոնց անունները մնացել են ստվերում, կամ մենք քիչ ենք խոսել և նվազ քարոզչական աշխատանք տարել նրանց հայանպաստ գործունեության շուրջ: Այդ տեսանկյունից, իմ այս հոդվածը նվիրվում է 20-րդ դարասկիզբի Ֆրան-

սիացի գիտնական և պետական գործիչ՝ Փոլ Դեշանելին:

Նա եղել է Ֆրանսիայի Ակադեմիայի անդամ և վարել է նաև Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահի բարձր պաշտոնը:

Մեծ Եղեռնի օրերին, Փոլ Դեշանելը ֆրանսիացի մյուս գործիչների նման դատապարտել է հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող երիտթուրքերի ոճրագործ աբարքները:

Այս առումով ցայտուն օրինակ է Հանրի Բարբիի «Սարսափի երկրին մեջ» գրքի համար Փոլ Դեշանելի գրած նախաբանը:

Հանրի Բարբիի անունը ես հիշատակեցի վերևում: Նա ֆրանսիացի լրագրող էր: 1916-1917 թթ. որպես ֆարիզի «Le Journal» թերթի թղթակից, եղել է Մերձավոր Արևելքի պատերազմական գործողությունների շրջանում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում և ականատես եղել հայության անմարդկային տեղահանություններին և կոտորածներին:

Նրա գիրքը լույս է տեսել 1917 թ. Ֆրանսերեն լեզվով Փարիզում, հետևյալ խորագրով.

«Au pays de l'épouvante, l'Arménie martyre» («Սարսափի երկրին մեջ, նահատակ Հայաստան»):

Ականատեսի աչքով գրված այս փաստագրական գիրքը կարճ ժամանակ անց, 1919 թ. թարգմանվել և հրատարակվել է հայերեն և ռուսերեն լեզուներով:

Հանրի Բարբիի այս գրքում կան չափազանց զգայացունց և սարսափելի տեսարանների նկարաչուօթյուններ Ուստի, ցանկալի էր, որ հայերի փոխարեն այն առավելաբար կարդային օտարները, յատկապես թուրքերը, համոզվելու համար թե ինչպիսի ահավոր ցեղասպանություն է ենթարկվել հայ ժողովուրդը Օսմանյան կայսրությունում:

Հանրի Բարբիի այս գրքի նախաբանը 1917 թ. գրել

է Փոլ Դեշանելը: Ստորև այն բերում ենք ամբողջութեամբ, քանի որ այնտեղ տրված է գրքի համապարփակ վերլուծութիւնն ու անկողմնակալ գնահատակը:

\* \* \*

«Պրն. Հանրի Պարպի այս հատորը անուանած է «Մարտափի Երկրին Մէջ»:

Հայաստանի նոր մէկ նահատակութեան պատմութիւնն է անիկա, աւելի դժբախտաբար քան բոլոր այն միւսները զորս անցուցած է: 1915-ի սկիզբը, Թուրքիոյ մէջ երկու միլիոնի հասնող հայութիւն մը կար ստեղծ հազիւ թէ 900,000-ը վերապրած է այսօր: Եւ այս միլիոն մը մարդոց սպաննումը ի դուխ հանուած է անգթութեան ամէնէն ամօթապարտովը: Այս մարդիկը մեռած են, ինչպէս կ'ըսէ Պրն. Պարպի, հանգրուան առ հանգրուան, զանոնք ամէնքը մէկ, չեն զրկած խմբական մահացումին: գնդակի բռնուածները ամէնէն նուազ դժբախտները եղած են, որովհետեւ իրենց տառապանքը եղած է կարճատեւ: Բազմաթիւ հարիւր հազարաւորներ տարագրուած են ու գացած են կազմելու մահուան այդ շարաշուք կարուսանները, որոնց յախտենական նախաօրէնքը պիտի կրէ Թուրքիա, Գերմանիոյ զինակիցը: կենդանիի ողբալի երամներ, որոնք գացած են՝ կողոպտուած, սպաննուած, քուելով իրենց դահիճներուն կողմէ՛ դէպի աքսոր, անօթութիւն կամ կախաղան:

Պրն. Հանրի Պարպի կը նկարագրէ ողբալի գոյութիւնը այս տարագիրներուն, որոնք անտաւաղութենէ կը մեռնին, ի զուր օգնութիւն հայցելով, եւ նշաւակ կ'ըլլան բարոյական եւ ֆիզիքական յուեզոյն տառապանքներուն: Տեսած է ան, Թափառող մանուկներու խումբեր, աժգոյն ու վախ, ուկոր մնացած, ի խնդիր իրենց սպաննուած ծնողքներուն եւ քանդուած գիւղերուն: կը նկարէ ան

չարչարանքի կայանները, որոնք Եփրատ գետի երկայնութեան հաստատուած են եւ ուր առանց ապաստանի, գրեթէ առանց սնունդի, ձմեռուան մահացու ցուրտին կամ ամառուան նոյնքան ահեղ ջերմութեան ցուցադրուած, այրերն ու կիները կը մեռնին յամբօրէն, գոհունակ աչքին տակ՝ թուրքին, որ անոնց վրայ կը հսկէ։ Այս դրքին բոլոր գլուխները ի յայտ կը բերեն եղբրական վաւերագրութիւններ։ Ամբաստանութեան պաշտօնաթուղթ մըն է ասիկա, ականատես վկայի մը կողմէ կազմուած։ Կոստանդնուպոլսոյ մէջ կամ ի Պերլին, կրնան չքմեղանքներ փնտռել, չափազանց շատ անգամներ ի գործ դրուած մեթոսին համաձայն, կրնան յայտարարել թէ սպաննեցին ինքզինքնին պաշտպանելու համար։ Բայց ստույթեամբ պիտի չկրնան իրաւունք շահիլ, քանի որ հայերը չեն եղած զոգոխչները։ անոնք զօհեր եղած են։ Անոնց սպանութիւնը պիտի հանուած է, առաջուրնէ ինամտոս կերպով պատրաստուած ծրագրի մը համաձայն, վատանուն գործը կանոնաւորութեամբ մինչեւ վերջը տարուած է եւ չէ ինայուած ոչ մէկ քաղաքի, ոչ մէկ գիւղի, ոչ մէկ ընտանիքի։ արիւնը հոսած է ամէնուրեք։ Պրն. Պարպիի վկայութիւնը մէկը պիտի ըլլայ անոնցմէ, որոնք ամենածանր կերպով պիտի ճնշեն անպարտ այս ժողովուրդին սպանիչներուն վրայ։

Բնաջնջումը Հայաստանի, ահա՛ ինչ էր վատագի ծրագիրը Կարմիր Սուլթանին, եւ ահա՛ ինչ որ կ'ուզեն տակաւին երիտասարդ թուրքերը, որոնք, ազատագրելու համար իրենց երկիրը, լաւագոյն բան մը չգտան, բայց եթէ զայն Գերմանիոյ ճորտը դարձնել։ Կոստանդնուպոլսոյ մէջ, քաղաքական վարչութիւնը, իրաւ է, անուն փոխեց, բայց մեթոսները նոյնը մնացին, ինչպէ՛ս եւ մարդիկը, հակառակ այն նոր պիտակին, որով խեղկատակօրէն ինքզինքնին մակագրեցին։ Թուրք պաշտօնատարը սքանչելիօրէն արժանաւոր մրցորդն է պերման պաշտօնատարին։



Մին ինչպէս միւսը, ունի այն վայրագութիւնը անճանաչողութիւնը այն բանի որ արդար է եւ այն բանին որ ազնիւ է ինչ որ թուրքը, քուելով գերմանացիէն, Հայաստանի մէջ ըրաւ, գերմանացին ըրաւ զայն ամէն տեղ:

Հայաստանի նահատակութիւնը, յայտնագրուած քաղաքակիրթ աշխարհին, պէտք է փոխարինուի կարելի բան չէ որ անպատիժ մնան այս ոճիրները, որոնց երկար ցանկը կու տայ Պրն. Հանրի Պարպի: Աշխարհ պիտի չկրնայ եղածը մոռնալ: Թուրքը, իր կատարողութեանը մէջ, միայն հայ ժողովրդեան վրայ չյարձակեցաւ: Վանայ մէջ գտնուող մեր Ֆրանսական տոմինիկեան կրօնաւորներն ալ անգթօրէն կրեցին հարուածը: Մարտինի Հայկաթուղիկ եպիսկոպոսը իր հօտին մէկ մասովը խողխողուեցաւ եւ լուր չունինք այն Ֆրանսացի քահանաներու մասին, որոնք այս վերջին քաղաքին մէջ հաստատուած էին: Գերապայծառ Իսրայէլեան, Խորբերդի Հայ կաթուղիկ եպիսկոպոսը, Ուրֆայի եւ Տիարպէքիի մէջտեղ, աքսորի ճամբուն վրայ խողխողուեցաւ, քահանաներու, կրօնաւորուհիներու եւ իրեն ընկերացող խումբին մէկ մասին հետ Մալաթիայէն՝ գերապայծառ Խաչատուրեանը խեղդամահ ըրած են: Խեղդամահ ըրած են Սղերդի բոլոր քաղղէացի ու սուրխացի քահանաները: Սպաննած են Ճէզիրէի քաղղէացի եւ սուրխացի քահանաները: Մեր կրօնական միաբանութիւններու բոլոր հաստատութիւնները փլցուած կամ աւարի տրուած են: մասնաւորաբար Վանայ մէջ, Ֆրանսական տոմինիկեաններու բնակարանը, 1916 Ապրիլ եւ Մայիս ամիսներուն, պաշտօնօգուքներուն իրր ամբողջ ծառայած է: Թուրքիա եւ Գերմանիա պէտք է որ դարձանեն այս բոլոր ոճիրները:

Հայաստանը ազատելով Օսմանեան լուծէն, համաձայնականները դարձանած պիտի ըլլան մեծ անօրէնութիւն մը: Իրաւունքը չի կրնար աւելի երկար ատեն չճան-

ցըւած մնալ: Արիւնագորդ այն նահատակութիւններէն  
եաք, գորս կրած է հայ ազգը, որուն կապուած ենք  
այնքան յիշատակներով, միւս ճնշուած ազգերուն պէս  
ինքն ալ պիտի ողջուի՝ ազատութեան շողարձակ ժամը»(1)

ՓՕԼ ՏԷՇԱՆԷԼ

**ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊԻ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ  
ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐՋԻՆ ՄԻԳԵՐԸ  
(ԵՎ ՆՐԱ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԱՔՍՈՐԻՑ)**

Մեծ Եղեռնի նախաշեմին մաստանջություններով լի, խորը մղձավանջային սպրումներ է ունեցել հայ մեծանուն գրող, հրապարակախոս, միջոցային համբավի արժանացած իրավաբան և 1908-1915 թթ. թուրքական մեղչլիսի (պառլամենտ) պատգամավոր Գրիգոր Զոհրապը: Հատկապես Մեծ Եղեռնի նախաշեմին ականատես լինելով և զգալով երիտթուրքական կառավարության հայերի նրկատմամբ ստածած թշնամական քաղաքականությունը, բուն ջանքեր է գործադրել կանխելու արեւմտահայության վրա ծանրացած մեծ վտանգը:

Դեռևս 1911 թ. Նոյեմբերի 28-ին, Օսմանյան մեղչլիսի պատգամավորի իրավունքից ելնելով Գրիգոր Զոհրապը մեծ վեզիր Սալիկ փաշային ներկայացնում է մի խնդրագիր, որտեղ անհերքելի փաստերի հիման վրա բացահայտում է կառավարության անբարյացակամ վերաբերմունքը, կամայականությունն ու զեղծումները հայերի հանդեպ և Թուրքիայի հայաբնակ նահանգների ծանր դրությունը բարելավելու և հողային հարցը լուծելու միտումներով առաջարկում է համանական թվացող միջոցառումներ:

Ահա այս խնդրագրի օսմաներեն բնագրից մի հատված:

«Չնայած սահմանադրութեան հռչակումից անցել է չորս տարի, սակայն հայերով բնակեցված վիլայեթներում բարեփոխման ոչ մի նշան չի երևացել: Ընդհակառակը, վերջին երկու տարիներին հայերի վիճակը անտանելի է դարձել: Հիշյալ վիլայեթներում ունեցվածքի, պատվի և կյանքի ապահովութեան մասին խոսք անգամ լինել չի կարող, քարդի սպառնալիքները բնակչութեանը պահում են մշտական սարսափի մթնոլորտում: Ստացված տեղեկութիւններից պարզվում է, որ կան մարդիկ, որոնց քանքերով բնակչութեան համար տեղական վտանգավոր իրավիճակ է ստեղծվում: Ակնհայտ է, որ ամբողջապես հայերով բնակեցված այդ վիլայեթները կրկին նետվում են արշան հորձանուտը...»<sup>1</sup>

Գր. Չոբրապի ներդրած բոլոր քանքերը ինչպես նաև Կ. Պոլսի հայ Պատրիարքութեան ձեռնարկած միջոցառումները անցան ապարդյուն և հայերի վիճակը սատիճանաբար դարձավ ավելի վտանգավոր և օրհասական:

Գր. Չոբրապը նույնիսկ արեւմտահայերի գլխին կախված մոտալուտ վտանգը գրի է առել իր օրագրութեան մեջ: Այսպես, 1915 թ. Ապրիլի 25-ին կիրակի օրը նա արձանագրել է հետևյալը.

«Պատահեցավ ինչ որ պիտի պատահեր, երեկ դիշեր ոստիկանութիւնը շատ մը ձերբակալութիւններ ըրաւ հայերեն, բոլոր գլխավոր դաշնակցականները: Նախ Ակնունի, Զարգարյան, Փաշայան (Զարգարյանի տղան ստուն կանուխ տուն եկավ հաղորդելու այս լուրը): Հետո շատ մը բժիշկներ և դեղագործներ: Ի՞նչ պատճառով: Դավադրութիւն՞ — անհիմն: Զգուշութիւն՞, կամ հակահարված, այլուր պատահած դեպքերու զոր կանգիտանանք այստեղ այս ժամուս: Քիչ առենեն պիտի իմանանք:

Եվ ահա, ես, ազատ գիտեմ թե, իրօք, այս ձերբակալութիւններու գլուխը կգանձվի, և գիտեմ թե ինչ պատճառով ինծի խնայված է:

Հիմա Վարդգեսը եկաւ. ան միայն ազատ է... դա-  
ցինք քաղաքական պետերու տունը: Խոսեցանք, անօ-  
գուտ»:

Իսկ 1 մայիս, 1915 թ. կիրակի օրը Գր. Զոհրապը  
գրել է հետևյալը.

«Պատաններեն դադանապես հասած լուրերն ամեն  
տեղ ձերբակալութիւններ կիմացնեն: Պատանդներու այս  
գործը գերման գինձորական մտայնութիւն արդյունք:  
Ո՞ր օրին վերապահված է Հայոց ջարդը»:<sup>2</sup>

Գրիգոր Զոհրապը գրի առնելով այս տաղանապալի  
իրավիճակը, միևնույն ժամանակ առանց հապաղելու  
անցնում է գործի, տեսակցում և խնդրագրեր է ներկա-  
յացնում երիտթուրքական ղեկավար գործիչներին կան-  
խելու համար սպասվող մեծ աղետը:

Արևմտահայութեան զանգվածային կոտորածների  
նախաշնամբին տեղի ունեցած Կ. Պոլսի առաջին մահասար-  
սուռ ղեկաբերի ժամանակակից Արշակ Ալալոյանցյանը ահա  
թե ինչ է հայտնում այդ մասին:

«Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ  
Կ. Պոլսո ընակչութիւնը անակնկալի մը առջև կը դնէր,  
1915 Ապրիլ 11-ի (24) ձերբակալութիւնները եղան: Մեկ  
գիշերվան մեջ Կ. Պոլսո մտավորական դասակարգին ամե-  
նեն կարկառուն ղեմքերը և ժողովրդին՝ ամեն դասա-  
կարգեն 250 հոգիի շափ անձեր, ձերբակալվեցան և Զան-  
կըրը և Այաշ տարապրօքեցան: Գր. Զոհրապի նախագ-  
գացված վտանգը իր գոյութիւնը զգալի կ'ընէր: Զոհ-  
րապ, գերադույն ճիշտով մը փորձեց փրկել ինչ որ կարելի  
էր: Ինքն առաջիններեն մեկը եղավ, որ փութաց պատ-  
րիարքին մոտ, և սրտայնդեց: Այս առթիվ իր ձեռքով  
խմբագրված է եպարգոսին (մեծ վեզիր) ուղղված պաշ-  
տոնագիր մը, որ նույնութեամբ կը ներկայացնենք ի  
ստորև լուսանկարյալ: Զեռագիրն իրն է, իսկ ստորա-  
գրութիւնները խառն ժողովի մեջ կատարված խորհրդ-

դակցութեամբ եղած են»(3)

Հիշյալ խնդրագիրը Զավեն պատրիարքը, Գր. Զոհրապի մասնակցութեամբ ներկայացնում է մեծ վեպիւր Սայիդ փաշային: Երկու օր անց Գր. Զոհրապը մի այլ խնդրագիր է ներկայացնում ներքին գործերի նախարարութիւն: Հակառակ ձեռք առնված միջոցառումներին, ձերբակալութիւններն ու արքայները շարունակվում են:

Նշենք որ Արշակ Ալպոյանյանը իր գրքում զետեղել է այդ խնդրագրերի հայատառ թուրքերեն փոխադրութիւնները: Մեր այս հոդվածի վերջում, մենք առաջին անգամ ընթերցողին ենք ներկայացնում մեր կողմից կատարված այդ խնդրագրերի հայերեն թարգմանութիւնները:

Ինչպես տեսանք վերևում, Գր. Զոհրապը և Վարդգես Սերանդյուլյանը, Օսմանյան մեջլիսի պատգամավոր լինելու հանգամանքով Կ. Պոլսի հայ մտավորականների առաջին ձերբակալվածների թվում չէին: Նրանց ձերբակալութիւնը տեղի ունեցավ 1915 թ. Հունիսի 3-ին և երկուսն էլ թուրք ժանդարմաների հսկողութեան տակ արքայքանդակի ուղղութեամբ:

Այդ շարանենդ օրվանից սկսվում է Գր. Զոհրապի և Վարդգեսի տանջալից ուղևորութիւնը դեպի արքայքանդակ:

Աքտրի ճանապարհին Գր. Զոհրապի իր կնոջը, ինչպես նաև երիտթուրքական ղեկավար գործիչներին դրած նամակներն ու հեռագրերը պահվում եմ Երևանի Արվեստի և Գրականութեան թանգարանում: Այդ բոլորը թանգարանին է հանձնել Գր. Զոհրապի դուստրը՝ Տիկին Դուրես Զոհրապ-Լիսամանը: Այդ նամակները բոլորն էլ գրված են օսմաներեն լեզվով, որովհետև պատերազմի ժամանակ գրաքննութեան կանոններով արգելված էր այլ լեզուներով գրելը: Տարիներ առաջ, (մոտ 1977 թ.) դրանց մի մասը թարգմանել և ներկայացրել էինք թանգարանի անօրինութեամբ: Այդ նյութերը

խիտ անհրաժեշտ էին թանգարանի ավագ գիտնական Գոհար Ազնավուրյանին, քանի որ տվյալ ժամանակ, նա ուսումնասիրության նյութ էր դարձրել Գր. Զոհրապի աքսորավայրի ողիսականը: Աքսորավայրից իր սիրեցյալ կողակցին կլարա Զոհրապին ուղղված նամակներով և հեռագրերով, Գր. Զոհրապը տեսալես տեղեկություն է տվել իր գտնվելու վայրի, վիճակի և անարդարացի կայանքի համար, հորդորել է, որ միջոցներ ձեռնարկեն, ուղիներ որոնեն, որպեսզի դատաքննությունը տեղի ունենա ոչ թե Տիարաքերբում, այլ Կ. Պոլսում:

Գր. Զոհրապը նամակներ է հղել նաև հետևյալ հասցեատերերին:

1) Ներքին գործերի նախարարություն, Թալեաթ բեյին: 2) «Միություն և Առաջադիմություն» կուսակցութեան կենտրոնական կոմիտեի անդամ Դոկա Նազըմին: 3) Արդարադատության և արտաքին գործերի նախարար՝ Խալիլ բեյին: Սա այն Խալիլ բեյն է, որին Գր. Զոհրապը երիտթուրքական հեղափոխության օրերին ապահովության համար թաքցրել էր իր տան մեջ: Աքսորի օրերին, Գր. Զոհրապը շատ մեծ հույսեր է ունեցել, որ իրեն կօժանդակի, բայց Խալիլ բեյը մերժել է միջամտել նրա գործին: 4) Կառավարական բարձրաստիճան գործիչներ՝ Նեջիմեատին էֆենդիին, Հիւսեյն Զահիդ բեյին, Հալաճյան էֆենդիին, Տիպեր էֆենդիին:

Պաշտոնատար այս անձանց ուղղված նամակներում, Գր. Զոհրապը նշում է, որ ինքը անմեղ է, իսկ իր ձերբակալությունը՝ անարդարացի և հետևանք է դավադրության: Ուստի, պահանջում է, որ դատաքննությունը տեղի ունենա Կ. Պոլսում: Նշում է նաև, որ պատվով և հավատարմությամբ է կատարել իր պարտականությունը պետության հանդեպ: Փաստացի տվյալներով ապացուցում է իր անմեղությունը, նշում է, որ ինքը ոչ մի հանցանք չի գործել, այլ ընդհակառակը գործնականապես բարոյական

և նյութական օգնություն է ցուցաբերել պետությունը:

Ահա մի հատված ներքին գործերի նախարարության ուղղված նամակից.

«Հատուկ հարցաքննության համար ինձ ուղարկում են Տիարալեքիո Հողվածիս ինչ լինելը չգիտեմ: Ըստ տարածված լուրերի, իբր թե ես հակադրոժունություն եմ ունեցել կառավարության հանդեպ: Այս մեղադրանքը մերժում եմ ամբողջ խղճովս Որևէ գործի կատարյալ քննության և արդարացի ընթացքի համար անհրաժեշտ է, որ քննվողը տեղյակ լինի մեղադրական հարցերին: Ես ոչ մեկ խմբավորման և կուսակցության չեմ պատկանել: Երեսփոխանական ժողովներում տեսապես ծառայել եմ պետությանը և այլ գործունեություն չեմ ունեցել»:

Ի միջի այլոց Գր. Զոհրապը, Վարդգեսի հետ Հալերում գտնվելու ընթացքում, մի նամակ է գրել նաև Զեմալ փաշային և կարողացել են տեսակցել նրա հետ «Պարոն» հյուրանոցում: Սակայն այդ հանդիպումը, ինչպես նաև վերոհիշյալ հասցեատերերին դրված նամակները ոչ մի դրական արդյունք չեն տվել: Եվ վերջապես հետևանքը եղավ այն, որ Վարդգեսն ու Գր. Զոհրապը դավադրարար սպանվեցին աքսորի ճանապարհին, 1915 օգոստոսի 2-ին:

Ահա թե ինչ է ստում այս մասին երխաթուրքական գործիչ Ֆալիհ Ռըֆքը Աթայը իր «Զեյթինտաղը» գրքում:

«Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զոհրապն ու Վարդգեսը ճանապարհին սպանվել են Չերքեզ Ահմեդ եւ Նազըմ չեթենների կողմից: Ծեծալ փաշան հրամայեց, որ երկուսն էլ անմիջապես ձերբակալվեն: Սակայն Չերքեզ Ահմեդը և Նազըմը, տեղեկանալով այդ մասին, առաջին իսկ գնացքով փախել էին Ստամպուլ, քանի որ Ստամպուլից հոսվանապոռում էին նրանց» (Ընդգծումը մերն է, — Ա.Փ): (4)

Կարծում ենք, որ այստեղ մեկնաբանությունները ավելորդ են:



Գրիգոր Զոհրապի վերոհիշյալ նամակները գրված են Համեմատաբար հստակ և մեղանով սպիտակաթուղթի վրա: Բոլորը ունեն թվագրություններ և հասցեատերեր: Սակայն, թանգարանում պահվող Գր. Զոհրապի ձեռագրերի մէջ կա մի նամակ եւս «Ֆերչատնամն» (օգնութեան աղերսագիր) վերնագրով, որը առ այսօր հնարավոր չէր եղել թարգմանել, որովհետև այն գրված է բավականին դժվար ընթեռնելի ձեռագրով. մի քիչ հաստոտ, դեղնաթուղթի վրա, այն էլ մատիտով: Չունի թվագրություն:

Այն չի հասցեագրված որևէ մեկին, այլ ուղղված է բոլորին: Ավելի ճիշտ մարդկային խնդր կորցրած նախկին իր զգործընկերներին»:

Կարծում ենք, որ այդ նրա վերջին օրերին գրված նամակներից մեկը պետք է լինի (եթե ոչ վերջինը), որովհետև բովանդակութենից այդպես է հասկացվում հուսահատություն և փրկութեան ոչ մի նշույլ...

Ստորև առաջին անգամ հրատարակում ենք Գր. Զոհրապի երկու խնդրագրերը՝ ուղղված Կոնստանդնուպոլիսի Մայրի փառային եւ բյներքին գործերի նախարարութեան: Վերջում արվում է Գր. Զոհրապի քարտավայրից, օամաներեն գրված վերջին նամակի թարգմանութեանը:

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Խնդրագիր առ Ձերդ պայծառափայլ վեգիբուքյան:

Թէև ներկայումս գենքի տակ գտնվող 50 հազարից ավելի հայ գիւնդորների մի մասը կոզում և արևն է թափում մեր սահմաններում, իսկ մյուս մասը պատրաստ է պատերազմի մեջ մտնել և կատարել իր քաղաքացիական պարտքը, այսուհանդերձ, տարածված շարամիտ լուրերի հետևանքով կտապաբարկան շրջաններում նկատվում են մի շարք նշաններ, որոնք նկատվում են հայերի հանդեպ նրանց ունեցած անխտահուսութեան մասին:

Ավելին, պատրիարքարանի ընդհանուր ժողովի նախագահը մի քանի անդամների հետ միասեղ, ինչպես նաև աշխարհիկ ժողովի անդամներից երկուսը, Կ. Պոլսում բնակվող երևելի մի քանի անձանց հետ կայանքի ստնելով աքտը են ուղարկվել: Դեպքերն այս խորապես վրդովել են իմ ժողովրդին: Եթե օրենքի պահանջից ելնելով ոչինչ չենք կարող ստել գինվորական դասալիքներին ձերբակալելիս գործադրվող հետապնդումներին եւ խառնթյունների առթիվ, ապա ցայսօր իմ ժողովրդի նկատմամբ ինչ որ չափով մեղձ վարվելու խնդիրը չենք կարող անիրավացի համարել: (Քրիստոնյաների) համար աննախադեպ այս գորահավաքի առթիվ հայերի շփոթմունքը թուրքերի համեմատությամբ, եթե մի քիչ ավելի խորն է, ապա մեր վսեմափայլ կառավարությունը պետք է որ ընկալի դրա բնական լինելը:

Դասալիքների դիմադրությունը հետախուզական գործերին մեծ հանցանք լինելով հանդերձ մարդկայնորեն բնական է և հեռու է քաղաքական մտայնությունից: Պատերազմը և պատերազմական թատերաբեմի մերձավորությունը հայաբնակ վայրերին այն մտայնությունն է ծնել, թէ իբր այդ դասալիքները քաղաքական նպատակ հետապնդող Ֆետայիներ են: Դժբախտաբար կատվածի տակ են առնվել ոչ միայն մեծ թվով ընտանիքներ և գյուղացիներ, այլ ընդհանրապես այդ շրջանի ամբողջ հայ բնակչությունը: Դրա հետևանքն են բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունները և նույնիսկ հայ գինվորների գինաթափումը: Երկրի հազարավոր զավակների հետ մեկտեղ հայրենիքի պաշտպանության համար մարտնչող իմ ժողովուրդը բոլոր այս ահաբեկումները խորին վրդովմունք և վիշտ պատճառելով, հուսարեկել են նրան: Եվ այս արարքը ջուր է լցնում այն մարդկանց ջրաղացին, որոնք ցանկանում են պառակտել մինչև հիմա եղբոր պես ապրող հայ և թուրք բնակչությանը:

Վսեմափայլ կառավարութեան այն կասկածը թէ հա-  
յերը պատրաստ են և կամ թէ նախապատրաստում են  
սպասամբութեան, իսկ մյուս կողմից հայերի այն մտա-  
փախութեանը թէ իրենք ենթարկվելով անիրավացի ահա-  
բեկումների կարող են կանգնել ընդհանուր ֆարդի առաջ,  
երկու ըստ էութեան իրար հակասող մտքեր են, որից էլ  
ծայր են առնում վերոհիշյալ պատահարները: Օրըստօրն  
հակասական և շարածին այս ըմբռնումներին անհապաղ  
վերջ տալու համար անհրաժեշտ է հրատապ քննություն  
կատարել: Եվ ես պատրաստ եմ առանց վարանման հարկ  
եղած երաշխավորութիւնը տալ, որ խաղաղութեան ու ան-  
դորրի կարտա իմ ժողովուրդի մեջ գոյութիւն չունի ան-  
հավասարմութեան ոչ մի նշան:

Հարգանք մատուցելով հայրենիքի ու պետութեան  
պաշտպանութեան համար իրենց կյանքը նվիրած հայ գին-  
փորների հիշատակին, թախանձագին խնդրում եմ և աղա-  
չում Ձերդ վսեմափայլ կառավարութեան գթութիւնը և  
բարի կամեցողութիւնը սազահովութեան վերականգնման  
գործում:

Այս հարցում կամքն ու հրամանը Նորին Վսեմու-  
թիւն սուլթանինն է:

13 Ապրիլի 1331 (26 ապրիլ 1915 թ):

Բ. ԽՈՊՐԱԳԻՐ առ մեր բն գործերի վսեմափայլ մա-  
խարարութեան

Անցյալ կիրակի գիշերը ձերբակալված հայուրավոր  
հայերի բանտից ազատելու վերաբերյալ սրված վսեմ խոս-  
տումը գործի վերածելու հարցը առայժմ մի կողմ թող-  
նենք, քանի որ՝ մինչև այսօր, նույնիսկ անհնար է դարձել  
որևէ անդեկություն ստանալ ձերբակալվածների կալանա-  
վայրի և վիճակի մասին:

Մյուս կողմից պատրիարքարանին սրված երաշխա-  
վորութեան անհետևանք լինելը ցույց է տալիս, որ հայերի

մասին տարածված հոռի կարծիքը խոր արմատ է պցել Եվ բուրբուրովին կասկածից զուրս է, որ այդ հոռի կարծիքը կարող է հայերին մի նոր աղետի առաջ կանգնեցնել:

Թեև, այսպիսի ժամանակներում է, որ պատրիարքարանը պետք է ծառայութուն մատուցի պետութեան և ազգին, սակայն նա ոչ միայն չի կարողանում իր օգտավետ ներդրումը բերել գործին այլև գտնվելով խորը վշախ և մտառանջութեան մեջ ի վիճակի չէ ապահովել իր ժողովրդի անվտանգութունը:

Ինքս եւս, այս կապակցութեամբ գտնվելով անելանելի և շփարած վիճակում, համարձակվում եմ խորին ակնածանքով խնդրել Ձերդ պայծառափայլութեան օգնութունն ու գթութունը:

Այս հարցում, կամքն ու հրամանը Նորին վեսմութուն սուլթանինն է:

Ապրիլ 15, 1331 (Ապրիլ 28, 1915թ.)

#### Գ. ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՍԱԳԻՊ

Գոնիայից Ատանա, Ատանայից Հալեբ և այնտեղից էլ դեպի Տիրապէքիբ քարշ եմ գալիս Սրտի հիվանդութիւնս այն աստիճան ծանրացավ, որ օրվա մեջ երեք անգամ տազնայ եմ ունենում:

Մի կողմից դեղորայք են տալիս, մյուս կողմից թեկիցս բռնած քարշ են տալիս: Ինչո՞ւ համար, ո՞ր հանցանքիս(--) համար: Այն դեպքում երբ առկա չեն նախնական ոչ մի ապացույց, կասկած և կամ փաստացի հանցանշան: Մի խուբով միթէ՞ կարելի է անարդարացիորեն կատարել այս նամբորդութիւնը:

Աստուծո անուճով, ընտանիքիս և զաւակներիս անունով երդվում եմ, ամեն օր, ամեն վայրկեան պետութեան ծառայելուց բացի ոչ մի այլ բան չեմ արել: Իսկ զաղտնի գործի մեջ բուրբուրովին չեմ խառնվել:

Թող որ մի նախնական հետաքննութիւն կատարվի

Եթե աննշան մի կտակած էլ ի հայտ գա, այդ դեպքում  
աջտորեք, ինչ ուղում եք արեք:  
Ապավինում եմ ձեր խղճին(5)

Շնորհակալութուն  
ԶՈՀՐԱՊ

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ ԱՆԱՏՈՂ ՖՐԱՆՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1994 թ. լրացավ Ֆրանսիացի մեծագույն գրող, հրապարակախոս Անատոլ Ֆրանսի (1844-1924) ծննդյան 150ամյակը: Նրա հորելյանական տարելիցը ըստ արժան-վույն նշվեց Երևանում, մայիսի 25ին, Հայաստան-Ֆրանսիա Ընկերություն նախաձեռնությամբ, Արտասահմանյան երկրների հետ բարեկամություն և մշակութային կապերի Հայկական քննչություն դահլիճում:

Անատոլ Ֆրանսը եղել է առաջին մարդասեր անձ-նավորություններից մեկը, որն իր գրական ստեղծագոր-ծական աշխատանքին զուգընթաց եռանդուն մասնակ-ցություն է հանդես բերել կանխելու արևմտահայության հալածանքները Օսմանյան կայսրությունում:

Գրական գործունեությունը սկսել է որպես լրագրող և բանաստեղծ: Հանրահայտ ճանաչում է ստացել 1881 թ. հրատարակված «Սիլվեստր Պոնարի ոճիրը» վեպով. (Այն լույս է տեսել հայերեն 1922 և այնուհետև 1976 թթ.): Գրել է բազմաթիվ պոեմներ, պատմվածքներ, վեպեր, ինչ-պես նաև երգիծական քառերգություններ, որտեղ վա-զերագրական ճշմարտություններ վերարտադրել է 19րդ դա-րի Ֆրանսիայի քաղաքական կյանքը: Իր հրապարակա-խոսական աշխատանքներում, ջատագովել է դեմոկրա-տիան, սոցիալիզմի դադափարախոսությունը, որպես ապա-գայի օրինաչափ և դրական իդեալ:

1896 թ. ընտրվել է Ֆրանսիայի Ակադեմիայի ան-դամ, իսկ 1921 թ. արժանացել է Նորելյան մրցանակի:

Անատոլ Ծրանսը սերտ շփման մեջ է եղել նաև Հայ ականափոր գրող Արշակ Զորանյանի հետ, օգնել է նրան կազմակերպելու Հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին նվիրված Հավաքույթներ և դիտաժողովներ: Իզուր չէ, որ նրա ստեղծագործությունների զգալի մասը թարգմանվել և հրատարակվել է Հայերեն լեզվով: Ահա դրանցից մի քանիսը. «Երեք դար ու կես հետո», «Մենդյան տունի ֆանտազյա», Ալեքսանդրապոլ, 1912, «Կարմիր շուշան», Երևան, 1966; «Սպիտակ քարի վրա», «Ատոփածները ծարավի են», «Հրեշտակների ապստամբությունը», Երևան, 1959 և այլ գործեր:

Ինչպես նշեցինք, Անատոլ Ծրանսը եղել է առաջալի Հայ ժողովրդի, նրա հոգևոր և նյութական արժեքների աննկուն պաշտպանը և մինչև իր կյանքի վերջը մնացել է որպես հավատարիմ բարեկամ և ողջունել նրա վերածնունդը: Նա իր ամբողջ էությունը դատապարտել է աբդուլհամիդյան բռնաախրության շրջանում տեղի ունեցած Հայերի հալածանքները, ինչպես նաև հետագայում երիտթուրքական դահիճների արևմտահայությունի սպառ բնաջնջելու ցեղասպան քաղաքականությունը:

Դեռևս 1894-96 թթ. Աբդուլ Համիդի դաժան նախաձեռնությունը կազմակերպված Հայերի կոտորածների ընթացքում, անձամբ մասնակցել է նվիրատվությունների հանգանակմանը և նվիրվել որբացած Հայ երեխաներին սովից փրկելու վեհ գործին:

Այնուհետև 1900-1914 թթ. Անատոլ Ծրանսը և այլ հանրահայտ մարդասերներ՝ Ժան Ժորեսի և Ծրանիս գը Պրեսանսի հետ ընդգրկվել է Փարիզում հրատարակվող Pro Armenia հանդեսի խմբագրություն կազմի մեջ և եռանդուն գործունեություն ծավալել վերջ սալու Հայերի հալածանքներին:

1903-1904 թթ. մասնակցելով ըի պաշտպանություն

Հայաստանի և Մակեդոնիայի» կոմիտեի Եվրոպայի տարրերը երկրներում կազմակերպված խորհրդատուականներին, իր սուր և դիպուկ ելույթներով անարգանքի սյունին է դամել Հայ Ժողովրդի ոխերիմ թշնամիներին:

1903 թ. մայիսի 24ին, Հռոմի "Adriano" թատրոնի դահլիճում արտասանած ճառում Անատոլ Ծրանսը նշել է. «Սուլթան Աբդուլ Համիդ երկրորդը մի հրեշ է, որը մշտապես զողում է իր խղճուկ ամենագորության մեջ, և, սարսափելով իր խել ոճրագործություններից, իրեն հանգըստացնում է նրանով, որ նոր ոճիրներ է գործում: 1893ից մինչև 1896 թ. նա կախել ու ողջակիզել է 300,000 հայերի և այդ ժամանակից սկսած նողկալի զգուշավորություններ գրառվում է ողբացած ժողովրդի հեանողական բնաջնջմանը...»:

Մի հողվածի սահմաններում հնարավոր չէ մանրամասն կանգ առնել Անատոլ Ծրանսի գրական, հրատարակատեսակական, քաղաքական գործունեությունը, և հատկապես Հայ Ժողովրդին նվիրված նրա ճառերին և գրվածքներին, որոնք բավականին շատ են: Այսուհանդերձ, որոշակի պատկերացնում կազմելու համար նրա մարդասիրական գործունեությունը, ստորև բերում ենք մի հատված 1916 թ. ապրիլի 9ին, Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում, Հայաստանին նվիրված երեկոյի ընթացքում արտասանած ճառից: Այն լույս է տեսել "Amitiés Franco-Etrangères" թիվ 4, մայիս-հունիս, հանդեսում, էջ 33-35: Հատվածի հայերեն թարգմանությունը քաղել ենք ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությունում 1991 թ. Երևանում հրատարակված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուից: ՏՆ՝ էջ 527-529:

\* \* \*

Երբ քսան տարի առաջ Սուլթան Աբդուլ Համիդի



կազմակերպած շարժերը արյամբ հեղեղեցին Հայաստանը, Եվրոպայում միայն մի քանի ձայն մի քանի վրդովված ձայներ բողոքեցին մի ամբողջ ժողովրդի խեղդելու դեմ: Ծրանահայում խիստ ընդդիմադիր կուսակցությունների պատկանող աննշան թվով մարդիկ միավորվեցին պաշտպանելու խորապես անարդված մարդկության իրավունքները: Դուք գիտեք նրանց. Ժորես, Դընի Կոչեն, Գաբրիել Սևայ, Էռնեստ Լավիս, Ժակ Ֆինո, Վիկտոր Բերար, Ծրանսիս դը Պրեսանսե, Հայր Շարմլտան, Պիեռ Կայար, Կլեմանտ, Ալբեր Վանդալ և էլի մի քանի մարդ, որոնց անունները, ներեցեք, չեմ մտաբերում: Մնացածները համբ էին: Շատերը խորին խղճահարությամբ համակվեցին հայերի հանդեպ, բայց քանի որ սովորաբար մարդկանց մեծամասնութունը երես է թեքում դժբախտներից, ապա շատերը կարողացան հիմքեր գտնել մեղադրելու զոհերին, նրանց կշտամբելով թուլակամության մեջ: Ոմանք, պաշտպան կանգնելով դահիճներին, վերջիններիս պատկերում են իբրև մարդկանց, որոնք պատժում են խռովարարների կամ վրեժ լուծում այն թուրք բնակիչների համար, որոնց սնանկացրել են քրիստոնյա վաշխառուները—:

Սակայն, շնայած հայասերների բողոքներին և մի քանի տերությունների վեհերոտ դիմումներին, հակառակ թուրքական կառավարության հավաստիացումներին, հալածանքները՝ երբեմն խլացված ու քողարկված, չէին դադարում: Պալատական հեղաշրջումը անհարկի փոխեց կայսրության ղեկավարներին: Երիտթուրքերը, տիրանալով իշխանությանը, իրենց դաժանությամբ գերազանցեցին Արդուլ Համիդին, կազմակերպելով Ազանայի կոտորածը: Ժամանակի ընթացքում Արևելքի այդ քրիստոնյաների դժբախտությունները ձանձրացրին մարդկանց, հայերը մնում էին օտար՝ քաղաքակիրթ Եվրոպային: Հայ ժողովրդին մենք գիտեինք ոչ այլ կերպ քան այն հար-

վածներին, որ հասցնում էին նրան: Մենք պատկերացում չունէինք ոչ նրա անցյալի, ոչ նրա ոգու և զավանանքի, ոչ էլ նրա բաղձանքների մասին: Անհասկանալի էր մնում, թե ինչու էին նրան կոտորում:

Այդպես էր դեռ մի երկու տարի առաջ: Պայթեց համաշխարհային պատերազմը: Թուրքիան նրա մեջ մտավ որպես Գերմանիայի կամակատար: Եվ հանկարծ Հայաստանն ու նրա մարտիրոսությունն պատճառները միանգամայն այլ լույսի ներքո հառնեցին Ֆրանսիայի առջև: Մենք հասկացանք, որ թուրք կեղեքչի և Հայի տևական անհավասար պայքարը՝ բռնակալության պայքարն է, բռնակալության պայքարը ընդդեմ արդարության և ազատության ոգու: Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զուհին՝ մեզ հառված մարող աչքերով, որոնց մեջ հույսի շող առկայծեց, մենք վերջապես հասկացանք, որ այդ մեր քույրն է մեռնում Արևելքում և մեռնում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա համակված էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչպես մենք ենք սիրում, մտածում էր այնպես, ինչպես մենք ենք մտածում, հավատում էր նրան, ինչին մենք ենք հավատում, և մեր նման գնահատում էր իմաստությունը, արդարությունը, քերթությունը, արվեստը: Սա էր նրա անբաժելի հանցանքը:

Հետևաբար, տիկնայք և պարոնայք, հարկավոր է, որ Ֆրանսիացիների հավաքը պատշաճը հատուցի անհուն դժբախտության մասնված այդ ժողովրդին: Մենք կատարում ենք մեր սրբազան պարտքը, Հայաստանին մատուցում նրան արժանի մեծարանքներ՝ ոչ այնքան բոլորին Հայասնի տառապանքների համար, որքան այն տուհունության համար, որով նա դրանք տանում է...:

Ի դէպ, մեզ սիրող այդ ժողովրդին բնաջնջելու որոշումն ընդունվել էր թուրքական կառավարության խորհրդակցություններում: Բոլոր հայերը, որքան որ

կային Սամսոնից մինչև Դիարաքեքի՛ր՝ երիտասարդներ,  
ծերունիներ, կանայք, երեխաներ, նրանց բոլորը զոհվեցին,  
սպանվելով սուլթանի հրամանով, Գերմանիայի հանցակ-  
ցութեամբ:

Հայաստանը վերջին շնչումն է, բայց նա կվե-  
րածնվի:

Արյան այն փոքր քանակությունը, որը նա դեռևս  
պահպանում է, թանկագին արյուն է, որից հերոսական  
սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդը, որը մեռնելի չի  
ուզում, երբե՛ք չի մեռնի...<sup>3</sup>,

## Բ. ՀԱԿԱՀԱՅ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԹՈՒՐԹ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

### ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀԱԿԱՀԱՅ ՆՈՐ ԳՐԹԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ԹՈՒՐԹՈՒՆԵՐԻՄ

1995 թ. Հայերի ցեղասպանության 80-ամյա տարելիցի նախօրէին, Հայ-թուրքական փոխադարձ հանդիպումների ընթացքում, ակնարկութուն եղա՞վ, որ ցեղասպանությունը պատմաբանների քննարկման հարց է և գոյութուն ունեցող վեճերը անհրաժեշտ է թողնել նրանց:

Դժբախտաբար այդ հանդիպումներից անմիջապես հետո թուրքական պատմագրութունը, ավելի ճիշտ թուրքիայի արխիվային վարչութունը սկսեց մի շարք այսպես կոչված փաստագրական նյութեր հրատարակել Հայերի կատարած գուլումների մասին և մեղքը բարդելով Հայերի վրա հայտարարել, որ թուրքերն են ենթարկվել ցեղասպանության: Չորս հատուկ բաղկացած այդ հրատարակության խորագիրն է «Կովկասում և Անատոլիայում Հայերի կատարած դաժանութունները ըստ արխիվային փաստաթղթերի»: Առաջին հատորի նախաբանում, պատմաբան Ալի Նաջի թունջերը գրում է, «այս փաստաթղթերը ցույց են տալիս, որ ոչ թե թուրքերն են կոտորել Հայերին, ինչպես պնդում են Հայերը, այլ, ընդհակառակը, Հայերն են կոտորել թուրքերին: Եւ այս ճշմարտութունը շատ պարզ երևում է բերված փաստաթղթերում»:

Նույն միաքն է կրկնում նաև Թուրքիայի պետական արխիվների ընդհանուր անօրեն՝ Իսմեթ Պինարքը նշելով, որ «Ամեննն իրապաշտ և վստահելի ճամբան այսպիսի նշմարություններ երևան հանելն է՝ արխիվների վրա հիմնվելով և ցույց տալ, թե բուն գույլումը կատարված է հայերի կողմից»։ Բնականաբար այս արխիվային փաստաթղթերի հրատարակմանը հաջորդեցին այլ գրքեր ևս, որոնցից կուզեինք առանձնացնել Հյուսեյն Նազըմ փաշայի 1897 թ. գրված «Հայկական դեպքերու պատմությունը» խորագրով գիրքը, որ կրկին լույս աշխարհ է գալիս 98 տարի հետո, մեր օրերում։ Բանից պարզվում է, որ այս գիրքը իր ժամանակին Հյուսեյն Նազըմ փաշան ձօնել է սուլթան Աբդուլ Համիդ Բ-ին։ Մեզ մնում է եզրակացնել, եթե ավյալ գիրքը իր ժամանակին նվիրվել է մեծ բռնակալին, ուրեմն այն պետք է շարադրված լինի հակահայկական, հայերին ամբաստանելու ոգով։

1906 թ. վանում լույս տեսավ նաև Կյուրսոյ Սուժազի առաջարանով հետևյալ խորագրով գիրքը. «Հրգրումում, Սարիգամիլում և Կարսում հայերի կատարած դաժանությունները (1918-1920 թթ)»։<sup>1</sup> Այս գրքում ընդգրկված են այսպես ասած այդ դաժանությունների զականատեսները՝ նկարագրությունները, թվով 99 հոգի։ Ընթերցելով այդ գիրքը նկատեցինք, թե ինչպիսի շինծու, երևակայական նկարագրություններ են ընդգրկված հայերի կատարած «դաժանությունների» մասին։ Եվ իբր հայերի կատարած դաժանությունները զսպելու համար 1920 թ. Մեկտեմբեր 28-ին, Արևելյան ռազմաճակատի հրամանատար, զորավոր Քյայիմ Կարաբեքիրը հարձակվում է հայերի վրա (էջ 15)։ Կարաբեքիրի կատարած ավերածությունները և կոտորածները հայտնի է բոլորին։ Նույնիսկ Թուրք պատմարան Զեմալ Քութալը մի գիրք գրեց, որի խորագիրն էր «Ինչպե՞ս Կարաբեքիրը ոչընչացրեց Հայաստանը»։<sup>2</sup>

Այս բոլորից հետո, վերահիշյալ գրքում, Շեվքեթ Օղլու Հաջի Լեզգի Ուրայ անունով թուրք ականատեսներից մեկը կարարեքիրին նկարագրում է որպես բարի և գթասիրտ մի անձնավորություն: Այսպես, «Մենք սուղացանք մինչև Գյումրի: Քարապեքիր վաչան շատ գթասիրտ մի անձնավորություն էր: Նա, մեր մեջ դա՛նստղ Հայ գերիներին և երեխաներին ուտելիք էր բաժանում, Հազուստեղեն էր տալիս Հայերի աներին և Հայ կանանց ոչ ոք չհամարձակվեց ձեռք տալ»:<sup>3</sup> Այս բոլորը բնականաբար բացահայտ կեղծիք է, քանի որ Քյազիմ կարարեքիրը նույնիսկ բացահայտ խոստովանում էր, որ ինքը աշխարհի երեսից ջնջելու է Հայաստանը:

Թուրքական մյուս հրատարակությունների նման, այստեղ ևս խոսվում է, որ ոչ մի նահանգում Հայերը մեծամասնություն չեն կազմել: Եվ ընդհանրապես Հայերին արվում է իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող հեռույալ նենգապատիր բնութագրումը: «Իրենց «Հայ» իսկ բնակավայրը Հայաստան անվանող Հայերը, պատմության մեջ և այսօր ոչ մի ժամանակ Հայաստան, Հայաստանցի, Հայ անունները իրենց Համար երբեք չեն օգտագործել»:<sup>4</sup>

Վերևում մենք բերեցինք տարբեր բնույթի փաստեր, որոնք ցույց են տալիս թե ինչպիսի հնարքներով այսօր թուրք պատմաբանները աղավաղում և նենգափոխում են Հայ ժողովրդի պատմությունը: Ստորև մենք կանդրադառնանք արդուլհամիդյան բռնատիրության շրջանի, ինչպես նաև Հայերի ցեղասպանության վերաբերող մի քանի հանգուցային հարցերին, որոնց խեղաթյուրմանը ընդհանուր առմամբ մեծ տեղ է հատկացվում արդի թուրքական հրատարակություններում:<sup>5</sup>

Այսպես, թուրքական պատմագրությունը ամեն ջանք դործադրում է խեղաթյուրելու արդուլհամիդյան բռնատիրության շրջանում տեղի ունեցած ողբերգական

իրադարձությունները, որոնց ինչպես հայտնի է զուհնացին 300,000 անձեզ հայեր: Անտեսելով պատմական փաստերը, թուրք պատմաբանները այսօր աշխատում են փառաբանել արյունարբու սուլթանին, որպես թուրքիայի պատմութեան մեջ «մեծ» դեր խաղացած պետական գործչի: Այս տեսակետից փայլուն օրինակ կարող է հանդիսանալ Չուհուրի Գամիշմանի բազմաշատորանոց աշխատութիւնը, որի մեջ հեղինակը ամեն կերպ ձգտում է սրբացնել Աբդուլ Համիդին և ժխտել համաշխարհային մամուլում նրան արված գնահատականը, դրականի վերածելով նրա բոլոր բացասական կողմերը: Աբդուլ Համիդը ներկայացվում է ոչ թե վախկոտ, նենգ, դաժան, այլ քաջ, արդարամիտ և վեհանձն անձնավորութիւն, որն իր ազգի համար ավելի շատ գործեր է կատարել, քան որևիցե մի այլ սուլթան և այլն: Այս աշխատութեան 13-րդ հատորում նշված է, որ Գերմանիայի կայսեր հետ ունեցած հանդիպման ժամանակ, Աբդուլ Համիդը բացահայտորեն ասել է. «Ես ավելի կը նախընտրեմ մեռնել, քան թե Անատոլիայի արևելքում ինքնավարութեան տանող բարեփոխումներ անցկացնել»:<sup>6</sup> Ահա այս սկզբունքից ելնելով, Աբդուլ Համիդը հայկական հարցի վերացման համար վարում էր արևմտահայերի բնաջնջման քաղաքականութիւն:

Բուլոբին հայտնի է, որ 1894-96 թթ. Սասունում և այլուր տեղի ունեցած հայերի կոտորածները ինչպես ցնցեցին ամբողջ աշխարհը, յատկապես այն խորը ցատում առաջացրեց Եվրոպայի ժողովուրդների մոտ, որոնք խըստազույն կերպով դատապարտեցին այն:

Այդ մասին կան նաև դեպքերի ժամանակակից մի շարք հայտնի թուրք մտավորականների դիպուկ գնահատականները, որոնցից մի քանիսը բերում ենք այստեղ: Այսպես թուրք պատմաբան և գինվորական գործիչ Օսման Նուրին գրել է.

«Այս Զարդը բոլոր պարագաներում մի ահարկու եղևոն էր պատմության դեմ: Իսկ այս եղևոնի պատճառ հանդիսացողը, անխակած նույն Աբդուլ Համիդ երկրորդն էր, որը ղեկավարում էր Երլարզի այդ հրոսակախումքը և կոտորում էր ոչ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ Հայրենիքը»:<sup>7</sup>

Երիտթուրքական հայտնի գործիչ, իրավարան Ջելալ Նուրին, 1911 թ. հրատարակված իր *Kabus (Մղձավանջ)* խորագրով գրքի հայերեն թարգմանությունում ասաջարանում գրել է. «Աբդուլ Համիդի սուլթանության շրջանը անկախած հայ ժողովրդի պատմության ամենատրեղական շրջաններից մեկն է, քանի որ հայերը այդ ժամանակահատվածում բավականաչափ զոհեր տվին. և մենք թուրքերս բռնակալ վիճակի տի հրահանգով կատարված այս բոլոր ոճրագործությունների համար տեղազես ցավ ենք ըզգում»:<sup>8</sup>

Իսկ հանրահայտ թուրք գրականագետ և քաղաքական գործիչ Համդուլլահ Սուրհի բեյը, իր «էրթոզուլ» վերնագրով գրքի հայերեն թարգմանությունում գրել է.

«Ես, այն մեկն եմ ձեր թուրք հայրենակիցներից, որը հայերի կրած դժբախտությունների համար վերին աստիճանի ազդվել, և նրանց, տարած տառապանքների համար, խորապես ցավակցել եմ»:<sup>9</sup>

\* \* \*

*Թուրքիան իր հակահայ քարոզչական շարժումը առավել ուժեղացրեց հասկապես 2001 թ., երբ Ֆրանսիայի Խորհրդարանը, հունվարի 18-ին միաձայն ճանաչեց և օրենքի ուժ տվեց 2000 թ. նոյեմբեր 18-ին ընդունված Հայոց Յեղասպանության բանաձևին:*

Նոր թափ ստացավ հակահայ գրքերի հրատարա-



կությունը:

Այսպես, 2001 թ. Հունիսի վերջերին, Թուրքիայի Խորհրդարանի նախաձեռնությամբ հրատարակվեց «Հայերը Օսմանյան կայսրության վերջին շրջանում» խորագրով մի գիրք, անգլերեն լեզվով: Գիրքը պատրաստված է տեղացի և օտար հեղինակների կողմից: Խմբագիրն է փրոֆ. Թուրքայա Աթայովը: Թուրքիայի Խորհրդարանի նախագահ Էօմեր Իզկին, Հունիսի 27-ին կազմակերպված գրքի շնորհանդեսի բացման սկզբում նշել է. «Այս գիրքը վկայակոչում է, որ Թուրքերի կողմից Հայ Համայնքի նկատմամբ որևէ ցեղասպանություն դործադրված չէ»:<sup>10</sup>

Բնականաբար, այս գրքերին հաջորդեցին հակահայ նպատակադրվածություններ և ցեղասպանության փաստը ժխտելու միտումով գրված գրքերի մի նոր շարան, որոնք նույնություններ կրկնում էին Թուրքական պատմագրության 88 տարիների ընթացքում արտահայտած սխալ տեսակետները:

2001 թ. լույս տեսած այգյալիսի գրքերից մեկն էր նաև Թուրք պատմաբան էրտալ Իլթերի «Թուրք-հայկական կապերի մատենագիտություն» խորագրով գիրքը: Նշենք, որ այն դերևս առաջին անգամ հրատարակվել էր 1997 թ. 300 էջ ծավալով: Հեղինակը այս վերջինը ընդարձակել է հակահայկական այսպես ասած նոր նյութերով և մատենագիտությամբ, դարձնելով այն 421 էջ: Ըստ «Ակոս» շաբաթաթերթի Թուրքերեն բաժնում տրված տեղեկության, գիրքը սկսվում է Հայերի հասցեին ուղղված հետևյալ գրադարտիչ խոսքերով-

«Հայերը 19-ը և 20-րդ դարերում կատարվածի նրման, այսօր էլ բազմաբնույթ քարոզչություններով, վարպետորեն շարունակում են իրենց դերակատարությունը աշխարհի հանրային կարծիքը թյուրիմացության մեջ դցելու ուղղությամբ, որ իրենք մի խեղճ քրիստոնյա ժողո-

վուրդ լինելով, ենթարկվել են թուրքական դաժանություններին, ճնշումներին և ցեղասպանության»։<sup>11</sup>

Հայության տեղահանության և կոտորածների մասին իր նախորդ գրքի առաջարանում, էրտալ Իլթերը արտահայտել էր հետևյալ չարամիտ տեսակետը, որը հաճախակի կրկնվել և կրկնվում է մյուս թուրք պատմաբանների կողմից ևս

«Օսմանյան կառավարությունը Հայերի ապստամբությունները կանխելու համար հետևյալ միջոցառումը ձեռնարկեց: Մայիս 27, 1915 թվականին որոշում կայացրեց Անատոլիայի պատերազմական գոտիներում բնակվող Հայերին ժամանակավորապես տեղափոխել Սիրիա և Պաղեստին: Այս տեղափոխության ընթացքում, Օսմանյան կառավարությունը մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի Հայերը որևէ վնաս չկրեն»։<sup>12</sup>

էրտալ Իլթերից հետ չի մնում նաև մի այլ թուրք պատմաբան, Յուսուֆ Հալաճօղլուն, որի գրքի վերնագիրն է «Հայության տեղահանությունն ու ճշմարտությունը (1914-1918)»:

Յուսուֆ Հալաճօղլուն ահա թե ինչպիսի հայտնագործություն է կատարել իր գրքում: Նա գրում է- «Ինչպես որ պնդվում է, եթե մեկուկես միլիոն մարդ կոտորված լինեք, դրանք պետք է, որ թաղված լինեին հավաքական գերեզմանների մեջ: Արդյոք ո՞րտեղ են գտնվում այդ հավաքական գերեզմանները: Թուրքերին վերաբերող հավաքական գերեզմանները ի հայտ են եկել այնպես, ինչպես Վան քաղաքի հրդեհումն ու ավերակների առկայությունը իր ամբողջական տեսքով: Հասպա ինչո՞ւ Հայերին վերաբերող ոչ մի հավաքական գերեզման ի հայտ չի գալիս»։<sup>13</sup>

Հավանաբար Յուսուֆ Հալաճօղլուի այս նենգամիտ տեսակետը նկատի ունենալով է, որ թուրք լրագրող Սեֆա Քոյունջուն, իր հեղինակած «Հայերի ցեղասպանու-

Թյան կոմեդիան և Տոն Քիչոզի արկածախնդրությունը» գրքում, մատնանշել է, որ «Մենք՝ Թուրքերս մեկ հայ անգամ չենք ոչնչացրել, բայց անընդհատ ստում են պաննել եք, պաննել եք»։<sup>14</sup>

Հայերի ցեղասպանության ժխտման ուղղությամբ առավել «մեծ հայտնագործություն» է կատարել «Նոր Թուրքիա» խորագրով հանդէսի հրատարակիչ-խմբագիր՝ Կյուլեր Էրենը, որը հայկական հարցին նվիրված համարում, այսպիսի եզրակացութիւն է արել.

«Իրականում մի ցեղասպանութիւն եղել է, բայց այդ ցեղասպանութիւնը կատարվել է հայերի կողմից մահմեդական թուրքերի, քրդերի և արաբների հանդեպ»։<sup>15</sup>

Այսպիսի անհիմն տեղեկութիւններով լույս են տեսել այլ գրքեր ևս, որոնք հաճախակի օտար լեզուների թարգմանվելով առաքվում են այլ երկրների գիտահետազոտական հիմնարկներ և գրադարաններ։ Մի խոսքով, անցած 88 տարիների ընթացքում, թուրքական պատմագրութիւնը չարամտորեն աղավաղել և նենգափոխել է իրականութիւնը, և այսօր էլ շարունակում է նույնը կատարվել թե՛ պատմաբանների և թե՛ պետական գործիչների կողմից։

**ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԵՐՍ Է ԽԵՂԱԹՅՈՒՐՎՈՒՄ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(ԻՍԿ ՈՐՆ Է ԾԾՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ)**

1998 թ. հոկտեմբեր 12-ին, ինտերնետի ցանց է մուտք գործել Միացեալ Նահանգների Թուրք-Ամերիկյան Բարեկամության կաղամակետալության նախագահ, Փենսիլվանիայի համալսարանի փրոֆ. Հասան Օզպեկիսանի մի հաղորդագրությունը «Հայերի անհիմն պնդումները» խորագրի տակ:

Հենց սկզբից հեղինակը հայտնում է, որ տվյալ հաղորդումը գրելու պատճառ է հանդիսացել Պոնիերի և Պյութի նախաձեռնությամբ ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատին հանձնված Հայերի ցեղասպանության վերաբերող (H. Con. Res. No. 47) բանաձևը:

Այնուհետև աշխատում է կողմնակալ անհիմն փաստարկներով մերժել և ընդհանրապես կասկածանքի տակ առնել Հայերի ցեղասպանությունն ու դրա հետ առնչվող առանձին հարցեր: Իսկ հաղորդման վերջում բերված է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան՝ Նուզհեթ Կանտեմիրի 1995 թ. Ապրիլ 21 թվագրությունը կրող, միևնույն ոգով և ոճով շարադրված մի նամակի բովանդակությունը: Որպեսզի ընթերցողը որոշակի պատկերացում կազմի փրոֆ. Հասան Օզպեկիսանի գրության բովանդակության մասին, ստորև համառոտակի և ամփոփ ներկայացնում ենք այն:

«Օսմանյան կայսրությունը Առաջին Համաշխարհա-

յին պատերազմի մեջ մտալ կենարոնի պետութիւնների կողմից: Ռուսական կայսրութիւնը սկսեց զաւթել թուրքիս Արևելյան մասը: Հայ կամաւորները, մի անկախ Հայաստան տեղիծելու միտումով, միացան ռուսական բանակին և սկսեցին հալածել ու կոտորել թուրք բնակչութիւնը: Թուրքական կառավարութիւնը, նկատելով, որ Հայ բնակչութիւնը օժանդակում է կամավորներին, որոշում կայացրեց Հայերին տեղափոխել դեպի Սիրիա, Լիբանան և Իրաք, որոնք սոյալ ժամանակ, Օսմանյան կայսրութիւն նահանգներն էին:

«Այս տեղահանութիւնը պատժական միտում չուներ, քանի որ Հայերին արտոնելում էր իրենց հետ տանել ինչ որ կամենային եւ ինչ որ կարող էին: Իսկ իրենց պատկանող լքջալ գույքը պիտի փոխառուցվեր դրամով: Այս տեղահանութիւնը ողբերգական դարձավ Հայերի Համար, գլխավորապէս հիվանդութիւնների, դաժան եղանակի, անպաշտպանվածութիւն և սովի հետևանքով: Համանրման իրադարձութիւններից մահացան նաև մեծ թվով մահմեդականներ, քանի որ Օսմանյան բանակի նահանջի ընթացքում, թուրքերը նույնպէս սկսեցին փախուստ տալ Հայերից: Ահա այս իրադարձութիւն մեջ անհատական ոճիրներ կատարվեցին Հայութիւն դեմ: Իրականում, թուրք Հանցադործները պատժվեցին օսմանյան դատարանների վըճիռներով, իսկ Հայերը՝ մեծ թվով թուրքեր և մահմեդականներ կոտորելու Համար, ոչ մի դատական Հետապնդման չենթարկվեցին: Այնուհետև, Հայկական պետութիւն ասեղծումով Հալածանքներն ու բախումները շարունակվեցին, եւ կրկին զոհ գնացին մեծ թվով մահմեդականներ, քանի որ Հայերը «անասելի» դաժանութիւններ ու կոտորածներ գործադրեցին թուրքերի նկատմամբ»:

*Նշենք նաև, որ փրոֆ. Հասան Օզգեկիսանը ամեն կերպ ձգտել է նվազեցնել զոհ գնացած Հայերի թիվը, իսկ մյուս կողմից անհամեմատ ուճացրել թուրքերի կո-*

բուսոր: Այս բուրից հետո, հեղինակը եկել է այն կարծիքի, որ այդ իրադարձութունները ոչ մի առնչութիւն չունեն «Յեղասպանութեան» հետ:

Վերջում, փրոֆ. Հասան Օզպեկիսանը տալիս է 6 կետերից բաղկացած հետևյալ եզրակացութիւնը:

1. — 1915-1918 թթ. Օսմանյան կայսրութիւնում տեղի է ունեցել միջհամայնքային պատերազմ:

2. — Այդ պատերազմը շարունակվել է 1919-1923 թթ. Թուրքիայի «Ազգային Մեծ Ժողովի» կողմից, Մուսթաֆա Գեմալ Աթաթուրքի ղեկավարութեամբ:

3. — Պատերազմի ընթացքում, հայերը կորցրել են 800,000 մարդ, իսկ Թուրքերը և մյուս մահճեղականները՝ 2-ից մինչև 2.5 միլիոն մարդ:

4. — Այդ արյունոտ ու սարսափելի իրադարձութիւնները չեն կարող «Յեղասպանութիւն» բառի իսկական իմաստով որակավորվել:

5. — Եվ քանի «Հայերի ցեղասպանութիւն» տեղի չի ունեցել, (H. Con. Resolution No. 47) բանաձևի ընդունումը ոչ միայն դառնորեն պիտի վշտացնի և վիրավորի ամերիկացի Թուրքերին և նրանց զավակներին, այլև:

6. — Այն, որ այսօր դեռևս ընթացքի մեջ գտնվող «Հայկական առասպելին» շինծու իրողութեան օրինականացում տալով, անիմաստ լարվածութիւն պիտի ստեղծվի Թուրքիայի հանրապետութեան և Միացյալ Նահանգների միջև:

Փրոֆ. Հասան Օզպեկիսանի վերևում բերված գրութեան և եզրակացութեան մեջ, ամենակոպիտ սխալն ու մոլորվածութիւնը այն է, որ մահճեղականներն ու հայ քրիստոնյա զոհերը դրվում են միևնույն նժարի վրա:

Իրականում դրանք բոլորովին տարբեր բնույթ ունեն և տեղի են ունեցել տարբեր նենգ գործարքների հետևանքով: Մեկը՝ պատերազմական արհամիջքների զոհ դառնալն է, իսկ մյուսը՝ կանխամտածված և ծրագրված

հայերի բռնազաղթն ու կոտորածները:

Ի միջի այլոց վերահիշյալ առաջ քաշված հարցերին որոշակի ճշգրիտ պատասխաններ են տրված ժամանակի թուրքական աղբյուրներում և վավերագրական փաստաթղթերում:

Այսպես, թուրքական աղբյուրների շարքում, հայերի ցեղասպանության վերաբերյալ խիստ կարևոր փաստագրական նյութեր կան հատկապես 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած Երիտթուրքերի դատավարության արձանագրություններում, որոնք լիովին հավաստի են և անվիճելի:

Նախ մեր ուշադրությունը բեվեռենք այն հարցին, թե թուրքիան ինչպե՞ս և ինչո՞ւ մտավ պատերազմի հորձանուտը:

Բանն այն է, որ պատերազմի մեջ մտնելու հարցը երիտթուրքական ղեկավարները անհրաժեշտ չհամարեցին քննարկել Մեջլիսում: Այն վեուզեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի ծովեզերյա սպարանքում:

Այս կապակցությամբ 1919 թ. մայիսի 26-ի դատական նիստի մեղադրական որոշման մեջ նշված է.

«Երկրի համար կենաց մաճու նշանակություն ունեցող Համաշխարհային պատերազմին մասնակցելու խընդրում իր ծրագրերը իրադրծելու համար կուսակցության պարագլուխները հալաքվել են մեծ վեզիրի ծովեզերյա դղյակում և կատարել վերջնական վճիռ»:<sup>1</sup>

1919 թ. հուլիսի 5-ի դատավճռի երկրորդ կետում բերված է նաև հետևյալ փաստը.

«Նախկին մեծ վեզիր Սայիդ փաշայի, Մեջլիսին հղած զեկուցադրի բովանդակությաննից սպարվել է, որ նա պատերազմի սկզբում կենտրոնական կոմիտեի անդամներին իր ծովեզերյա սպարանքը հրավիրելով՝ Հայտնել է պատերազմին մասնակցելու վտանգի մասին և բացատրել, որ պետության համար առավել նպատասխոր գլխորոշումը

չեզոքութիւնն է, բայց չի կարողացել Համոզել նրանց»<sup>2</sup>

Այո՛, սոյնպէս ժամանակ թուրքիայում շատերն էին Հասկանում, որ պատերազմին մասնակցելը ինչպիսի արհամարհանքներ և դժբախտութիւններ կրերի իրենց երկրին:

Անկասկած, պատերազմի մեջ մտնելը պատճառ Հանդիսացավ մեծ թվով թուրքերի և Օսմանյան կայսրութեան այլ Հպատակների մահվան՝ ինչպէս նաև նրանց նյութական ունեցվածքի կորստյան:

Այստեղ տեղին ենք Համարում Հիշատակել Հետևյալը. 1906 թ. օգոստոսի 5-ին, Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբէից Պոլիս բերված էնվերի աճուրդը Հողին Հանձնելու օրերին, Հակառակ կառավարութեան դրսեվորած մեծարանքներին, գտնվեցին մարդիկ, որոնք Համարձակորեն ասացին ճշմարտութիւնը և Հաստատեցին էնվերի ծավալած վնասակար գուրծունեութիւնը իր ժողովրդի Հանդեպ: Այսպէս, թուրքական «Հյուրիչեթ» թերթի թղթակիցներից Օքթայ էքսինը գրեց՝ որ «մինչ որոշ անձեր Հարգանք կը մատուցեն էնվեր փաշային, ևս ուրիշ պիտի կանգնեմ ի Հիշատակ մեր 90,000 երիտասարդներուն, որոնք սառեցան Ալլահուէքսլեր լեռներուն վրա՝ զորսալարին Հրահանգով»:

Իսկ թե ինչո՞ւ երիտթուրքերը այդպէս եռանդագին մտան պատերազմի մեջ, բացահայտվում է Ջեմալ փաշայի Հուշագրութեան մեջ արտահայտված Հետևյալ խոստովանութիւնից.

«Մենք Հուշա ունեինք, որ Համաշխարհային պատերազմի կրակի միջից անցնելով, մեզ կը Հաջողվի ազատվել մեր վզին փաթաթած շատ տհաճ պարտաւորութիւններից, որոնք միմիայն պատրվակ էին մեր ներքին գործերին միջամտելու Համար»:<sup>3</sup>

Հստկանաչի է, որ այստեղ Ջեմալ փաշան նկատի ունի Հունվար 26, 1914 թ. թուրքական կառավարութեան կողմից ստորագրված բանաձևը, որի Համաձայն բարենոր-



րուումներ պիտի անցկացվեն Հայարևակ 6 նահանգներում:

Եզրակացութունը միանշանակ է: Պատերազմը պատեհ առիթ Հանդիսացավ, որպեսզի երիտթուրքերի կառավարութունը վերջնական հաշվեհարդար տեսնի Պատմական Հայաստանի բնիկ ժողովրդի՝ Հայության հետ:

Այնպես որ, Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբին տեղի ունեցած Հայության զանգվածային տեղահանութուններն ու կոտորածները չէին առնչվում ռազմական նկատումներով կատարվող միջոցառումների հետ, քանի որ Հայության բնաջնջման հարցը նախորոք մշակված և որոշված էր «Իթթիհատ վե Թերաքքի» («Միութուն և Առաջադիմութուն») կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից:

Այս հաստատվում է թուրքական վավերագրական փաստաթղթերով: Ահա դրանցից մի քանիսը.

Վերոհիշյալ 1919 թ. թուրքական ռազմական Արտակարգ Առայանի կողմից Երիտթուրքերի պարագլուխների դատավարության վերաբերող բոլոր մեղադրական եզրակացութուններում շեշտը դրվում է այն հարցի վրա, որ «ընդունված հատուկ օրենքի համաձայն, այլ վայրեր տարազրված Հայերի քարավանները ոչնչացվել են ճանապարհին՝ կուսակցության կողմից ասեղծված քրեական Հանցագործ Հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց դույզն ու ունեցվածքը կողոպտվել և հափշտակվել է»:<sup>4</sup>

Ստորև բերում ենք թուրք երկու պաշտոնատար տնձանց վկայութունները Հայերի կանխամտածված կոտորածների մասին՝

«Ներքին գործերի նախարարության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնվելիս է եղել Քիլիսի կայմակամի պաշտոնում, Ստամբուլից Հալեպ գործուղված Ապտուլլահաս Նուրի բեյը հայտարարել է, որ «Տեղահանության

Հիմնական նպատակը Հայերի ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով թալեաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա (թալեաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը»:<sup>5</sup>

Իսկ տվյալ ժամանակ կովկասյան ճակատի 3-րդ բանակի հրամանատար պորափար Վեհլայ փաշան, դատական ատյանին աված իր վկայության մեջ ասել է.

«Հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ունեցվածքի հատիչստեղծումն ու կողոպուտը վճռվել է Վիլություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, որ Երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի (նկատի ունի «Թեչֆիլաթը մահաուսեհն, (հատուկ կազմակերպություն) — Ա.Փ.) կազմակերպողն ու ղեկավարողը Պեհալեատին Ծափիր բեյն է»:<sup>6</sup>

Ահա մի հատված ևս «Իթիֆիհատ վե թերաքթի» կուսակցության պատասխանատու քարտուղարների հանցագործություններին վերաբերող դատավճռից.

«Ահա այս ձևով և օրենքի բուն ոգուն հակառակ, տեղահանությունը համատարած կերպով ծավալվել է բոլոր շրջաններում և առաջ բերել ողբերգական ծանր իրավիճակ: Բոլոր սպացույցներն ու փաստերը լիովին հաստատում են, որ կոտորածները անմիջականորեն իրականացվել են Վիլություն և Առաջադիմություն» կուսակցության ստեղծած «Թեչֆիլաթը մահաուսեհի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարները իրենց մասնակցությամբ նրպատակ ու հեշտացրել են այդ գործը»:<sup>7</sup>

Հայերի Յեղասպանությունը հաստատող փաստաթղթերի և վկայությունների թիվը շատ ու շատ է: Բավարարվենք այսքանով և անցնենք առաջ:

Փրոֆ. Հասան Օզպեկխանը, արդի թուրք պատմաբանների նման, կասկածանքի տակ է առնում նաև մտ

1,500,000 զոհված հայերի թվաքանակի հարցը:

«Հայերի և Սիրիացիների Ամերիկյան օչնության կոմիտեի» քարտուղար՝ փրոֆ. Սամվել Թ. Տանթընը, զոհված հայերի թվաքանակի մասին, դեռևս 1915 թվականի դեկտեմբերի 15-ին, «The New York Times» թերթին տված «Մեկ միլիոն հայեր սպանվեցին կամ աքսորի ճանապարհին են» խորագիրը կրող հաղորդագրության մեջ նշում է, «Ամերիկյան կոմիտեի» ամենահավաստի վկայություններով ստացած տեղեկությունները, որոնք լիովին համապատասխանում են իրականությանը, մեկ տարի առաջ Թուրքիայում բնակվող 2,000,000 հայերից 1,000,000ը ըսպանվել է կամ բռնի ենթարկվել մահաձեռքով կրոնափոխության կամ պարտադրված փոխուստ է տվել երկրից կամ մահացել է աքսորի ճանապարհին կամ հյուսիսային Արարիայի անապատներում աքսորի ճանապարհին է կամ արդեն այնտեղ է: ԶՈՂԵՐԻ ԹԻՎԸ ՏԵՎԱՊԵՍ ԱՃՈՒՄ է: (Ընդգծումը մերն է — Ա.Փ.):<sup>8</sup>

Բոլոր դեպքերում, այս հարցի տրամաբանական և ճշգրիտ բացատրությունը կայանում է հետևյալում. —

Դեռևս Արդուլ Համիդի բռնատիրության շրջանում և հետո, երբ հայկական հարցը դարձավ միջազգային շահարկման առարկա, թուրք պետական գործիչները, այդ թվում և պատմաբանները, բարենորոգումների անհրաժեշտությունը ավելորդ համարելու միտումով, սկսեցին ամեն ջանք թափել նվազեցնելու հայերի թվաքանակը Օսմանյան կայսրությունում: Առկա է նաև հարցի մյուս կողմը: Դա գինվորական հարկից ազատվելու նպատակով քրիստոնյաների հաշվառումից խուսափելու հարցն է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ հաշվառման ընթացքում նույնիսկ հայկական բազմաթիվ գյուղերի բնակչությունը դուրս է մնացել գրանցումից, որը նույնպես բացասաբար է անդրադարձել ընդհանուր թվաքանակի վրա:<sup>9</sup>

Հարկ է նշել, որ Հայ և օտարազգի պատմաբանների ավյալները այս խնդրում բերել են այն եզրակացություն, որ նախապատերազմյան շրջանում Հայ ազգաբնակչության թվաքանակը Օսմանյան կայսրությունում եղել է 2,5 միլիոն մարդ: Իսկ զոհված Հայերի թվաքանակի մասին խոսելիս մատնանշվում են ավելի քան 1,5 միլիոն անմեղ Հայեր<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է «Յեղասպանություն» տերմինի իմաստին, սպա այն նույնպես լիովին համապատասխանում է Հայերի ողբերգական ճակատագրին:

«Յեղասպանություն» տերմինի բացատրությունը, ի թիվս համաշխարհային մի շարք լեզուներով հանրագիտարաններում տված համանման իմաստին, բավականին հաջող բնորոշվում է 1987 թ. Մոսկվայում հրատարակված «ԽՆՀԸ ԻՆՉ է համաշխարհային քաղաքականության մեջ» գրքի 91րդ էջում, որտեղ ասված է-

W «Յեղասպանություն, գործողություններ, որոնք կատարվում են սոցալին, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խումբ, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակիորեն ոնչացնելու մտադրությամբ, քրեական ծանր հանցագործություն: Որպես ցեղասպանություն են որակավորում հեռույալ գործողությունները. նման մի խմբի անդամների սպանությունը: նման խմբի անդամներին մարմնավան լուրջ վնասվածքներ, կամ խանդարումներ ստուճառելը: որևէ խմբի Համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք Հանգեցնելու են նրա լրիվ կամ մասնակի ոչնչացմանը, միջոցներ՝ որոնց նպատակն է կանխել ծննդաբերությունը նման մի խմբի միջավայրում, երեխաների բռնի հանձնումը՝ մարդկային մի խմբից մյուսին»:

Բացատրության վերջում նշված է նաև, որ «ցեղասպանության դատական օրինակ է հանդիսանում մեկուկես միլիոն Հայերի բնաջնջումը Օսմանյան կայսրու-

Թյան իշխանությունների կողմից, որոնք օգտվեցին Առաջին Համաշխարհային պատերազմի իրադարձություններից»:

Բնականաբար հեղինակի այս որոշումը հիմնված է Համաշխարհային դրականության մեջ գոյություն ունեցող փաստերի և սպացույցների վրա:

Եվ իրոք որ այն ինչ տեղի ունեցավ Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի հետ, լիովին համընկնում է այս բնորոշման ուղուն:

Նշենք նաև, որ «Յեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու» որոշումը հատուկ պայմանագրով ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին, և որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, վաղեմության ժամկետ չունի:

Կարծում ենք, որ մեր այս դրությունը եզրակացության կարիք չունի, քանի որ ամեն ինչ պարզ է ու հստակ:

Այնուհանդերձ, որպես վերջարան կը ցանկանայինք բերել ԱՄՆ-ի Ներկայացուցիչների Տան նորեկ հանրապետական կոնգրեսմենների խմբավորումի նախագահ Ջորջ Ռադանովիչի մարտ 7, 1997 թվականին իր պաշտոնակիցներին ուղղված հատուկ նամակից մի հատված: Այդ նամակով Ջորջ Ռադանովիչը կոչ է անում իր պաշտոնակիցներին, որպեսզի նրանք զորակցեն Հայերի ցեղասպանության (H. Con. Res. 47) բանաձևի վավերացմանը:

«1915 թվականից Օսմանյան կայսրությունը սկսեց կանխամտածվածորեն իրազործել հայ ժողովրդին բնաջրնջելու մի ծրագիր, ոչնչացնելով նաև նրա երեք հազար տարվա մշակույթն ու պատմությունը: Հետևանքը եղավ այն, որ կոտորվեցին մեկուկես միլիոն հայեր, իսկ բախտի բերմամբ ողջ մնացածները աքսորվեցին իրենց պատմական հայրենիքից: Վերապրողներից շատերը իրենց նոր տունը

չինեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Հակառակ  
այդ բոլորին, առ այսօր, Թուրքիայի կառավարութիւնը  
հրաժարվում է ճանաչել Հայերի ցեղասպանութիւնը և  
այդ ժամանակահատուկները վերաշարադրելիս փոր-  
ձում է նենդաօրինակ ճշմարտութիւնը:<sup>11</sup>

**«ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒԹ Է ԾՆՎՈՒՄ»**  
**ԵԹԵ ԱՅՆ ՀԻՄՆՎԱԾ Է**  
**ԱՐԳԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ**

“New York Times” թերթի Ատամբուլի թղթակից՝ Ստեֆըն Քինգերը, 2000 թ. մայիս 10-ին «Թուրքական շրջանը վերհիշում է հայերի կոտորածները» խորագրով հրատարակած հոդվածում, վերահաստատում է 1915 թ. Հայերի ցեղասպանության փաստը:

Այս հոդվածի կապակցությամբ, ինտերնետում հայտնարվել է «Թուրք-Ամերիկյան կազմակերպությունների միության» նախագահ Էկեմեն Պաղըշի, իր թուրք հայրենակիցներին ուղղված հետևյալ կոչը, որը թուրքերենից թարգմանաբար ներկայացնում ենք ընթերցողի ուշադրության:

Միրելի Հայրենակիցներ,

Ատորև բերված հոդվածը, որը ցուռք սրտի ձեզ դուր չի գալու, գրի է առել “New York Times” թերթի Ատամբուլի թղթակից՝ Ստեֆըն Քինգերը: Անհրաժեշտ է մեր ձայնը բարձրացնենք և մեր ընթերցողների կողմից այս թերթին ուղարկենք Հնարավորին չափ շատ նամակներ: Քանի մենք լուռ ու կրավորական ենք մնում, գլխացինը ավելացնում է իր զրպարտանքի չափը և ավելի վատահումքյուն է ձեռք բերում: Միասնությունից ուժ է ծնւում:

Էկեմեն Պաղըշ

Թուրք-Ամերիկյան կազմակերպությունների  
միության նախագահ

Իսկ ով ասաց, որ լուռ ու կրավորական եք մնում:

Ամբողջ աշխարհին հայտնի է թե թուրքական պատմազրույթյունը, պետական և քաղաքական գործիչները ինչպիսի հակահայկական քաղաքականություն են վարել և վարում են՝ հերքելով Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները Օսմանյան կայսրությունում:

Հայերի ցեղասպանությունը ուրանալու և ժխտելու համար միլիոններ են ծախսվել և ծախսվում են, կազմակերպվում են հաճախակի գիտաժողովներ, նկարահանվում են բացմասերիանոց ժապավեններ (թեկուզ հիշենք «Արյուն պատի վրա», «Վարազույրի ետեր» հեռուստատեսային ֆիլմերը): Կառուցվում են հուշարձաններ այսպես ասած թուրք զոհերի հիշատակին (դեռ վերջերս բացումը կատարվեց Իզդիրի հուշարձանի):

Միթե դուք լուռ եք մնում, երբ այս կամ այն պետությունը, խորհրդարանը, նահանգը կամ քաղաքապետությունը բանաձև է ընդունում Հայերի ցեղասպանության ճանաչման մասին:

Միթե՞ քիչ աղմուկ բարձրացավ մայիս 29, 1998 թ. Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած «Ֆրանսիան հրապարակաչնորեն ճանաչում է 1915 թ. Հայերի ցեղասպանությունը» բանաձևի շուրջ, որպեսզի այն ծերակույտի օրակարգի հարց չդառնա:

Միևնույն ժամանակ հրատարակվում են կեղծիքներով լի բազմաթիվ գրքեր: Ահա այդ գրքերից մի քանի նմուշներ.

1. Ինսյեթուլլա Ճեմալ Օլբաչա, «Հայ ժողովուրդը և թուրքերին սարկացնելու փորձերը», Ստամբուլ, 1971:

2. Վեյսել Էրօլու, «Հայկական դատանությունը», Ստամբուլ, 1971:



3. Էմիրճան Արղուլ Ալի, Մեհմեդ Էմին Կերկեր, «Մեծ Հայաստանի երազը և Կարսից մինչև Ղարաբաղ Հայերի կատարած գաղանթությունները», Ստամբուլ, 1992:

4. Էրտալ Իլթեր, «Հայ եկեղեցին և ահաբեկչությունը», Անկարա, 1996, և այլն:

Նշենք, որ այսպիսի ստապատիրո գրքերը հաճախ թարգմանվում են այլ լեզուներով, որպեսզի ապակողմնավորողի նաև միջազգային հասարակական կարծիքը:

Եզրակացություն

Իրոք որ «Միասնությունից ուժ է ծնվում», եթե այն հիմնված է արդարություն և ճշմարտություն հողի վրա: Իսկ մեր պահանջատիրությունը արդար է և ճշմարիտ<sup>1</sup>:

**ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ «ԶԱՄԱՆ» ԹԵՐԹԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՀԱԲԵԿԿՉՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ**

«Աստարէզ» Օրաթերթի (դեկտեմբեր 24, 1894) համարում մեր ուշադրությունը գրավեց «Ահարեկչութուն և հայկական դպրեմանքեր» վերնագիրը կրող հոդվածը, որտեղ արդի թուրք պատմաբանների և դասախոսների կողմից կատարվել էր հայ ժողովրդի պատմության 19րդ դարի վերջի շրջանում տեղի ունեցած դեպքերի բացահայտ ազդագրման և խեղաթյուրման հերթական փորձ: Որպեսզի լավ պատկերացնենք հարցի էությունը, բերենք մի երկու հատված այդ հոդվածից:

«Թուրքական «Զաման» թերթը, 19 նոյեմբերի իր թիվին մեջ, իբրև թե հետազոտություն մը կատարած է (Անգարայի և Էրզրումի համալսարաններու) թուրք դասախոսներու քով, որոնք հաստատած են թե հայկական ահարեկչությունը 120 տարի առաջ սկսած է և անոր հիմերն ալ սերմանված են դպրեմանքերու մեջ...:

Այս դպրեմանքերուն մեջ հասած երիտասարդները, դաշնակ, հնչակ, ռամկավար և վերակէօզ (նկատի ունի 1898 թ. ձևավորված «Վերակազմյալ հնչակյաններին» Ա.Փ.) կոչված, հայկական Հրոսակախումբերուն գլուխը անցնելով տարիներ ամբողջ ոճրային ծուղակներ լաքած են և այս ծրագիրները զարգացուցած են ռուսերուն ալ օժանդակությամբ»:

Ընդհանուր առմամբ նշենք, որ հայ ժողովրդի պատմության վերաբերող նման հետազոտական հարցազը-

րույցներ հաճախակի են կազմակերպվում թուրքիայում, հատկապես ապրիլին նախորդող ամիսներին և օրերին հատուկ քարոզչական նպատակներով: Չարմանային այն է, որ այդ քննարկումների ընթացքում շոշափվում է հարցի միայն մեկ կողմը, իսկ մյուս կողմը մնում է խավարի մեջ՝ վարազույրի հոռու, այսինքն՝ թուրք ժողովրդից թաքցվում է իրական եղելութունը:

Տվյալ դեպքում, «ահաբեկիչ հրոսակախմբեր» անվանումով կատարելապես սխալ և վարկաբեկիչ պիտակ են ուզում փակցնել Արևմտյան Հայաստանում ծավալված հայդուկային-ֆիդայական շարժմանը:

Հայանի է, որ 19րդ դարի վերջին քառորդում, արդուհամիդյան հայահալած քաղաքականության դեմ պայքարելու համար Արևմտյան Հայաստանի տարրեր վայրերում բուռն կերպով ուժեղացավ ֆիդայական շարժումը: Ֆիդայիները հայ ժողովրդի ծոցից դուրս եկած և նրա տարրական շահերը պաշտպանող մարտիկներ էին: Նրանք պայքարում էին բռնակալական վարչակարգի դեմ, որպեսզի կյանքի կոչվեն բարենորոգումների խնդրում Բարձրագույն դռան ստանձնած պարտավորությունները: Իսկ 1894-96 թթ. Սասունում և այլուր տեղի ունեցած բարբարոսային կոտորածների ընթացքում, «Հնչակ» և «Դաշնակցութիւն» կուսակցութիւնների գլխավորութեամբ նրանք ընդգրկվեցին Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում տեղի ունեցած բնակչության ինքնապաշտպանության դոյաժարտերին: Բնականաբար մեծ էր նրանց դերը հայ ժողովրդի ազգային ազատագրության պայքարը կազմակերպելու վեհ գործում, քանի որ անհավասար մարտերում անձնվիրաբար պայքարում էին թութափնի թուրքական դարավոր ծանր լուծը: Նշենք նաև, որ հայ ֆիդայիները Օսմանյան կայսրութիւնում ազրոդ, թուրք, քուրա և այլ ժողովրդների նկատմամբ ոչ մի անզամ թշնամանք չեն տածել: Նրանց պայքարի թիրախը

եղել է բռնակալությունը, այսինքն՝ հայ շինականին հարստահարող, նրա պատիվն ու ինքնասիրությունը բռնաբարող, հողն ու ունեցվածքը հափշտակող թուրք կաշառակեր պետական պաշտոնյաներն ու աղաները, դաժանարարոց ցեղապետներն ու աշիրեթապետերը, անորեն հարկահավաքները:

Ինչ խոսք, որ տվյալ ժամանակ սուլթանական բռնակալության դեմ ծավալված հայ ֆիդայական շարժումը օրինաչափ երևույթ էր, քանի որ յուրաքանչյուր ժողովուրդ միշտ էլ ձգտում է ազատ ու անկախ ապրել իր հայրենի երկրում: Օրինաչափ և արդարացի է նաև մեր օրերում ծավալված Արցախի ազատագրության պայքարը: Այնպես որ թուրք դասախոսների կողմից հայ ֆիդայիներին «Ահաբեկիչ հրոսակախմբեր» պիտակավորումը միանգամայն սխալ է և անընդունելի:

Բայց, իրականության մեջ, Օսմանյան կայսրությունում հրոսակախմբեր եղել են, այն էլ պետական մակարդակով կազմակերպված, որոնք տևապես ահ ու սարսափի են մատնել հայ ժողովրդին: Լավ կլիներ, որ թուրք դասախոսները անդրադառնային նաև նրանց գործունեությանը:

Այսպես՝ 1891 թ. Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ և իր մականունով, կազմակերպվեցին «Համիդին» կոչվող հեծելազորերը, ավելի ճիշդ՝ հրոսակախմբերը, որոնց գլխավոր նպատակն էր հալածել ու կոտորել հայ բնակչությանը, ավերել ու հրդեհել հայերի բնակարաններն ու սրբատեղիները:

Իսկ մյուս ահաբեկիչ հրոսակախմբերը արևմտահայերին ի սպառ ջնջելու նպատակով կյանքի կոչվեցին 1915 թ. հայոց Մեծ Եղեռնի նախաշեմին, այն էլ երիտթուրքերի կառավարության և «Իթիհաս վե թերաքթի» («Միություն և Առաջադիմություն») կուսակցության պարագլուխների գաղանի նիստերում: Այն կոչվում էր «Թեշ-

քիլաթը մահուան» (Հատուկ կազմակերպություն) որի նախագահն էր Հիշյալ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Բեհանդդին Շաքիրը:

Հալաստի վավերագրերը ցույց են տալիս՝ որ «Թեչ-քիլաթը մահուանն» բանտերից հավաքագրել է քրեական հանցագործներին, առաջին հերթին մարգասպաններին և ստեղծել «չեթենների» հրոսակախմբեր յուրաքանչյուրը 50 հոգուց բաղկացած, որոնք աչքից հեռու մեկուսի վայրերում հարձակվում էին անգն ու անպաշտպան տեղահանված հայերի քարավանների վրա և կոտորում, չխնայելով հիվանդներին, ծերերին և երեխաներին: Այս կազակցությամբ, Խարբերդի հայության տեղահանության և կոտորածի 1920 թ. հունվար 13ին ընդունված դատավճռում շատ պարզորոշ նշված է. «Մեղադրյալ Բեհանդդին Շաքիր պեյր, որպես «Թեչքիլաթը մահուան»ի նախագահ, Ստամբուլից դուրս գալով սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում: Մինևույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և նրանց ունեցվածքը ենթարկել կողոպուտի»:<sup>1</sup>

Կարծում ենք այսքանը բավական է ընկալելու համար, թե իրականում ովքեր էին ահաբեկիչ հրոսակախմբերը և ում դեմ էին պայքարում դրանք:<sup>2</sup>

## ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԷ ԹԱՔՑՆԵԼ

Իր ժամանակին, երբ թերթում էի թուրքական «Հյուրրիեթ» թերթի 2002 թ. հոկտեմբեր 11-ի համարը, առաջին և 19-րդ էջերում ուշադրությունս գրավեց «Նյու Յորքի նահանգապետը թուրքերի դեմ թշնամանք ստարածելով ձգտում է քվեարկության ձայներ հավաքել» խորագրով խմբագրության կողմից գրված հաղորդագրությունը:

Ստորև բերում ենք այդ նյութի ամբողջական թարգմանությունը:

«Նյու Յորքի նահանգապետ Ճորճ Փաթաքին, Հոկտեմբեր 6-ին Հրապարակած Հայտարարության մեջ մատնանըչեց, սկստեմբերի 9-ին (1922 թ), թուրքերի կողմից Իզմիրը հրդեհվելու և Հուլյն փոքրամասնության նկատմամբ ցեղասպանություն գործադրելու համար՝ ամեն տարի Հոկտեմբերի 6-ը նշվելու է որպես Հուլյն փոքրամասնության դեմ կատարված կոտորածի Հիշատակի օր:

Նոյեմբերի 11-ին (2002 թ.) նահանգաչին ընտրություններում Հուլյներից ձայներ հավաքելու միտումով, Ճորճ Փաթաքին, իր գրած Հայտարարության մեջ պնդում է, որ 1915-1923 թվականների ընթացքում Հայ, Հուլյն և ստորի փոքրամասնությունների նկատմամբ թուրքերը ցեղասպանություն են գործադրել:

Նկատի ունենալով Ճորճ Փաթաքիի քվեարկության համար ձայներ հավաքելու այս միտումը, Ամերիկայի

Միացյալ Նահանգներում բնակվող Թուրք Համայնքի Հեռ միասին, ծագումով Հույն ամերիկացիները ևս բողոքարկեցին նահանգապետի այս Հայտարարության դեմ:

Ծագումով Հույն ամերիկացիները իրենց բողոքում նշում էին, որ «Այն ժամանակ, երբ Թուրք և Հույն ժողովուրդների միջև Հաշտութուն կայացներու Համար մենք դիմում ենք Հնարավոր բոլոր միջոցների, նահանգապետի քվեարկության ձայներ Հավաքելու Համար երկու ժողովուրդների միջև անտեղի լարվածութուն տեղծելու միտումը, մեծ ցավ է պատճառում»:

Բնականաբար իմ կարծիքը Ձորջ Փաթաքիի Հայտարարության նկատմամբ դրական է, քանի որ այն հիմնվում է պատմական եղանակով փաստերի վրա: Այսպես-

1919-1922 թթ. տեղի ունեցած Հույն-թրքական պատերազմը ավարտվեց քեմալական բանակի կատարյալ Հաղթանակով:

1922 թ. սեպտեմբերի 9-ին թուրքական բանակը ներխուժելով Իզմիր (Ջմյուռնիս), տեղի թուրք խուժադուժ ամբոխի Հետ սկսեց կոտորել Հայ և Հույն խաղաղ բնակչությունը, ինչպես նաև կողոպտել ու թալանել նրանց ունեցվածքը, խանութներն ու դպրոցները, եկեղեցիներն ու հիվանդանոցները: Սեպտեմբերի 13-ին Իզմիր քաղաքը, քեմալական բանակներու գործուն մասնակցությամբ Հրդեհների մեջ բոցավառվում էր:

Ցավալին այն է, որ քրիստոնյաների այս ահավոր կոտորածները տեղի էին ունենում նավահանգստից քիչ հեռու գտնվող անգլիական, ֆրանսիական և այլ ուղղափառ նավերի նավաստի զինվորների աչքի առաջ:

Իզմիրում և շրջակա գյուղերում Հայերի և Հույների նկատմամբ կանխամտածված կերպով տեղի ունեցած կոտորածները կատարյալ ցեղասպանություն էին:

Արդի թուրք պատմաբան Թաներ Աքչամը իր «Թուրքական ազգային ինքնությունը և Հայկական Հարցը»

խորագիրը կրող աշխատության մեջ, թուրքական արխիվային նյութերի հիման վրա մատնանշում է, որ Փոքր Ասիոս ամբողջ տարածքը թուրքացնելու քաղաքականությունը սկսվել է դեռևս Առաջին Համաշխարհային պատերազմից առաջ: Իսկ պատերազմի ընթացքում հայերի հետ դաժան հալածանքի և բնաջնջման են ենթարկվել նաև հույները Այսպես:

«Թուրքերը, հայերի նկատմամբ գործադրվող ծրագիրը կիրառեցին նաև հույների դեմ: Նրանց էլ վերցրին ծառայելու օսմանյան բանակում: Հազարավոր հույն զինվորներ հայերի նման մահացան ցրտից, սովից և այլ պատահարներից: Ամեն տեղ հույներին հավաքեցին խմբերով և իրր թուրք ժանտարմաների հսկողություն տակ, հեփտուն քշեցին դեպի երկրի խորքերը: Թե որքան մարդ ոչնչացավ ճանապարհին, հչգրիտ հայտնի չէ: Ենթադրվում է, որ զոհերի թիվը 200,000-ից հասնում է մինչև մեկ միլիոն մարդու: Հունաստանի վարչապետ Վենիզելոսը, Փարիզի Հաշտություն վեհաժողովում պնդել է, որ 300,000 հույն է ոչնչացվել և մոտ 450,000 էլ սպառաան է գտել Հունաստանում: Առ ավելի շատ թվերով հույների դեմ կատարված կոտորածների մասին, ես իմ ձեռքին այլ տեղեկություններ չունեմ»<sup>1</sup>:

Իզմիրի սարսափազդու ողբերգությունը դեռևս մարդկանց հիշողության մեջ էր, երբ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում, «Ունեցվածքի Հարկ» (Varlık vergisi) գանձելու միտումով մեծ թվով հույներ, հայեր, հրեաներ հալածվելով աքսորվեցին Աշթալեի մահվան ճամբարները և ոչնչացվեցին:

Աշթալեում տեղի ունեցած բռնությունների և դաժանությունների մասին մանրամասն փաստադրական տեղեկություններ են տրված թուրք գրող Քեմալ Յալչընի 2000 թ. հրատարակած «Միրաս հրճվում է քեզանով» խորագիրը կրող թուրքերեն գրքում: Այդ մասին խոսում



են ականատես վկաները<sup>2</sup>:

1855 թ. սեպտեմբերի 5-8-ին, Կիպրոսի Հարցով Հույն-թուրքական Հարաբերությունների սրման պատճառով, կրկին ողբերգական իրադարձություններ տեղի ունեցան Իզմիրում և Ստամբուլում:

Փաստերը ցույց են տալիս, որ Հույների, Հայերի և այլ փոքրամասնությունների նկատմամբ դաժան զործողությունները կազմակերպված և հրահրված էին թուրքական կառավարության կողմից:

Թուրք խուժադուժների վայրագ ձեռքերով երկու օրվա ընթացքում ավերվեցին բազմաթիվ եկեղեցիներ, շենքեր, խանութներ: Սրբապղծվեցին դերեզմանատներ, խոշտանդվեցին եւ սպանվեցին բազմաթիվ տղամարդիկ, կանայք և երեխաներ:

1861 թ. սկզբին Մասսը Ատայում տեղի ունեցած դատավարությունը լիովին հաստատեց Թուրքիայի հանրապետության նախագահ՝ Ջեյալ Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի և այլ թուրք պաշտոնատար անձանց հանցանքը, Հույների կոտորածների կազմակերպման զօրծում:

Եզրակացնելով նշենք, որ վերոհիշյալ Հաղորդագրության մասին «Հյուրրիկթ» թերթի առաջին էջում համառոտակի ակնարկություն անելով, խմբագրությունը Ջորջ Փաթաքիին բնութագրել է, որպես «Անկիրթ նահանգապետ»: Իրականում նա ոչ թէ «Անկիրթ նահանգապետ» է, այլ ճշմարտությունը հաստատող ազնիվ և վեհ անձնավորություն<sup>3</sup>

## Գ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՅԵՐԵՆ ԹՈՒՐՔԵՐԵՆ, ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ  
ՌՈՒՍԵՐԵՆ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ)

### ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ՀԱԼԻԳԵ ԷԴԻԲԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

2001 թ. փետրվարի 23-ին Կ. Պոլսում հրատարակվող «Ակօս» շաբաթաթերթի թուրքերեն բաժնում, խմբագիր՝ Հրանդ Դինկը, լույս էր ընծայել թուրք գրականագետ Հալիգե էդիրի Mor salkimli ev (Մանուշակազույն թիթեռնածաղկներով աունը) խորագրով գրքից կոմիտաս վարդապետին վերաբերող հուշագրությունը: Բրնականարար նյութը ուշագրավ էր և հետաքրքիր, ուստի որոշեցի այն թարգմանել, որպեսզի հայ ընթերցողը ևս ծանոթանա բովանդակության հետ:

Հալիգե էդիր Աղըվարը (1884-1964) 20-րդ դարասկզբի թուրքիայի մշակութային և քաղաքական կյանքում կարևոր դեր խաղացած առաջին կին գործիչն է: Սկզբնական կրթությունը ստացել է Սկյուզարի Ամերիկյան քոլեջում, իսկ այնուհետև անային պայմաններում վարձված ուսուցիչներից սովորել է անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուները: Նրա գրական և հրապարակախոսական գործունեությունը սկսվում է 1908 թվականից հետո, երբ նա դառնում է «Իթթիհաս վե թերաքքի»

(Միություն և Առաջադիմություն) կուսակցության գործուն քարոզիչներից մեկը: Նա թարգմանություններ և առանձին հոդվածներ է հրատարակել «Վաքըթ», «Ակշամ», «Թանին» թուրքերեն թերթերում:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թրքական բանակում անդամագրուել է «Կարմիր մահիկ» ըժշկական օգնության կազմակերպությանը, իսկ այնուհետև Միրիայում, Ջեմալ փաշայի գլխավորությամբ, մասնակցել է որբանոցների կազմակերպման աշխատանքներին: Նրա գրչին են պատկանում մի շարք վեպեր, որոնցից առաջին հանրահայտ է "Ateşten gömlek" (Կրակե շապիկ) վերնագիրը կրող հատորը:

Ուշագրության արժանի է նաև նրա հուշագրությունների գիրքը, որը լույս է տեսել անգլերեն լեզվով:<sup>1</sup>

Հակառակ իրեն արդարացնելու միտումին, Հալիդե էդիրը ևս հայկական հարցի նկատմամբ ունեցել է բացասական դիրքորոշում:

Ամերիկյան հասարակության շրջանում ի շահ թուրքերի կարծիք ասեղծելու նպատակով 1920-ական թրվականներին, շրջագայել է Ամերիկայի Միացյալ Նահանգների խոշորագույն քաղաքներում, նենդարար տարածելով այն միտքը, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իբր հայերն են բռնություն գործադրել թուրքերի վրա:

Ըստ ժամանակակիցների վկայության, Հալիդե էդիրը քիչ գեր շի խաղացել նաև Միրիայում և Լիբանանում գործող հայ որբ երեխաներին մահմեդականացնելու և թրքացնելու գործում:

Ստորև բերված դրության մեջ, չնայած Հալիդե էդիրը, որպես տաղանդավոր երաժշտի բարձր է գնահատել և զրկատանքով խոսել կոմիտաս Վարդապետի մասին, այնուհանդերձ այնտեղ խեղաթյուրվել են նրա հայ ազգության պատկանելիության և ընդհանրապես հայ ժո-

զովորդի պատմութիւն վերաբերող մի շարք հարցեր: Այսպէս՝

Հալիդն էդիրը նշում է, որ բյուզանդական ժամանակաշրջանի նվաճումներին դիմակայող ցեղախմբի երեխաներին քրիստոնեացրել են: Առաջ քաշած իր այս տեսակետի վրա հիմնվելով հավանական է համարում, որ կոմիտասի ծնողները թուրք են եղել:

Նախ նշենք, որ սելճուկ-թուրքերը 11-րդ դարում երևացին Փոքր Ասիայում: 1047 և 1048 թվականներին, նրանք ներխուժեցին Հայաստանի տարածքը, ամենուրեք ավերելով և գերեվարելով հայ ժողովրդին: Իսկ 1071 թ. երբ Մանսուկերտ քաղաքի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ բյուզանդացիների և սելճուկների միջև, Բյուզանդիայի բանակը լիակատար պարտութիւն կրեց և ամբողջ Հայաստանը մտավ սելճուկյան պետութիւն կազմի մեջ: Այնպես որ, հայերի և այլ ժողովուրդների թրջացման քաղաքականութիւնը սկսվեց սելճուկ-թուրքերի Հայաստանի գալթումից հետո:

Այնուհետև, Օսմանյան կայսրութիւն տիրապետութիւն շրջանում, «Դեվլիթմէ»-ի (Մանկահավաք) միջոցով ենիչերիական դորաբանակի համար հպատակ ժողովուրդներին երեխաներից զինվոր հավաքելու քաղաքականութիւնը կատարյալ մի պատուհաս դարձավ ժողովուրդների համաձուլման և թուրքացման խնդրում:

Այստեղ տեղին է հիշատակել 16-րդ դարի թուրք պատմագետ Մուստաֆա Սելանիկ Էֆենդիի եզրակացութիւնը Դեվլիթմէի մասին: Նա իր «Պատմութիւն» մեջ գրել է: «Ժամանակի իշխողները, տղաների Դեվլիթմէի դործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ մեծ կաշառքներ վերցրել, ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ազահորեն հարձակվել են՝ երկրի ուայաների վրա: Հարուստ ուայաներից իղել են անթիվ անհամար հարստութիւն, իսկ աղքատ ուայաներից

նրանց զավակներին, քանզի են նրանց տունն ու տեղը»<sup>2</sup>:

Բացի այդ, այլ երկրներ նվաճելու ընթացքում, գերեվարութեան միջոցով թուրքերը մահճեղականացրել են քաղմաթիվ մարդկանց և երեխաներին: Այս մասին ևս 18-րդ դարի թուրք պատմագիր՝ Իբրահիմ Փեշեվին գրել է: «Օսմանցիները սկսեցին կողոպտել և թալանել Երևան քաղաքն ու երկիրը: Այնտեղի բոլոր ոսկեզօծ և գեղեցիկ պայտաներն ավերվեցին և գետնին հավասարվեցին: Գեղազարդ և ոսկեփայլ կամարներն ու ծածկերը խորտակվեցին և 20 հազարից ավելի կանանց ու երեխաների գերի տարան»<sup>3</sup>:

Մահճեղանակացման և թրջացման քաղաքականությունը հատկապես լայն բնույթ կրեց Հայոց Մեծ Եղեռնի տարիներին: Հայտնի է, որ Մեծ Եղեռնի օրերին Սիրիայում և Լիբանանում գործող որջանոցներում, հազարավոր Հայ որբեր մահճեղականացան և թրջացան: Այնպես որ շինծու միջոցներով Կոմիտասին թրջացնելը սխալ է և անհիմն: Կոմիտասը եղել է և մնում զտարյուն Հայ և Հայկական ազգային երաժշտագիտական դպրոցի հիմնադիրը:

Հայիզ է դիրի վերահիշյալ տեսակետից է բխել նաև Ավետարանի թուրքերեն թարգմանութեան և մի շարք վայրերում պատարագը թուրքերեն կատարելու հարցը: Իրականութունն այն է, որ Ավետարանը թուրքերենի են թարգմանել ոչ թե քրիստոնեացած թուրքերը, այլ թրջախոս Հայերը: Այս խնդրում պետք է նկատի ունենալ, թէ դարերի ընթացքում ինչպիսի ծանր պայմաններում են գտնվել ոչ-մահճեղական ժողովուրդները Օսմանյան կայսրությունում:

Բաղմաթիվ փաստեր կան ոչ-մահճեղական ժողովուրդների նկատմամբ տեղի ունեցած հողային, հարկային, դավանափոխութեան, եկեղեցիների քանդման, կրոնական ծիսակատարությունների սահմանափակման, ազգային

տարազի արդելման և այլ նշումների ու խտրականության մասին:

Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի հրատարակած 18-րդ դարի սուլթանական հրովարտականերից իմանում ենք, թե ինչպիսի կրոնական սահմանափակումներ են կատարվել Ահա մի հատված սուլթան Սուլեյմանի (1520-1566) գահակալության ժամանակաշրջանում Կ. Պոլսի կադիին ուղղված հրովարտակից:

«Իմ բարձր հրամանագիրը առնելուդ պես քանդել սուր շարիաթի սկզբունքներին հակասող շինությունը: Մինևույն ժամանակ թույլ չտաս իրենց հնազույն եկեղեցիներում ծնծղա խփելու, բարձր ձայնով երգելու և գինի խմելու: Պետք եղածի պես զգուշացրու հիշյալ վանքի քահանաներին, որ այսուհետև շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ, եթե որևէ շինություն կառուցեն, նույնպես ենթարկվելու է քանդման»: (Հրամանը վերաբերում է Կ. Պոլսի Սուլու-Մանասարի (Ս. Գեվորդ հայկական եկեղեցուն)<sup>4</sup>։

Պարզվում է, որ նույնիսկ 18-րդ դարում, Փոքր Ասիայի խառը բնակչություն ունեցող շատ վայրերում քրիստոնյա բնակիչները մոլեռանդ մահմեդականների դալլությունից խուսափելու համար գաղանի կերպով են կատարել իրենց կրոնական ծեսերը: Փաստական շատ կարեւոր վկայություններ կան Փ. Չիխաչովի «Նսամակներ Թուրքիայի մասին» խորագիրը կրող հուշագրության մեջ: Հեղինակը 18-րդ դարի կեսերին երկար ժամանակ գտնվելով Թուրքիայում, ականատես է եղել քրիստոնյաների իրավազուրկ և թշվառ վիճակին: Ահա նրա վկայություններից մեկը դավանանքի խտրականության մասին:

«Գիրեսուների և Դիրեբուլուսի ինչպես նաև Դիրբուլուսի և Գյումուշխանեի միջև դանվող հետամնաց գյուղերի բնակչությունը, իրենցից ներկայացնում էր բավականին հետաքրքիր մի երևույթ: Այդ գյուղերի ազգաբնակչու-

Թյունը խառն է, բացելիքաց հարուժ է մահմեդականու-  
թյանը և հասարակական վայրերում խոսում է միայն  
թուրքերեն: Սակայն գաղտնի կերպով հետևում է հունա-  
կան արևելյան եկեղեցու ծիսակատարությանը: Տանը խո-  
սում է հունարեն, և յուրաքանչյուրը կրում է երկու  
անուն: Այսպես՝ եթե նրանցից մեկը առաջնայան դուրս է  
եկել սպիտակ կամ կանաչ շալմայով և կրում է Ահմեդ  
կամ Սելիմ անունները, կրեկոյան, աղքատ խրճիթում կամ  
դաղտնի քարայրում միանում է իր դավանակիցներին,  
որպեսզի թաքուն կատարի քրիստոնեական ծեսի կատա-  
րումը քահանայի առաջնորդությամբ, որը դրանից մի  
քանի ժամ առաջ արդեն հանդես էր եկել որպես մուլա՝  
մզկիթում<sup>5</sup>:

Դեռևս, կարելի է շատ փաստեր և վկայություններ  
բերել ոչ-մահմեդականների նկատմամբ կատարված խրա-  
րականկության և ճնշումների մասին, հասկանալու համար  
թե ինչո՞ւ Ավետարանը թուրքերենի է թարգմանվել,  
սակայն բավարարվենք այսքանով: Հալիդե Էդիրի դրու-  
թյան վերաբերող մեր մյուս դիտողությունները տրված  
են ստորև բերված թարգմանության ծանոթագրություն-  
ներում:

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱԼԻԴԵ ԷԴԻԲ ԱԳՂՎԱՐԻ**

**«ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ»**

**ԹԻԹԵՌԵԱԾԱՂԻԿՆԵՐՈՎ ՏԱՆ»<sup>6</sup>**

**ԿՈՄԻՏԱՍԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՎԱԾԻ**

«Ակոս»-ի ընթերցողներից և բարեկամներից՝ Փրոֆ.  
Հյուսեյն Հաթեմին, անցած շաբաթների ընթացքում, թեր-  
թերի մեջ նկատելով Կոմիտաս Վարդապետի նկատմամբ

արտահայտութեամբ սպեղ հարձակումները, հիշեցրեց մեզ թե  
Հալիդէ Էդիբ Աղլվարը, իր «Մանուշակագույն թիթեռնա-  
ծաղկիներով սունը» խորագիրը կրող գրքում, ինչպիսի  
հիացմունքով է խոսել Կոմիտասի մասին: Ուստի, նա խըն-  
դրեց մեզանից, որպէսզի այդ հասովածը ծանոթացվի «Ակօս»-ի  
ընթերցողներին:

Եւորհակալություն հայտնելով մեր բարեկամի հա-  
մակրանքին և ցանկության, ստորև ընթերցողին ենք ներ-  
կայացնում Կոմիտասին, Հալիդէ Էդիբի գրութեամբ:

Այդ տարիներին, «Թրքական օջախ»<sup>7</sup> վարչու-  
թյունը ամեն տեսակի ելույթների և ճառերի համար ար-  
տոնություն էր տալիս, իսկ իր դահլիճում մեր մշակույ-  
թի գարգացման համար էլ կազմակերպում էր ներկայա-  
ցումներ և համերգներ: Կանանց և տղամարդկանց միա-  
տեղ ներկայացումների դիտումն ու ելույթների ունկըն-  
դրումը առաջին անգամ սկսվեց տեղի ունենալ «Թրքա-  
կան օջախ»-ի ներսի դահլիճում:

Այդ դահլիճում ունկնդրեցի նաև հայ նշանավոր  
երգահան և դաշնակահար՝ Կոմիտաս Վարդապետ անունով  
մի կրտսեականի:

Այդ օրերին նկատեցի, թե շինչպես «Թրքական  
Օջախ»-ում շարաքական կազմվող ծրագրերի նկատմամբ  
հասարակական կարծիքը բաժանվեց երկու մասի: Մեկ  
կողմը ցանկանում էր, որ միմիայն թուրքերի կատար-  
մամբ թրքական ստեղծագործություններ կատարվեն, իսկ  
մյուս կողմը առաջ էր քաշում այն միտքը, որ մեր մշա-  
կույթը առավել կգարգանա, եթե մերի հետ կատարվեն  
նաև այլ ազգերի ստեղծագործությունները:

Այս վերջինը հաղթանակ տարավ:

Այնուհանդերձ Կոմիտասը մեր երկրի ծնունդն էր:  
Հայ լուսավորչական հնազույն հոգևոր երաժշտության  
վերաբերող կտորների հետ, երկար տարիների ընթացքում  
հավաքել էր նաև Անատոլիայի<sup>8</sup> ժողովրդական երգերը:



Եթե տեսներինք նրա երկար կրօնական սքեմը, թխադեմ, հանդարտ դիմագծով կատարյալ տեսողական կերպարանքը, նույնպես Անատոլիայի բնակչին հասուկ արտում դեմքը և տեսալես տարօրինակ կարտաի զգացում արտահայտող սև աչքերը. և եթե լսեինք նրա հզոր ձայնի ներդաշնակութունը, ապա անմիջապես զուգահեռ կանցկացնեինք Անատոլիայի ժողովրդական երգերի հետ:

Եղանակը, իմ քեռիներից լսած էրգրումի և կեմախի երգերն էին հիշեցնում: Սակայն նա այդ բոլորը կատարում էր որպես զուտ հայերեն երգ: Ես լեզվին այնքան էլ կարևորութուն չէի տալիս: Մեր հայրենիքի անընակ լեռնային արտավայրերը հիշեցնող, այդ ներսից բխած, հուզմունք և կարտա արտահայտող մեղեդիները լսելիս ես ուշաթափվում էի:

Կոմիտասը գալիս էր նաև իմ տունը. ժամերով նվագում էր և երգում: Այս այցելութունները շարունակվեցին նաև հայերի և թուրքերի միջև տեղի ունեցած սպանութունների ընթացքում ևս: Այդ իրադրութունը երկուսիս մեջ էլ իրար չզոհարեբելու միտումով ցավ էր առաջացնում:

Հակառակ իրենց ազգայնականության, մարդկային ոգով լցված, նրան լսելու համար երբեմն գալիս էին նաև Եահյա Քեմալը և Մեհմեդ Համինը:

Չնայած որ Յուսուֆ Ակչուրան այս երաժշտութունից ևս բավականութուն էր ստանում, սակայն առարկում էր, որպեսզի Անատոլիայի ուսուցիչները հայ չլինեն: Ինձ համար, լինի հայերեն, թուրքերեն և կամ Անատոլիայում խոսվող լեզուներից որևէ մեկը, միևնույն է, այդ երաժշտութունը արտացոլումն է թրքական Անատոլիայի:

Կոմիտասը Քյոթահյայի մի աղքատ հայ ընտանիքի գավակն էր: Մայր լեզուն եղել է թրքերենը, բայց մեծանալուց հետո սովորել է նաև հայերեն: Ըստ իմ հիշողության, Կոմիտասը երկար տարիներ երգեհոն է նվագել Փա-

րիզի Աստվածամոր տաճարում: Գուցե և ընտանիքն էլ բնիկ թուրք եղած լինի:

Բանը նրանում է, որ բյուզանդական ժամանակաշրջանի նվաճումներին դիմակայող ցեղախմբի երեխաներին քրիստոնեացրել են: Այնուհետև, սահմանամերձ շրջաններում ապստամբած և հարավային սահմանագծում տեղափոխված այս քրիստոնյա թուրքերը գուցե և տարածվել են Անատոլիայի գանազան վայրերում:

Իրենց լեզվով, ցեղով և մշակույթով, Անատոլիայի թուրքերը համարվողին, հանդուցյալ Ջամի բեյը դեմ էր, որ Լոզանի կոնֆերանսի պայմանագրով նրանց նկատմամբ անձագրային փոփոխություն կատարվի:

Եթե քրիստոնյա թուրքերը մի առանձին եկեղեցի ունեցած լինեին և ազգայնականությունն էլ չխառնվեր նրանց կրոնական գործերին, ապա անկասկած մեր հայրենիքը չէր կորցնի իր շատ կարևոր այդ մարդկային տարրերին: Բանն այն է, որ հայ կամ հույն եկեղեցիների քաղաքական ազդեցության ենթարկվելու վաղ ժամանակաշրջանում, բառիս բուն իմաստով, նրանք և զեւ են թուրքեր:

Այլ տեղերի նման, կոնիայի քրիստոնյա եկեղեցում ևս պատարազը թուրքերեն էր կատարվում: Նույնիսկ Հնուց ի վեր թարգմանված թուրքերեն ավետարաններ ունեին: Աթենքում ուսում առած մի երիտասարդ քահանա, վերադառնալուց Հեսոս, երբ սկսում է եկեղեցում հունարեն քարոզ կարդալ, բոլոր ներկաները միաբերան բացազանչել են «հորդ լեզվով խոսիր»:

Հավանարար կոմիտասի գեղեցիկ ձայնը գրավել է Քյոթահյայի հայ եկեղեցու ուշադրությունը, քանի որ երիտասարդ Հասակում նրան ուղարկել են Հոռոմ<sup>9</sup> Երաժշտական տաղանդը ժառանգել էր իր ծնողից: Ինձ ասել է.

— Որպես ժառանգություն ծնողիցս ինձ մնաց մի

զույգ կարմիր հողաթափ և մեկ էլ երդը: Հողաթափը ժառանգեցի հորիցս, իսկ երդը՝ մորիցս: Խոսքերը և եղանակները պատկանում են մորս: Խոսքի նյութի դարձած երկու օպիտակ աղավնի երգը,<sup>10</sup> կատարում էր թուրքերեն, այն էլ իսկական Անատոլուի բարբառով:

Որպես մարդ և արվեստագետ, Կոմիտասը իսկապես որ ուշադրություն գրավող մի անձնավորություն էր: Նրա պարզությունը, շափավորությունը, մի քիչ միտախի և ինքնամոտի տեսքը, մարդուն ինչ որ շափով խորհրդածել էր տալիս:

Մի օր, Յ-րդ դարում ստեղծված «Ավե Մարիա»<sup>11</sup> երգեց: Բնական է, որ այս մեկը ժողովրդական կարոտալի և հուզումնալի երգերից տարբերվելով, խորը հավատքի ազդեցություն թողեց: «Ակամա հարցրի».

— Սաղմոսարանից մի կտոր երգեց՞իք:

— Այո՛, — ասաց:

— Եթե հոգնած չեք կը շարունակեիք արդյ՞՞ք:

— «Ավե Մարիայից» հետո իրեն նետեց բազկաթուի վրա, դեմքից երևում էր, որ հոգնած է: Առանց տեղից շարժվելու սկսեց երգել, սակայն այդ երգում կրոնական հեղությունից ավելի զայրույթ, դառնություն և ըմբոստություն կար: Երգի վերջին հանգերում, կամաց-կամաց ոտքի կանգնեց, աչքերը կրակով լցված, ձայնը երկնային ամպրոպի նման էր: Ինձ թվաց, որ Տաուսաի<sup>12</sup> Մեֆիատոֆելը կենդանացավ:

Հետագայում Սաղմոսարանը կարդալու ընթացքում հասկացա, որ իր կատարած երգը մի հզոր ըմբոստություն էր բուստպետների դեմ ուղղված:

1915-ին «Օջախ»ը նրան ազատեց արտորից:

1916 թ. նա ունեցավ ուղեղի միջազնում: Բժիշկ Ադնանը, Թալեաթ փաշայից թույլտվություն վերցրեց, որպեսզի Կոմիտասը բուժվի Փարիզում: Ամենայն հավանականությունը, նա մահացավ այնտեղ մի հոգեբուժական

Հիվանդանոցում:

Ես կարծում էի, որ ազգայնականությունը ստեղծելու<sup>13</sup> է համերաշխ փոխըմբռնումով մի երկիր: Մակայն ազգայնականությունը իր չափը կորցնելու ժամանակ տեսա թե ինչպես սեղ-սեղ մարդկանց մղեցին իրար սպաննելու և երկիրը վերածեցին մի սպանդանոցի: Բոլոր դեպքերում, թեևուզ աջ կամ ձախ դադափարախոսությամբ, իրենց չափը կորցնելով, ազգայնականությունը թողեցին ստվերում և ստեղծեցին ավելի արյունոտ և առավել ողբերգական մի երկիր:

Պարզվում է, որ մարդիկ իրար հասկանալու, իրար հետ հաշտ ու խաղաղ ապրելու համար հնարավոր չէ հիմնվել այս կամ այն դադափարախոսությանը: Այստեղ ուզում եմ հիշել Կանտի<sup>14</sup> հետևյալ խոսքերը:

«Աշխարհի թատերադրեմում մարդկանց հայտնվելը հնարավոր չէ դիտել առանց խորը ստեղծական, քանի որ մարդկանց իրար հանդեպ կատարած դաժանությունը, բնության գործադրած աղետից էլ ավելի շատ է»<sup>15</sup>,

## «ՀԱՅԵՐԸ

### ԳԻՄԱԿԱԶԵՐՄՎՈՒՄ ԵՆ»

ERMENINELRIN MASKESI DÜSÜYOR

(THE ARMENIANS UNMASKED)

Yayına Hazırlayan (Edited by)

Prof. Dr. YAVUZ ERCAN,

Ankara, 1993

Այս թուևտա խորագրով դիրքը լույս է տեսել 1993 թ. Անկարայում «Օսմանյան պատմության ուսումնասիրության և հրատարակության կենտրոնի» (թիւ 1) կողմից:

Գիրքը սկսվում է թուրքերեն և անգլերեն գրված Փրոֆ. Դոկա Յավուզ էրջանի առաջաբանով և այնուհետև հետևում է Զ.Պ. Նորմանի կողմից կազմված «Զեկուցագրի» թուրքերեն և անգլերեն բովանդակությունը և ձեռագրի պատճեն (ընդամենը 165 էջ):

Ավելի լավ պատկերացում կազմելու համար բերենք գրքի խմբագրի խոսքը:

«Մտավորապես 13 տարի առաջ, Անկարայի համալսարանի թուրքական հեղափոխության պատմության արխիվում աշխատելիս, փաստաթղթերի մեջ նկատեցինք կապիտան Զ.Պ. Նորմանի զեկուցագիրը (29 էջ): Դեռևս զեկուցագրի «Հայերը դիմակազերծվում են» վերնագիրը ուշադրություն էր գրավում իր յուրահատկությամբ: Իսկ վերևի մասում օսմաներեն լեզվով նշված էր. «կապիտան Նորմանի կողմից գրված հայերի խայտառակության բա-

ցահայտումը» խորագիրը (Տե՛ս էջ 1):

Ինչպես պարզվում է զեկուցագիրը թվագրություն չի ունեցել: Յավուզ էրջանը բովանդակության ավյալների վրա հիմնվելով նշում է, որ այն պեսք է գրված լինի 1896 թ. Ի միջիայլոց այս «Զեկուցագիրը հրատարակվել է նաև 1985 թ. Դուկա. Թուրքքայա Աթայովի կողմից անգլերեն, ինչպես նաև Ֆրանսերեն (Les Arméniens Démasqués) լեզուներով:

Հարկ է նշել, որ մենք Յավուզ էրջանի մի շարք գործերին ծանոթ ենք: Նա նույնիսկ մի անգամ իր հոգվածներից մեկում քննադատում էր հայ պատմաբաններին, որ նրանք անանում են թուրքական աղբյուրները և չեն օգտագործում դրանք<sup>2</sup>:

Բնականաբար թուրք պատմաբանը սխալվում էր Իր ժամանակին մենք անդրադարձել ենք այս խնդրին և հերքելով Յավուզ էրջանի վերոհիշյալ միտքը, մատնանշել, որ հայ պատմաբանները մանրակրկիտ ուսումնասիրում են ոչ միայն միջնադարի թուրք պատմագիր-տարեգիրների երկերը, այլև հատուկ ուշադրություն են դարձնում ու շրջանի հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող ուսումնասիրությունների վրա և տալիս դրանց անկողմնակալ գնահատականը<sup>3</sup>:

Եվ ահա սեղանի վրա է վերջերս լույս տեսած վերոհիշյալ «սենսացիոն» խորագրով գիրքը կարդացինք ուշադրությամբ: Նախ մտածեցինք անուշադրության մատնել այն, բայց Հեսոտ եկանք այն եզրակացության, որ լուելյայն անցնեն էլ իմաստ չունի, քանի որ այն առնչվում է հայ ժողովրդի պատմության 19-րդ դարի վերջին քառորդի տեղի ունեցած ողբերգական դեպքերի բացահայտ խեղաթյուրմանը: Խօսքը վերաբերվում է 1894-96 թթ. Սասունում և այլուր տեղի ունեցած հայերի կոտորածներին, որոնց ինչպես հայանի է զոհ զնացին 300,000 հայեր, նամանավանդ շուտով, օգոստոսին լրանում

է այդ արյունալի իրադարձությունների 100-ամյա տարելիցը:

Յաճուզ էրջանի գրած առաջաբանում նշվում է նաև, Չ.Պ. Նորմանը թուրքիայում առանձնապես շատ ճանաչված անձնավորութունն էի եղել, ուստի նրա մասին կենսագրական տեղեկություններ քաղելը այնքան էլ հեշտ չի եղել Առկա փաստերը ցույց են տալիս, որ նա եղել է Մեծն Բրիտանիայից ուղարկված հրետանու սպա, կամ էլ ինժեներ: Ձեկուցադիրը գրելու ընթացքում ունեցել է կապիտանի աստիճան: Ամբողջական անունն է եղել Charles Boswell Նորման: Նա եկել է թուրքիա 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ուսումնասիրության խնդրով և 1878 թվականին հրատարակել է «Հայաստանը եւ 1877 թ. կամպանիան» գիրքը<sup>4</sup>:

Իր զեկուցագրի մեջ արված տեղեկություններին իբրև թե մասամբ ականատես է եղել, կամ էլ դրանք քաղել է այլ աղբյուրներից:

Առանց հապաղելու նշենք, որ իր զեկուցագրում Նորմանը Սասունում և այլուր տեղի ունեցած արյունալի իրադարձությունների մեղքը բարդում է կուսակցությունների վրա: Միտումնավոր խեղաթյուրվում են եղելությունները, հասկապես վարկարկելվում և պախարակվում են Հայ կուսակցությունների ծավալած ազատասենյ գործունեությունը: Սուր քննադատության է ենթարկվում Անգլիայի և մյուս մեծ պետությունների հայկական բարենորոգումների խնդրում ձեռնարկած միջոցառումները: Ամեն կերպ ջանք է գործադրվում նվազեցնելու արևմտահայության, ավելի նիշտ իրենց բնօրրանում ապրող Հայ բնակչության թվաքանակը: Թաքցվում և քողարկվում են Սասունում և այլուր տեղի ունեցած հայերի սահմրակեցուցիչ կոտորածները: Իսկ այդ մասին անդրադառնալու դեպքում էլ միտումնավոր արվում է զոհված հայերի չնչին թվաքանակը 1895 թ. սեպտեմբերին, Հնչակյան

կուսակցութեան նախաձեռնութեամբ կատարված Կ. Պոլսի խաղաղ ցույցը, որի նպատակն էր մայիսյան բարենորոգումների գործադրման խնդրում հրավիրել Եվրոպական տերութիւնների ուշադրութիւնը, բնութագրվում է որպէս զինված և գրգրիչ ապստամբութիւն: Ամենահետաքրքիր երևույթն այն է, գուցե և ապշեցուցիչ, որ Նորմանը կատարյալ պաշտպանութեան տակ է վերցնում սուլթան Աբդուլ Համիդի հայերի նկատմամբ դրսևորած արյունալի քաղաքականութիւնը:

Մի խոսքով, թե՛ Յափուզ Էրջանի առաջարանում և թե՛ Նորմանի գեկուցադրում, համարյա թե միևնույն հերյուրանքներն են, որոնց մեր ականջը վարժվել է և որոնք անընդհատ կրկնվում են Մեծ Եղեռնից հետո անցած տարիների ընթացքում թուրք պատմաբանների, պետական գործիչների և ինչու չէ՛ Բեռնար Լեվիսի նման վարձկան պատմաբանների կողմից:

Իսկ ո՞րն է հայ կուսակցութիւնների «մեղքը»: Ոչ միայն կուսակցութիւնները, այլև ամբողջ հայութիւնը ձգտում էր մարդկային տարրական իրավունքների կյանքի, պատվի, ունեցվածքի անձեռնմխելիութեան և ազատ ապրելու վեհ դադափարին:

Այս մասին շատ է գրվել և խոսվել: Առկա են բազմականաչափ գնահատականներ համաշխարհային պատմագրութեան մեջ և մենք չենք ուզում խորանալ այդ ուղղութեամբ:

Նշենք, որ եթե Նորմանի այս «գեկուցադրը» նորութիւն էր մեզ համար, այսուհանդերձ վերահիշյալ աշխատութիւնը ինչ-որ չափով ծանոթ էր մեզ, որովհետև նրա այդ գրքից մի հատված ընդգրկված է ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսյանի «Հայերի Ֆեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում» փաստաթղթերի ժողովածուում: Եվ այն տպագրութիւնն էր ատեղծվել, որ 1878 թ. այն հրատարակելու ընթացքում Նորմանը, որոշ առումով եղել է



անաչառ պատմութիւնը ճիշտ շարադրելու սկզբունքին:

Ահա թե ինչ է գրել նա 1877 թ. օգոստոսի 24-ին էրզրումում:

«Հայերի դրութիւնը այն երկրում, որտեղով անցել է Իսմայիլ փաշայի բանակը, ծայր աստիճան ողբալի է: Այաշկերտի դաշտի բոլոր 122 գյուղերը, իննից բացի, ավերված են: Այն մի քանի քրիստոնեյաները, ովքեր Տեր Ղուկասովի նահանջի ժամանակ չեն օգտվել Ռուսաստանի հովանավորութիւնից, բարբարոսաբար սպանվել են: Մի ամբողջ շարք գյուղեր այրված են մինչև վերջ: Մուշի դավառում մի քանի գյուղեր ավերվել են, իսկ բնակիչներից շատերը՝ մորթվել: Նույն բախտին են արժանացել Բայազեդ քաղաքը և շրջակայքի գյուղերը: Այդ վայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք և երեխաները սպանվել են ամենադաժան ձևով...»<sup>5</sup>:

Մրանով հանդերձ ստորև պիտի նկատենք, որ Հետադայում նրա դիրքորոշումը Հայերի հանդէպ չենտակի փոփոխութեան է ենթարկվել, ինչ-որ մութ հանդամանքների ազդեցութեան տակ:

Այստեղ զարմանալու բան չկա: Ի՞նչ է, մեր օրերում նման ազդեցուցիչ երեւույթներ չեն կատարվում: Դեռ վերջերս անգլիացի պատմաբան Բեռնար Լեվիսը Le Monde թերթում հանդես եկավ Հայերի ցեղասպանութիւնը կասկածի տակ առնելու մեկնարանութիւններով: Եվ ինչպէս Հայտնի է Ֆրանսիական օրենքներով դատական հարց է հարուցված նրա դեմ<sup>6</sup>:

Մինչդեռ Բեռնար Լեվիսը, 1961 թ. հրատարակած իր գրքի մեջ, պահպանելով ճշմարտութիւնը նշել էր, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում, Արևմտահայութիւնը ենթարկվել է ողջակիզման: Իսկ տարիներ հետո, նույն հատորի մեջից այդ հատվածը անհետացել էր: Պատմութեան ազավաղման այս առտարոց երեւույթը բացահայտված է Հայաստանի Գիտութիւնների

Ակադեմիայի Արևելագիտութեան Ինստիտուտի մեր գործընկեր Դոկտ. Փրոֆ. Ռուբեն Սահակյանի կողմից:

Որպեսզի հայ ընթերցողը որոշ պատկերացում կազմի գրախոսվող գրքում Նորմանի հայաստաց ոչով շարադրված զեկուցմանը, բերենք նրա առաջաբանից մի հատված և ընդհանրապես բովանդակութունից մի քանի եզրակացութիւններ, որտեղ պաշտպանելու և արդարացնելու փորձեր են կատարվում Արդուլ Համիդի աշխարհով մեկ հայանի դաժան բնավորութիւնը և բռնատիրութիւնը:

Ահա թե ինչ է գրել Նորմանը իր զեկուցադրի առաջաբանում:

«Հայ-թուրքական բախումների իրականութիւնը հասկանալու ժամանակը եկաւ: Մինչև հիմա այդ խառնակութիւնների մասին պատկերացում էինք կազմում միմիայն հայերի տված բացատրութեամբ և նրանց անգլիացի բարեկամների հուզումնալից հիստերիկ արտահայտութիւններով: Դեռևս չլսեցինք օսմանցիների պաշտպանելու խընդիրը: Կոտորածների, կողոպուտի, կանանց վրա հարձակվելու հեքիաթները զգվելու աստիճան լսեցինք: Սակայն գրքանցից ոչ մեկը, ո՛չ մի եվրոպացի ականատեսի կողմից չհաստատուեց Իսկ Անգլիան, Անատոլիայի մեջ տեղի ունեցած խառնակութիւններին անտեղյակ լինելով, չնրկատեց, որ այս բոլորը իր հովանավորած անիշխանական շարժումների ուղղակի արդյունքն են» (էջ 51):

Մեր մամուլում, սուլթանը բացահայտորեն մեղադրվում է կոտորածների թողալութեամբ և մարդկանց առանց դատ-դատաստանի սպանելու հանցանքով: Այդ դատապարտման ապացուցումը անհնար լինելով հանդերձ, այն հնարովի է և նույնիսկ դաժանաբարո» (էջ 74):

«Ես հպարտ եմ, որ Օսմանյան պետութեան ծառայութեան մեջ գտնվող լավագույն և ամենահամարձակ մարդկանցից մի քանիսը հանդիսանում են իմ բարեկամները:

Նրանց հետ զրուցեցինք մեր երկրների միջև դոյություն ունեցող ցափալի սառնության մասին: Բոլորն էլ ինձ վստահեցրին, որ Նորին Մեծությունը ամբողջ էությամբ ձգտում է Անգլիայի հետ բարեկամանալ: Նույնիսկ մի անգամ սուլթանը հատուկ փափաք հայտնեց, որ ես հնարավորին շափ հրատարակայնացնեմ թե ինչ աստիճանի հուզմունք է պատճառում մեր ժողովրդի և մամուլի նման վերաբերմունքը իր հանդեպ: Նա մեծ ցանկություն հայտնեց, որ ինքը ուզում է բարեկամանալ մի ազդի հետ, որին այնքան պարտական են ինքն ու իր նախահայրերը: (էջ 74):

«Նրանք, որոնք ճանաչում են սուլթանին, գիտեն, թե որքան անիրավացի են նրա դեմ կատարվող զրպարտանքները: Նա իր անձնական կյանքով միշտ էլ եղել է մի անմեղություն, և ով որ արժանի է եղել դրան, շարունակ վայելել է նրա բարեկամությունը»: (էջ 75):

«Հակառակ մի շարք պարագաներուն սուլթանի հանդեպ բերած մեծահոգության և բարյացակամության, մենք պետք է ընդունենք և հափառք ընծայենք, որ նա է եղել Սասունցի տպատամրների վրա առանց խղճահարության հրաման արձակողը, ինչպես նաև վերջերս Անատոլիայի քաղաքներում, հայերի վրա հարձակվելու հրաման տվողը: «Հայերի վրա կատարված հարձակումներ» եմ ասում, սակայն, մենք պետք է ընդունենք, որ ըստ թուրքական պաշտոնատար անձանց, ամեն անգամ էլ հայերն են նախաձեռնել նախահարձակումը, և նկատի ունենալով նրանց ֆիզիկական թուլությունն ու նվազ թվաքանակը, նրանք մատնանշել են, որ հայերի կորուստը թուրքերից ավելի շատ է եղել»: (էջ 75):

Եվ վերջապես Նորմանը եզրակացնելով գրել է. «Աչքի առաջ ունենալով բոլոր անգլիացիներին ես այն համոզմանն եմ, որ նրանք հովանավորում են միմխայն փոքրամասնությանը եւ գիտեմ, որ այսօր Անգլիայում հիմ-

նական մտածողութիւնը դեմ լինելով թուրքերին, հակ-  
ված է դեպի հայերի կողմը: Այս բոլորը բխում է նրանից,  
որ հայկական այս խարդավանքներն ու բանասրկութիւն-  
ները սրանից առաջ ոչ մի անգամ չբացահայտեցին  
Անգլիայի ժողովրդի առաջ: (էջ 77):

Այս մի քանի հատվածները, որ նույնությամբ թարգ-  
մանարար ընդգրկեցինք այստեղ, կարծում ենք, որ դրանք  
որոշակի պատկերացում են տալիս նորմանի գեկուցման  
չարադրման ոճի և հայերի հանդեպ նրա դրսևորած դիտ  
և ատելության:

Հիմա անցնենք այս գեկուցման ներքին ծալքերի բա-  
ցահայտման, թե ո՛ւմ դրդմամբ կամ էլ պատվերով կա-  
րող էր գրված լինել այն և ի՞նչ հետին նպատակ էր հե-  
տապնդում:

Ուրեմն այսպես՝ Օսմանյան կայսրության հայտնի  
պետական գործիչ հայատաջ Քյամիլ փաշան, երբ 1895 թ.  
մայիսին կրկին նշանակվեց Մեծ Վեզիրի պաշտոնին, վեր-  
լուծելով Սասունի իրադարձութիւնները իր հուշագրու-  
թյան մեջ և գեկուցագրերում, հետևյալ խորհուրդն էր  
տալիս Արդուլ Համիդին:

«Սասունի դեպքը, սվեյի շուտ այնտեղի պայտամ-  
բության անշումը, հայերի կողմից այնպես է ուռնացվել և  
անգլիական մամուլում այն աստիճան դաժանությամբ է  
նկարագրվել, որ այդ հրապարակումները չէին կարող ազ-  
դեցութիւն չդրածել ոչ միայն Անգլիայում, այլև նույն-  
խակ այստեղ՝ Օսմանյան կայսրության տարրեր հպատակ-  
ների վրա»<sup>7</sup>:

Եվ եթե այժմ որևիցէ հրատապ բան կա անելու, դա  
այն է, որ հետաքննող հանձնաժողովի գեկույցը շտապ  
կերպով հրապարակվի Անգլիայում, որպեսզի հանդարտվի  
ընդհանուրի տրամադրութիւնը: Եվ այդ հանդարտեցման  
նպատակին հասնելու համար բավական է, որ հիշյալ գե-  
կույցը հրապարակվի օտար պաշտոնյաների ստորագրու-

Թյամբը՝Ց:

Սուլթանին ուղղված զեկուցագրի մի այլ մասում, Քյամիլ փաշան բացահայտ մատնանշում է նաև հետևյալը.

«Իմ կարծիքով, հանդուցակետը ո՛չ անգլիական դեսպանի և ո՛չ էլ նրա կառավարության ձեռքին է: Այս հարցում առաջին հերթին անհրաժեշտ է մտախոյզել անգլիական հասարակության կարծիքը: Եթե մի կողմից հնարավոր լինի որոշ ժամանակ հետաձգել դեսպանների հուշագրերի պատասխանները, ապա մյուս կողմից անհրաժեշտ է, որ չնկող մի անձնատիրութուն հանդես գա Լոնսոնի մամուլում, (ընդգծումը մերն է, — Ա.Փ.) մատնանշելով, որ հայերի ապստամբությունը լոկ դաշնագրից բխած մի երևույթ է: Իսկ Օսմանյան պետությունը պետք է բողոքարկելու ուղիներ որոնի Անգլիայի անխրատացի դիրքորոշման դեմ»<sup>Թ</sup>.

Հարգելի ընթերցող, եթե պարզ համեմատություն կատարենք Քյամիլ փաշայի և կապիտան Նորմանի վերոհիշյալ զեկուցագրերի միջև, ապա, այնքան էլ դժվար չի լինի կռահելը, թե ինչ ներքին կապ կարող էլ լինել դրանց միջև: Դուք ինձ հետ պիտի համաձայնեք, որ դրանք միևնույն շղթայի հաջորդական օղակներն են. այսինքն՝ այն ցույց է տալիս, որ Նորմանի զեկուցումը, սարքովի և պատվերով կատարված մի զործ էր: Քյամիլ փաշայի խոսքերով սասած՝ Նորմանը հենց այդ նույն «չեղոք», «օտար» անձնավորությունն էր, որի ստորագրությամբ լույս պիտի տեսներ մի հողված, որպեսզի հանդարտեցվեր Անգլիայի, ինչպես նաև համաշխարհային հասարակության կարծիքը արդուհամիդեան հայերի կոտորածների կապակցությամբ:

Բնականաբար Նորմանը միակը չէր կարող լինել այս հետին ծրագրում: Հավանաբար թուրքական արխիվները պրպտելու ընթացքում կարող են ուրիշները ևս ի հայտ գալ:

Մեզ համար զարմանալի է մի հանգամանք ևս. Յա-  
վուզ էրջանը իր առաջարանում պաշտպանելով և խորին  
հավատք ընծայելով Նորմանի ավյալների վրա, ինչո՞ւ է  
անտեսում ավյալ իրադարձություններին վերաբերող իր  
հայրենակիցների գնահատականները:

Մի կողմ թողնելով օտարազգի դիանականների և  
պետական գործիչների ճշմարտացի գնահատականները  
Սասունի կոտորածների մասին, մենք այստեղ տեղին ենք  
համարում բերել միմիայն մի երկու երիտթուրքական  
գործիչների վկայությունները: Այսպես՝ երիտթուրքական  
հայանի գործիչ Օսման Նուրին Սասունի իրադարձու-  
թյուններին որպես ժամանակակից գրել է.

«Անատոլիայից (իմա Արևմտյան Հայաստան —  
Ա.Փ.) հասած տեղեկությունները շափազանց աղետալի  
էին: Ջարդը շարունակվում էր ստակալի չափերով: Քա-  
ղաքային և գինվորական իշխանությունների աված հրա-  
մաններով, քրդերը հարձակվել էին գյուղերի վրա, բայց  
ևս էին մղվել, որից հետո գինվորական ուժեր ուղարկելու  
անհրաժեշտություն էր առաջացել: Այդ ժամանակ գին-  
վորները այրել էին գյուղերը և կոտորել բազմաթիվ  
մարդկանց»<sup>10</sup>:

Իսկ երիտթուրքական ոչ պակաս հեղինակավոր գոր-  
ծիչ, հետագայում ծովային նախարար, և թուրքական 4-րդ  
բանակի հրամանատար Ջեմալ փաշան, նույն իրադար-  
ձությունների մասին գրել է.

«Երիտթուրքերը դատապարտելով 1894-96 թթ. հայ-  
կական դեպքերը, այն համարեցին Արդուլ Համիդի քա-  
ղաքական սխալը, քանի որ նա դաժան միջոցներով ձրգ-  
տում էր երկարածքել իր բռնապետությունը... Հայերի  
կոտորածների ընթացքում, ես և այլ հեղափոխականներ  
գտնվելով Թուրքիայում, նույնպես դատապարտեցինք Ար-  
դուլ Համիդին, քանի որ նրա այդ քաղաքականությունը  
վնասարեք էր, ոչ միայն թուրքերի, այլև ամբողջ օս-

մանների համար»<sup>11</sup>։

Կրկին անդրադառնալով Օսման Նուրիին, վերջացրենք․

«Այս ջարդը բոլոր պարագաներում, մի ահարկու եղևոն էր մարդկության դեմ։ Իսկ այս եղևոնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նույն Աբդուլ Համիդ Երկրորդն էր, որը ղեկավարում էր Յըլսըզլի այդ հրոսակախուժքը և կոտորում էր ոչ միայն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»<sup>12</sup>։

Կարծում ենք, որ այսքանից հետո, առանձին եզրակացության այլևս կարիքը չկա․ միմիայն ուզում ենք ավելացնել հետևյալ առաջարկը։

Սովորաբար հրատարակվող գրքերի սկզբին, արտատրպելու հնարավորությունը սահմանափակելու համար, գրքովում է․ “All Rights Reserved”։ Մենք բոլորովին անհրաժեշտ չենք զգում այդ կանոնին և ցանկանում ենք, որ մեր այս գրախոսականը լույս տեսնի ոչ միայն վերոհիշյալ լեզուներով, այլև չինարեն, հնդկերեն, ռուսերեն, ճափոներեն, գերմաներեն, իտալերեն և․․․

Բայց արամարանությունը հուշում է, որ այն ունենա «ԹՈՒՐԻՔԵՐԸ ԴԻՄԱԿԱԶԵՐԾՎՈՒՄ ԵՆ» խորագիրը։

## «ՀԱՅԵՐԸ ԵՎ ԻՐԱՆԸ»

### ERMENILER VE IRAN

Yayına Hazırlayan (Edited by)

Prof. Dr. YAVUZ ERCAN,

Ankara, 1994, 44 P.

1994 թ. Հունիսի 8-ին, «Նոր Օր» եռօրյայում մի ընդարձակ գրախոսական էինք հրատարակել արդի թուրք պատմաբան Յավուզ էրջանի խմբագրությունում լույս տեսած «Հայերը Դիմակաղերծվում են» (1993) գրքի մասին, որտեղ հավասարի փաստերով հերքել էինք նրա առաջ քաշած սխալ տեսակետները և բացահայտել ճշմարտությունը արդուչևամիդյան բռնատիրության շրջանում տեղի ունեցած հայերի հալածանքների և կոտորածների մասին, և սպացուցել, որ ոչ թե հայերն են դիմակաղերծվում, այլ թուրքերը:

Եվ ահա Յավուզ էրջանի խմբագրությունում հրատարակ է եկել հակահայկական ուղով շարագրված մի այլ գիրք ևս «Հայերը և Իրանը» խորագրով:

Նա վերահրատարակել է 1927 թվականին Ստամբուլում լույս տեսած Մեհմեդգադև Միրզա Պալայի «Հայերը և Իրանը» վերնագրով գրքիկը: Այն բաղկացած է 27 էջից և ունի 8 ենթաբաժիններ: Իսկ Յավուզ էրջանը գրել է գրքի առաջաբանը՝ 19 էջերից բաղկացած:

Ի՞նչն է տարօրինակն ու զարմանալին:

Փոխանակ առաջաբանում քննարկման նյութ գտանա



վերահաստարկվող այդ դրքի բովանդակութունը, Յավուզ էրջանը Հիմնականում խոսում է 1914-1916 թթ. Հայ-թուրքական հարաբերությունների և իրադարձությունների մասին, քննադատության թիրախ դարձնելով այսպես ասած Հայերի ապստամբական շարժումներն ու նրանց գործադրած դաժանությունները թուրքերի նկատմամբ: Միայն առաջաբանի վերջում հպանցիկ տեղեկություններ է ապիս հեղինակի կենսագրության և հրապարակախոսային գործունեության մասին:

Իսկ Մեհմեդզադե Միրզա Պալան, 1927 թ. հրապարակած գրքույկում խոսում է այն մասին, որ Հայաստանի խորհրդայնացումից (1920 թ.) հետո բավականաչափ թվով հայեր զաղթել են Իրան, որանդ և աստիճանաբար հասել են որոշակի հաջողությունների՝ հանրակրթական և հասարակական կազմակերպությունների ընդլայման, առևտրի և տնտեսության զարգացման, առաջդիմություն արձանագրել մշակութային և քաղաքական կյանքում և նույնիսկ զինվորական ասպարեզում: Հայ Հեղափոխական Դաշնակցությունը կենտրոնանալով Թավրիզ քաղաքում, կրկին իր ուժերն հավաքելով, սկսել է բուռն գործունեություն ծավալել ազգայնական և հեղափոխական գաղափարներ տարածելու ուղղությամբ: Այս նպատակի կենսագործման համար սերտ համագործակցություն է ստեղծվել Հայերի և պարսիկ մտաբուրականության, ինչպես նաև քաղաքական գործիչների միջև: Միրզա Պալայի մտավորությունը այն է, որ այդ բարեկամական հարաբերությունները ուղղված են թուրքիայի և ընդհանրապես համաթուրանիզմի դեմ և ունի ծովից-ծով Հայաստան ըստեղծելու հեռուոր ծրագիր: Մի խոսքով հեղինակին դուր չի գալիս իրանահայ համայնքի ընկերային-տնտեսական և քաղաքական ասպարեզում ձևաք բերած հաջողությունները, սուր քննադատության է ենթարկում Հայ Հեղափոխական Դաշնակցության ազգայնական և հեղա-

փոխական գաղափարների տարածումը և ընդանրապես հայության շրջանում հայրենասիրական գլխացումներ սերմանելու ձգտումները: Միրզա Պալան անդրադարձել է նաև հայ-ուսական համադործակցության, քրդական հարցին, Օսմանյան կայսրությունում հայերի թվաքանակի նվազեցման, և այլն:

Եվ այդպես Յավուզ էրջանը մեր օրերում խիստ շահեկան համարելով այս գրքույկը, կրկին վերահրատարակել է, այն միտումով, որ նորաստեղծ Հայաստանի հանրապետությունը նույնպես սերտ համադործակցության մեջ է իրանի այսօրվա պետության հետ, և այդ բարեկամությունը նախկինի նման նպատավոր չէ և նույնիսկ պատնջավոր՝ Թուրքիայի համար:

Այժմ անցնենք գրքի առաջաբանում Յավուզ էրջանի կողմից առաջ քաշված մի քանի խեղաթյուրումներին և և տանք դրանց հակիրճ պատասխանները:

1. — 19-րդ դարի կեսերին, հայերի կողմից Թուրքերի դեմ նախաձեռնված թշնամությունը նույն դարի վերջափուլից հայերի վերածվել էր Թուրքերի նկատմամբ դործադրվող դուլումի, ճնշման և ցեղասպանության» (էջ V):

Այս մեկնաբանությունը պատմության սղակազման արտառոց կրեույթ է: Այստեղ, հայ ժողովրդի պատմության 19-րդ դարի վերջին քառորդին տեղի ունեցած ողբերգական դեպքերը լիովին խեղաթյուրված են: Այդ մասին համաշխարհային պատմագրության մեջ հսկայական նյութ կա: Բոլորին հայտնի է, որ 1894-96 թթ. Սասունում և այլուր տեղի ունեցած կոտորածները ցնցեցին ամբողջ աշխարհը, հատկապես այն խորը ցասում առաջացրեց Եվրոպայի ժողովուրդների մոտ:

Արքուհամիդյան բռնասիրության շրջանում տեղի ունեցած հայերի կոտորածների մասին, դեպքերի ժամանակակից երիտթուրքական գործիչ Օսման Նուրին ահա թե ինչ է գրել:

«Այս ջարդը բոլոր պարագաներում մի ահարկու նդեան էր մարդկութեան դեմ: Իսկ այս եղեւնի պատճառ Հանդիսացողը, անկասկած նույն Արդոււ Համիդ երկրորդն էր, որը ղեկավարում էր Յըլսուզլի այդ հրոսակախուժքը և կոտորում էր ոչ միայն Հայերին, այլև դեպի կործանում տանում ամբողջ Հայրենիքը»<sup>1</sup>:

Այս դեպքերի մասին թուրք հանրահայտ գործիչ Ջեյալ Նուրին, 1911 թ. Kabus (Մղձավանջ) խորագրով գրքի Հայերեն թարգմանության առաջարանում գրել է.

«Արդոււ Համիդի սուլթանութեան շրջանը անկասկած Հայ ժողովրդի պատմութեան ողբերգութեան ամենաողբերգական շրջաններից մեկն է, քանի որ Հայերը այդ ժամանակամիջոցում բավականաչափ գուհեր տվին. Եվ մենք թուրքերս բռնակալ վեհապետի հրահանգով կատարված այդ բոլոր ոճրագործութունների Համար տեղապես ցավ ենք զգում...»<sup>2</sup>:

2. 1914 թ. դաշնակից պետությունների դեմ կենաց մահու պատերազմի մեջ մտած Օսմանյան պետությունը, երբ փաստեց Հայերի ուսանների Լիա ունեցած Համազոր-ծակցութունը, դիմեց ամենամարդասիրական գործողութեան: Իր դոցութունը պահպանելու Համար, Հայերի մի մասին ստիպողաբար գաղթի ենթարկեց» (ԿՉ V):

Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսվում է միմիայն Հայերի գաղթի և ոչ մի խոսք կոտորածի մասին: Կրկին դիմենք թուրքական աղբյուրների: 1910 թ. թուրքական ռազմական արտակարգ առյանի կողմից երիտթուրքերի պարագլուխների դատավարութեան ընթացքում բերված բոլոր մեղադրական եզրակացութուններում մատնանըչվում է, որ «ընդունված Հատուկ օրենքի Համաձայն, այլ վայրեր տարագրված Հայերի քարավանները ոչնչացվել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծված քրեական Հանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գույքն ու ունեցվածքը կողոպտվել և Հափշտակվել են»<sup>3</sup>:

Իսկ շրջանային կուսակցութեան պատասխանատու քարտուղարների հարցաքննութեան ընթացքում, հանձնաժողովի նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշան ասել է. «Օրենքով կատարված գործողութիւնների համար ոչ մեկին պատասխանատուութեան չենք ենթարկում: Իրականութեանը այն է, որ տեղահանութեան քողի տակ կոտորած են տարքել: (Ընդժումը մերն է. — ԱՓ.) Ահա այդ արարքի համար է, որ ձեզ պատասխանատուութեան ենք ենթարկում»<sup>4</sup>:

Անշուշտ այս մասին կան նաև բազմաթիւ օտար ականատեսների պատմածներն ու վկայութիւնները: Այս գրքում քանի հայ-իրանական հարաբերութիւններն են շոշափելի, բերենք մի հատված պարսիկ գրող, վիպագիր՝ Մոհամմեդ Ալի Զամայզազևի հուշագրութիւնից:

«Ես ականատես եղա մի շարք դաժանաբարո տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինվորները Հայերի գլխին, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և որի հետեանքը, ինչպես գիտենք, եղաւ միլիոնից ավելի Հայերի ջարդը... Հարցութաւոր Հայ աղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդեն անզօր էին քայլելու, մտրակի ու զենքի ուժով, հետիոտն ու անզօր, անինս քշում էին առաջ: Տղամարդկանց մեջ երիտասարդներ չկային: Նրանց ուղարկել էին ռազմաճակատ, կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին: Ես զարհուրելի օրեր անցկացրի, օրեր, որոնք մղձավանջի պես ծանրացել են Հողուս վրա: Մղձավանջ, որ կրքեմն տարբեր առիթներով ճնշում է ողջ էութիւնս, անհանգստացնում ու տանջում է ինձ»<sup>5</sup>:

3. «Օսմանյան կայսրութեան մարդահամարի համաձայն, Ստամբուլն էլ ներառյալ, ամբողջ թուրքիայում 1,300,000 հայ կար:

Արևմուտքի և Հայերի առաջ քաշած տվյալներով,

ինչպէս կարող է պատահել, որ այդ դեպքերի ընթացքում 2,000,000 մարդ մահացած լինի, այն դեպքում, երբ Օսմանյան հողերում 1,300,000 հայ էր ապրում: Այս պարագայում ստացվում է այնպես, որ բոլորովին չապրած 700,000 հայերն էլ դո՛հերի թվում են» (էջ XIX):

Այստեղ ևս Յավուզ էրջանը չարաչար սխալվում է և նորութուն չէ մեզ համար, որովհետև դեռևս Արդուշ Համիդի բռնատիրութեան շրջանում և հետո, երբ հայկական հարցը դարձավ միջազգային շահարկման առարկա, թուրք պետական գործիչները, այդ թվում և պատմաբանները, բարենորոգումների անհրաժեշտութունը ավելորդ համարելու միտումով, գիտավորյալ սկանցին ամեն ջանք թափել, նվազեցնելու հայերը թվաքանակը Օսմանյան կայսրութունում: Առկա է նաև հարցի մյուս կողմը: Դա գինձորական հարկից ազատվելու նպատակով, քրիստոնյաների հաշվառումից խուսափելու հարցն է: Ուսումնասիրութունը ցույց է տալիս նաև, որ հաշվարկման ընթացքում նույնիսկ բազմաթիվ հայկական գյուղերի բնակչութունը դուրս է մնացել գրանցումից, որը նույնպես բացասաբար է անդրադարձել հայ բնակչութեան ընդհանուր թվաքանակի վրա<sup>6</sup>:

Հարկ է նշել, որ հայ և օտարազգի պատմաբանների ու մասնագետների ավյալները այս խնդրում բերել են այն եզրակացութեան, որ նախապատերազմյան շրջանում հայ ազգաբնակչութեան թվաքանակը Օսմանյան կայսրութունում եղել է 2.5 միլիոն մարդ: Իսկ զոհված հայերի թվաքանակի մասին խոսելիս մատնանշվում է, որ Մեծ Եղեռնի ընթացքում, նահատակվել են ավելի քան 1.5 միլիոն անմեղ հայեր<sup>7</sup>:

4. — «Հակառակ այս բոլորին, Օսմանյան պետութունը աշխատել է կատարել Հնարավոր ամենամարդասիրական քայլերը: Գաղթի ընթացքում հավանական թվացող դեպքերը կանխելու համար ձեռնարկել է միջոցներ:

Այդ իսկ նպատակով, ներքին գործերի նախարարությունը 1915 թ. մայիսի 30-ին, նկատի ունենալով պատերազմական վիճակն ու քաղաքական արտակարգ դժվարությունները, այլ շրջաններ տարազրվող Հայերի սնունդի և ապահովության վերաբերյալ Հրապարակել է 15 հոդվածներից բաղկացած մի կանոնադրություն։ Այդ կանոնադրության ի Հայտ դալուց 10 օր հետո, 1915 թ. Հունիսի 15-ին, կառավարությունը Հրապարակել է 36 հոդվածներից բաղկացած մի նոր կանոնադրություն ևս։ (Էջ XVIII)։

Նախ անհրաժեշտ ենք զգուժ Յավուզ էրջանին հիշեցնել, որ բացի այս նշված երկու կանոնադրություններից, 1915 թ. Հոկտեմբերի 28-ին, կառավարությունը Հրապարակեց նաև մի այլ 25 հոդվածներից բաղկացած մի կանոնադրություն ևս։ Այն առաջին անգամ լույս տեսավ թուրքական պաշտոնական օրաթերթի "Tavkim-i Vekayi"-ի մեջ (տե՛ս 1915 թ. Հոկտ. 28, թիվ 2343, արարատառ.), որը հետագայում նույնությամբ արտատպվեց "Düstur"-ի մեջ (օրենքների ժողովածու.), տե՛ս Հատ. 7, Կ. Պոլիս, 1918, էջ 775-781, (արարատառ.)։

Բնականաբար, սրանց շարքին կարող էին Հրապարակվել այլ կանոնադրություններ ևս։ Հարցը դրանում չէ, այլ նրանում, թէ որքանո՞վ այդ օրենքները կիրառվեցին կյանքում։ Իրականությունը այն է, որ դրանք երբեք չգործադրվեցին։

Ըստ այդ կանոնադրությունների, իբր թե Հայերի գույքերն ու կալվածները պիտի գրանցվեին և արձանագրվեին պետական պաշտոնյաների կողմից, և արժեքները գնահատվելուց հետո իբրև ավանդ պահ դրվեին պետական գանձարանները, որպեսզի հետագայում դրանք հանձնրվեին իրենց տերերին։ Թե ի՞նչ ձևով դրանք պիտի վերադարձվեին և երբ, Հայտնի չէր, որովհետև կանոնադրության հեղինակները, արդեն վաղօրոք քաջ գիտեին թե ինչ էր սպասվում ամբողջ Հայությանը։

Հազիվ հայերը հեռանում էին իրենց բնակավայրերից, երբ Թուրքիայի այլ կողմերից գաղթած մուհանձիրները կառավարության նախաձեռնությամբ լկախորաբար սեփականացնում էին հայերի աները, խանութները, կողոպտելով ու թալանելով նրանց ամբողջ ունեցվածքը: Ահա թե ինչ է գրում այդ մասին դեպքերի ժամանակակից Չափեն Պատրիարքը.

«Այսպես ժողովուրդին բոլոր շարժական ստացվածքը կփնանար կամ լավ ևս է ըսել Թուրքերու նեղը կանցներ, կառավարությունը ոչ մեկ տեղ հողածու չզանվեցալ այդ դուքները հավաքելու կամ դրամի վերածելու»<sup>8</sup>

Իսկ ավյալ ժամանակվա Կ. Պոլսո ամերիկյան դեսպան՝ Հ. Մորգենթաուն վկայում է հետևյալը. «Հազիվ թե նախկին սեփականատերերը հեռանային գյուղեն՝ մահմեդական մուհանձիրներ — Թուրքիո այլ կողմերեն գաղթողներ — կը փոխադրվին հայկական բնակավայրերն ներս: Նույնպես հայերուն բոլոր արժեքավոր առարկաները — դրամ, մատանիներ, ժամացույցներ և գոհարեղեններ — կը տարվին ոստիկանատուներ չապահով պահելու համար» մինչև հայերուն վերադարձը, և ապա կը բաժնվին Թուրքերուն»<sup>9</sup>:

Ծ. — Ռուսաստանի դաշնությունը սովետներից դատարկված կովկասի հսկողությունը իրենց սղոցելության տակ վերցնելու, իսկ մյուս երկրներն էլ Թուրքիային լիովին անելանելի դրության մեջ դնելու համար, հովանավորեցին Հայաստանին՝ նվաճելու ազրբեջանական հողերը: Մոտ մեկ միլիոն սղորեջանցի Թուրքեր իրենց երկրում մնացին անտուն և անհող: (Էջ VI):

Այս հարցին հնարավոր չէ մեկ-երկու տողով պատասխանել: Այն կարիք ունի մանրամասն մեկնաբանության, որը մեր նպատակից դուրս է: Մակայն հարց է առաջանում, ինչո՞ւ հեղինակը ոչ մի խոսք չի ասում Սուլթանիթի հայության բարբարոսական կոտորածի, և

դրա շարունակությունը Հանդիսացող Բաքվի, Գանձակի և ալլուր տեղի ունեցած Հարյուր-Հազարավոր Հայերի Հաշածանքներին և ահարեկմանը: Ինչո՞ւ:

Յ. — Ինչպես 70 տարի առաջ, այնպես էլ այսօր Արևելյան և Արևմտյան Եվրոպայի մի շարք պետություններ Հովանավորում են Հայկական տեռորիզմը Թուրքիայի դեմ: Այն դիխավորում են՝ Ֆրանսիան, Բելգիան, նախկին Խորհրդային Միությունը, իսկ Հիմա Ռուսաստանի Դաշնությունը, Անգլիան, Գերմանիան, Հունաստանը: Այս ցուցակում անհրաժեշտ է ընդգրկել նաև արարական երկրները, Միացյալ Նահանգները և Արգենտինան: Ինչպես երևում է, Թուրքիայի դեմ Հայկական տեռորիզմը հովանավորող երկրների թիվը 70 տարվա ընթացքում առավել մեծացել է: (Էջ X):

Մենք մտադիր չենք մեկնաբանելու այս Հարցը ևս, և չենք էլ ցանկանում մեր ուսերին այդքան ծանր բևեռվերցներ:

Եթե ուզում են այս ահաճ sponsor-ի դերից հրաժարվել և դուրս դալ այդ սև ցուցակից, թող վերոհիշյալ երկրների պատմաբաններն ու գիտնականները մտածեն ու հարկ եղած պատասխանը տան Յավուզ Էրջանին:

Այսքան:



**ԵՐՎԱՆԴ ՍԱՐԳՍՅԱՆ**  
**ԳԱՎԱԴԻՐ ԳՈՐԾԱՐՔ**  
**(ՀԱՅԱՍՏԱՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆ,**  
**ԹՈՒՐԻԱ)**  
**Երևան, 1995, 202 էջ**

Գրախոսվող գրքի հեղինակ՝ Փրոֆ. Երվանդ Սարգսյանը առաջին անգամ չէ, որ անդրադարձել է 1918-21 թթ. հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությանը։ Նա, իր բազմամյա գիտական գեղուն աշխատանքների ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրել է դարակերպի հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող կենսոտ հարցերը, հատկապես թուրքիայի Անդրկովկասում հետապնդած նվաճողական քաղաքականությունը, 1915 թ. հայերի ցեղասպանությունը և ընդհանրապես երիտթուրքերի և քեմալական թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը։ Հեղինակի ուսումնասիրությունն ուղղված է եղել նաև պանթուրքիզմի եւ պանիսլամիզմի գաղափարախոսությունների ծավալապաշտական քաղաքականության բացահայտումը Այս և այլ հարցերին նվիրված, նա հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ, հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով։

Հարկ է նշել նաև, որ նա իր ինքնուրույն ներդրումն ունի Հայաստանում թուրքապիտուլյան գործադրման

ուղղութիւններ:

Այս անգամ, վերահիշյալ խորագրով գիրքը, նա շարադրել է արխիվային նորահայտ փաստաթղթերի լույսի տակ, նկատի ունենալով, որ վերջին տարիներին (ինչպես ինքն է նշում) գիտնականների առաջ բացվեցին յոթ կողպեքի տակ պահվող արխիվային նյութերը:

Տվյալ դեպքում նա հնարավորութիւն է ունեցել օգտագործելու Խորհրդային Միութեան արտաքին գործերի նախարարութեան և Համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտեի արխիվների այն ֆոնդերը, որոնք առնչվում են 1920 թ. ամռանը և 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին խորհրդա-թուրքական և հայկական մոսկովյան բանակցութիւններին: Այս տեսակետից հեղինակը առաջին անգամ շրջանառութեան մեջ դնելով մոսկովյան բանակցութիւններին վերաբերող նորահայտ փաստաթղթերը, լիովին հատասում է քեմալական թուրքիայի հակահայկական, Հայաստանի տարածքների զավթողական քաղաքականութիւնը, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի հակահայկական թուրքանպաստ քաղաքականութիւնը, որը ինչպես հայանի է, արտացոլվեց 1921 թ. մարտի 16-ին Մոսկովայում կնքված խորհրդա-թուրքական պայմանագրով:

Աշխատութիւնը բաղկացած է հետևյալ 4 հաջորդական գլուխներից: 1. Օսմանյան կայսրութեան օգրեփան Անդրկովկասում (1918 թ.), նախաքայլ դեպի մեծ թուրան: 2. Պալքարի Բովում: 3. Քեմալական թուրքիայի արշավանքը Անդրկովկաս 1920 թ. աշնանն ու 1921 թ. ձմռանը և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Ում ապավինել: 4. Անդրկովկասը մոսկովյան խորհրդա-թուրքական բանակցութիւններում 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին և մարտի 16-ի ու կարսի հոկտեմբեր 13-ի պայմանագրերը: Կուլիսների ետևում:

Վերահիշյալ գլուխների բովանդակութեան համառոտ

պատմութիւնը կայանում է հետևյալում:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո, Անդրկովկասում իրավիճակը կտրուկ կերպով փոխվեց այն բանից հետո, երբ Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշում ընդունեց ցարական զորքերը դուրս բերել Թուրքահայաստանից: Թուրքական կառավարութիւնը ձգտեց անմիջապես օգտվել ստեղծված այդ իրադարձութիւնից և տիրանալ Հայաստանին և ընդհանրապես Կովկասին: Եվ այդպես, 1918 թ. փետրվարի կեսերին, Թուրքական բանակը հարձակման անցավ ամբողջ կովկասյան ռազմաճակատով:

Հայերը ուրիշ ելք չունեին բացի ինքնապաշտպանութիւնից: Աստիճանաբար կազմակերպվեց հայկական կորպուսը, բանակի զորավար՝ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարութիւնամբ, որի կոմիսարն էր դաշնակցական ղեկավար՝ Դրո Կանայանը:

Ի միջալոց նշենք, որ դեռևս 1917 թ. դեկտեմբերի 5-ին Ռուսաստանի կովկասյան բանակի հրամանատարութեան և Թուրքական 3-րդ բանակի միջև կնքված Երզրնկայի զինադադարի պայմանագրով Ռուսաստանի կողմն էր մնում համարյա ամբողջ գրավված Արևմտյան Հայաստանի տարածքը:

Թուրքական բանակի առաջխաղացման ծանր պայմաններում, Անդրկովկասի կոմիսարիատը որոշում կայացրեց անջատ (սեպարատ) բանակցութիւններ վարել Թուրքիայի հետ Տրապիզոնում: 1918 թ. մարտի 14-ին, մեկ ամիս տեղի բանակցութիւնները արդյունք չտվեցին, իսկ ապրիլի 22-ին, արդեն Անդրկովկասը հռչակվեց ֆեդերատիվ (դաշնակցային) «անկախ» հանրապետութիւն:

Հարկ է նշել, որ Թուրքական բանակը կոպտորեն խախտեց նաև 1918 թ. մարտ 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ստանձնած պարտավորութիւնները և աստի-

ճանաբար առաջանալով դեպի Արևելք, դրավեց էրզրումը, Երզնկայի, Տրապիզոնի, Սարիղամիշի, Կարսի, Արտաշանի, Արդվինի, Բաթումի շրջանները, ինչպես նաև Ալեքսանդրապոլը: Այն ուղեկցվում էր հայ ազգաբնակչության դատան հալածանքներով, որի վերջնական նպատակն էր իրականացնել հայերի ֆիզիքական լրիվ ոչնչացումը Անդրկովկասում:

Բարեբախտաբար, ամբողջ Հայաստանը գրավելու թուրք զավթիչների ծրագրին խանգարեցին Սարդարաբադի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի համաժողովրդական հերոսամարտերը, որոնց հետևանքով թուրքական զորքերը ետ շարտվեցին և վերացավ Երևանի գրավման վտանգը: Վարդարաբադի ճակատամարտի օրերին, — ինչպես մատնանշում է Հեղինակը, — հայերի մեջ տիրում էր միասնություն և, անկախ քաղաքական համոզմունքերից, բոլորը զործում էին ընդդեմ թուրք զավթիչներին (էջ 114):

Իրոք, որ այդ հերոսամարտերը իրենց բնույթով, ազգային-ազատագրական համաժողովրդական պայքար էին և գրանց արքայաբը եղավ այն, որ վերականգնվեց հայ ժողովրդի դարերից ի վեր կրազած ազգային պետությունը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Այո՛, սովյալ ժամանակ առաջ եկած ծանր կացություն, և Անդրկովկասի միացյալ խորհրդարանում (Մեյմում) ներկայացված կուսակցությունների միջև ի հայտ եկած արմատական տարակարծությունների հետևանքով, Անդրկովկասի անկախ հանրապետությունը իր լիազորությունները ցած էր դրել: Արդյունքում, վրացական ազգային խորհուրդը, մայիս 28-ին Վրաստանը հռչակեց անկախ հանրապետություն: Մայիս 28-ին, Թիֆլիսում գտնվող հայկական կենտրոնական ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ հանրապետություն, և դաշնակցական կառավարությունը հունիս 17-ին մեկնեց Երևան: Իսկ

մայիս 27-ին, մուսավաթականները Ադրբեջանը հայտարարեցին անկախ հանրապետություն, որի կառավարությունը հաստատվել էր Գյանջայում:

Գժրախտարար, Ղուկասի 4-ին, Բաթումում թուրքական և նորակազմ դաշնակցական կառավարության պատվիրակությունների միջև կնքված պայմանագրով, թուրքերը Հայաստանի վզին փաթակեցին նոր, ավելի ծանր պայմաններ:

Փրոֆ. Երվանդ Սարգսյանը համակողմանի վերլուծության է ենթարկում նաև կնքված պայմանագիրը: Բնականաբար խոսվում է 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի մասին (էջ 134), որի 88-93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին, ուր թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն: Սակայն, ինչպես հայտնի է, այն չվավերացվեց քեմալական շարժման և դաշնակից պետությունների միջև դոյություն ունեցող սուր հակասությունների հետևանքով: Սևրի պայմանագրի չիրագործվելու հիմնական պատճառներից մեկն էլ Խորհրդային Ռուսաստանի բացասական դիրքորոշումն էր պայմանագրի նկատմամբ և քեմալական շարժմանը նրան ցույց տուած օգնությունը (էջ 135):

Արխիվային փաստաթղթերի լույսի տակ, Երվանդ Սարգսյանը հանդում է այն եզրակացություն, որ շքեմալական կառավարությունը կանխորոք նախապատրաստել և համզամանորեն մշակել էր Հայաստանի, որպես պետություն ոչնչացման ծրագիրը և սեփական նախաձեռնություններ էլ ակտի այս ծրագրի գործադրումը» (էջ 146):

Միևնույն ժամանակ քեմալականների Հայաստանի վրա հարձակման ծրագիրը վաղորոք համաձայնեցված է եղել Ռուսաստանի Խորհրդային կառավարության հետ և նրա կողմից պաշտպանություն և աջակցություն է ստացել (էջ 159):

Նորահայտ արխիվային Նյութերի հիման վրա փա-

արվում է նաև, որ 1921 թ. Մոսկովյան բանակցություններում և հետո, քեմալական զավթիչների օգտին են գործել Ռուսաստանի Քաղբյուրոյի որոշ անդամներ, հասկապես Ստալինը և Տրոցկին:

Ինչպես հայտնի է, 1920 թ. սեպտեմբերի 23-ին, քեմալականները ներխուժեցին Հայաստանի սահմաններից ներս, սեպտեմբեր 29-ին գրավեցին Սարիղամիշն ու կաղզվանը, հոկտեմբերի 30-ին՝ Կարաը, նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը, նոյեմբերի 12-ին՝ Արդվինը և երկու ուղղություններով գրոհը զարգացրին դեպի Երևան (էջ 163): (Ընթերցողին հիշեցնենք, որ 1918 թ. հոկտեմբերի 30-ին երբ ստորագրվեց Մուզրոսի գինադադարի պայմանագիրը, Առաջին համաշխարհային պատերազմում պարտության մասնված թուրքական բանակը ստիպադարար հեռացել էր վերահիշյալ շրջաններից):

Գժբախտաբար, քեմալական զորքերի հաղթանակին նպաստեցին նաև Հայաստանի բոլշևիկյան հեղկումի գրավոր և բանավոր քարոզչական կեղծ կոչերը, որոնցով կազմալուծվում էին Հայաստանի Հանրապետության մարտունակ բանակի շարքերը:

Եւ այդպես, թուրքական և հետագայում էլ Ռորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից Հայաստանի Հանրապետությանը հասցված հարվածների հեռևանքով նա այնքան էր թուլացել, որ դաշնակցական կառավարությունը ստիպված եղավ ընդունել Ռուսաստանի վերջնագիրը և դեկտեմբերի 2-ին համաձայնագիր ստորագրվեց, իշխանությունը բոլշևիկներին հանձնելու մասին (էջ 172):

Հարց է առաջանում թէ ի՞նչ արեցին դաշնակիցները: Սիրիայում և Միջագետքում իրենց շահերը ապահովելուց հետո, Հայաստանը թողեցին բախտի քմահաճույթին:

Եվ այս բոլորի վերջնական արդյունքը եղավ այն, որ Մոսկվայում 1921 թ. մարտի 16-ին, առանց հայկական

պատվիրակութեան մասնակցութեան կնքված «բարեկամութեան և եղբայրութեան» թալանչիական-հակահայկական պայմանագրով թուրքիային անցան ոչ միայն կարսի մարզը, այլև Մուրավուրի գավառը, որը թուրքական զորքերին չէր հաջողվել գրավել, շնորհիւ զորավար Դրոյի ձեռնարկած հմուտ հրամանատարութեան:

Այդ կապակցութեամբ արժե բերել գրքի հեղինակի դիպուկ եզրակացութունը.

«Այսպիսին եղալ մուկուլյան առաջին քայլը քաղաքական այն անվայելուչ խաղում, որը Խորհրդային կառավարութիւնը վարեց հայկական բաղմաշարչար Հարցի շուրջ: Ապշեցուցիչն այն է, որ Հայ ժողովուրդը, Հանձին իր դիվանագիտական պաշտոնական պատվիրակութեան, այդ խաղից դուրս թողնվեց: Մուկուլյան անօրինական և անբարո մեքենայութիւնների հետեանքով արեւմաթախ և մահամերձ Հայաստանը զրկվեց ևս 28 Հազար քառակուսի քիլոմետր բուն իր տարածքից:

Քաղաքական անվայելուչ խաղի Հակահայկական Հաջորդ քայլը ձեռնարկվեց 1921 թ. Հուլիսի 5-ին, երբ Ռուսաստանի Խորհրդային Համայնավար Կուսակցութեան Կովկասյան բյուրոն, Ստալինի նախաձեռնութեամբ որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի տարածքը Ադրբեջանին Հանձնելու մասին: Եվ նորից ոչ ոք չհարցրեց Հայ ժողովրդի կարծիքը: Իսկ այս անբարո քայլի հետեանքը, ինչպես և նախորդինը, զգում և ուղղակի ապրում ենք առ այսօր» (էջ 180):

Եզրակացնելով նշենք, որ Երվանդ Սարգսյանի Երևանում յույս տեսած այս աշխատանքը հրատապ է և այժմեական: Ինչպես նշեցինք, գիրքը շարադրված է նորահայտ արխիվային փաստադրական նյութերի, ինչպես նաև օտար՝ հասկապես թուրքերեն աղբյուրների քննադատական վերլուծութեան հիման վրա, և անկասկած կը հետաքրքրի պատմաբաններին, ուսանողներին և ընթերցող

լայն հասարակութեան: Այն արժանի է օտար լեզուի,  
գոնե անգլերենի թարգմանութեան և հրատարակման,  
որպեսզի օտարները ևս տեղյակ լինեն թե ինչպիսի  
դավադիր գործարք է տեղի ունեցել հայ ժողովրդի թի-  
կունքում քեմալական թուրքիայի և խորհրդային Ռու-  
սաստանի կառավարութեան միջև<sup>1</sup>:



## ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Էտնապնեքը, մոտեցումները,

լուծման տարրերակները

Երևան 1997, 80 էջ «ՌՈՍԵՐԵՆ»<sup>1</sup>

Նախքան գրախոսվող գրքի բովանդակության անցնելը, անհրաժեշտ ենք համարում մի երկու խոսք ասել հեղինակի և վերջին շրջանում ղարաբաղյան հարցի կարգավորման հետ առնչվող նրա կատարած հույժ կարևոր աշխատանքների մասին:

Փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի անօրենն է: Միևնույն ժամանակ նա հանդիսանում է Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոնի անօրեն, ինչպես նաև՝ գիտությունների Միջազգային Ակադեմիայի (Փարիզ) ակադեմիկոս:

Միջազգային լայն ճանաչման արժանացած արևելագետ-պատմաբան՝ Նիկոլայ Հովհաննիսյանը ունի բազմաթիվ գիտական հետազոտություններ, հրատարակված հիմնականում հայերեն, ռուսերեն, անգլերեն և արաբերեն լեզուներով, որոնք առնչվում են արևելագիտական հարցերին, մասնավորապես արաբագիտության, և հատկապես միջազգային ու տարածաշրջանային հարաբերություններին: 1997 թվականին մամուլում լույս տեսած խիստ շահեկան

հողմածների կողքին, հրատարակեց «Դիվանագիտություն» գիրքը, որն իր բնույթով հայերեն լեզվով առաջին աշխատությունն է, ինչպես նաև գրախոսովոզ «Ղարաբաղյան կոնֆլիկտը» ուսումնասիրությունը:

Որոշակի հետաքրքրություն առաջացրեց նաև չեզոքության սկզբունքի հիման վրա Լեոնային Ղարաբաղի խնդրի լուծման վերաբերող նրա առաջադրած սարքերակը: Այն տպագրվեց նոյեմբեր ամսին՝ «Ռեսուրսայիֆա Արմենիի» (ռուսերեն) և «The Yerevan News» (անգլերեն) թերթերում: 10 գլխից բաղկացած այս հոդվածում, Փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը առաջարկում է Ղարաբաղը դիտել որպես չեզոք տարածք առանց մտցնելու Ադրբեջանի կամ Հայաստանի կազմի մեջ, և աշխատում է այնպիսի լուծում տալ, որպեսզի չնսեմացվի կողմերից որևէ մեկի ազգային արժանապատվությունը: Բնականաբար, հեղինակը գտնում է, որ այս առաջարկը վերջնական չէ և այս կամ այն հարցի շուրջ կարելի է համապատասխան մասնագետների կողմից կատարված ճշգրտմանը հաջվի առնել:

Ն. Հովհաննիսյանի առաջ քաշած այս ծրագիրը հատկապես քննարկման նյութ դարձավ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իսրայելի և Հայաստանի քաղաքական և պետական շրջանակներում, այն անվանելով, որպես «Հովհաննիսյանի ծրագիր» կամ «Հովհաննիսյանի մոդել» (տարբերակ): Հյուսիսի (Թեքսաս)-ի նահանգ) Ջեյմս Բեյքերի քաղաքականության ինստիտուտում նույնիսկ ծրագրվել է 1997 թվականի ապրիլի վերջերին քննարկել այդ տարբերակը հեղինակի անմիջական մասնակցությամբ:

Հարկ է նշել որ այս բոլոր հետաքրքրություններով հանդերձ «Հովհաննիսյանի ծրագիր»ը անընդունելի և ժխտական արձագանգ է գտել Ադրբեջանի թե՛ պաշտոնական մարմինների և թե՛ ընդդիմադիր կողմերի էլույթներում և հայտարարություններում:

Այսպես «Մուսավաթ» կուսակցության ղեկավար՝ Իսա Ղամբարը, «Թուրան» գործակալության հետ ունեցած հարցազրույցում հայտարարել է, որ որևէ փաստաթուղթ, որն ասնչվում հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հետ, արժանի է ուշադրության: Սակայն «Հովհաննիսյանի մոդել»ը առաջին իսկ հայացքից պետք է որ անմիջապես մերժվի, քանի որ այնտեղ խոսք է գնում ոչ միայն Ղարաբաղի անկախության, այլև նախագահի, պառլամենտի, պետականության խորհրդանշի, ՄԱԿ-ի Հովանավորության ներքո ինքնիշխանության, ինչպես նաև Անվտանգության խորհրդի պաշտպանության մասին: Իսկ Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ, Զարուշտ Ալի Զադեն այն բնութագրել է, որպես Հայաստանի կողմից տվյալ տարածքի յուրացման և նվաճման(?) վերաբերյալ իրավաբանական ձեակերպում<sup>2</sup>:

Նշենք, որ 1998 թ. հունվարի սկզբից մինչև մարտի կեսերը, Նիկոլայ Հովհաննիսյանը կարևոր առաքելություններ գտնվում էր ԱՄՆ-ում, Մերիլենդի համալսարանի միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման (CIBCM) հատուկ հրավերով, ուր հանդիպումներ ունեցավ և դասախոսեց «Ղարաբաղի պրոբլեմի լուծման տարբերակները» թեմայով և ծանոթացրեց իր տեսակետները այդ խնդրի շուրջ:

Այս ընթացքում Փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը մարտի 5-ին եղավ Վաշինգտոնում, ուր հանդիպումներ ունեցավ պետական Դեպարտամենտում և Սենատում:

\*\*\*

Փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի վերոհիշյալ գիրքը լույս տեսավ ճիշտ այդ ժամանակ, երբ Հայաստանի գիվանագիտությունը ուղիներ էր որոնում Լեռնային

Ղարաբաղի հակամարտութեան լուծման խնդրում, նկատի ունենալով, որ միջազգային քաղաքական շրջանակներում ձգտում կար ամեն կերպ խափանելու արցախահայերի ինքնորոշման հաստատման արդար իրավունքը:

Այն բաղկացած է առաջարանից և 4 գլուխներից. վերջում արված է եզրակացութիւն և օգտագործված աղբյուրների ցանկը:

Գրքի առաջին գլխում հեղինակը անդրադառնալով աշխարհի տարրեր մասերում գոյութիւն ունեցող էթնիկական և էթնոքաղաքական հակամարտութիւններին, նշում է, որ այդ երեւոյթները ակելի սուբյեկտ ստացան Խորհրդային Միութեան փլուզումից հետո, Հարավ-սլավոնացում, Կովկասում և այլուր, որոնց մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում Լեւնային Ղարաբաղի հիմնահարցը:

Հասկանալի է, որ Լեւնային Ղարաբաղի խնդիրը մեկուսացված չէ արտաքին աշխարհից. Այդ հակամարտութեան մեջ խաչաձևվում են մի շարք երկրների քաղաքական, ռազմական և տնտեսական շահերը: Այդ առումով հեղինակը ձգտել է այլ ընտրանքների շրջանակներում տալ դիվանագիտական հնարավոր լուծումը: Իրոք որ, մշտապես փոփոխման մեջ գտնվող մեր աշխարհում, անհրաժեշտ է գտնել նոր մոտեցումներ և տարրերակներ էթնոքաղաքական և ինքնորոշման համար ծավալվող հակամարտութիւնների լուծման ասպարեզում: Պարզվում է, որ այս ուղղութեամբ իրենց որոշակի ներդրումն ունեն ստեղծակցի գիտնականներ՝ Մ. Հարպրիներ և Տ. Շեֆֆերը: Եվ ոչ միայն այս գիտնականները, քանի որ աշխատութեան մեջ դիտական շրջանառութեան մեջ են դրված այլ օտար աղբյուրներ ևս: Նիկոլայ Հովհաննիսյանը հատկապես օգտագործել է ամերիկյան, գերմանական և անգլիական պատմադրական և դիվանագիտական նյութերը, որոնք պահվում են ԱՄՆ-ի Կոնկրետի և տարրեր համադ-

սարանների գրադարաններում: Այդ նյութերը և այնտեղ բերված տեսակետների ու գնահատականների սովոր մասը անաչառ են և փաստում են իրականութունը չեղոք և անկողմնակալ գիրքերից:

Երկրորդ գլխում խոսվում է Լեոնային Ղարաբաղի պատմա-աշխարհագրական, ազգագրական և մշակութային գործոնների կարեւորութեան մասին: Հեղինակը, հենվելով պատմագրական հնագույն փաստերի վրա, ցույց է տալիս, որ Արցախի տարածքը անհիշելի ժամանակներից եղել է ամբողջապես հայաբնակ: Այն առաջին անգամ հիշատակվել է ուրարտական սեպագիր արձանագրութուններում Ուրտեխե-Ուրտեխինի, իսկ հունական աղբյուրներում Օրխիսթենա անվանումներով: Հին հունական, հռոմեական, ինչպես նաև միջնադարյան զանազան աղբյուրներում պարզորոշ նշվում է, որ Արցախը մտել է Հայաստանի կազմի մեջ որպես նրա անքակտելի մասը: Ըստ 7-րդ դարի «Աշխարհացույցի», Արցախը համարվում է «Մեծ Հայք»ի 10-րդ նահանգը, («աշխարհ»):

428 թ. Արշակունյաց Հարստութեան անկումից հետո, Հայաստանում քաղաքական վիճակը սրվեց: Հետագայում, տարրեր ժամանակաշրջաններում Հայաստանը ընկավ մի շարք նվաճողների լծի տակ: Փոխվեց վարչական միավորների անուններն ու սահմանները բայց Արցախի երկրամասում հայութունը մնաց միատարր: Արաբական տիրապետութեան ժամանակ և դրանից հետո, 11-րդ դարից սկսած Հայաստանը նվաճող սելջուկ-թուրքերը, թաթար-մոնղոլները չկարողացան խախտել Արցախի ազգագրական միասնութունը: Ռուս-պարսկական պատերազմից հետո, 1813 թ. Հոկտեմբերի 24-ին կնքված Գուլիստանի պայմանագրով, Ռուսաստանի կողմն անցավ Ղարաբաղի խանութունը, իսկ հետագայում, 1861 թ. մտավ Ելիզավետպոլի նահանգի մեջ: Գրքում բերված փաստերը ցույց են տալիս, որ

Արցախի ամբողջ պատմութեան ընթացքում, գերակշռող տարրը միշտ էլ եղել է հայ բնակչութիւնը: Ինչպես իրավամբ նշում է Հեղինակը, 1914 թ. Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնը կազմում էր 95 տոկոս, մնացած 5 տոկոսը՝ թուրքեր և քրդեր էին:

Տվյալ տարածքում ապրող որպես բնիկ ժողովրդի վկայութիւնն, Նիկոլայ Հովհաննիսյանը բերում է միջազգայնագետ՝ Փոլ Գորլի հետեյալ հաստատումը. «Հայերը Հինավուրց ժողովուրդ են, որոնք համախմբվել են դեռևս 2300 տարի առաջ: Ազրբեջանցիները որպես առանձին ժողովուրդ գոյութիւնն չեն ունեցել մինչև այդ, այսինքն՝ մինչև 20-րդ դար: Նրանք պարզապէս թուրք-պարսկական հասարակութեան մասն են կազմել» (էջ 17):

Իրականութիւնը այն է, որ ամբողջ պատմութեան ընթացքում Ադրբեջան անվան տակ հողատարածք կամ պետականութիւն գոյութիւն չի ունեցել: Նիկոլայ Հովհաննիսյանը ամենայն մանրամասնութեամբ և համատարի փաստերով նշում է, թե ինչպես 1920 թ՝ դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի Հեղափոխական կոմիտեի ընդունված որոշումով, Չանդեզուրի, Նախիջևանի և Ղարաբաղի դավառները համարվեցին Հայաստանի անքակտելի մասը, և թե ինչպէս կարճ ժամանակ անց, ռուս-թուրքական դիվանագիտութեան խորհրդակցութեան արդեւորութեան տակ, Ստալինի անմիջական նախաձեռնութեամբ, Ռուսաստանի խորհրդային համայնավար կուսակցութեան կովկասյան Բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումով, Լեռնային Ղարաբաղի տարածքը անցավ Ադրբեջանին: Եւ այդպէս ամբողջապէս հայերով բնակեցված Արցախը բռնի ուժով միացվեց Ադրբեջանին: Եվ այդ կատարվեց հակառակ արցախահայութեան կամքի ու ցանկութեան: Իրականում, նրանց բուռն ցանկութիւնն էր միանալ մայր հայրենիքին՝ Հայաստանին:

Երբորդ գլխում խոսվում է Լեռնային Ղարաբաղի

Հակամարտության երեք փուլերի մասին: Այստեղ մասնանշվում է, որ 1921-1923 թթ. սրտումները բուլտովին ընդունելի չեղան արցախահայության Համար: Նրանք երբևէ չհաշտվեցին դրանց հետ և սկսած 1921 թ. մինչև 1988 թվականը, տարբեր մեկերով պայքարեցին Հայաստանին միանալու պահանջով: 1930 թ. սկսած, 1960-1980 թվականներին, արցախահայերը հազարավոր նամակներ, խնդրագրեր հղեցին Խորհրդային Միության նախարարների խորհրդին, ինչպես նաև համայնավար կուսակցության կենտրոնական կոմիտեին, պահանջելով բարելավել մարզի սոցյալ-տնտեսական և քաղաքական դրությունը և այն միացնել Հայաստանին: Սակայն այդ բոլորը մնացին անպատասխան և առանց հարցի արդարացի լուծման:

Առաջին փուլը ընդգրկում է 1988-1990 թթ.: Հեղինակը այն անվանում է «Հայտարարութունների շրջան»: Արցախահայերը օգտվելով վերակառուցման հրահրավորութունից ձգտեցին սահմանադրական ուղիով հարթել և իրականացնել իրենց արդարացի պահանջը: Սակայն ո՛չ Ադրբեյջանը և ո՛չ էլ Խորհրդային Միությունը դրական կամեցողութուն չցուցաբերեցին, այլ ընդհակառակը, արցախահայերի արդարացի պահանջը խեղդվեց արյունով, սուժայիթյան և այլ վտյրերի ցեղասպանության դաժան արարքներով: Մյուս կողմից Մոսկվայի և Բաքվի ժխտական և բիրտ դիրքորոշումը չկասեցրեց արցախայության պայքարը, իրենց արդարացի պահանջին հասնելու համար: Ազատության շարժումը շարունակվեց առավելի բուռն կերպով:

Երկրորդ փուլը սկսվում է 1991 թվականից. այն համարվում է ռազմական գործողութունների շրջան: Իրոք որ Ադրբեյջանը ռազմական գործողութուններ սանձազերծեց արցախահայերի դեմ Խորհրդային Միության կառավարության հավանությամբ և հովանավորությամբ:

1991 թ. ապրիլ և մայիս ամիսներին, խորհրդային բանակը, Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունն ստորաբաժանումների հետ, մի շարք գյուղերից և շրջաններից բռնի ուժով և սպանություններ տեղափոխեցին խաղաղ բնակչությանը: 1991 թ. դեկտեմբեր 10-ին Լեռնային Ղարաբաղում անցկացվեց հանրաքվե և ժողովրդի միահամուռ ձայնով հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անկախությունը: Յատուրով լցված ազդուրբեջանցիները առ ավելի սաստկացրին պատերազմական գործողությունները, վտանգի տակ դնելով արցախահայության գոյատևումը: Այդ ծանր օրերին, ԼՂԶ Գերագույն Խորհուրդը, նկատի ունենալով ադրբեջանական բանակի զանգվածային հարձակումները, հայտարարեց, որ գործադրելու է բոլոր պատասխան միջոցները խաղաղ բնակչության պաշտպանությունն ապահովելու համար: Նախ Արցախի ազատամարտիկների ջոկատները ղեկավարին մարտերում հասան որոշակի հաջողությունների և ազատագրեցին մի շարք գյուղեր և բնակավայրեր, իսկ այնուհետև 1992 թ. սեպտեմբերի 1-ին, ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակը:

Նիկոլայ Հովհաննիսյանը մանրամասն կանգ է առնում նաև, թե ինչպես Թուրքիան ռազմական սպանալիքներին զուգընթաց, Ադրբեջանին տրամադրում էր զենք և հրթիռային սարքավորումներ: Թուրքական բանակի մոտավորապես 160 սպաներ մասնակցում էին ադրբեջանական բանակը մարզելու գործին: Հակառակ այդ բոլորին, Արցախի նորաստեղծ բանակը կարողացավ իր բարձր մարտունակությամբ հաղթանակի հասնել և գրավել ռազմավարական կարևոր դիրքեր:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության երրորդ փուլը սկսվում է 1994 թ. մայիսից: Զինադադարի կնքումով այն համարվում է խաղաղության ժամանակաշրջան,



որը շարունակվում է մինչև այսօր: Հասկանալի է, որ գինազաղարի հասնելու գործում մեծ դեր խաղացին մի շարք տերություններ, ինչպես նաև միջազգային կազմակերպություններ: Հեղինակը գտնում է, որ գինազաղարը մեծ նվաճում էր և կարևոր քայլ Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կատարյալ կարգավորման համար:

Չորրորդ գլխում, հեղինակը հանգամանորեն կանգ է առել Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական լուծման տարրերակների վրա: Խոսելով զարաբաղյան ազատագրության շարժման կապակցությամբ առանձին պետական գործիչներին, գիտնականներին, քաղաքական-հասարակական կազմակերպությունների առաջ քաշած առաջարկություններին, նա մանրամասն անդրադառնում է միջազգային ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների վերլուծությանը, սկսած հեռ-պատերազմյան սառը պատերազմի ժամանակաշրջանից մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը և հետո: Այդ առումով հակամարտությունների լուծման համար ժամանակակից գիտնականները ևս որոշակի թեզեր են առաջ քաշել Լեռնային Ղարաբաղի և համանման այլ հարցերի լուծման ուղղությամբ:

Փրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը կանգ է առնում և մանրամասն վերլուծում Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման 9-ը տարրերակները. 1. Աղբյուրեջանական, 2. Ղարաբաղի, 3. Հայաստանի, 4. Տարածքների փոխանակության, 5. Միավորված պետության, 6. Միմիթ-գային (համադրման), 7. Կիսլյոսի, 8. Անկախության, 9. Չեչենիայի տարրերակները:

Մանրամասնալով հեղինակի այս տարրերակներին նկատում ենք, որ Աղբյուրեջանի գիրքորոշումը ամբողջապես ժխտական է, և նրա բացասական կեցվածքը դժվարացնում է հարցի լուծման ուղիներ գտնելը:

Աշխատութեան մեջ հատուկ ուշադրութիւն է դարձված անկախութեան տարբերակին: Նիկողայ Հովհաննիսյանը գտնում է, որ անկախութեան պահպանման ամենահայտնի ներկայացուցիչներէց մեկը՝ գերմանացի իրավագետ, Համբուրգի համալսարանի պրոֆ. Օտտո Լուխթերխանտընն է, քանի որ նա խորապէս և հանգամանորէն ուսումնասիրելով այդ հարցը հատուկ աշխատութիւն է նվիրել «Լեռնային Ղարաբաղի անկախութեան հասնելու իրավունքը ըստ միջազգային իրավագիտութեան» խորագրով, որը լույս է տեսել 1993 թ. Բոստոնում<sup>3</sup>:

Այս գրքում, Օտտո Լուխթերխանտը մանրամասն ուսումնասիրելով ինքնորոշման իրավունքն ու պետական սահմանների անխախտելիութեան վերաբերող օրենքներն ու փաստաթղթերը, գալիս է այն եզրակացութեան, որ «Լեռնային Ղարաբաղի Հայկական էթնիկ հավաքականութիւնը իրավունք ունի ինքնորոշման, Աղբրեջանի Հանրապետութիւնից անջատվելու իրավական շիջի վրա, քանի որ Աղբրեջանի անկախութեանից առավել առաջնային իրավունք ունի: Եւ ինքնորոշման իրավունքի շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հայկական էթնիկ իմբսովորումը իրավունք ունի կառուցելու իր անփական պետութիւնը, ինչպէս նաև միավորվելու Հայաստանի Հանրապետութեան հետ» (էջ 65):

Եզրակացնելով նշենք, որ Փրոֆ. Նիկողայ Հովհաննիսյանի խիստ շահեկան այս ուսումնասիրութիւնը արժանի է բարձր գնահատանքի, քանի որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հարցը շոշափվում է համընդհանուր և տրամաբանական հողի վրա, իր բոլոր մանրամասնութիւններով և հիմնովելով օտար ազդուրների փաստարկների վրա:

Անկասկած այն հույժ կարևոր ներդրում կունենա և կօժանդակի մասնագետներին և քաղաքական գործիչներին:

րին, ճիշտ ընկալելու իրադրությունը և արդարացի դիրքորոշում ունենալու Արցախի հարցի կարգավորման բանակցություններում:

Այս գիրքը կարեվորվում է նաև այն տեսանկյունից, որ Ադրբեջանի օտապատիր քարոզչության ազդեցության տակ բազմաթիվ գրքեր են լույս տեսնում, ուր ամենակուսիս ձևով խեղաթյուրվում են Հայաստանի և Արցախի պատմությունը: Այդ տեսակետից ևս Նիկոլայ Հովհաննիսյանի գիրքը հրատապ է և այժմեական, քանի որ այնտեղ հակահարված է արվում ադրբեջանական անհիմն ու կեղծ նկրտումներին:

Առայժմ այս գիրքը լույս է տեսել ռուսերեն և պետք է ամեն ջանք գործադրել, որ այն թարգմանվի և հրատարակվի անգլերեն լեզվով ևս<sup>4</sup>:

## ԱԼԻՇԱՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՁԱՔԻ ՀԱՐՑԸ ԵՎ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
(1936-1939)

Երևան, 1998, էջ 212)

Այս տարի (1999) լրանում է Ալեքսանդրեաի Սան-  
ջաքը Թուրքիային հանձնելու 60-ամյակը:

1939 թ. հունիսի 23-ին էր, երբ պատմականորեն Սի-  
րիային պատկանող մի հողատարածք, միջազգային նենգ-  
չահարկումների հետևանքով, անարդարորեն ֆրանսիական  
իշխանությունների կողմից նվիրվեց Թուրքիային:

Ահա այս մասին է խոսում վերոհիշյալ խորագրով  
վերջերս լույս տեսած պրոֆ. Ալիշան Բայրամյանի գիր-  
քը, որը հանդիսանում է հեղինակի երկար տարիների  
տրնաջան աշխատանքի արդյունքը:

Որոշ հանգամանքների բերումով այս շահեկան ու-  
սումնասիրությունը առաջին անգամ հրատարակվեց  
արաբերեն լեզվով 1993 թ. Դամասկոսում: Այն լավ ըն-  
դունվեց և բարձր գնահատվեց ամբողջ արաբական աշ-  
խարհում: Այս առումով ըստ արժանվույն պետք է բարձր  
գնահատել Լոս Անջելեսի Պեյլանի Հայրենակցական Միու-  
թյան վարչության գրքի հայերեն լույս ընծայման  
նախաձեռնությունն ու հովանավորությունը:

Հենց սկզբից նշենք, որ գրքի կարևոր արժանիք-

ներից մեկը Ալեքսանդրեաթի հարցում գոյութիւն ունեցող սկզբնաղբյուրների, փաստագրական նյութերի մանրամասն վերլուծումն է և դրանց վրա հիմնված Հեղինակի անաչառ մեկնաբանութիւններն ու եզրակացութիւնները.

Հատկանշական է նաև այն պարագան, որ պրոֆ. Ալիշան Բայրամյանը իր ժամանակին անձամբ մասնակցել է Սանճաքի պաշտպանութեան շարժմանը, և այդ դժվարին օրերին, ամեն կերպ ջանացել է նեցուկ կանգնել արաբների արդար իրավունքին:

Աշխատութիւնը բազկացած է Հեղինակի համառօտ, բայց բովանդակալից «Երկու խոսք»ից, առաջաբանից, երեք գլուխներից և վերջաբանից: Հավելվածում տրված են նաև Ֆրանսերեն և անգլերեն ընդարձակ ամփոփումներ, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ծանոթագրութիւնները և գրականութեան ցանկ: Խմբագիրն է Հայաստանի գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արևելագիտութեան ինստիտուտի տնօրեն պրոֆ. Նիկոկայ Հովհաննիսյանը, որն իր «Երկու խոսք»ում արժեքավորել և բարձր գնահատական է տվել գրախոսվող այս գրքին:

Ժամանակագրական կարգով տրված 3 գլուխների խորագրերը հետևյալն են:

1. — Ալեքսանդրեաթի ինքնավար սանճաքի իրավական յուրահատուկ գոյալիճակը.

2. — Միջազգային դիվանագիտութիւնը և Ալեքսանդրեաթի Սանճաքի հարցը Ազգերի Լիգայում (1938 - սեպտեմբեր - 1938 սեպտեմբեր):

3. — «Հաթայի պետութիւնը» և միջազգային դիվանագիտութիւնը:

Ընթերցելով այս 3 գլուխները, մենք ամբողջական պատկերացում ենք կազմում Ալեքսանդրեաթի Սանճաքի պատմութեան, ինչպես նաև միջազգային դիվանագիտութեան, հատկապես Ֆրանսիայի գործադրած խարդավանքների մասին, որ կայանում է հետևյալում:

1918 թ. ավարտվեց 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած Առաջին Համաշխարհային պատերազմը, որ մարդկային և նյութական հակայական կորուստներով մեծ չարիք և արհավիրք պատճառեց համայն մարդկությանը: Այն հատկապես առիթ տվեց երիտթուրքական կառավարությանը, որպեսզի իրագործի դարի առաջին հայերի ցեղասպանությունը, որի ցավերը մինչև այսօր մորմոքում են վերապրողներին և նրանց ժառանգներին:

Պատերազմը որոշակի ազդեցություն ունեցավ և աշխարհաքաղաքական փոփոխություններ մաղրեց նաև Մերձավոր Արևելքի երկրներում:

1918 թ. հոկտեմբերի 30-ին, Մուզրոսում կնքված զինադադարի պայմանագրով, Անտանտի զորքերը զբաղեցին ամբողջ Սիրիան, մինչև Ալեքսադրես և Կիլիկիա: Սիրիական այս տարածքը, որ նվաճվել էր սուլթան Սելիմ Ա-ի կողմից 1516 թ., մինչև Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտը գտնվում էր Օսմանյան կայսրության լծի տակ:

Ֆրանսիական իշխանությունները 1918 թ. նոյեմբերի 27-ին, իրենց տրամադրություն տակ գտնվող գոտում, առաջին անգամ լինելով ստեղծեցին Ալեքսանդրեսի Ինքնավար Սանջաքը, որի մեջ մտնում էին Ալեքսանդրեսի, Անտիոքի, Պեյլանի ու Հարիմի գավառները: Նշենք, որ այս տարածքը գտնվում է Միջերկրական ծովին հարող, Սիրիայի հյուսիս-արևմտյան մասում:

Հետագայում, 1920 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված թուրք-ֆրանսիական համաձայնագրով, թուրքերը ձեռք բերեցին որոշակի առանձնաշնորհումներ: Երկու ամսվա ընթացքում վերացվեց պատերազմական վիճակը և ֆրանսիական զորքերը դուրս եկան Կիլիկիայից, բացառությամբ Ալեքսանդրեսի Սանջաքի, որը հասունկ վարչակարգով մնաց ֆրանսիական կառավարության խնամակալություն տակ:

Այս Համաձայնագիրը ծանր հետևանքներ ունեցավ կիլիկիայի քրիստոնյա բնակչության, հատկապես 100 հազարից ավելի հայերի համար, որոնք Ֆրանսիական զորքերի հեռանալուց հետո, ստիպված էին մեկընդմիջտ թողնել իրենց հայրենիքը և ապաստան գտնել այլ երկրներում:

Ալեքսանդրեաի Սանջաքը Սիրիայի պետություն կազմում ուներ իրավական յուրահատուկ դոյալիճակ, վարչա-ֆինանսական ինքնավարության արտոնություններով: Սանջաքը կառավարվում էր Սիրիայում և Լիբանանում գտնվող Ֆրանսիական մանդատային իշխանություն բարձր կոմիսարի նշանակած փոխ-պատվիրակի կողմից: (1924 թ. մինչև 1937 թ. այդ փոխ-պատվիրակի պաշտոնում գտնվել է Պիեռ Դյուրիոն):

Հետագա տարիների գործողությունները ցույց տվեցին, որ Ալեքսանդրեաի Սանջաքում Ֆրանսիական մանդատային իշխանությունները վարում էին բացահայտ թրքահպատա քաղաքականություն, նույնիսկ այն Սիրիայից անջատելու և մեկուսացնելու քաղաքականություն:

Առաջին. — Արար սպառնակչության քաղաքական դերն ու կշիռը նվազեցնելու նկատառումով, թրքական համայնքը ներկայացվում էր որպես Սանջաքի ազգաբնակչության համեմատաբար ամենախոշոր խումբը: Այս պատրվակով, տեղական մարմիններում ղեկավար պաշտոնների մեծ մասը գտնվում էր թուրքերի ձեռքում:

Երկրորդ. — Հաճախակի նախաձեռնվող տարածքային փոփոխությունները կատարվում էին ի վնաս արաբների, օրինակ, բարձր կոմիսար Գուրոյի 1921 թ. սեպտեմբերի 21-ի հրամանագրով տեղի ունեցած տարածքային փոփոխությունների արդյունքում, թրքական տարրի սոկոսը բարձրացավ 28.52 տոկոսից 38.9 տոկոս, քանի որ անջատված գավառների բնակչությունը հիմնականում արաբներն էին: Մյուս կողմից թուրքերենը ևս դառնում

էր պաշտօնական լեզու արարեբե՛նին Հավասար:

1928 թ. մայիսի 30-ին, Անկարայում երբ ստորագրվեց «Թուրք-սիրիական բարեկամութեան և բարի դրացիութեան» պայմանագիրը, նույնպես եղան որոշ սահմանային ճշգրտումներ: Ֆրանսիացիները Անկարային գիջեցին կարևոր տարածութիւններ Փայաս-Քիլիս սահմանային հատվածում:

Երրորդ. — Սանջաբում պահպանվեց Օսմանյան կայսրութեան ժառանգութիւնը հանդիսացող համայնքների ազգային-դավանական «միլլեթ»ների գոյավիճակը: Գրքում բերված փաստական տվյալները ցույց են տալիս որ արաբական մեծամասնութիւնը բաժանվել է արաբ-ալավի, արաբ-սուննի, արաբ, հույն ուղղափառ, հույն կաթոլիկ, մարոնի, ասորի, քաղղեսացի, բողոքական և այլ համայնքների:

Հայերը բաժանվել են Հայ Գրիգորյան (առաքելական), Հայ կաթոլիկ, Հայ լատին, Հայ բողոքական «համայնքներ»ի, ընդ որում, բացի առաքելականներից, մնացած «համայնքները» պաշտօնական վիճակագրութեան մեջ նկատի չէին առնվում որպէս Հայ, և չէին մտցված Հայերի ընդհանուր թվի մեջ:

Չորրորդ. — Դպրոցական-ուսումնական և մշակութային ասպարեզներում, թուրքերը շատ ավելի հատկացումներ են ունեցել, քան արարներն ու Հայերը:

Մի խոսքով այս և զրքում բերված փաստերը ցույց են տալիս, որ Ֆրանսիական մանդատային իշխանութիւնները անաեսել և խախտել են միջազգային և իրենց կողմից ընդունված համաձայնագրերը:

«Ալեքսանդրեաի հարցը» միջազգային դիվանագիտութեան քննարկման ու պայքարի կիզակետ դարձավ հատկապէս 1936-1939 թթ., երբ առաջին անգամ լինելով, այն հանձնվեց Ազգերի Լիգայի քննարկմանը 1936 թ. հոկտեմբերի 14-ին: Թուրք կառավարող շրջանները ամեն



կերպ ձգտում էին ի նպաստ իրենց լուծել ՍանՋաքի հարցը: Մինչ այդ, գեռևս սեպտեմբեր 26-ին, Ազգերի Լիգայի Խորհրդի 93-րդ նստաշրջանում, Թուրքիայի արտաքին գործերի նախարար՝ Ռուշդի Արասը հարց բարձրացնելով ասաց, որ տվյալ շրջանի ազգարնակչութունը ինքը անօրինակ իր սեփական գործերը:

Անկարայի դիվանագիտական ու մամուլի գրոհներին գուզընթաց, Թուրք ծայրահեղականները շարունակ կազմակերպում էին ցույցեր, անկարգություններ և գինձած ընդհարումներ, պահանջելով, որ ՍանՋաքին արվի անկախություն կամ կցվի Թուրքիային:

Ի պատասխան Թուրքական վայրագ նկրտումներին, ՍանՋաքում և ամբողջ Միջինասիայում բուռն շարժում սկսվեց շրջանի պաշտպանութան համար: Արաբներն ու հայերը, ինչպես նաև Միջինասիայի հետ միասնության կողմնակից այլ տարրեր կազմակերպում էին զանգվածային հակացույցեր, ֆրանսիական մանդատային իշխանություններից պահանջելով վերջ տալ անջատողական քաղաքականությունը:

Ի միջի այլոց այդ դժնդակ օրերին, մեծ թվով հայեր, հայկական կազմակերպություններ, կուսակցություններ և միություններ գործադիգ են կանգնել արարներին, որպեսզի ՍանՋաքը չհանձնվի Թուրքերին:

Այդ է վկայում նաև անցյալ տարվա «Բնօրրան» հանդեսի վերջին համարում լույս տեսած, դեպքերի ժամանակակից՝ Հովհաննես Պաճառյանի «Անախոքի մեծ ցույցը» խորագիրը կրող ականատեսի վկայությունները, ուր նշվում է, որ 1937 թ. հունվարի 8-ին Անախոքում տեղի ունեցած համաժողովրդական մեծ ցույցին, արաբների հետ շրջաններից եկած հայերը պահանջում էին միահամուռ, որ ՍանՋաքը պատկանում է Միջինասիային: Ըստ հեղինակի, այս ցույցին հատկապես մեծամասնություն են կազմել մուսալեոցիները և Ալեքսանդրեաթի հայերը:

Այս լարված ի ադրուժյան ընթացքում, 1937 թ. մայիսի 29-ին, Շվեդիայի Արտաքին գործերի նախարար՝ Սանդլերը, Ազգերի Լիգայի Խորհրդին ներկայացրեց Սանջաքի նոր կարգավիճակի և հիմնական օրենքի նախագծերը, որոնք ընդունվեցին առանց քննարկման: Նույն օրը կնքվեց նաև Ֆրանս-Թուրքական համաձայնագիրը: Այս և նախկինում ընդունված փոխզիջումային կարգավորումները անարդարացի էին և հեռու հարցի իրավական լուծումից:

Ալեքսանդրետի Սանջաքը դառնում էր քաղաքական ինքնուրույն միավոր: Ունենալու էր ինքնուրույն պառլամենտ, ինքնուրույն դատական մարմիններ, իսկ Թրքերենը դառնալու էր Սանջաքի պաշտոնական լեզուն: Մի խոսքով Սիրիայի գերիշխանութունը հավասարվում էր գրոյի: Այս նոր միավորը կամ այսպես ասած պետութունը պիտի տնօրինվեր Ազգերի Լիգայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կողմից: Ավելի ճիշտ, հետագայում միայն Թուրքիայի կողմից: Եվ այդպես, այս նոր կարգավիճակը ուժի մեջ մտավ նոյեմբերի 29-ին՝ Փոխզիջումային այս «լուծումը» Թուրքիայում ընդունվեց մեծ գոհունակությամբ, իսկ մյուս կողմից բորբոքեց ամբողջ արաբական աշխարհի խոր զայրույթը:

Լարվածութունը Սանջաքում առավել խորացավ, երբ պառլամենտի անդամների նախընտրական տեղամասերի գերակշռող մասում սկսվեցին գրանցումային աշխատանքները: Այն ավարտվեց 1938 թ. մայիսի 22-ին: Պարզվեց, որ ընտրական տեղամասերի գերակշռող մասում ընտրողների 60-65 տոկոսը արտահայտվել է Թուրք ծայրահեղականների դեմ և գրանդով մերժել Սանջաքի Թուրքիային միացվելը:

Առաջ եկած խառնակութուններն ու ընդհարումները իբրև թե կանխելու համար, 1938 թ. հունիսի 3-ին, Սանջաքում հայտարարվեց զինվորական իշխանութուն

(Մայրը կոչեի գլխավորութեամբ):

Ա. Բայրամյանի գրքում մանրամասն խոսվում է նաև դեռևս 1937 թ. դեկտեմբերի 16-ին Անկարայում սկսված Ֆրանս-թրքական զինվորական դադաճի բանակցությունների մասին, որոնք հետագայում շարունակվեցին Փարիզում և Անտիոքում: Այս դադաճի բանակցությունների արդյունքը եղավ այն, որ 1938 թ. հուլիսի 4-ին Անկարայում ստորագրվեց «Ֆրանս-թրքական բարեկամութեան դաշինքը»:

Ահա այս թրքանպաստ պայմանագրի հիման վրա, Սանջաքի սահմանները բացվում էին թրքական զորքերի առջև: Եվ առանց հապաղելու, հաջորդ օրն իսկ, թուրքերը մեծ շուքով մուտք դործեցին Սանջաք, այն պատրվակով, որ մինչև պատգամավորների ընտրությունները Ֆրանսիական զորքերի հետ կարգ ու կանոն հաստատեն Սանջաքում:

Հետևանքը պարզ էր: Կեզժ ու խարդախ ընտրություններով կյանքի կոչված պատգամավորական ժողովը, իր առաջին նիստում 1938 թ. սեպտեմբերի 2-ին, հռչակեց «Հաթայի պետութեան»:

Ահա այսպես կոպիտ ու ուժային նենգ բռնաբռներով նախապես վճռվեց Սանջաքի դավթումը թուրքերի կողմից, Անտիոքի կենտրոն մայրաքաղաքով, թրքական դրոշով, թրքական հիմնով:

«Հաթայի պետութեան» հռչակումը անսահմանագրական էր և ժողովուրդների ազատ իրավունքի ոտնահարում: Պատգամավորական ժողովը չէր ընտրված Սանջաքի ազգաբնակչութեան կողմից և պատ հանրաքվեի միջոցով:

Փրոֆ. Ալիշան Բայրամյանը իրավամբ մատնանշել է, որ «Անկարայի բացարձակ գերիշխանութեան հաստատումով, Սանջաքի «թուրքացումը», ինչպես նաև Ֆրանսիացիների քաղաքական ու զինվորական ազդեցութեան վե-

րացումը արդեն կատարված փաստ էր դեռևս 1939 թ. հունվարից:

Շրջանի թրքացումի խորացման պայմաններում ըսկավեց այլազգիների քաղաքական ահաբեկումն ու հալածանքը Այնպես որ արարներն ու հայերը հարկադրաբար դիմեցին արտագաղթի:

Արարների ու հայերի զանգվածային արտագաղթը հատկապես լայնածավալ չափերի հասավ 1939 թ. հունիսի 23-ի տիրահռչակ ֆրանս-թրքական համաձայնությունից հետո, երբ Հաթայը Ֆրանսիայի կողմից պաշտոնապես հանձնվեց Թուրքիային:

Սանջաքի շուրջ 40,000 հայեր ամբողջապես և ավելի քան 20,000 արաբներ հեռացան Սանջաքից եւ անցան Սիրիա ու Լիբանան: Մուսա Լեռան և մյուս գավառների հայությունը մանդատային իշխանությունները տեղավորեցին Լիբանանի Այնճար և Ռաս-ուլ-Այն վայրերում: Մի մասը տեղավորվեց Քեսապի շրջանում, որը հայության գործադրած բուռն պայքարով մնաց Սիրիայի սահմանների մեջ:

Եվ այդպես, դարերից ի վեր Սիրիային պատկանող այս հողատարածքը, միջազգային դիվանագիտությունն եննդ խաղերի հետևանքով, Երկրորդ Համաշխարհային պատերազմի նախօրեին, ֆրանսիական իշխանությունների կողմից հանձնվեց Թուրքիային:

Այս նույն ձևով 1921 թ. հուլիսի 5-ին, Լեռնային Ղարաբաղում կուպտորեն ոտնահարվեց ազգերի ինքնորոշման իրավունքը, երբ Ստալինի կարգադրություններ և Ռուսաստանի խորհրդային համայնավար կուսակցության կովկասյան բյուրոյի որոշմամբ, Հայաստանի անբաժանելի մաս կազմող Արցախն ու Նախիջևանը բռնի կերպով մտան Ադրբեջանի կազմի մեջ:

Սիրիայի ժողովուրդն ու կառավարությունը, ամբողջ արաբական աշխարհը խորը ընդվզումով և զայրույթով

արձագանքեցին Սիրիական Սանջաքի պաշտոնական նվիրումը Թուրքիային: Եղան զանգվածային ցույցեր, գործադուլներ:

Մինչև այսօր, ո՛չ Սիրիան և ոչ էլ արաբական օրև է կրկիր չի ճանաչել այս անօրինական գործարքը, որովհետև այն եղել է Սիրիայի անբաժան մասը և պետք է որ վերագարձվի իր իսկական տիրոջը: Եվ ի դուր չէ, որ Սիրիայում հրատարակվող քարտեզներում, այս շրջանը մնում է սիրիական սահմաններից ներս:

Փրոֆ. Ալիշան Բայրամյանը իրավամբ եզրակացրել է, որ «Ալեքսանդրետի Սանջաքի հարցը ժամանակին ոչ-իրավական, անարդար և անօրինական չլուծում» է ստացել և շրջանը միջազգային իրավունքով մնում է Սիրիայի գերիշխանությանը ենթակա տարածք»:

Ինչպես նկատեցինք, Ալեքսանդրետի Սանջաքի կորուստը Սիրիայի պատմության տխուր էջերից մեկն է: Բայց այն նույնքան ողբերգական հետևանքներ ունեցավ նաև Սանջաքի հայ բնակչության համար: Ինչո՞ւ: Որովհետև Սանջաքի հայերը եղել են նախարնիկներ և դարերից ի վեր ապրել են այնտեղ:

Այդ են վկայում Սանջաքի տարածքում մինչև այսօր մնացած հայկական հնադարյան պատմական հուշարձանների հետքերը: Հայերի բնիկ լինելու ապացույց է հայկական բազմաթիվ տեղանուններն ու ինքնուրույն հայկական բարբառները, որոնք խոսում են ֆեսապում, Պեյլանում, Արամոյում, Սվեդիայում:

Մինչև այսօր վերապրող սանջաքահայերն ու նրանց ժառանգները խոր վշտով և տառապանքով են հիշում իրենց բնօրրանը, իրենց գյուղն ու քաղաքը, վանքն ու եկեղեցին, տունն ու այգին, որոնք մնացին անտեր ու անտիրական: Փրոֆ. Ալիշան Բայրամյան իրավամբ նշել է, որ Սանջաքից հեռացող տասնյակ հայերից կամ արաբներից ոչ մեկին իրավունք չարվեց իր հետ տանելու ար-

ժեքավոր գույքն ու հարստությունը, ոչ էլ ծախել իր անշարժ գույքը:

Ահա թէ ինչու ՍանՂաքի հայ սոցաբնակչության մեծամասնությունը և հայ քաղաքական հասարակական խմբավորումները ականազես կողմնակից են եղել սիրիական հայրենիքի հետ միասնության պայքարին:

Ինչպես նշվեց վերևում, այս տարի լրանում է Ալեքսանդրեաթի ՍանՂաքի Թուրքիային կցման 60-ամյակը: Անցած տարիների ընթացքում, Թուրք պետական գործիչներն ու պատմաբանները, մամուլն ու հեռուստատեսությունը ականազես սպառնալի դիրքորոշում են ունեցել Սիրիայի հանդեպ Ալեքսանդրեաթի ՍանՂաքի անարգարացի յուրացման խնդրում: Ահա մի երկու օրինակ այդ մասին:

Անցյալ տարվա ապրիլի վերջին, Թուրքիայում հրատարակվող «Հուրրիեթ» թերթում, հրատարակախոս Ահմեդ Փերթեևը, «Սիրիան քերվում է» (Suriye kaşinıyor) խորագիրը կրող հոդվածում, ամբարտազան և վիրավորող արտահայտություններով խիստ քննադատում էր սիրիական իշխանություններին, շեշտելով, որ Թուրքիան որևէ մեկին ոչ թե մի թիզ հող, այլ նույնիսկ սվազի մի հատիկ անգամ չի տալու: Իսկ անցյալ տարի հուլիսին, ՍանՂաքը ֆրանսիացիների կողմից Թուրքիային հանձնելու 59-րդ տարեդարձին նվիրված հավաքի ընթացքում, Թուրքիայի վարչապետ Մեսուդ Երլմազը, կատարեց հետևյալ հայտարարությունը:

«Նրանք, որոնք իրենց աչքերը հարել են թրքական հողերի վրա, տառապում են կուրությունից: Նույնիսկ մեկ քառակուսի սանալմետր անգամ չպիտի կարողանան խլել այս երկրից<sup>1</sup>»:

Հակառակ նման արտահայտություններին, միջազգային համապատասխան կազմակերպություններն ու քաղաքական շրջանները, հասկանալի է, որ իրենց շահերից

ելնելով, տարբեր ժամանակներում բարձրացրել և բարձրացնում են Մանջաքը անարդարորեն Թուրքիային կցելու հարցը: Այս տեսակետից հասկապես Միրիան և արաբական աշխարհը տեսապես կանդնած են Մանջաքը Միրիային վերամիավորելու պահանջատիրական դիրքերում:

Ահա մի երկու օրինակ.

1994 թ. հունիսի 1-ին, Վաշինգտոնում «Ամերիկյան խաղաղության հիմնարկ»-ի կողմից կազմակերպվել էր միջազգային մի համազուգար, որի հիմնական օրակարգն էր «Թուրքիայի նոր դիրքը Մերձավոր Արևելքում»:

Երկու օր անող քննարկումների ընթացքում, Թուրքիայի համար անապասելիորեն կրկին օրակարգի նյութ դարձավ նաև Ալեքսանդրետի Մանջաքի հարցը: Միջազգային հեղինակավոր մասնագետների ներկայությամբ այդ հարցի կարևորումն ի նպաստ Միրիայի, ցույց է տալիս որ Ալեքսանդրետի հարցը ժամանցված չէ և սպասում է իրավական և արդարացի լուծումին<sup>2</sup>:

Ստորև բերված մի այլ հայտարարություն կրկին անգամ հաստատում է Փրոֆ. Ալիշան Բայրամյանի դրժում բերված հեղինակային մեկնաբանություններն ու եզրակացությունները:

Այսպես. անցյալ տարվա վերջերին, երբ բուռն վեճեր էին տեղի ունենում քրդական հարցի և Սփրատի գետի ջրերի վերաբերյալ, մամուլում կարդացինք հետևյալ հաղորդագրությունը, որ թարգմանել ենք անգլերենից:

«Ճրանսիական իշխանությունները նկատի ունենալով թուրք-սիրիական բանավեճերը, Անկարային և նրա ռազմական ղեկավարությունը առաջադրել են, որ թուրք-սիրիական սահմանագծային խնդրում չպահանջեն, որպեսզի Միրիան պաշտոնապես ճանաչի Ալեքսանդրետի Մանջաքի կցումը Թուրքիային»:

Ճրանսիական իշխանությունները մատնանշել են, որ այդպիսի դեպքում Միրիան իրավասու է դիմելու Հա-

գայում գտնվող միջազգային դատարանին, որպեսզի վերջինս քննարկի Ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմից Սանջաքը Թուրքիային հանձնելու օրինականության հարցը:

Ֆրանսիական իշխանությունները հայտնել են, որ ըստ միջազգային օրենքի մանդատային որևէ պետություն (սովյալ դեպքում Ֆրանսիան) իրավունք չունի իր խնամակալության տակ գտնվող երկրի (սովյալ դեպքում Սիրիան) աշխարհագրական մի տարածքը անջատելու և նվիրելու մի այլ երկրի (այսինքն՝ Թուրքիային):

Ուստի Ֆրանսիան զգուշացրել է Անկարային, որ նման դեպքում Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունը ստիպված է արխիվում գտնվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելու Հասգայի միջազգային դատարանին<sup>3</sup>:

Հասկանալի է, որ Ֆրանսիական իշխանությունների վերոհիշյալ արդարամիտ քայլը որոշակի առնչություն ուներ հայերի ցեղասպանության ճանաչման հարցի հետ: Ինչպես գիտենք, 1998 թ. մայիսի 29-ին, Ֆրանսիայի Ազգային Ժողովը միաձայն ճանաչեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը: Ընդունված բանաձևի պատճառով, Թուրքիայում բողոքի մեծ ալիք բարձրացավ Ֆրանսիայի դեմ: Մինևույն ժամանակ Թուրքիան արգելք դրեց ներմուծվող ֆրանսիական ապրանքների վրա: Այնպես որ Ալեքսանդրեոսի Սանջաքի օրինականության հարցը առաջ քաշելով, Ֆրանսիան աշխատեց դրանով զգաստացնել և ընդհանրապես կասեցնել թրքական սպառնալիքները:

Եզրակացնենք: Այս տարի լրանում է Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակը: Անցյալ տարի Թուրքիան առաջարկ էր ներկայացրել ՅՈՒՆԵՍԿՈ-ին, որպեսզի այդ տարեդարձը նշվի համաշխարհային տարողությունը և պատկարանքով:

Հարց է առաջանում, ինչպե՞ս կարող է նշվել մի



կայսրութեան հորելլանական տարելիցը, երբ ամբողջ պատմութեան ընթացքում զանգվածային կոտորածներով արյան մեջ խեղդել է իր լծի տակ գտնվող ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը:

Հապա՞ 20-րդ դարում մեր աչքի առաջ կատարված հանցադործ արարքները...:

Ես առաջին հերթին նկատի ունեմ դարասկզբին տեղի ունեցած հայերի առաջին ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութեան ամբողջ տարածքում, որն առ այսօր էի դատապարտվել միջազգային չափանիշով:

Ալեքսանդրեասի Մանջաքի անօրինական զավթումը.

Կիպրոսի տարածքի կարևոր հատվածի նվաճումը.

Էգեյան Մովի խնդրով Հունաստանի հետ հակամարտութիւնը:

16 տարիների ընթացքում քուրդ ժողովուրդի հալածանքներն ու զանգվածային կոտորածները:

Այս հարցերը սպասում են իրենց արդար լուծումին...<sup>4</sup>:

**ԳԵՎՈՐԳ ՊԱՂԸՅԱՆ**  
**«ՊԱՏԱՍԽԱՆ՝ ՕԹԹԱՎԱՅԻ**  
**ՄՈՏ ԹՈՒՐՔԻՈ ԳԵՍՊԱՆԻՆ»**  
(Լոս Անջելես, 1998)

Գրախոսվող գիրքը, «Պատասխան Օթթավայի մոտ Թուրքիո դեսպանին» խորագրով, Գևորգ Պաղճեանի նամակն է կանադայում Թուրքիայի դեսպան Ալի Թույկանին, որը մինչ այդ, հունիս 25, 1991 թվագրությամբ մի նամակ է հղել Քվեբեքի Նահանգային Ազգային Ժողովի անդամ՝ Ռուպեր Լիպմանին:

Ալի Թույկանը այդ նամակը գրել է այն նկատառումով, որ ավյալ ժամանակ Քվեբեքի Նահանգի Ազգային Ժողովի երեախոխանները նախաձեռնել էին 1915 թ. հայերի ցեղասպանության 76-րդ տարելիցի առթիվ պոսակցիլ հայ ժողովուրդին և ընդունել համակրանքի մի որոշում:

Հասկանալի է, որ այդպիսի հայանպաստ որոշում, մի կողմից արատավորելու էր, այսպես կոչված «դեմոկրատական» Թուրքիայի համբավը, մյուս կողմից, խոչընդոտելու էր Եվրոպական միությանը միանալու նրա ձգտումին: Գևորգ Պաղճեանի պատասխան նամակը, որ գրված էր օգոստոս 2, 1991 թ., Ֆրանսերեն, հրատարակվեց նույն թվականին Մոնրեալի Հայ Դատի Հանձնախմբի կողմից, իսկ այնուհետև՝ Լոս Անջելեսի «Նոր Հայաստան» օրաթերթի խմբագրության քանգերով այն լույս տեսավ 2,000 օրինակ Ֆրանսերեն բնագրով և

անգլերեն թարգմանությունը և կարճ ժամանակում ըստառվեց ընթերցող լայն հասարակության կողմից:

Այսօր, գոհունակությամբ պիտի նշենք, որ հրապարակի վրա է «Պատասխան Օթթապայի մոտ թուրքիո դեսպանին» երկարաշունչ նամակի նոր հրատարակությունը, այս անգամ՝ երեք լեզուներով՝ ֆրանսերեն, հայերեն, անգլերեն, կրկին «Նոր Հայաստան» օրաթերթի խմբագիր՝ Վահան Վահանյանի, ինչպես նաև «Հարություն և Քնարիկ Նազլիկյան Գրական Հիմնադրամ»-ի ներդրած անբասիր ջանքերի շնորհիվ: Նշենք նաև, որ հայերեն թարգմանությունը ամենայն բժախնդրությամբ և բարձր մակարդակով կատարել է վաստակաշատ գրականագետ Արամ Օրջանյանը:

Գեվորգ Պաղճյանը մեր ազգային ողբերգության ցավերով տառապող, պատմական Հայաստանի տարածքներին տեր կանգնող և մեր կորցրած շարժական ու անշարժ գույքի նյութական արժեքների հատուցման համար պայքարող մի հայրենասեր անձնավորություն է:

Իր աշխատություններում, Գեվորգ Պաղճյանը ամենայն խորությամբ անդրադարձել է 1915-ի հայերի ցեղասպանության իրականացման թուրքիայի քաղաքականությունը, ինչպես նաև թուրքական պետական գործիչների ու ժամանակակից թուրք պատմագրության կողմից հայկական հարցի պատմության նենգախիտման խնդիրներին: Միջազգային իրավական օրենքների հիման վրա, նա ապացուցել է հայ ժողովրդի անփակտելի իրավունքը, ներկայումս թուրքիայի կազմում գտնվող էթնիկական տարածքի վրա, ինչպես նաև որպես օրինական ժառանգորդը՝ 1915-1923 թթ. տեղահանությունից և ցեղասպանությունից հետո այնտեղ մնացած ազգային և նյութական արժեքները:

Հարկ է նշել, որ անցյալ տարի, հոկտեմբեր ամսին, երբ առաջ եկաւ ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանավորության տակ 1999 թվականին Օսմանյան կայսրության Հիմնադրման

700 ամյակի տոնակատարութեան հարցը, Գ. Պաղճյանը առաջիններից մեկն էր, որ անմիջապես հանդես եկավ քրննադատական սուր նամակ-հոդվածներով, որոնք ուղղված էին ՅՈՒՆԵՍԿՈ-ում Կանադայի ներկայացուցիչ ժակ Դեմերին, որպեսզի վերջինս դեմ քվեարկի թրքական այդ առաջարկին: Տվյալ նամակում, Գեվորգ Պաղճյանը մեկ անգամ ևս պատմական փաստերի հիման վրա բացահայտում է ամբողջ պատմութեան ընթացքում Օսմանյան կայսրութեան վարած ջարդարարական քաղաքականութեանը այլազգի հալածակների նկատմամբ: Մասնանշում է նաև, որ քսաներորդ դարի սկզբին, հայերի նկատմամբ կատարված ցեղասպանութեան զոհ գնացին մեկուկես միլիոնից ավելի հայեր:

Դեռևս կարելի է շատ խոսել իր ժողովրդին ծառայելու նվիրված պատմաբան-իրավագետ Գեվորգ Պաղճեանի մասին, բայց բավարարվենք այսքանով և անցնենք առաջ:

Հենց սկզբից նշենք, որ Պաղճյանի «Նամակ-պատասխանը» ամենայն խորութեամբ 1915-23 թթ. Հայոց Մեծ Եղեռնի խտացրած պատմությունն է, ուր Հեղինակը անհերքելի արխիվային փաստերով և ականատեսների վկայութեամբ մի կողմից բացահայտում է իրականութունը, իսկ մյուս կողմից ժխտում՝ թուրք դեսպանի անհիմն ու ստապատիր տեսակետները:

Թուրք պատմաբանների և պետական գործիչների նման, դեսպան Ալի Թուլկանը ևս իր նամակում կեղծել ու նենգափոխել է իրականութունը, պնդելով հետևյալ կետերը, թե իբր.

1. Հայաստան բնավ գոյութուն չի ունեցել:
2. Հայերը խաղաղ ու հանգիստ կյանք են վարել Թուրքիայում:
3. Հայերը դավաճանել են Թուրքիային:
4. 1915 թ. ցեղասպանություն տեղի չի ունեցել:
5. Հայերն են կոտորել Թուրքերին:

Յ. Հայերը Մուստաֆա Քեմալի ժամանակ երբևէ չեն հալածվել, և այլն:

Գեվորգ Պաղճյանը դեպպեսի այս և այլ հերյուրանքներին հակահարված տալով, լիովին բացահայտում է պատմական ճշմարտությունը:

Հատկապես վերջին պնդումներին նա հավաստի փաստարկներով ցույց է տալիս, թե իրականում ինչպիսի հալածանքների և կողոպուտի են ենթարկվել ոչ միայն Հայերը, այլ հույները, ասորիները, քրդերը և այլ փոքրամասնությունները: Այս մասին, որպես ցցուն վկայություն, բերում է անգլիացի պատմաբան Հ.Ա. Գիրոնսի հետևյալ գնահատականը.

«Որևէ տարակույս չկա, որ սարսափելի արարքները, որոնք այժմ տեղի կունենան քեմալական թուրքիո մեջ, իրադարձություններ են, որոնք իրենց ամբողջականության մեջ, կներկայացնեն բոլոր քրիստոնյաներուն մահավճիռը: Անկարայի կառավարության կամ լուծին և կամ գործունեության շառավիղին տակ մաս կկազմեն այն ծրագրին, որ կմխի թուրքիան իսկապես թուրքիա ընել:

Անկարայի իշխանության վրա եղող մարդիկը՝ որոշած են հարցը լուծել քրիստոնյաներու հետ, զանոնք մեկընդմիշտ բնաջնջելով»:

Այնուհերև այլ փաստարկներով ևս Գեվորգ Պաղճյանը բացահայտում է Քեմալ Աթաթուրքի իրական դեմքը, նշելով, որ հիմնականում, մտածելակերպի ոչ մի տարբերություն չկար Հայերի ցեղասպանությունը իրականացրնող Երիթթուրքերի արյունոտ քաղաքականության և Անկարայի կառավարության միջև: Այդ նույն քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում, թուրքիայի հանրապետության նախագահ՝ Իսմեթ Ինոնուի օրոք, երբ թուրքական ռազմական ատյանի կողմից մահվան դատապարտված թալեմիթի ահյուներ տեղափոխ-

վեց Ստամբուլ: Իսկ Հետագայում, Թուրքիայի նախագահ Թուրքուա Օզալը շարունակելով այդ գիծը, աշխարհով մեկ հայտարարեց, որ «Հայերը դեռևս դաս չեն վերցրել Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած դեպքերից»:

Նման սպառնալիքները շարունակվում են մինչև այսօր: Վերջերս, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը, Հայերի ցեղասպանության ճանաչման Ֆրանսայի խորհրդարանի բանաձևը խիստ քննադատելով, այն որակեց որպես «պատմական դեպքերի խեղաթյուրում»:

Գեփորգ Պաղճյանը դեսպանի ուշադրությունը ամենայն մանրամասնությամբ կենտրոնացնում է նաև 1915 թվականի Հայերի ցեղասպանության մանրամասների վրա: Այսպես, սկսելով 1948 թ. Հեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Համաձայնագրից, հավաստի փաստերով անդրադառնում է ցեղասպանության իրավական հիմքերի վրա և նշում.

«Հայոց պարագային, բազմաՀարյուր մտավորականներու և եկեղեցականներու ձերբակալութիւնը՝ կանխորոշված ցեղասպանութիւն առաջին դործադրութեանն սկսյալ, բռնի աքսորը, բոլոր Հայերուն, մարդիկ, կիներ, մանուկներ՝ իրենց նախնիքներուն քաղաքներեն ու դուրդերեն, և բոլոր տարագրյալներուն ցրվումը, ապրուստի միջոցն զրկված, սուբիական անապատին մեջ, անոնց ջարդը Հատուկ վայրերու մեջ կը կազմեն անտարակույս ծանր Հարված մը խումբի անդամներուն մարմնական և մտային ամբողջականութիւն, ինչպես որ բացատրված է Միացյալ Ազգերու դաշինքին մեջ»:

Պաղճյանը սուր քննադատութիւն է ենթարկում նաև դեսպանի անհեթեթ վարկածը, թե իբր «Հայերը կը շարունակեն ապրել Թուրքիո մեջ, պահելով իրենց ազգային, կրօնական և մշակութային ինքնութիւնը, եկեղեցիները, առողջապահական հաստատութիւնները»:

Թուրքական օրենքների վրա հիմնվելով, նա ցույց է

տայիս թե իրականում ինչպիսի դժվարին պայմանների մեջ են գտնվում այդ բոլոր հաստատությունները: Նախ հայկական դպրոցների փոխ-տնօրենները պարտադրաբար պետք է լինեն թուրքեր, որպեսզի հսկեն ծրագրերի վրա: Պատմություն, աշխարհագրություն և այլ առարկաների ուսուցումը կատարվում է թուրքերեն լեզվով: Չկան հայերեն լեզվի և գրականության հայ ուսուցիչներ, որովհետև պայմաններ չկան, որպեսզի այդպիսիները վկայական ստանան տվյալ մասնագիտությունից: Օրենքը խրատով արգելում է դպրոցների, եկեղեցիների, հիվանդանոցների նորոգումն ու վերաշինությունը: Մի խոսքով, այնպիսի արհեստական դժվարություններ են հարուցում, որպեսզի աստիճանաբար խափանվին ու փակվին հայկական հաստատությունները և ապօրինաբար խլվեն նրանց հողային տարածքներն ու կալվածքները:

Այնուհետև Գ. Պաղճյանը հայերի կոտորածները դատապարտող վկայություններ է բերում տվյալ ժամանակվա թուրք պետական գործիչների գնահատականներից և այլ պաշտոնական աղբյուրներից:

«Այս շարժումը մարդկության դեմ կատարված ոճիր մըն է: Ոչ մեկ կառավարութիւն, որն է մեկ շրջանին, այսպիսի անողորմ ոճիր մը չէր գործադրած», — գրել է հայտնի թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկը իր «Երկու կոմիտե, երկու ջարդ» գրքում:

Իսկ 1918 թ. թուրքիայի վարչապետ Դամատ Ֆերիդ փաշան հետևյալ եզրակացությունն է տվել հայերի դեմ գործադրվող ոճիրներին:

«Այս հանցապարտությունները՝ մարդկային խիղճը սարսափով ցնցելու հատկություններ ունին»:

Այդ էլ բավարար չզանելով, Պաղճյանը առավել ցցուն փաստեր է բերում 1919-1920 թթ. Պոլսում տեղի ունեցած Ռազմական արտակարգ առյուծի դատաքննության արձանագրություններից, ուր գործադրված ծանր

հանցագործությունների համար մահվան դատապարտվեցին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և մյուսները:

Վկայակոչելով դատաքննությունների ընթացքում բերված մեղադրական եզրակացություններն ու փաստերը, Պաղճյանը կատարում է հետևյալ տեղին եզրակացությունը.

«Ես ցույց տվի իրավական բնագիրներու լույսին տակ, և ձեր բարձր դասակարգի հայրենակիցներուն անհակառակելի վկայությունց կոթնած, իրավական և պատմական իրականությունը ցեղասպանության, զոր թուրք կատարությունը կազմակերպեց իր հայ հպատակներուն դեմ 1915-ին»:

Իր նամակում, թուրք դեսպանը մատի փաթաթան է դարձրել նաև 70-80-ական թվականների Հայ Գաղանի Բանակի մարտիկների ծովալած ահարեկչական գործողությունները, թուրք գործիչների նկատմամբ: Գեվորգ Պաղճյանը հերքելով հայերի շատելի ահարեկչությունները՝ դեսպանի որակավորումը, տալիս է հետևյալ պատասխանը.

«Այս շատելի ահարեկչությունը՝ ուղղակի հետևանքն է կամավորապես վճռված անտարբերության և անգործունեության, միջազգային համայնքեն կարգադրված՝ որ վաթսուն տարի հայկական հարցը անգիտացած է: Ահազանգի աղաղակ մը, զգուշացում մը»:

Թուրք դեսպանի և ընդհանրապես թուրք պատմաբանների ամբաստանություններից մեկն էլ այն է, որ հայերը իբր կովկասյան ռազմաճակատում գործակցել են ռուսների հետ: Այս հարցում նրանք անտեսում են շատ կարևոր մի փաստ: Հայերը քցորվեցին այնպիսի շրջաններից, որոնք իրականում ոչ մի վտանգ չէին սպառնում թուրքական պետության համար: Այս փաստը վկայում է այն մասին, որ երիտթուրքերի կատարությունը որոշում էր կայացրել, կանխամտածվածորեն բնաջնջել հայ ժողովրդին ամբողջ Օսմանյան կայսրությունում:

Այնուհետև Գ. Պաղճյանը մեկ առ մեկ թուրք դես-



պանին հիշեցնում է առանձին կառավարութիւնների, և միջազգային պաշտոնական կազմակերպութիւնների կողմից հայերի ցեղասպանութեան ճանաչման և դատաւարաման փաստերը:

Ի միջի այլոց, թուրք դեսպանը անտեսելով հայերի ցեղասպանութեան վերաբերող բոլոր հավաստի փաստարկները, իր նամակի վերջում աշխատել է հայրական խորհուրդ տալ և խրատել Քվեբեկի հայերին, որպեսզի անցյալի «մղձավանջը» թողթափեն և որդեգրեն հաշտութեան քաղաքականութիւն թուրքիայի հանդեպ:

Այս առթիւ, Գ. Պաղճյանի եզրափակիչ պատասխանը հետևյալն է.

«Հայերը մշտապես պահանջած են, որ թրքական կառավարութիւնը իրենց վերադարձնէ դարերն ի վեր իրենց պատկանած և զորս ան խլած է, որ արդարադատութեամբ վերակարգավորե անոնց համայնքային և անհատական ինչքերու գրավման խնդիրը, որ այս օրերուս կհաշվեն քսանհինգ եռամիլիոն դուարով, զորս ան կորզեց, Ուրեմն շորթված իրավունքն է, որ անոնք կը պահանջեն, և ոչ թե շնորհք կը հայցեն:

Այս գիտով և այս պայմաններով է, որ Ձերին վստմութիւն, դրական հաշտութիւն մը հայ և թուրք ժողովուրդներու միջև կրնա իրականանալ օրինականութեան մեջ, բարի հասկացողութեան մեջ, խաղաղութեան և արժանապատիւութեան մեջ: Մնացյալը՝ պիտի ըլլա պարզապէս ծուխի սովեր մը...»:

Այսօր, մոտ 7 տարի է անցել այդ նամակ-պատասխանի թվագրութիւնից: Անցած տարիների իրադարձութիւնները ցույց տվին, որ Գեվորդ Պաղճյանի գործադրած քրտնաջան աշխատանքները ի դուր չանցան, այլ իրենց յուրահատուկ ներդրումն ունեցան հայերի ցեղասպանութեան ճանաչման և դատաւարաման պայքարի ընդհանուր գործում: Այսպէս. կանադայի Քվեբեկ և Օն-

տարիս նահանգները պաշտոնապես ճանաչեցին և դատապարտեցին 1915-1923 թթ. Հայերի ցեղասպանությունը: Իսկ ապրիլ 23, 1996 թ. Կանադայի խորհրդարանը, մեկուկես միլիոն զուր խլած Ապրիլ 24, 1915-ի Հայկական ողբերգության 81-րդ ամյակի առթիվ, ի հիշատակ մարդկության դեմ կատարված ոճիրներու, յուրաքանչյուր տարվա Ապրիլ 20-ից 27-ի շաբաթը հռչակեց «Մարդկության դեմ ոճիրի հիշատակումի շաբաթ»:

Մի փաստ ևս. 1997 հոկտեմբեր 31-ին, Մոնրեալի քաղաքապետ Պիեռ Բուրկի հատուկ որոշմամբ, քաղաքի պարտեզներից մեկում դրվելու է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված մի հուշարձան:

Այսօր, Հայ Դատի Հանձնախմբերի և այլ կազմակերպությունների կողմից պայքարը շարունակվում է, որպեսզի Կանադայի դաշնակցային խորհրդարանը պաշտոնապես ճանաչի և դատապարտի Հայերի ցեղասպանությունը:

Գաղտնիք չէ, որ Գեղորդ Պաղճյանը իր գիտական աշխատությունների և հոդվածների մեծ մասը գրել է Ֆրանսերեն: Ըստ երևույթին, խորը իմաստ և նպատակ է եղել Ֆրանսերեն գրելու մեջ:

Եզրակացնենք. — 1995 թ. Մեծ Եղեռնի 80-ամյակի առթիվ, Վահրամ Հաճյանը հարցազրույց է ունեցել Գեղորդ Պաղճյանի հետ, որը սպագրվեց «Նոր Հայաստան» օրաթերթում: Այդ հարցազրույցի վերջում նրա արտահայտած եզրափակիչ մտքերը լիովին համընկնում են Հայաստանի Հանրապետության ներկա ղեկավարության տեսակետների հետ, այնպես որ այս գրությունը ուզում եմ ավարտել Գեղորդ Պաղճյանի այդ նույն խոսքերով:

«Միջազգային օրենքի հիման վրա, լիիրավ միակ խոսնակը Հայաստանի Հանրապետությունն է, որ միջազգային ճանաչում կվայելե և Միացյալ Ազգերու կազմակերպության մեջ միակ իրավասու բաներն է բովանդակ

հայության անուևով խոսելու և գործելու: Միյուևքը պետութիւնն չէ, կուսակցութիւնները կառավարութիւնն չեն: Մեզի սփյուռքահայերուս, կմնա գործակցիչ Հայաստանի պատկան իշխանութիւններուն հետ և հրապարակ դալ ի պաշտպանութիւնն մեր Դասին՝ իբրև մեկ ազգ, մեկ պետութիւնն յաչս միջազգային հասարակության:

Հայութիւնը մեկ է: Հայաստանի կառավարութիւնը համայն Հայության կառավարութիւնն է: Ըրդրվինք անոր շուրջ, թե ու թիկունք տանք Հայրենի իշխանութիւններուն և ի գին մեծ զոհողութիւններու Հայրենիքը վերաշինող մեր քաջարի քույրերուն ու եղբայրներուն միասին կառուցելու համար մեր պապենական տունը»:

Նախքան խոսքս ավարտելը, կուզեի ասել նաև հետևյալը:

Այսօր Գևորգ Պաղճյանը բնակվում է Կանադայի Մոնրեալ քաղաքում: Հասկանալի է, որ տարիքային և առողջական պատճառներով, նա չկարողացաւ ներկա գանձիլ իր դրքի դինեձոնի երկոյին: Ուստի, կը ցանկանայինք, որ նրա ականջին հասներ նաև մեր հետևյալ սրտի խոսքը:

«Հարգարժան Պրն. Գեվորգ Պաղճեան, ամենայն բարեխղճությամբ և մեծ նվիրումով կատարել եք ձեր պարտքը Հայրենիքի հանդեպ՝ ձեր ուսերին վերցնելով բավականին ծանր բեռ, աշխատել եք ամեն կերպ բացահայտել արդարութիւնն ու ճշմարտութիւնը Հայոց Մեծ Եղեռնի խնդրում:

Նշրայրական ջերմ զգացումներով և խորին ակնածանքով համբուրում եմ ձեր նակատը, բարեմաղթելով քաջառողջութիւն և նորանոր հաջողութիւններ ձեր դժվարին, բայց Հայրենանվեր մեծ գործում: Վարձքերնիդ կատարո՛ւ:

**ԼԻՊԱՐԻՏ ԱԶԱՏՅԱՆ**  
**ՀԱՅ ՈՐՔԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ**  
**ԳԻՐՔ Բ.**

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 1999, 312 էջ**

*«Մեծ Եղեռնն վերապրող  
այն որքերում, որոնք կրցան հայ մնալ,  
հայ ապրիլ և մոր ծիլեր արձակել»  
(Հեղինակի ձօնը)*

1999 թ. սեպտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայում տեղի ունեցավ Լիպարիտ Ազատյանի «Հայ Որքերը Մեծ Եղեռնի» աշխատասիրության երկրորդ գրքի շնորհանգեսը: Այն նախաձեռնված էր ՀՀԳԱԱ-ի նախագահ՝ Ֆադեյ Սարգսյանի կողմից: Ներկա էին Հայրենի ճանաչված գիտնականներ, պատմաբաններ, մտավորականներ, ինչպես նաև այս առիթով Երևան հրավիրված Տեր և Տիկ Լիպարիտ և Սեդա Ազատյանները:

Այդ օրերին, մամուլից տեղեկացանք, որ շնորհանգեսը անցել էր պատշաճ մակարդակով և ըստ արժանիության բարձր գնահատվել կատարված աշխատանքը:

Օրինակ, հետևյալ տպավորիչ խոսքերով էր ակնվում «Հայաստանի Հանրապետություն» թերթում լույս տեսած լրագրող Արմենուհի Մելքոնյանի այս գրքի շնորհան-

դեպի նվիրված «Ես մեծ ազգի մը զավակն եմ» խորագիրը կրող հոդվածը:

«Գիրքը հենց այնպես չի ծնվում: Գիրքը ստղանդի, անքուն գիշերների, աշխատասիրութեան ու տքնանքի արդյունքն է: Գրքից հոգնած աչքերի արցունքի համ ու քրտինքի հոտ է գալիս, որ հաճախ չենք զգում»:

Շնորհանդեսից հետո, Միծեռնակաբերդի ցեղասպանութեան թանգարանի տնօրեն՝ Փրոֆ. Լավրենդի Բարսեղյանը առաջարկել է Լիպարիտ Ազատյանին «Հայ Ռոբերը Մեծ Եղեռնի» թեմային վերաբերող արխիվային բոլոր նյութերը հանձնել թանգարանին:

Բնականարար Լիպարիտ Ազատյանը համաձայնվել է այդ ծրագրի հետ, նշելով որ ինքը երբեք հավակնություն չունի հայտարարելու թե հայ որբերին վերաբերող ուսումնասիրությունը ավարտված է: Այն պետք է շարունակվի այլ հետազոտողների կողմից, որովհետև դեռևս կան բազմաթիվ արխիվային նյութեր:

Այս շահեկան գրքի երկրորդ շնորհանդեսը տեղի ունեցավ 2000 թ. մարտի 19-ին, Լոս Անջելեսի հայահոծ գաղութում:



Լիպարիտ Ազատյանի «Հայ որբերը Մեծ Եղեռնի» աշխատասիրութեան առաջին գիրքը լույս տեսավ 1995 թ. և նույնպես ըստ արժանւոյն գնահատվեց թե՛ հայրենիքում և թե Միջուռքում: Առաջին հատորը բովանդակում է Մեծ Եղեռնից հետո սնկի նման աճած հայ որբանոցների համապարփակ պատմությունը, ուր Լիպարիտ Ազատյանը բարձր է գնահատել հայրենի և օտար բարեգործական կազմակերպութեաններին, բարերարներին, որոնց ջանքերով վերապրեցին հազարավոր հայ որբեր:

Նրկրորդ Հատորում Հեղինակը շեշտը դրել է Հայ որբերի վկայութունների և ականատեսի աչքով պատմած նրանց ահափոր տառապանքների և դժվարին, անմարդկային պայմանների մասին: Հակասակ ձեռք առնված միջոցներին, նրանցից շատերը բռնի թրքացան, քրդացան ու արաբացան: Ըստ Հեղինակի բնութագրություն, այդ բոլորի հետևանքը անմեղ, անգիտակից երեխաների ահափոր ազգափոխությունն էր:

Այս մասին են խոսում գրքում Հաջորդաբար բերված հետևյալ դուխները:

- 1) Հայ որբերու Հավատափոխումը և թրքացումը:
- 2) Քուրդերը և Հայ որբերը:
- 3) Արաբներն ու Հայ որբերը:
- 4) Հայ որբերու վաճառք:
- 5) Հայ որբերը դեղարվեստական գրականության մեջ:

Գիրքը ամբողջացած է առաջաբանով, վերջաբանով և մասնագիտական ծանոթագրություններով:

Գրքի խմբագիրն է Ստեփան Ալաջաջյանը: Նա բարձրը գնահատելով Լիպարիտ Ազատյանի այս Հատորը նշում է, որ կատարված աշխատանքը Համբերությունը, բծախնդրությունը օժտված մարդու աշխատանք է:

Ի միջի այլոց Ստեփան Ալաջաջյանը դեռևս առաջին գրքի վերջում, անարգանքի սյունին քամելով թուրքական կառավարության և պատմադրության ուրացումներն ու խեղաթյուրումները նշում է:

«Յեղասպանության հետևանքը չէ՞ իրենց Հայրենի տներում հանդարտ ապրող երեխաների մեկ քանի ամսում որբ դառնալը, ցեղասպանության հետևանքը չէ՞ օտար երկրներում անհամար որբանոցների հիմնադրվելը. դրանցից ավելի ի՞նչը կարող է ապացույց լինել, որ եղածը ցեղասպանություն էր, և ցեղասպանությունից ճողոպրած որբերը՝ Աստծո, բարի ազգերի ու մարդկանց շնորհիվ կարողացել են մեծանալ, ընտանիք կազմել, աճել ու սե-

բունդներ անեցնել բոլոր ցամաքամասերի վրա»:

Վերահիշյալ գլուխներին զուգընթաց հեղինակը տվել է բազմաթիվ վկայութուններ և եղելութուններ Մեծ Եղեռնի հայ որբերի դաժան ճակատագրի վերաբերյալ:

Ահա մի հատված Մեծ Եղեռնից հրաշքով փրկված մի հայ աղջկա՝ Արշալույս Մարտիկյանի վկայութունից.

«Երկրորդ օրը, ճանապարհին հանդիպեցինք մի խումբ թուրք հեծյալ սակյարների, որոնք ուղեկցում էին հարմարավետ, լավ ծածկված մի քանի կառքերի, այդպիսիք ունենում էին միայն հարուստ թուրքերը: Այս կառքերում նստած էին 40 թուրք հանրմներ (տիկիճներ), որոնք սակյարների ուղեկցությամբ գնում էին հրզրում, միանալու բերդերում ծառայող իրենց բարձրաստիճան ամուսիններին: Նրանք եկել էին Դամասկոսից, Բեյրութից և Հալեբից: Երբ մեր քարավանը մոտեցավ նրանց, հանրմների կառքերը կանգ առան: Ասկյարները հրամայեցին մեր պահակներին նույնպես կանգ առնել: Հետո մենք տեսանք որ կառքերից մի քանիսի մեջ կային մանկահասակ հայ աղջիկներ. ութից տասներկու տարեկան, բոլորն էլ հարուստ ընտանիքի երեխաներ: Նրանցից մի քանիսը վարադույրների ետևից թափահարում էին իրենց փոքրիկ ձեռքերը՝ հասկացնելով մեզ որ իրենք հայ երեխաներ էին: Յուրաքանչյուր կառքի մեջ տեղավորել էին վեցից տասն աղջիկ: Հանրմների կառքերի դասավորութունն այնպիսին էր, որ մեր տեսողաշտից թաքցնում էին աղջիկների կառքերը»:

«Փոքրիկ աղջիկները մեզ սասցին, որ իրենք Ուրֆայից և Հալեբից էին, նրանց ծնողներին և հարազատներին կոտորել էին, իսկ իրենց հանձնել այս հանրմներին, որոնք, ինչպես իրենք հասկացել էին, նպատակ ունեին իրենց տեղավորելու հրզրումի մահամեղական դպրոցում: Հետագայում, երբ չափահաս դառնան, վաճառելու էին հարուստ թուրքերին: Այժմ մի մասին հանրմները կպա-

Հեն որպես աղախիններ կամ կվաճառեն անմիջապես, տեղ Հասնելուն պես» (էջ 55):

Ես դիտումնամփոր ընտրեցի վերոհիշյալ հատվածը, որովհետև գրքի հետագա էջերում բերված է հորեղբորս դուստր՝ Թագուհի Մանուկյանին վերաբերող իմ «վկայություն»ը, որը սերտորեն առնչվում է Արշալույս Մարտիկյանի հաղորդած փաստի հետ:

Այսպես, «Թուրքական բանակի սպա, հորեղբայրս՝ Ավետիս Զավուչը Մեծ Եղեռնի օրերին նենգաբար սպանվում է Թուրք հրամանատարության կողմից: Նրա կինը Մարիցան զոհ է դնում աքսորի ճանապարհին:

Իրենց միումուսար 5 տարեկան աղջնակը որրանալով, սկզբում հայտնվում է Թուրքերի ձեռքին, խակ հետո նըրան վաճառում են երեխա չունեցող արաբ մեծահարուստ մի ընտանիքի՝ Դամասկոսում: Բարեբախտաբար, կարճ ժամանակամիջոցում, հայրս, Համբարձում Փափազյանը կարողանում է գտնել իր եղբոր միակ ժառանգի հետքերը:

Մի կողմից տեղի հայ առաջնորդարանի ներդրած եռանդուն միջնորդությամբ, մյուս կողմից հորս թափած քանքերի շնորհիվ (դատարան, կաշառք...), կարողանում են նրան ազատել: Այնուհետև հայրս պահում և մեծացնում է իր եղբոր աղջկան մեր հարկի տակ, որպես իր հարազատ զավակը» (էջ 235):

Եղբակացնենք:

Ինչպես նշվեց վերևում, «Հայ որբերը Մեծ Եղեռնի» այս երկրորդ գրքում, Լիպարիտ Ազատյանը հիմնականում բերել է չափահաս որբերի տառապանքներով լի պատմությունը, թե ինչպիսի ծանր պայմանների մեջ մեծացան, որպես թրքացած, քրդացած ու արաբացած հայեր: Նրանցից շատերը պահպանեցին իրենց ազգային ոգին, և կրկին վերադարձան իրենց ժողովրդի ծոցը, դառնալով նշանավոր դեմքեր, տաղանդավոր գրողներ և բանաստեղծներ:



Անխոնջ հեղինակը այսօր էլ անհատում եռանդով ու խորը համատեղով շարունակում է իր հետազոտութիւնները օտար և հայրենի արխիւիւների մեջ Մեծ Եղեռնի որբերի վերաբերյալ նոր նյութեր և տեղեկութիւններ հայտնաբերելու և պատրաստելու Յ-րդ հատորի հրատարակութիւնը:

Այս առումով բարձր գնահատելով կատարված աշխատանքը, բարեմաղթում ենք Լիպարիտ Ազատյանին քաջաւոզղութիւն և ստեղծագործական նորանոր հաջողութիւններ<sup>1</sup>:

## ՄԻՐՁԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎ ԾԾՄԱՐՏԱՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը բնագրից, մերածությունը և ծանոթագրությունները Քրիստիմե Կոստիկյանի.  
Երևան, 2000, 360 էջ:

2000 թ. դեկտեմբերին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտի գիտական խորհուրդի որոշմամբ լույս տեսավ Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Յովսեփ Ներսիսյանց, 1798–1864) պարսկերեն շարադրված երկը, որը սրպես անկողմնակալ պատմագիտական սկզբնաղբյուր կարևոր նշանակություն ունի 18–19-րդ դարերի Ղարաբաղի պատմության ուսումնասիրության համար:

Աղբյուրագիտական հույժ կարևոր նշանակություն ունեցող այս երկի հայերեն և անգլերեն թարգմանությունը պարսկերեն բնագրից կատարել է Արևելագիտության Ինստիտուտի երիտասարդ գիտնականներից Քրիստինե Կոստիկյանը: Թարգմանությունը համալրված է լիարժեք ներածականով, ծանոթագրություններով, ինչպես նաև նրա կազմած Հարկային, սոցիալական և այլ տերմինաբանական բառարանով:

Քրիստինե Կոստիկյանի բազմաթիվ աղբյուրների վերլուծության հենքի վրա շարադրված ներածականից

պարզվում է, որ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆ»ի (ճշմարտացի պատմություն) միակ հեղինակային պարակերեն ձեռագիրը պահպանվել է Վրաստանի Հանրապետության ԳԱ Կ. Կելեյիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի Արևելյան լեզուների բաժնում, 195 Համարի տակ: Այն բաղկացած է առաջարանից, Թ-ը գլուխներից և վերջարանից: Հրատարակված գրքում որպես պատմագիտական կարևոր սկզբնաղբյուր ընդգրկված են առաջարանն ու Ծ-րդ և Թ-րդ գլուխների հայերեն և անգլերեն թարգմանությունները: Վերջում տրված է նաև պարսկերեն բնագրի պատճեն:

Թարգմանության ծանոթագրություններում, Քրիստինե Կոստիկյանը տվել է հարակից բացատրություններ և լրացումներ հայ և օտար աղբյուրներից, որոնք աղբյուրագիտական առումով խիստ կարևոր նշանակություն են և առավել ամբողջացնում են «Թարիխ-ե Սաֆի» երկը:

Թե ինչպիսի դառը նակատագիր է ունեցել պատանի Հովսեփը և ի՞նչ հանգամանքներում է հետադայում նախաձեռնել իր պատմական երկի շարադրանքը պարզաբանել է իր երկի համարտոտ առաջարանում: Ահա մի հատված առաջարանից.

«Այսպես է ասում որևէ կողմնակալությունից ու իրականությունից աղավաղումից զերծ այս գովելի պատմության հեղինակ, ձեր խոնարհ ծառայող Միրզա Յուսուֆ Ղարաբաղցին: Քանի որ նվաստ մանուկ հասակում Ղարաբաղից տարվելով Ղալբաշների երկիրը 18 տարի մնացի Ամիր խան սարդարի մոտ, կատարելապես տիրապետեցի նրանց լեզվին: Որոշ ժամանակ լինելով Ամիր խանի գլխանի գրագիրը և վարելով նրա նամակագրությունը, գրազվում էի նաև «պատմությունների» և ուղեգրությունների ուսումնասիրությունը: Երկվելով ամեն տեսակ ցեղերի ու ժողովուրդների հետ՝ ծանոթացա նրանց հավատալիքներին ու բար-

քերին:

1828 թ. երբ Ռուսաստանի և Ղզլբաշները միջև կրկին հաշտություն է կնքվում, նախատա վերադառնում է իր հայրենի ծննդավայրը՝ Ղարաբաղ: Ռուսաստանի փառապանծ կայսր Նիկոլայ Պավլովիչ Ա.—ի օրոք, որը մեծահոգաբար հավաստեի ու գաղտնիքների համար ունէ մեկի չէր ննդում ու անհանդուրժողականություն չէր ցուցաբերում, նախատա որոշ ժամանակ զբաղվեցի անտիկ շրջանի սրբերի վարքի ու տարբեր բնագավառների նոր գրքերի ուսումնասիրությամբ: Լիակատար պատկերացում կազմելով նրանց մասին, քանի որ պատմազրական գրքերում որոշ կողմնակալ ու կեղծ փաստերի հանդիպեցի, մի քանի ընկերներիս խորհրդով ու առաջարկով որոշեցի մի իրական, ճշգրիտ ու ճշմարտացի պատմություն գրել, որ զերծ կըլիներ ստից ու ավելորդ նկարագրություններից» (էջ 34):

Հրատարակված 8 և 9-րդ գլուխներում, հեղինակը մանրամասն տեղեկություններ է տվել Ղարաբաղի հայկական մելիքությունների, մահմեդական խանության և հանգամանալից կանգ է առել 19-րդ դարում տեղի ունեցած ուսուպարսկական պատերազմների նկարագրության վրա: Մահմանային ճշգրտումներ կատարելով, հավաստի վկայություններ է տվել բնակչության կազմի մասին:

«Թարիխ-ե Սաֆի»-ի տվյալները համեմատելով այլ աղբյուրների հետ, Քրիստինե կոստիկյանը իր ներածականում զալիս է այն եզրակացության, որ «ղարաբաղյան լեռնաշխարհը 19-րդ դարում ունեցել է 95 տոկոս հայ բնակչություն»: Հետագայում այդ թիվը քիչ թե շատ ենթարկվել է փոփոխության, քանի որ խաները տևապես ձգտել են քոչվոր ցեղեր գաղթեցնելով ավելացնել մահմեդական բնակչության թիվը:

Եզրակացնելով նշենք, որ աղբյուրագիտական բրնույթ ունեցող այս աշխատանքը կատարված է գիտական

բարձր մակարդակով: Այդ խոսում է այն մասին, որ Գրիատինե Կոստիկյանը արժանի շարունակողն է իր գիտական ավարտաճառի ղեկավար՝ նշանավոր պարսկադեա, Մատենադարանի երկարամյա աշխատող լուսահոգի Հակոբ Փափազյանի խիստ կարևոր գործին:

Հարկ է նշել նաև, որ այս գրքի խմբագրության գործում իրենց նպաստն են ունեցել Հայրենի պատմաբաններ՝ ակադեմիկոս Մանվել Չուլալյանն ու գրկա-Պավել Չորանյանը: Իսկ հրատարակության հովանավորն է «Արմեն և Բերսարե Ճերեճյան» (ԱՄՆ հիմնադրամի նախագահ՝ Արսեն Ճերեճյանը)<sup>1</sup>:

# ԱԼԻԾԱՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ

ԿԻԼԻԶԱ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԻԼԻՍ

Երևան, 2001, էջ 268

Վերջին տարիներին ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտը բեզուկն աշխատանք է կատարում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմության, լեզվի և գրականության խնդիրներին նվիրված թեմաների ուսումնասիրության և հրատարակման գործում

Տարեկան հրատարակվում են 20-25 ակադեմիական բարձր մակարդակով հաղեցած գրքեր:

Ի զուր չէ, որ 2000 թ. օգոստոսի 27-ից սեպտեմբեր 2-ը Մոնրեալում տեղի ունեցած արևելագետների համաշխարհային գիտաժողովի վերջում, ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանու ներքո գործող արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային միության որոշմամբ Արևելագիտության Ինստիտուտը դարձավ այդ հեղինակավոր միության անդամ:

Գոհունակությամբ պիտի նշենք, որ 2001 թ. մարտամսին Արևելագիտության Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ նաև Գլենդեյլարնակ արևելագետ-պատմաբան պրոֆ. Ալիշան Բայրամյանի «Կիլիգա- Հայկական Քիլիս» խորագրով մենագրությունը,

որը նվիրված է դաշտային կիլիկիայում գտնվող հայ ժողովրդի հնագույն բնակավայրերից մեկի՝ Քիլիսի հայ համայնքի ազգային, եկեղեցական, կրթա-մշակութային, լեզվական և հասարակական-քաղաքական կյանքի պատմութանը, վաղ միջնադարից մինչև 1822 թ., այսինքն՝ մինչև կիլիկիայի հայութան վերջնական հայտնաբերումը իր բնօրրանից:

Հարկ եմ համարում հենց սկզբից նշել, որ պրոֆ. Ա. Բայրամյանը իր այս արժեքավոր աշխատությունը նվիրել է իր հոր ու Բայրամյան տունի նախնիներին, ինչպես նաև Հայկական Քիլիսի կրթա-մշակութային կյանքի երախտավորների հիշատակին: Խրատուսելի է և զնահատելի, որ գիրքը լույս է տեսել հեղինակի զաւակների նյութական միջոցներով:

Ինչպես նշեցինք, Քիլիսը դաշտային կիլիկիայի քաղաքներից է: Այն գտնվում է Այնթապից հարավ, Թուրքիա-Սիրիա սահմանագծի մոտ: Քիլիսը ունեցել է խայտաբղետ բնակչություն: Բացի հայերից և թուրքերից, Քիլիսում և շրջակայքում ապրել են նաև հույներ, արաբներ, քրդեր, հրեաներ, թուրքմեններ, և այլն:

Քիլիսի հողևոր կյանքում շատ մեծ դեր է խաղացել Ս. Հովհաննես Մայր Եկեղեցին, որը կառուցվել է նախկին գետնավոր վանքի տեղը 1858-ից մինչև 1872 թ. պոլսեցի Հակոբ Խալֆե ճարտարապետի կողմից: Եկեղեցու շենքը եղել է հռչակապ մի կառույց, որը շատ գեղեցիկ տեսք է սովել քաղաքի ընդհանուր համայնապատկերին:

Դժբախտաբար, այս հույակերտ եղեկեցին ուժանյութով պայթեցվել է 1925 թ. քեմալական թուրք իշխանությունների կողմից, որպեսզի ոչ մի հետք չմնա հայերի դարավոր դոյությունից:

Հարկ է նշել, որ Քիլիսի Ս. Հովհաննես հռչակերտ եկեղեցին եղել է ոչ միայն աղոթատեղի, քրիստոնեական հավատքի սանճար, այլև որպես դպրատուն, գրչատուն-

ուսումնարան, մշակութային կենտրոն, ուր ապրել և ստեղծագործել են մեծ թվով վանականներ, եկեղեցական հայրեր, ուսուցիչներ: Հատկանշական է նաև, որ Սուրբ Հովհաննես եկեղեցու վանականներից որպես Աթոռակալ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական զահին են հասել Հովհաննես Գ. Կաթողիկոս Քիլիսեցին, Կայծակն մականունով (1525-1539 թթ.) և Սահակ Ա. Կաթողիկոս Քիլիսեցի Մեյխաննեջյանը (1674-1686 թթ.) և բազում այլ հոգևորական և աշխարհական գործիչներ, որոնք իրենց խորը նվիրվածությամբ որոշակի հետք են թողել Քիլիսի հայոց կրթա-մշակութային կյանքում:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, Քիլիսում բացվել են մի շարք կրթա-մշակութային վարժարաններ, այդ թվում՝ «Արուսյակ», «Լևոնյան Դպրոցասիրաց», «Հայկազյան» և «Լուսասիրաց» վարժարանները:

Քիլիսի ազգային-եկեղեցական, ինչպես նաև հայ համայնքի կրթա-մշակութային կյանքում խիստ կարևոր ներդրում են ունեցել Հայ Առաքելական, Ավետարանական (բողոքական) և Կաթողիկե եկեղեցիների հոգևոր առաջնորդներն ու ամբողջ կղերականությունը: Ինչպես հեղինակն է հաստատում, հայաբնակ մյուս քաղաքների նման, Քիլիսի մեջ ևս առօրյա կյանքի ու քաղաքակիրթ կենսամակարդակի ստեղծողները, անհրաժեշտ կենսամիջոցներ մատակարարողները հայերն են եղել, այդ թվում՝ բժիշկները, դեղագործները, ուսուցիչները, փաստարանները, և համարյա բոլոր արհեստավորները:

Պրոֆ. Ալիշան Բայրամյանը գովասանքով է խոսում իր ծննդավայր Քիլիսի բոլոր հայ արհեստավորների, այդ թվում և շինարարների մասին, մասնանշելով, որ «այդ համեստ ու անանուն «Յարուհի» շինարարները Քիլիսում կառուցել են բազմապիսի շենքեր, եկեղեցիներ, մզկիթներ, դպրոցներ, գործարաններ, բաղնիքներ և այլ կառույցներ...»:



Այստեղ ակամա ուզում եմ անդրադառնալ նորոգ  
հանգուցյալ, ծնունդով քիլիսեցի, հանրահայտ գրականա-  
գետ-մանկավարժ Սարգիս Յափուջյանի թուրք մտա-  
վորական Ալի էրթեմին գրած նամակի (հունիս 2000 թ.)  
հետևյալ տողերին, ուր մասնանշվում էր հետևյալը.

...Իմ տոհմը Յափուջի (չինարար) են կոչել-կնքել ձեր  
և իմ երբեմնի հայրենակիցները, այն բանի համար, որ  
պապիս հայրը, ապա՝ պապս ու հայրս Քիլիսում բնակու-  
թյան տներ, խաներ ու բաղնիքներ են կառուցել: Կա-  
ռուցել են ամրահիմն ու գեղեցիկ: Կառուցել են սիրով ու  
չկասկածելով երբե՛ք, որ մի օր, չգիտես ինչո՞ւ, իրենց ու  
իրենց զավակներին սեփական տներից, արհեստանոցներից,  
արտ ու այգիներից, դպրոցներից ու աղոթատներից կը  
հանեն դուրս բռնությամբ ու կնետեն սիրիական անա-  
պատների մահաստանները...: Այո՛, չեն կասկածել, բայց  
ինչքան էլ անհավատալի, եղել է այսպես: Մանրամաս-  
նությունները արյուն սառեցնելու չափ զարհուրելի են»:

Քիլիսում կուսակցական գործունեություն են ծա-  
վալել թե՛ Հնչակյանները և թե՛ Դաշնակցությունը: Պրոֆ.  
Ա. Բայրամյանի բերած տվյալներից պարզվում է, որ  
Քիլիսի մեջ Հայ բնակչության ինքնապաշտպանությունը  
կազմակերպելու ուղղությամբ գործուն աշխատանք են  
ունեցել հատկապես Հնչակյան կուսակցության մաս-  
նաճյուղի անդամները: Հետագայում նրանցից թողմաս  
Թողմասյանը և Հակոբ Բասմաջյանը, իրենց ազատատենչ  
պայքարի համար 1916 թ. հունիսի 15-ին, նահատակվել են  
Կ. Պոլսո Սուլթան Բայազիդի հրապարակում իրենց դա-  
դափարակից մյուս 18 Հնչակյան նվիրյալների հետ:

Մեծ Եղեռնի օրերին, մարդկային և նյութական ծանր  
կորուստներ ունեցավ նաև Քիլիսը: «Ընդհանուր հաշվով,  
— գրում է Ա. Բայրամյանը, — Քիլիսի հայության մեկ  
չորրորդը՝ ավելի քան 1,500 անձ կորած, մեռած նահա-  
տակված էր աքսորի ճամփաների վրա: Իսկ Քիլիսի

Հայութեան կրած նյութական վնասները տեղահանութեան և Եղեռնի հետևանքով անչափելի ու անհաշիվ էին» (էջ 208)։

Այնուհետև 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուղրոսի գիւնադադարից հետո, Եղեռնից վերապրած հայերը, երբ վերադարձան իրենց ծննդավայրը, տեսան թե ինչպես թալանված ու կոտորված էին իրենց տները, եկեղեցիները, դպրոցները, խանութները...։

Այս ուշագրավ գիրքը ընթերցելիս, նկատեցինք, որ Հեղինակի տեսադաշտում միմիայն Քիլիսը չէ։ Պատմական դեպքերի, իրադարձութիւնների նկարագրութիւնները շաղախված են հարևան Հայաբնակ քաղաքների, կիլիկիայի հայ թագավորութեան և ընդհանրապես հայ ժողովրդի պատմութեան առանձին կարևոր դրվագների հետ։ Պրոֆ. Ալիշան Բայրամյանը մանրամասն անդրադարձել է նաև Օսմանյան կայսրութեան ներքին և արտաքին քաղաքականութեան հետ առնչվող հարցերին, ինչպես օրինակ ենիչերիներին և ջեյալիական ապստամբութեան մասնակիցների գործադրած բռնութիւններին, թանգլամաթի բարեփոխութեան քաղաքականութեանը, թուրք-ֆրանսիական հարաբերութիւններին, հայոց Մեծ Եղեռնի համատարած ողբերգութեանը և այլ հարցերին։

Ի միջի այլոց, շատ տեղին է Հեղինակի վրդովմունքով լի դատողութիւնը, որ «Հայկական սովետական Հանրապետության» ձեռք գարմանալիորեն բաց է թողնված Քիլիսի մասին որևէ տեղեկատվական հիշատակում։ Մինչդեռ, ընթերցելով գիրքը, նկատում ենք, թե Քիլիսը իր եկեղեցիով, մշակույթով և ազգային հասարակական կյանքով ինչպիսի կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի սվյալ տարածաշրջանի պատմութեան համար։

Ահա, Քիլիսի պատմութեան դարավոր անցյալի պատմութիւնը կորստից փրկելու նպատակով, պրոֆ. Ալիշան Բայրամյանին հաջողում է իր կողմից պատրաստված

«Քիլիս» բառ-հոգվածը Արևելագիտության ինստիտուտի տնօրենն պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի միջոցով ընդ-  
դրրկել Երևանում հրատարակվող «Հայկական համառոտ  
հանրագիտարանի» 4-րդ հատրում:

Եզրակացնելով, նշենք, որ «Հայկական Քիլիս» գիրքը  
պրոֆ. Ալիշան Բայրամյանի երկար տարիների քրտնաջան  
աշխատանքի արդյունքն է, շարադրված դիտական պատ-  
շան մակարդակով, համոզիչ վերլուծություններով և եզ-  
րահանգումներով, Հեղինակը ամենայն բծախնդրությամբ  
օգտագործել է Քիլիսի հետ առնչվող սկզբնաղբյուրները  
(վաղ միջնադարից սկսած) փաստագրական նյութերը, ա-  
կանատեսների, անմիջական մասնակիցների դրի առած  
պատմությունները, ինչպես նաև իր անձնական հուշերը:

Այն հայկական Քիլիսի ամբողջական պատմությունն  
է և կարգացվում է մեծ հետաքրքրությամբ: Ի դուր չէ,  
որ Արևելագիտության ինստիտուտի տնօրենն պրոֆ. Նի-  
կոլայ Հովհաննիսյանը «Դրվատանքի արժանի ուշադրով  
ուսումնասիրություն» վերնագիրը կրող երկու խոսքի  
վերջում, հետևյալ գնահատականն է ավել.

«Ալիշան Բայրամյանի սույն երկասիրությունը, որը  
գրված է բանիմացությամբ, սիրով ու ջերմությամբ, պա-  
րունակում է առատ, ինքնատիպ և օգտակար նյութ հայ-  
կական Քիլիսի պատմության, մշակութային և քաղա-  
քական կյանքի, կոտորածների և Յեղասպանության, ինչ-  
պես նաև հարակից այլ հարցերի վերաբերյալ: Հավատա-  
ցած ենք, որ սույն ուշադրով աշխատությունը կծառայի  
մեր հոգևոր-մշակութային արժեքները և պատմության  
առանձին էջերը մոռացությունից փրկելու ազնիվ գոր-  
ծին»<sup>1</sup>.

**ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ**

*Միջազգային լայն հանաչման արժանացած արևելագետ-պատմաբան Դոկտ. պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը ունի բազմաթիվ գիտական հետազոտություններ, հրատարակված հայերեն և եվրոպական տարրեր լեզուներով, որոնք առնչվում են արևելագիտական հարցերին, մասնավորապես արաբագիտության և հատկապես միջազգային ու տարածաշրջանային հարաբերություններին:*

*Վերջերս նրա հեղինակությունամբ, Երևանում լույս տեսան երկու գրքեր ևս, անդչերեն և հայերեն լեզուներով, որոնք վերաբերում են Հայոց Ցեղասպանության և ընդհանրապես Ցեղասպանագիտության հիմնադրույթներին:*

1) Nikolay Hovhannisyanyan, *The Armenian Genocide-Armenocide*, Yerevan, 2002, p. 106. Translated from Armenian by Svetlana Mardanyan,

*Այս գրքի վերջում ընդգրկված են երեք գունավոր քարտեզներ, որոնցից երկուսը ցույց են տալիս 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում հայության բռնի տեղահանության ուղիներն ու կոտորածների կենտրոնները: Երրորդում թվագրություններով ցույց են տրվում հայերի մղած ինքնապաշտպանական մարտերի կենտրոնները:*

2) Նիկոլայ Հովհաննիսյան, *Հայոց Ցեղասպանու-*

Թյունը Յեղասպանագիտության հայեացկարգային համակարգում, Երևան 2002, էջ 30:

Այս գրքերը ծավալով մեծ չեն, բայց շոշափվող հարցերը ունեն ծանրակշիռ տարողականություն, ուր վերլուծվում և մեկնաբանվում են 20-րդ դարի վերջին քառորդում ձևավորված ցեղասպանության նոր տեսադրույթները, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայոց Յեղասպանության հիմնավորման և միջազգային չափանիշով այն ճանաչելու և դատապարտելու խնդրում:

Հենց սկզբից նշենք, որ օտարազգի ուրև է մեկը եթե ընթերցի անգլերեն լեզվով հրատարակված վերոհիշյալ գիրքը, կատարյալ պատկերացում կկազմի հայ ժողովրդի համառոտ, բայց ամբողջական պատմության, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ նրա բնօրրանը հանդիսացող աշխարհագրական տարածքի, լեզվի, մշակույթի, գիր ու գրականության և ընդհանրապես հայկական պետականության ստեղծման ու անկման, օտար պետությունների վարած նվաճողական արշավանքների և նրանց հայահալած քաղաքականության մասին:

Բնականաբար հեղինակը գրքում մանրամասն կանդ է առել նաև հայկական հարցի ծագման՝ նրա առաձին փուլերին և վերջապես Աբդուլ համիդյան և երիտթուրքերի ծավալած հայաջինջ քաղաքականությունը:

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը հայկական հարցի պատմությունը բաժանել է երեք փուլերի: Առաջին փուլը սկսվում է 1639 թ. կարսի Շիրինում կնքված թուրք-իրանական հաշտության պայմանագրով և հասցվում է մինչև 1878 թ. Բեռլինի վեհաժողովը: Այս ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության կողմից նվաճված պատմական Հայաստանի տարածքում բնակչության նկատմամբ կիրառվող խտրականությունը, ծանր հարկապահանջությունը, ենիջերիների բանակի համար կատարվող մանկահավաքը, բռնի մահմեդականացումը և զանազան այլ չա-

բաշահումների քաղաքականութիւնը անտանելի պայմաններ էին ստեղծել: Հայ ժողովուրդը հաճաաբապես ենթարկվելով քաղաքական, տնտեսական և կրօնական հակաժանքների ուղիներ էր որոնում ազատագրվելու սուլթանական և շահական տիրապետութեան ծանր լծից:

Երկրորդ փուլը ընդգրկում է 1878 թվականից մինչև Առաջին Համաշխարհային պատերազմը (1914 թ.), երբ հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտութեան քննարկման առարկա: Սա այն ժամանակաշրջանն է, երբ մեծ տերութիւնները, իրենց նախաձեռնութիւններով հանդերձ, անտարբեր վերաբերմունք ունեցան հայկական վեց նահանգներում բարենորոգումներ անցկացնելու ծրագրի իրականացմանը:

Երրորդ փուլը սկսվում է Առաջին Համաշխարհային պատերազմով, 1915 թ. երիտթուրքական կառավարութեան կողմից նախաձեռնված հայ ժողովրդի բռնի տեղահանութեան և դաժան կոտորածների քաղաքականութեամբ, որին զոհ դնացին մոտ մեկ ու կես միլիոն անմեղ հայեր:

Բնականաբար հեղինակը փաստերով բացահայտում է յուրաքանչյուր փուլում տեղի ունեցած իրադարձութիւնների մանրամասները: Ծիշտ է, նա չեշտը գնում է Հայոց ցեղասպանութեան վրա, բայց խոսում է նաև Օսմանյան կայսրութիւնում ցեղասպանութեան ենթարկված այլ ժողովուրդների մասին ևս:

Անդչերեն և թե հայերեն հրատարակութիւնների մեջ, պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը կենտրոնանում է ցեղասպանութեան վերաբերող նորագույն տեսադրույթներին, որոնք ուսումնասիրութեան նյութ են դարձել աշխարհի մի շարք ցեղասպանագիտական կենտրոններում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրալիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում:

Հայտնի է, որ «գեներացիոն» ցեղասպանութիւն բառը առաջին անգամ միջազգային շրջանառութեան մեջ

մտցրեց ծագումով լեհ հրեա, մասնագիտությամբ իրավաբան Ռաֆայել Լեմկինը, 1944 թ. հրատարակած «Axis Rule in Occupied Europe» գրքի մեջ: Այն կազմված է հունարեն — *génos*, — տահմ, ցեղ և լատիներեն *caedo* — սպաննել բառից:

Բնականաբար Ռաֆայել Լեմկինը ստեղծելով այս բառը, իր տեսադաշտում ուներ 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած Հայոց առաջին Յեղասպանությունը, ինչպես նաև հետագայում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հրեա ժողովրդի հանդեպ գործադրված ցեղասպանությունը:

Այն շատ արագ գործածություն մեջ մտավ միջազգային գիտական և դիվանագիտական շրջանակներում և նույնիսկ 1948 թ. դեկտեմբերի 9-ին, ՄԱԿ-ի կողմից ընդունվեց «Յեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատիժներ սահմանելու» բանաձևը:

Այնուհետև, 20-րդ դարում աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցած ցեղասպանական արարքները ստիպեցին գիտնականներին և մասնագետներին, առավել ուշադրություն կենտրոնում պահել ժողովուրդների ֆիզիքական ոչնչացման այդ ահավոր ողբերգության իրողությունը: Այս բոլորը նկատի ունենալով, Նիկոլայ Հովհաննիսյանը մատնանշում է, որ 20-րդ դարի 70-80-ական թվականներին, համաշխարհային գիտություն մեջ առաջացավ գիտական մի նոր ուղղություն՝ ցեղասպանագիտությունը:

«Յեղասպանագետների ուշադրություն կենտրոնում են, — գրում է նա, այնպիսի տառնաբանական հարցեր, ինչպես ցեղասպանություն ծնող միջավայրը և պայմանները, քաղաքական և սոցիալ-տնտեսական պատճառները, պետական-հասարակական համակարգը, ցեղասպանություն իրականացնող երկրի հոգևոր-մշակութային մակարդակը,

դարերի ընթացքում ձևավորված պատմական ավանդույթները, միջազգային պայմանները»:

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը մատնանշում է, որ ցեղասպանության ուսումնասիրության ոլորտի մեջ իր ուրույն սահմանումն է գտել «սոցիալիզմի» կամ «քաղաքական սպանության» հիմնադրույթը, ինչպես նաև «վիկտիմիզացիա» կամ զոհի հասկացողությունը:

Քաղաքական սպանության նպատակն է եղել նախ գլխատել ցեղասպանության ենթակա ազգին և կոտորել նրա դիմադրականության ոգին: Այս տեսակետից քաղաքական սպանության դասական օրինակ է հանդիսանում Հայոց Մեծ եղեռնը:

1915 թ. Ապրիլի 24-ին, մեկ գիշերվա ընթացքում ձերբակալվեց և աքսորվեց Հայ մտավորական դասը: Կանխամտածված նենդ ծրագրով ոչնչացվեցին Հայոց քաղաքական, կրոնական, հասարակական, մշակութային գործիչները: Դրանց զուգընթաց ոչնչացվեց նաև գինեակոչի ենթարկված Հայ երիտասարդությունը:

«Այսպիսով, — եզրականացնում է Նիկոլայ Հովհաննիսյանը, — «սոցիալիզմի» քաղաքական սպանության կիրառման հետևանքով, Հայությունը գլխատվեց և մնաց առանց ազգային, քաղաքական և բազմական ղեկավարություն»:

Իսկ վիկտիմիզացիայի կամ զոհի վերածվելու գործընթացը կատարվում է պատմական որոշակի մի ժամանակաշրջանում: Այս մասին ևս հեղինակը տալիս է հետևյալ հստակ սահմանումը.

«Օսմանյան Թուրքիայի ղեկավարությունը կայսրության տարածքում գտնվող Հայությունը որպես զոհ ընտրել էր առնվազն 19-րդ դարի 70-ական թվականների վերջերին, երբ կյանքի կոչվեց «Հայկական Հարցի լուծման լավագույն ձևը հայերի ֆիզիկական ոչնչացումն է» բանաձևը, որը որդեգրվել էր սուլթան Աբդուլ Համիդ



Բ-ի կողմից ... Հայոց Յեղասպանության դեպքում, երկուսի հասցեն էլ շատ հասակ է: Զոհը հայությունը եղավ, իսկ դահիճը՝ Օսմանյան կայսրության սուլթանա-երիտթուրքական վարչակարգը, նրա դեկադարությունը: Անկախ նրա գործադրած բոլոր ճիգերին «փաստարկներին» և «բացատրություններին», նա մնում է դահիճ» (էջ 19):

Հրատարակված երկու գրքերում էլ Նիկոլայ Հովհաննիսյանը խոսում է մի շատ կարևոր հիմնադրույթի մասին ևս, որը վերաբերում է «ցեղասպան պետություն» պիտակին: Այն հիմնվում է բռնատիրական յուրահատուկ կառուցուածք ունեցող պետության և հասարակության գաղափարախոսության վրա, ուր առաջնային է համարվում աիրապետող ազգի գերազանցության գաղափարը սվյալ պետության կազմում գտնվող մյուս բոլոր ազգությունների նկատմամբ: Այստեղից էլ՝ Հեղինակը Հետևյալ արամբանական եզրակացությունն է կատարում:

«Երբ մենք ցեղասպան պետության այս հասկացությունը կիրառում ենք Հայոց Յեղասպանության և հրեական Հոլոկոստի առնչությամբ, ապա ակնհայտ է դառնում, որ դա միանգամայն սազում է 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին քսանամյակի Օսմանյան կայսրությունը և 20-րդ դարի 30-40-ական թվականների հիտլերյան-նացիստական Գերմանիային (էջ 23):

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը որպես արարագետ, այս երկու գրքերում էլ հատուկ ուշադրություն է դարձրել և արժեքավորել արարականատեսների, պատմաբանների և դիվանագետների Հայոց Յեղասպանության վերաբերող վկայություններն ու գնահատանքները:

Հայանի չէ որ արար ժողովրդի բարության շնորհիվ, հազարավոր հայեր փրկվեցին անխուսափելի ոչնչացումից և ապաստան գտան արարական երկրներում: Նույնիսկ մահմեդական գլխավոր սրբավայր Մեքքայի շերիֆը՝ (կառավարիչ) Հուսեյն իբն Ալի Հաշիմին, 1916-1917

Թվականներին հրապարակած հայտարարություններում խտտագույն կերպով քննադատեց և անարդանքի սյունին գամեց Էրիտթուրքերի կուսակցության և կառավարության ղեկավարներին:

Գրախոսվող գրքերից պարզվում է, որ 1960-ական թվականներին հայաստանություն "Armenocide" տերմինը առաջին անգամ գործածության մեջ դնող Հեղինակը՝ լիբանանցի արաբ հանրահայտ պատմաբան Մուսա Պրենան է<sup>1</sup>.

Եզրակացնելով նշենք, որ գիտական համոզիչ և բարձր մակարդակով կատարված Նիկոլայ Հովհաննիսյանի այս երկու հայերեն և անգլերեն լեզուներով լույս տեսած աշխատությունները, կարևոր ներդրում են ոչ միայն Հայոց Յեղասպանության հիմնավորման տեսանկյունից, այլև արդի ցեղասպանության ասպարեզում առաջ եկած հիմնադրույթների լուսարանման համար: Ուստի շնորհավորում ենք պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանին, իր կատարած ազդեցություն աշխատանքի համար և մաղթում քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Առիթը օգտագործելով պիտի անդրադառնամ մեկ հարցի շուրջ ևս:

Հ.Հ. Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն՝ պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի այս երկու գրքերը ևս հրատարակվել են «Արմեն և Բերսաբե Ճերեճյան» Հիմնադրամի (ԱՄՆ, Նյու Ջերսի) մեկենասությամբ:

Ծավով պիտի նշենք որ 2002 թ. հունվարի 27-ին, կյանքից հեռացավ այս հիմնադրամի գործադիր նախագահ՝ Արսեն Ճերեճյանը: Նա Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ղեկավար դեմքերից մեկն էր և անխոնջ հասարակական գործիչ, որի ազգային-կրթական ասպարեզում ներդրած բարերարությունը

Հայտնի է բոլորին

Արսեն Ճերեճյանի հովանավորությամբ Արևելադիտության ինստիտուտում հրատարակվել է 40 անուն գիրք, կատարվել է զգալի դրամական օգնություն գիտափոզովների կազմակերպման, ինչպես նաև երիտասարդ արևելագետներին նյութապես խրախուսելու խիստ կարևոր գործում:

Արսեն Ճերեճյանի անթառամ հիշատակը միշտ պայծառ կմնա Արևելադիտության ինստիտուտի պատմության մեջ, իսկ նրա հիմնադրած գործը կշարունակվի ի փառս Հայրենի դիտության զարգացման<sup>3</sup>:

**ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

(ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԼԵՍԼԻ ԴԵՎԻՍԻ  
«ՍՊԱՆԴԻ ՆԱՀԱՆԳԸ» ԳՐՔԻ ՀԱՅՅԵՐԵՆ ԼՈՒՅՍ  
ԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ)

*«Խարբերող շատ դիպուկ է Թուրքիայի «Սպանդի  
Նահանգ» կոչվում, քանի որ բոլոր կողմերից  
բունագաղթածներին բերում են այստեղ միայն այն  
բանի համար, որ կռտորեն (էջ 317)*

ԼԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍ

2001 թ. Երևանում առաջին անգամ հայերեն թարգմանություններ չույս տեսալ 1914-1917 թթ. Թուրքիայում խարբերվում Ամերիկայի Հյուսիսային Լեռի Դեվիսի «Սպանդի Նահանգ» խորագրված գիրքը, ուր ամփոփված են նրա Հաշվետվությունը, ինչպես նաև Կ. Պոլսի ամերիկյան դեսպան՝ Հենրի Մորգենթաուին Հասցեագրված գեկուցագրերը<sup>1</sup>:

Գիրքը սկսվում է Մեսրոպ Աբբ. Աշճյանի «Մարդասիրության և Հայասիրության նոր վկայություն մը» խորագիրը կրող գնահատանքի պատշաճ գրությունով:

«Վերջապես նվիրական նպատակ մը կիրադործվի, —

գրում է նա. — Հայ ընթերցողին կը ներկայացվի մեր պատմութեան մեծագույն ողբերգութեան համազգային ցեղասպանութեան ամենեն արժեքավոր ու արժանահաճափ վկայութիւններն մեկը՝ ամերիկյան Հյուսիսային Լեւի Դեվիսի պաշտօնական հաշվետուութիւնը» (էջ 5)։

Այնուհետեւ, «Երախտիքի խոսքով» իր շնորհակալութիւնն է հայտնում Տիկ. Սյուզան Կ. Բլերը, բոլոր նրանց, ովքեր օժանդակել և նպաստել են գրքի հրատարակման գործին։ Իսկ իր երկարաշունչ «Նախաբանում» Տիկ. Սյուզան Բլերը ընթերցողին է տեղեկացնում իր կատարած հետազոտական աշխատանքի մանրամասնութիւնները։

Մարդասիրական վեհ զգացումներով տողորված այս հայասեր տիկինը, իսկապէս որ երկար տարիների տքնաջան աշխատանք է կատարել Լեւի Դեվիսի հաշվետուութեան բնագիրը, Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին ուղղված նրա զեկուցազրեբը, ինչպես նաև 1915-1917 թթ. նրա նկարած եղեռնային նկարները գտնելու, փաստելու և ծանոթագրելու գործում։

Հաշվետուութիւնը կազմվել է ԱՄՆ-ի Պետդեսպարտամենտի Հյուսիսատասկան գրասենյակի տնօրեն՝ Վիլբուր Զ. Կարրի պահանջով 1917 թ. սեպտեմբերին։ Լեւի Դեվիսը այն երկու ամսում պատրաստելուց հետո ուղարկել է հասցնատիրոջը։

Դժբախտաբար հաշվետուութիւնը երկար ժամանակ մնացել է Պետդեսպարտամենտում որպէս «գաղտնի» օգտագործման նյութ։ Հետագայում Լեւի Դեվիսի այս անհայտ մնացած հաշվետուութիւնը, 1944 թ. հանգրվանել է Վաշինգտոնի Ազգային արխիվում։ Տիկ. Սյուզանը այն հայտնագործելուց հետո, վերծանելու և հրատարակելու թույլտուութիւնը ստացել է 1987 թ. նոյեմբերի 27-ին։

«Դեվիսի հաշվետուութիւնը ցնցող է, — գրում է Տիկ. Սյուզանը, — իրօք որ անհասկանալի է, թե նման փաս-

տաթուղթը, ինչպես էր այսքան երկար աննկատ մնացել Ազգային արխիվում» (էջ 68)։

Նախաբանում Տիկ-Սյուզանը մանրամասն խոսում է ոչ միայն այս հաշվետվության, զեկուցագրերի և նկարների հայտնաբերման մասին, այլև հանգամանալից տեղեկություններ է հաղորդում հայ ժողովրդի պատմության հայ-թրքական, ինչպես նաև թուրք-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների և այլ հարակից հարցերի մասին։ Արխիվային նյութերի հիման վրա է կազմված նաև Լեսլի Դեվիսի կենսագրությունը։

Համառոտակի նշենք, որ Լեսլի Դեվիսը ծնվել է Նյու Յորք նահանգի Պորտ Ջեֆֆերսոն քաղաքում, բայց ապրել և հասակ է առել Լոնկ Այլլընտի գիւղական (ազարական) միջավայրում։ Փաստաբանի մասնագիտությունը ձեռք է բերել Նյու Յորքի համալսարանի իրավաբանական բաժանմունքում։ 1912 թ. անցել է դիվանագիտական աշխատանքի։ 1914 թ. մայիսի 8-ին նշանակվում է Խարբերդի հյուպատոսի պաշտոնին։ Այս հեռավոր վայրում պաշտոնի նշանակումը բացատրվում է նրա դիմացկուն և համարձակ բնավորություն ունենալու հանգամանքով։ Լեսլի Դեվիսը սիրել է հետիտան երկար գրուսնել և ժամերով շրջագայել ձիով։

Ահա այս է պատճառը, որ 1915 թ. եղեռնային օրերին, նա անվախ, հանդուգն կերպով, գիշեր թե ցերեկ, հեծյալ շրջագայել և ականատես է եղել հայոց մեծ ողբերգության մանրամասներին։ Այդ բոլորի մասին ծածկագիր հեռագրերով և զեկուցագրերով հայտնել է Կ. Պոլիս, ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուին։

Դժբախտաբար առաքված հաղորդագրությունները խիստ գրաքննության հետևանքով, ոչ բոլորն են տեղ հասել, բայց եղածն էլ բավական է բացահայտելու այն ահավոր ողբերգությունը, որը տեղի ունեցավ Խարբերդի (Մամուրեթ ուլ-Ազիզ, ներկայումս՝ Էլազըզ) նահանգում։

«Երբ Խարբերդ Հասա, Հայանում է Դեվիսը, — իմ մաքուր էլ շանցավ, որ այդպիսի ողբերգություններ պիտի պատահեն, և ես ականատես միակ արտասահմանյան պաշտոնյան պիտի լինեմ ու չնայած կանխելու հնարավորություն չեմ ունենալու, ոմանց գոնե փրկելու եմ մյուսների ծանր ճակատագրից»։ (էջ 84)։

Ամբողջ Հաշվետվության և զեկուցագրերի միջով կարծիր թեյի նման անցնում են Հայության նկատմամբ, գործադրված բռնի տեղահանությունները, անմարդկային դաժանություններն ու կոտորածները։ Նա այնպիսի սրբատաճմլիկ եւ սարսափազդու վկայություններ է տալիս Հայ կանանց, երեխաների, ծերերի նկատմամբ կատարվող կրտսանքների ու կոտորածների մասին, որ մարդ ցնցվում է։

«Բուրբը ցնցոտիներով էին, ոմանք՝ գրեթե մերկ Գաղթականները Հյուծված էին, տանջված, հիվանդ, կեղտոտ, ամբողջովին ոջլոտ, աւելի շատ վայրի գազանի, քան մարդկային էակների էին նման... (էջ 158) ...Քայլելով խավարում ինքս ինձ հարցնում էի, թե տեղահանումները երբեք է վերջ կը գտնե՞ն։ Թվում էր իշխանությունները իրագործելու են այն, ինչ սկզբից էին Հայտարարում բռնազաղթը շարունակել այնքան, մինչև ոչ մի Հայ չմընա» (էջ 191)։

Հակառակ այս և օտար բազմաթիվ վկայություններին և փաստերին, տարօրինակ է, որ այսօր թուրքական կառավարությունը, պատմագրությունը, խեղաթյուրելով իրականությունը աշխատում են պնդել, որ իբր երկկողմանի բախում է եղել և նույնիսկ Հայերն են կոտորել թուրքերին։

«Հուլիսի 1-ի առավոտը բացվեց, — գրում է Լեւի Դեվիսը, — և ես զարմանքով նկատեցի, որ Հայերը, որոնց այդ օրը պիտի տեղահանեին, ամենաչնչին դիմադրությունն իսկ ցույց չտվեցին։ Ճիշտ է, տղամարդկանց մեծ մասն արդեն աքսորված էր, մնացածները Հուսահատված

ու ընկճված էին, բայց ես կարծում էի, որ ամեն դեպքում ոմանք կընդդիմանան, աքսորի հրամանն ի կատար ածելուց առաջ արյուն կը հոսի: Սակայն այդպես էլ չլսեցի որևէ ընդդիման կամ այնպիսի մեկի մասին, որը բռնազաղթի հրամանին չենթարկվեր, չնայած ոմանք հայտարարել էին, որ իրենց օջախները չեն լքի, կնախընտրեն, որ զինվոր-սատիկանները տեղում սպաննեն» (էջ 124-125):

Իրականում երիտթուրքական կառավարությունը կատարյալ բժախնդրությամբ և կանխամտածված կերպով նախապատրաստել էր հայության բնաջնջումը Օսմանյան կայսրությունում:

1915 թ. Ապրիլի 24-ին, մեկ գիշերվա ընթացքում ձերբակալեցին և աքսորեցին Կ. Պոլսի հայ մտավորականությանը: Իսկ զինակոչի ենթարկված հայ երիտասարդներին հավաքելով՝ սոված-ծարավ բանեցրին աշխատանքային գումարտակներում և այնուհետև հաշվեհարդար տեսան բոլորին սպանելով: Լեսլի Դեվիսը այս մասին ևս տալիս է հետևյալ վկայությունը.

«Հայ զինվորներին տարան կես գիշերին: Ըստ իշխանությունների, նրանց հասցնելու էին Ուրֆա, որտեղ պիտի աշխատեն ճանապարհների շինարարության վրա, քանի որ հայ զինվորները բանակի ռազմական ծառայության համար անցանկանալի էին դարձել: Վալին հարազատներին հավատացրել էր նույնիսկ, որ ամենաուշը երկու շաբաթից նամակ կստանան: Ավելորդ է նշել, որ ոչ ոք ոչինչ չստացավ ու երկար ժամանակ որոշակի հայտնի չէր, թե ինչ եղան հայ երիտասարդները: Վերջիվերջո պարզվեց, որ ուղեկցող զինվոր սատիկանները բոլորին կոտորել են» (էջ 129):

Երիտթուրքերը որպեսզի արդարացնեն հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող բռնի տեղահանություններն ու կոտորածները, 1916 թ. հրատարակեցին կեղծիքներով և ստահոգ գրպարարություններով լցված մի գիրք



«Հայկական կոմիտեաների հեղափոխական շարժումներն ու ծրագրերը» խորագրով (արարատառ թրքերեն)։

Այս դրժում հատկապես մատնանշված էր Հայ ժողովրդի մոտ իբրև թե հայտնաբերված գեներերի և ուսմբերի կուտակումների մասին, որը կատարյալ կեղծիք էր։

Ահա թե ինչ է վկայում Լեսլի Դեվիսը այդ մասին։

«Այդ ժամանակ շուկներ տարածվեցին, որ որոշ անձանց մոտ, որոնց կասկածում էին, որ թրքական կառավարութան դեմ դավ նյութող Հայկական հեղափոխական խմբերի են պատկանում, ուսմբեր ու գեներ են հայտնաբերել։ Նման լուրերը քննելով հետագա իրադարձությունների լույսի ներքո և համեմատելով այդ ամենի հետ, ինչ այդ նույն ժամանակ տեղի էր ունենում Թուրքիայի այլ շրջաններում, կարծում եմ, որ շատ դեպքերում մեղադրվող անձանց բակերում գտնված ուսմբերը ոստիկանությունն է նախօրոք թաղել, որպեսզի Հայերի դեմ հանցանշաններ ունենա—։ Ես բազմաթիվ տներ եմ տեսել, որոնց հատակը զինվորականները փորել, պատերը քանդել են՝ Զանայով գտնել այդ գեները, որոնք իրենց կարծիքով թաքցված են եղել այդ տեղում։ Խուզարկությունները այնպիսի բռնություններով էին ուղեկցվում, որ մարդիկ, որոնց հրամայում էին գեները հանձնել, բայց ոչինչ էլ չէին ունենում, հաճախ գնում, առնում էին կամ ոստիկաններին խոչոր գումարներ վճարելով հին հրացան, ատրոճանակ էին գնում, որ հետո իրենց վերադարձնեն» (էջ 101)։

Այս դավադիր գործարքի հետ կապված Խարբերդի նահանգապետն ու ոստիկանապետը Կ. Պոլսից ստացված հրահանգի համաձայն ամեն կերպ ձգտել են համոզել Լեսլի Դեվիսին, որ նա ևս հաստատի «այդպիսի գեների» գոյության վարկածը, ինչպես նաև գրավոր հայտնի իբրև թե հայերի կատարած բռնությունների և սպաննությունների մասին, որպեսզի այդ բոլորը ամենայն հավանակա-

նությամբ ընդգրկվին վերոհիշյալ գրքի մեջ: Լեւոյի Դեզի-  
սը կուսակցութիւնը նրանց նենդ մտադրությունը հրաժարվել է:  
Նրա հաշվետուությունից բերված հետևյալ հատվածը կա-  
տարելապես դիմակազերծում է երեսօթուրքերի կենտրոնի  
այդ նենդ մտահոգացումը:

«Մյուզիրը (ոստիկանապետ) ուզում էր այլ բաների  
հետ նշեմ, որ հակակառավարական դավադրության հա-  
մար մեղադրվող բոլոր հայերն արդեն աքսորվել կամ  
որեւէ այլ կերպ պատժվել են, տեղերում մնացածները հա-  
կապետական խռովության չեն մասնակցել, իշխանու-  
թյունների հանդեպ հանցանք չեն գործել: Ես իսկույն  
հասկացա, թե կուսակալն ի՞նչ շարժառիթով է ինձ առա-  
ջարկում նամակ գրել, դիլի ընկա, որ մյուզիրն ու ինքը  
խորամանկորեն իմ միամիտ խնդրանքը ուզում են ծա-  
ռայեցնել իրենց շահերին: Եթե ես նշեի, որ կառա-  
վարության դեմ գործած հայերը պատժվել են, իշխա-  
նությունները անմիջապես կը խեղաթյուրեին իմ միտքը,  
կը ներկայացնեին այնպես, թե իբր ես հաստատել եմ, որ  
բոլոր աքսորված կամ պատժված հայերը կառավարու-  
թյան դեմ պայքարած հանցագործներ են...»

Նա (մյուզիրը) նախ և առաջ ուզում էր, որ իմ նա-  
մակում խոսեմ ուսմբերի ու զենքի մասին, որոնք ոստի-  
կանությունը հայտարարում էր, թե դաեւ է հայերի մոտ,  
հիշատակեմ մի քանի դեպքեր, որոնց ընթացքում հայերը  
փորձել էին դիմադրել կամ վնասել թուրք սպաներին,  
որից հետո կարող էի ավելացնել, որ դեռևս չաքսորված-  
ները խռովությունների չեն մասնակցել... Մյուզիրը շեշ-  
տում էր, որ իրենց ուզածը եթե գրեմ, բազմաթիվ կյան-  
քեր կը փրկեմ, նա այնքան կրկնեց իր պահանջի կարևո-  
րությունը, այնպիսի համառությամբ պնդեց, որ բա-  
ցահայտեց սպաշնորհ դիվանագետ լինելը» (էջ 153-154):

Այստեղ հարկ է նշել, որ հայերը երբ կանգնեցին  
կոտորածի և բնաջնջման վտանգի առաջ, մի շարք վայրե-

րում միայն կարողացան համախմբել և ինքնապաշտպանական կռիվներ մղել, որպեսզի փրկեն իրենց, կանանց և երեխաների կյանքը:

Հաշվետվութայան վերջում, Լեսլի Դեվիսը մանրամասն խոսում է Խարբերդի որոշ հայության ստույգ մահից փրկելու մի շարք փաստերի մասին: Իր հնարավորութայան սահմաններում, ամեն մի վտանգ աչքի առաջ ունենալով նա փրկել է բավականաչափ հայերի կյանքը նրանց պատսպարելով հյուպատոսարանի շենքում և ծառերով պատված ընդարձակ բակում:

Մահվան ճիրաններից փրկված հայերը, ինչպես նաև ԱՄՆ-ում գտնվող նրանց հարազատները, հետագայում հայտնել են իրենց երախտագիտութունը հյուպատոսի մարդկային այդ վեհ արարքների համար:

«Պաշտոնի բերմամբ ես ահավոր վերաբերմունքի ականատես եղա, որը նրանց նկատմամբ գործադրում էր թուրքական կառավարությունն ու, բնականաբար, ինձնից կախված ամեն ինչ արեցի, որ ստուպանքները թեթևացրենեմ... Իմ աշխատանքային զանգվածային բնաջնջման տարիներին համեմատաբար քիչ թվով մարդկանց հովանավորեցի և չնայած ում ի վիճակի էի՝ օգնեցի, այնուամենայնիվ եղան դեպքեր, երբ որևէ բան անելն անհնար էր: Ամեն դեպքում հականն այն է, որ այստեղ (ԱՄՆ) ոչ մի հայ, անկախ իմ հաղորդած լուրից, դժգոհություն չհայտնեց» (էջ 259):

Փաստադրական հարուստ վկայություններ պարունակող այս գիրքը ավարտվում է թարգմանիչ Գրիզոր Ջանիկյանի «Մեր պատմությունը մեր ինքնությունն է» խորագիրը կրող զրույցամբ, ուր հեղինակը իր կշռագատված խոհերն ու եզրակացություններն է հայտնում Լեսլի Դեվիսի, նրա հաշվետվության կարևորություն, ընդհանրապես մեզ հուզող հարցերին և մեր սխալները ուղղելու վճռականությունը:

Տեղին է նշել, որ ներհուն մտավորական, արձակագիր, հրապարակախոս, թարգմանիչ Գրիգոր Ջանիկյանը հսկայական գործ է կատարել և շարունակում է կատարել Արևմտյան Հայաստանի բնօրրանների մասին պատմող վավերագրերի, եղեռնային հուշապատումների և օտարագրի ականատես գործիչների հավաստի վկայութունները հավաքելու, թարգմանելու և հրատարակելու գործում: Բարձր զնահատելով նրա կատարած աշխատանքը՝ բարեմաղթում ենք ուժ ու եռանդ շարունակելու իր հայրենանվեր ազգօգուտ գործունեությունը:

Բնականաբար, բարձր դրվատանքի և խրախուսանքի են արժանի նաև սփյուռքահայ գրասերներ՝ Տեր և Տիկ. Ծան և Լյուսի Տեր Մանուկյանները (Պոսթըն), Տեր և Տիկ. Զորն և Թամարա Տեր Մխչյանները (Նյու Յորք), որոնք հայրենասիրական խորը նվիրումով ստանձնել են Հայոց Մեծ Եղեռնին վերաբերող այսպիսի հույժ կարևոր փաստագրական գրքի հրատարակման հովանավորությունը, ի հիշատակ իրենց ծնողների՝ Վարձքերնիզ կատար<sup>2</sup>:

ՔԵՄԱԼ ՅԱԼՉԸՆ

«ՍԻՐՏՍՍ ՀՐԾՎՈՒՄ Է ՔԵԶԱՆՈՎ»

Բոհում, 2000, 426 էջ

Kemal Yalçın

Seninle Güler Yüreğim

«Այս գիրքը պատրաստելու ընթացքում, բախեցի շատ հայերի դռները: Այդ մարդկանցից ոչ մեկը նախապես ինձ հետ ծանոթ չէր: Առաջին անգամ, մի քուրճ հետաքրքրվելով նրանց անցյալով, ցանկանում էր կենդանացնել փակի տակ գտնվող, մոռացության մատնված նրանց էհիշողությունները»: Այս մարդիկ վստահելով ինձ, բացեցին ոչ միայն իրենց դռները, այլև իրենց սրբտերթն ու զգացմունքները, ինքնություններն ու մտածմունքները...»

ՔԵՄԱԼ ՅԱԼՉԸՆ

Հայոց ցեղասպանության ականատես-վկա վերապրողների եղևոնային հուշերը գրի առնելու և հրատարակելու գործում, զգալի աշխատանք է կատարված Հայաստանի և Աֆյուռքի պատմաբանների, բանասերների և ընդհանրապես առանձին հայ մտավորականների կողմից:

Այնուհանդերձ, այս ստապրեզում խիստ կարևոր ներդրում ունի բանասիրության գիտ. Դոկտոր Վերժինե Սըվազյանը: Դեռևս 1950-ական թվականներից սկսած, նա

գրադվել է Հայաստանում և Աֆյուռքում հրաշքով փրկված վերապրողների ողբերգական կյանքի դրվագները հավաքելու և հրատարակելու ազգանվեր գործով:

Ականատես վերապրողների հուշերը հավաստի սկզբնապրյուր են և անսակարկ վավերականությամբ հաստատում են 20-րդ դարի սկզբում Հայ ժողովրդի նկատմամբ կատարված ահավոր ցեղասպանությունը:

Անցել է 88 տարի և հրաշքով ազատված վերապրողները այսօր համարյա թե հեռացել են այս աշխարհից, բայց շատերի եղևոնային հուշերն ու փառք երգերը փոխանցվել են իրենց ժառանգներին: Այնպես որ՝ այդ հուշերի հավաքման ու հրատարակման գործը դեռևս շարունակվում է նաև մեր օրերում:

Այդ խիստ գնահատելի գործով զբաղվել է նաև մի ազնիվ և արդարամիտ թուրք ուսուցիչ, արձակագիր և հրապարակախոս՝ Քեմալ Յալչընը:

Մարդասիրական և առաջադիմական վեհ գաղափարներով օժտված այս թուրքը, 1980 թ. արտագաղթել է Թուրքիայից և մշտական բնակություն հաստատել Գերմանիայում:

Թուրքիայում մահմեդականացված և թուրքացած Հայ վերապրողների ողբերգական ճակատագրով զբաղվելու զրդասպատեառը բացահայտվում է «Միրոս հրձվում է քեզանով» խորագիրը կրող թուրքերեն հրատարակված նրա գրքի բովանդակությունից, որի համառոտ պատմությունը կայանում է հետևյալում: Նշենք, որ գիրքը հիմնված է իրական կյանքի վրա: Գրքի գլխավոր հերոսուհու՝ Մելինեի հետ հեղինակը ծանոթանում է 1992 թ. հոկտեմբերին, Գերմանիայի Դորթմունդ քաղաքում: Քեմալ Յալչընը, որպես թուրքերեն լեզվի ուսուցիչ, մասնակցում է Գերմանիայի Հյուսիսային Հոնոտ-Վեսթֆալիա նահանգի Մշակութային նախարարության կողմից կազմակերպված միջնակարգ գալրոցների թուրքերեն լեզվի ուսուցիչների վերապատ-

բաստման դասընթացներին:

Պարզվում է, որ այս դասընթացների գլխավոր դասախոսը՝ Ստամբուլից սրտազատված և Գերմանիայում հաստատված՝ Մելինեն անունով մի հայուհի է: Տվյալ ժամանակ, Մելինեն, որպես անգլերենի և թուրքերենի ուսուցչուհի, աշխատում էր Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքի քոլեջում:

Թուրքիայի պատմության, մշակույթին, լեզվին, գիր ու գրականության քաջատեղյակ այս հայուհին խորը ազդեցություն է թողնում վերապատրաստման դասընթացներին մասնակցող թուրք ուսուցիչների, հատկապես վերոհիշյալ գրքի հեղինակ՝ Քեմալ Յալչընի վրա:

Դասընթացների ավարտից հետո, մարդկային փոխադարձ հարգանքի հիման վրա, բարեկամական ջերմ հարաբերություններ են հաստատվում Քեմալի և Մելինեի միջև:

Այս ընթացքում, Քեմալի հետ հանդիպումների ժամանակ, Մելինեն պատմում է իր անցյալի դառը և ցտխայի մանկության պատմությունը: Այսպես-

«Մայրս ծնվել է 1902 թ. Սկասում (Սերաստիա) Անունը եղել է Վարդանուշ: «Մաղիկ»ը (գիւլ), հայերեն նշանակում է վարդ: Վարդանուշը հայերեն հաճախակի գործածվող անուն է, ունի «քաղցր ծաղիկ» իմաստը: Բայց այդ անունը բոլորովին չի համընկել մորս կյանքի ելևէջներին: Քաղցր ծաղիկների փոխարեն, նրա դարունն ու ամառը լի են եղել հազար ու մեկ տառապանքներով, վշտերով և սարսափներով...» (էջ 159):

«14 տարեկան հասակում մայրս ամուսնացել է Սկասում: Ունեցել եմ մի քույր և մի եղբայր: Եղբորս աշխարհ գալու գիշերը, մորս սուաջին ամուսնուն տարել են: Գնացել է, և այլեւս չի վերադարձել: 18 տարեկան մայրս, իր երկու զավակներով մնացել է որբևայրի—

...Մորս փրկել է Միս Կրաֆթ անունով մեկը:

Ահա, այսպես, Քեմալ Մեր աշխարհը լցված է ցավե-

րով, այն էլ՝ շատ դաժան ցավերով: Մեր արևի ճառագայթները պարուրված են ցավերով: Առաջին անգամ է, որ քեզ հետ խոսում եմ այս մասին: Մի շարք հրդեհների մասին ես էլ եմ մոռացել, բայց վերհիշելն անգամ խորը ցավ է պատճառում մարդուն» (էջ 155):

Այնուհետև Վարդանուշի ընտանիքը տեղափոխվում է Ստամբուլ, ուր ապրում է ծայր աստիճան թշվառության մեջ և 12 տարի անց, նրա երկրորդ ամուսնությունից, 1938 թ. ծնվում է Մելիսենն (Մելիսեն է եղել իր մահացած քրոջ անունը. Ա.Փ.):

Միջնակարգ կրթությունը գերազանց գնահատականերով ավարտելուց հետո, 1960 թ. ընդունվում է Ստամբուլի Համալսարանի անգլիերեն բանասիրական բաժինը և նույնպես գերազանց ավարտում այն:

Համալսարանի Հասարակագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Ճահիթ Թանիրը ցանկություն է հայտնում, որ Մելիսենն մեա Համալսարանում և աշխատի որպես իր տեղակալը: Դիմումը ձեկակերպելուց հետո անցնում են երկարատև ամիսներ և վերջում Ռեկտորատից ստացվում է հետևյալ պատասխանը.

«Որևէ հայի շենք կարող ընդունել հասարակագիտության ամբիոնում»:

«Այս պատճառաբանությունը խորապես ցնցեց ինձ: Ես կարծում էի, որ Համալսարանը դիտական պատշաճ մակարդակ ունի: Միայն վե եմ: Իրականությունը, ճշմարտությունը այլ է եղել: Ուրեմն, ծնված-մեծացած իմ երկրում, իմ հայրենիքում հայ լինելը հանցանք է» (էջ 218):

Այս տխուր դեպքից հետո, Մելիսենն սկսում է խորացնել իր գիտելիքները իր հորազատների և ընդհանրապես հայ ժողովրդի մասին, որպեսզի իմանա, թե ո՞վ է ինքը և ինչո՞ւ համար հայ լինելը հանցանք է: Կարճ ժամանակ անց, ամուսնանում է Հանրայայտ հասարակական-քաղաքական գործիչ, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ՝



Գեղամ Իչկոյի Հետ և որոշ ժամանակ Հետո, միասեղ արտագաղթում են Գերմանիա:

Պարզվում է, որ Ստամբուլում, միևնույն խտրականության է ենթարկվել նաև Մելիենեի ամուսինը:

«Ամբիոնի վարիչի օգնական դատնաչու իմ իրավունքը, Հայ լինելուս համար մերժեցին: Գեղամը, ձախակողմյան եւ Հայ լինելու պատճառարանությամբ, նույնպես մերժվեց Խսկյուտարի Ս. Խաչ Դպրեվանքի Հայկական քոլեջում անօրենի պաշտոնին նշանակվելու իրավունքից: Այս ի՞նչ բան է: Չէ՞ որ Թուրքիան դեպի դեմոկրատիա էր գնում: Չէ՞ որ ազգային փոքրամասնություններին, Հայերին, այլևս առավել ազատություն պիտի տրվեր և առավել մարդավայել պիտի ապրեինք: Շատ գնացիմք, էիչ գնացիմք, սաբ ու ձոբ ուղիղ գնացիմք: Մեկ էլ ետ դարձանք նաև գնացիմք, որ մի գարու հասակի չափ նամփա եմք կտրելի» (ընդգծումը մերն է՝ Ա.Փ.): Թուրքական հեքիաթներում գործածվող ասացվածք է, բնագրում այսպես է. «Az gittik, uz gittik, dere tepe döz gittik. Dönüp baktik ki, bir arpa boyu yol gitmisiz» (էջ 225):

Հակառակ սկզբնական շրջանում կրած դժգոհություններին, ի վերջո նրանց գիտելիքները գնահատվում են Գերմանիայում, և երկուսով անցնում են դիտա-դատարանական բարձր պաշտոններին:

Ահա և գալիս է այն օրը, երբ Քեմալը երկար ընդհատումից Հետո, ցանկանում է ամառային արձակուրդով մեկնել Հայրենիք, լինել իր ծննդավայրում, տեսնել իր հարազատներին, ընկերներին և ծանոթներին:

Բնականաբար Մելիենեն նախապես տեղյակ էր այս համփոքրության մասին և Քեմալին տվել էր հետևյալ Հանձնարարությունը.

«Ասածս լավ լսիր. առաջին հերթին, այս ամառվա արձակուրդին գնալու ես Թուրքիա: «Ավանդադրված օժիտ»ի (նկատի ունի Քեմալ Թալլընի Հույն-թուրքական հարա-

բերությունների ցավոտ կողմերին վերաբերող գիրքը, Ա.Փ.) դործող անձանց որոնելու ընթացքում, Ամասիայի և Էրպաայի շրջաններում կփնտրես Թուրքիա հետ ամուսնացած և մահմեդական դարձած հայ տարեց կանանց և կը գրուցես նրանց հետ: Այնուհետև կը գնաս Էրզրում, Աշքալե: Այնտեղից կը մեկնես Կարս, որպեսզի տեսնես Անին. Կարսից հետո՝ դեպի Վան: Վանա ընում նավով կայցելես Ախթամարի կղզին: Այնտեղից կը վերադառնաս Ստամբուլ. Հարցուր և հետաքրքրվիր: Աշխատիր գտնել տարեց հայերին և մանրակրկիտ զրուցել նրանց հետ... Վերադառնալուց հետո, մենք մեր զրույցը կը շարունակենք միասեղ: Այս է իմ պայմանը. Գիտեմ որ այս դործը ծանր է և դժվար: Այս բոլորը կտեսնես և հետո կհասկանաս ինձ» (էջ 36):

Կարճ ասած, Քեմալը մեկնում է Թուրքիա եւ հետապնդման բոլոր վտանգներն էլ աչքի առաջ ունենալով, կատարում է Մելիների ցանկությունը:

Գրքում բերված են այդ ճամփորդության մանրամասնությունները, հատկապես՝ Թուրքիայում բնակվող մահմեդականացած, թուրքացած, քրդացած հայերի եղևնային հուշերը, որոնց հետ Քեմալը անձամբ հանդիպել է, զրուցել, ձայնագրել և նկարել:

Եվ այդպես, Քեմալը խորը նվիրումով կատարում է Մելիների խիստ կարևոր հանձնարարությունը և թեթևացած սրտով վերադառնում Գերմանիա:

«Մարդ լինելով հանդերձ, շատ թերություններ ունեմ, — խոսքն ուղղելով Մելիներին, գրել է Քեմալը, — սակայն քեզ հետ եթե չծանոթանայի, իմ մարդկությունը թերի պիտի մնար: Ես քո միջոցով սկսեցի ճանաչել հայերին: Քեզ սիրելով, սկսեցի սիրել ամբողջ հայությանը: Ուղեղիս մեջ խցկված արդելքները, դատապարտումները, տարուները ըսկըսեցի հասկանալ քո հանդեպ ունեցած սիրտ ազդեցության տակ: Եվ միայն քո գոյությամբ է, որ ես սկսեցի հասկանալ

ինքս ինձ...» (էջ 158).

Եվ վերջապես գիրքը ավարտում է Մելինենին ուղղված հետևյալ սրտաուռ խոսքերով.

«Մելինե՛, դու իմ գոյության, իմ հողի անքակտելի բարիքն ես:

— Բարեկամութունն ու եղբայրութունը ստեղծվում է քեզանով:

— Եղար մեր ուսուցիչը:

— Մեզ գիտելիքներ սովոր՝ լեզուների, մարդու, մարդու ծագման և մարդկայնության մասին:

— Իմ մաքովս էլ չանցավ հարցնելու քո լեզվի և քո ինքնության մասին:

— Լավ է, որ սիրել եմ քեզ:

— Սիրեցի քեզ և աշխարհս փոխվեց:

— Քեզ հասկանալով, սկսեցի հասկանալ նաև ինքս ինձ:

— Քեզ եմ նվիրում այս գիրքը:

— Սիրտս հրճվում է քեզանով» (էջ 419):

\*  
\* \* \*

Քեմալ Յալչընի այս գիրքը, որը հիմնականում վերաբերում է մահմեդականացված հայ վերապրողների և նրանց ժառանգների հուշերի հավաքման և հրատարակման խիստ կարևոր գործին, առաջինն է թուրքական պատմագրության մեջ:

Հայոց ցեղասպանության իրականությանը անսեղյակ այսօրվա թուրք սերունդը, կարդալով Քեմալ Յալչընի փաստագրական նյութերի վրա հիմնված այս հատորը, լիովին գաղափար կկազմի 1915 թ. արևմտահայության հետ տեղի ունեցած ահալոր ողբերգության մասին և ընդհանրապես հայ ժողովրդի և նրա մշակույթի նկատմամբ գործադրված հետագա բռնություններին և խաղաղանու-

Թյան քաղաքականությանը:

Բերված փաստերն ու եզրակացությունները կարևոր ներդրում կունենան նաև Հայոց Մեծ Եղեռնի միջազգային շափանիչով ճանաչելու գործընթացին: Անկասկած այն անհապաղ պետք է, որ ամբողջությամբ թարգմանվի հայերեն և օտար լեզուներով ևս:

Բարձր գնահատելով կատարված ճշմարտապատում այս աշխատանքը, ի սրան շնորհավորում եմ հեղինակին, բարեմաղթելով ստեղծագործական նորանոր հաջողություններ այս սապարեզում:

Ատորև Գեմալ Յալչընի գրքից թարգմանաբար բերում եմ մահամեղականացած հայ վերապրողների հուշերից քաղված առանձին հատվածներ:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՅԻՆ ԳՅՈՒՆԵՐ՝

(Մանկական անունը՝ Զարուհի, Ամասիայի շրջանի Նասսըբալ գյուղից):

Մորս անունը եղել է Զեյթինեա, իսկ հորս՝ Նշան:

Նախքան 1915 թվականի տեղահանությունը, պապա (մորս հայրը), վարպետ արհեստավոր է եղել: Սկսել է կառուցել, ինչ-որ մի գործարան Գերմանիայից եկել է Քոփտոկ անունով մի ճարտարապետ: Այս գերմանացի ճարտարապետի հետ շատ մտերիմ հարաբերությունների մեջ լինելով, սկսել են միասեղ կառուցել գործարանը:

Գերմանացի ճարտարապետը միայն մեկ զափակ է ունեցել, իսկ մերոնք՝ 6 աղջիկներ: Մի օր, Քոփտոկը սակ է՝ «Ա՛յ ընկեր, տե՛ս, ես մեկ որդի ունեմ, իսկ դու՝ 6 աղջիկ: Արի՛ այդ աղջիկներից մեկին [Զեյթինեային] ինձ տուր, որպեսզի գրանցեմ իմ վրա: Թող նա կրկին քո հովանավորություն և հրամանի սակ գտնվի, բայց այդ գրանցման

մասին թող իմանան բոլորը:

Մորս [Զեյթիմեայի] հայրը, որպէս զավակացու, իր աղ-  
ջըկան տալիս է գերմանացի ճարտարագետին: Այս գեր-  
մանացին շատ հարուստ մարդ է եղել: Մորս ապրած տունը  
Քոփստոկի տան մտներն է եղել: Դրանից հետո, մայրս մեծ  
մասամբ ապրել է գերմանացու տանը:

Նախքան տեղահանութիւնը, Ամասիայում շատ հայեր  
են ապրել: Տեղահանութեան ընթացքում, բոլոր հայերին  
հավաքել տարել են... Մորս հայրիկին, մայրիկին, եղբայր-  
ներին, տեղահանելով, բոլորին աքսորել են: Մայրս գերմա-  
նացու վրա գրանցված լինելու պատճառով, ոչ հարցրել են,  
ոչ էլ փնտրել: Գնացողները այլևս ետ չեն վերադարձնել:  
Մայրս չի իմացել և նույնիսկ չի կարողացել հարցնել թե՛  
ուր են տարել: Իր հոր և մոր մասին այլևս ոչ մի լուր չի  
ստացել: (էջ 71):

### ՄԵՐԶԻՖՈՆՏԻ ՎԱՀՐԱՄ ԿԱՐԱՊԵՆԴ

Ես, Վահրամ Կարապենդս, 93 տարեկան եմ, բայց  
ծննդյան թվականս ստույգ չեմ հիշում: Մնվել եմ 1905 թ.  
Մերզիֆոնում: Մնվել եւ հասակ եմ առել Մերզիֆոնում:  
Հայրս եւ մայրս Մերզիֆոնցի են եղել:

Տեղահանութեան ընթացքում 10 տարեկան էի: Շատ  
լավ եմ հիշում տեղահանութիւնը: Այդ արհավիրքի օրերը  
այսօր էլ աչքիս առաջ են: Այսօր էլ դեռ ականջիս հնչում  
է մարդկանց աղմուկը, լացն ու կոծը:

Նախապէս տնից-տուն դնալով սկսեցին հավաքել հայ  
երեւելի մարդկանց, բոլոր երիտասարդներին: Առաջին  
հերթին մեջակողից վերացան փաստաբանները, առեւարա-  
կանները... Խելքը գլխին՝ բոլոր մարդիկ: Հայտարարեցին,  
որ «մահմեդականութեան ընդունողը պիտի մնա»: Որոշ  
մարդիկ մահմեդական դառնալով մնացին: Մնացին նաև  
անհրաժեշտ արհեստավորներն ու վարպետները: Հորս կող-  
մը 5 եղբայրներ էին: 6 տղամարդկանց տարան մեկ տնից:

Այդ թվում՝ պապիկիս, հորս եւ եղբայրներին: Գուում-դո-  
չյունով խլեցին և քշեցին տարան: Դեպի ո՞ւր, ինչո՞ւ հա-  
մար, չգիտենք: Գնացողներից ոչ մեկը ետ չվերադարձավ:

Հորս տանելու ժամանակ, ժայրս 25 տարեկան էր:  
Մնաց որբեայրի:

Այնուհետև քշեցին տարան նաեւ կանանց, աղ-  
ջիկներին, հարսերին, որբեայրիներին: Ճանապարհին իրենց  
հաժանած կանանց, աղջիկներին, հարսերին, խլել տարել են:  
Տղամարդկանց սպանել են: Երեխաները մնացել են անտեր-  
անտիրական: Այս անտեր մնացած երեխաների մեջից, հա-  
րուստներն ու երեխա չունեցող ընտանիքները ընարել վեր-  
ցրել են իրենց հաժանածներին ու մեծացրել:

Ծնորհիվ տատիկիս, ես չտարազրվեցի, հաժատքնիս  
փոխելով մնացինք: Հայրս, պապս, եղբայրները, հորեղբայր-  
ները չուզեցին կրոնափոխվել: Ասացին. «կմեռնենք, բայց  
մեր հաժատքը չենք փոխի»:

Տեղահանությունից առաջ, Մերգլիֆոնում 300 հայ ըն-  
տանիք էր բնակվում: Եթէ յուրաքանչյուր ընտանիքը 5  
հուռուց հաշվենք, կստացվի 1,500... Օրը ցերեկով հայերին  
տարան սպանելու, բայց ոչ մեկը չկարողացավ օգնել նը-  
րանց: (էջ 129-132):

## ԳՐԻԳՈՐ ՃԵՅՀԱՆ

(Ձարտ քաղաքից)

Օրիորդ կրաֆթը, ամերիկացի միախոնկերուհի է կղեր:  
1915-1916 թթ. հայերի կոտորածների ընթացքում, նա աշ-  
խատել է Սերաստիայի ամերիկյան Գոլեջում: Հայերի այս  
ողբերգության ընթացքում, դեպի Տեր-Ջոր, Սիրիայի անա-  
պատները, հայերին աքսորելու ընթացքում, հարյուրավոր ե-  
րեխաներ մնացել են ճանապարհներին, լեռներում, անտեր-  
անտիրական, անոթի-ծարավ, կստարյալ թշուառության  
մեջ:

Աքսորի սարսափը մի քիչ փարատվելուց հետո, Ամե-

րիկայի «Կարմիր կաշ» կազմակերպութիւնը օգնութեան հանձնախմբեր է ուղարկել Անատոլիա: Այս օգնութեան հանձնախմբերը ճանապարհներին, կիրճերում, դշուղերում, քուրդ և թուրք ընտանիքների մօտ խցկված երեխաների մի մասին ձրի, մի մասին էլ ոսկեդրամով դնելով, հավաքել բերել են Սերաստիայի Ամերիկյան Քօլեջ:

Հավաքված երեխաները, աղջիկները, որբուհայրի կանայք, ինչպէս նաև կենդանի մնացած տղամարդիկ, որոշ ժամանակ այստեղ պատասխարկելուց հետո, մեկնել են Կ. Պոլիս և Սալոնիկ, այնտեղից էլ ցրվել աշխարհի շորս կողմերը: Սալոնիկից մեկնած հայերի թիվը ավելի շատ է եղել:

Ամերիկյան Քօլեջի միջոցով կատարվող այս մարդասիրական օգնութիւնը ղեկավարել է Միս Կրաֆթը:

\* \* \*

—Օրը ցերեկով անիրաւութիւններ էին կատարվում: 1934 թ. հայերի համար արգելվեց հայկական մականունների օգտագործումը: Չգիտեմ՝ Ստամբուլում ինչպէս եղավ, բայց մեզ մօտ հայերի մականունները թուրքացվեցին: Մեր մականունը Ծիհանյան էր, դարձաւ Ծեյհան: Ես այդ ժամանակ 8 տարեկան էի:

Չարայում գտնվող հանրահայտ հայկական եկեղեցին, օրը ցերեկով փչեցին:

Այն կամարները, սյուները և պատերը, որոնք չկարողացան ծանր մուրճերով և կացիններով փլել, պայթեցրին:

Սերաստիայում գտնվող հանրահայտ եկեղեցին օգտագործվում էր, որպէս զինվորական ռազմապաշարի պահեստ: 1940-ական թվականներին, Ռահմի Գյուլնայ անունով քաղաքազլխի օրոք, մի դիչերվա ընթացքում ջարդ ու փուշուր արեցին:

Անատոլիայի մի շարք քաղաքներում մնացած եկեղեցիները թողեցին բնութեան արհավիրքներին: Վերանորո-

գումը արգելվեց Առ այսօր, քանի՞ եկեղեցի է մնացել Անաստոլիայում, չգիտեմ:

Հային սպաննեցիր, հայերին քչեցիր, եկեղեցին ինչո՞ւ համար ես փյուս: Ո՞րն է համայնք չունեցող եկեղեցու հանցանքը: Միթե՞ այդ եկեղեցիները Անաստոլիայի հարստությունը չէին:

Արդ յո՞ք պետությունը մտահոգության մեջ է: «Անաստոլիայում, հայ չկա», «Անաստոլիայում հայ չի եղել», արդ-յո՞ք այս է ուզում տեսի:

Միթե՞ հնարավոր է արևը ծածկել ցեխով: «Հայ չկա» ասելով, միթե՞ կարող ես հային հայոց պատմությունը և կատարված հանցագործությունը կոծկել:

## ԶԱՔԱՐՅԱ

(Հորս պատմածները)

Հորս անունը Հովսեփ էր, Յողզաթի Քարահալլը գյուղից: Հայրս, նրա եղբայրները՝ Յակուբը, Հակոբը, Պողոսը, Չաքարյան և Կյուլպոն, Չաքարյա անունով պապիս որդիքն են եղել: Ինձ կնքել են պապիս անունով: Հիշում եմ, որ հայրս երբեմն հերթով կը շարեր մօտ 32 ազգականների անունները՝ Արտաշ, Թերհան, Չարդար, Պեսլոս, Քատեմ, Հաջի էմմի, Արթին, Օհաննես, Մկրտիչ, Լուսին: Արհավիրքի օրերին, աչքերնին բաց գնացած իմ այս հարազատների, ազգականների անունների շարքը երկար էր ու երկար: Մեր սերնդից ոչ ոք կենդանի չէր մնացել ինչպես վերը նշեցի, էքրեք գյուղից ոչ ոք օքսորի չէր գնացել: Տեղահանության շեն ենթարկվել: «Ավելի հեշտ ձևով», «կաբուկ» միջոցներով բուրդին ոչնչացրել են տեղում:

Մեծ մայրս ջղայնաձու գեպքում կասեր.

«Դու երբևէ տեսել ես, թէ փոքրիկ մանկիկը կտորկտոր եղած իր մոր ծիծը ծծելու համար, ինչպես էր պայքարում: Ես այդ տեսել եմ»:



Մահից ազատված մանուկները, երեխաները մնացել են անտեր-անախրակա՛ն: Անատոլիայի տարբեր վայրերից, ինչպե՛ս նաև Կեսարիայի շրջաններից, ամերիկացիները այս անտեր երեխաներին հավաքել են ամերիկյան քոլեջներում և «Կարմիր Խաչ»-ի կենտրոններում: Հետագայում, նրանց նազերով փոխադրել են Ամերիկա:

Հայրս ունեցել է 7 եղբայրներ: Այս 7 եղբայրներից, հորից և մորից, հորեղբայրներից եւ մորեղբայրներից միմիայն ինքն է ողջ մնացել: Ամերիկացիները գտել են իրեն և տարել Կեսարիայի «Թալաս» Ամերիկյան Քոլեջը... (էջ 246...):

### ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԵՏԸ

(Պատմում է Քարամանցի Սարգիս վարպետը)

Հազարավոր մարդիկ տեղահանվեցին և աքսորվեցին... դեպի ո՛ւր, ոչ ոք չգիտի. գնում են, բայց վերադարձող չկա: Շատերը ստում են, որ տանում են դեպի Սիրիայի անապատները: մյուսները՝ դեպի Տեր-Ջոր, ոմանք՝ Հալեբ, Մեսքենե, Ռաբբա...:

Գնում են Հեսիտան, Ժանդարմների հսկողության տակ Գիշերները վրան են խփել տալիս այնտեղ, ուր վխտում են օձերը, կարիճները և այլ թունավոր կենդանիներ: Ամեն օր փոխել են տալիս դիշերելու վայրը... կանգառ չկա: Ամենուրեք սով, թշվառություն, հիվանդություն, հարձակում, կողոպուտ, կանանց առևանգում, դաժանություն: Օր օրի վրա վիճակները առավելի վատթարանում են: Օրերից մի օր, ծնողիս երկու աղջիկ զապակներից մեկը ճանապարհին մահանում է: Ճանապարհի եզրին թաղելով, շարունակում են իրենց ճամփան... Մայրս եղել է հղի: Մնվող երեխան մոր փորում չի մնա: Մի վայրում, գիշերելու ընթացքում, առավոտվա կողմ, ցավերի մեջ մայրս ծնում է մի առու գավակ—

Առաջնութեան եղած կամ չեղած, ժանդարմները գալիս են.  
— Վեր կացե՛ք, քանդե՛ք վրանները

Հայրս խնդրում-պաղատում է:

— Ժանդարմա՛, զինվոր, կեցե՛ք: Քիչ առաջ կլինս մի  
երեխա ծնեց, թույլ տվեք—

— Տո՛, էշի ձագ, տո՛ անհավատ, մենք ուզում ենք ձեր  
արմատը չորացնել, իսկ դուք դեռ երեխա՞ եք աշխարհ բե-  
րում: Մենք ուզում ենք ձեր բուրբին բնաջնջել, իսկ դուք  
դեռ ուզում եք բազմանա՞լ խփում են հորս գլխին մարա-  
կով:

Հայրս մտնում է վրան, եւ գլխնուով մորս, — «Արուս-  
յակ, կներեա, վեր կաց, դնում ենք— Մնեմք երեխան իմ մեծ  
եղբայրս, մեկ օր հետո, դեռ աչքը չբացած մահանում է:

Օր-օրի վրա տեղահանութեան և արտոյի պայմանները  
առավելի վատթարանում են: Ողջները սկսել են մարդկանց  
արյունը ծծել: Սովը, հոգնութունը, կեղտոտութունը, վա-  
րակիչ տիֆը, համատարած բնաջնջում է մարդկանց—

## ԶՊԻՏԻ ԹՈՂՆԵՒՆՔ, ՈՐ ՏԵՐ-ՀՈՐԸ ԾԵՄԵՐ

Շատ խոսեցի, բայց լավ եղավ: Մահվան մասին չեմ  
մտածում, բայց այնքան էլ հեռու չէ... 83 տարեկան եմ:  
Այսքան դեպքերից հետո, եթե ինձ հարցնեն, — «Ի՞նչ կասեա  
թուրքերի, քրդերի, հայերի մասին», ես կպատմեմ հորս ինձ  
ավանդած հետևյալ հեքիաթը:

Այս էլ թող լինի իմ վերջին խոսքը:

Այս հեքիաթը հայրս կպատմեր այդ ժամանակվա  
դեպքերի համար, սակայն կարծում եմ, որ այն արդիական  
է այս օրերի համար էլ:

— Ամռան օրերին, Այնթապի շրջաններում մի հայ  
քահանա, մի քուրդ եւ մի թուրք հեախտան ճամբորդու-  
թյուն են կատարում: Մարավում են, ջուր չկա: Շոգից,  
ծարավից, նրանց լեզուները կպել են քիմքերին: Այդինները

հասունացման էլ ճիշտ ժամանակն է եղել:

— Այս ի՞նչ բան է, ծարավից պիտի մեռնենք: Եկե՛ք մտնենք այս այգիներից մեկը, մի երկու ողկույզ խաղող քաղենք և ուտենք, ասում են իրար մեջ:

Ձայն են տվել, բայց պահակ-մահակ չի երևացել:

Երեքով մանում են պահակ չեղած մի այգի՝ Երկու ողկույզ խաղող են պոկում և սկսում են ուտել: Ծիչոյ այգ պահին հայանվում է այդու տերը:

— Բարև ձեզ:

— Բարև:

— Կներես, ձայն տվինք, պոռայինք, կանչեցինք, բայց ոչ ոք չկար: Ծատ էինք ծարավել, դրա համար էլ մտանք այգի՝ Պարսքերնիս ինչ որ է կտանք, ասում է թուրքը:

Այդու թուրք տերը սրանց ներքևից-վեր չափում է: Հայ քահանային, քրդին և թուրքին, իրենց խոսքերից և արտաքինից հանաչում է: Իր զայրույթը չկարողանալով զսպել, ուզում է հարձակվել, սակայն դիմացը Յ հոգի տեսնելով, աչքը չի կտրում:

Խոսքն ուղղելով Տեր Հոր վրա, ասում է:

— Ինձ նայի, եթե սա կերամ, թուրք է: Թող անուշ լինի՛ Մեր միջև խճ-քոնը չկա: Թող հալալ լինի՛ Մա էլ քուրդ է, լեզուն տարբեր է, բայց պատկանում ենք նույն կրոնին: Թող որ նրան էլ հալալ լինի: Տո՛ անհավատի գավակ, դուն ինչո՞ւ մտար անտեր այս այգին: Ինչո՞ւ կերար իմ խաղողը?»

Այս խոսքերը դուր են գալիս քրդին էլ, թուրքին էլ: Ասում են՝ «Լավ պրծանք»:

Այդու տերը հարձակվում է հայու վրա և մի լավ դաս տալիս: Մեծելով-ձեծելով Տեր Հորը փռում է գետին:

Այնուհետև դառնում է քրդի վրա:

— Տո՛ կըրո, սո՛ պոչավոր քուրդ, այդ երբվանից է, որ դու սկսար անտեր թուրքի այգին մտնել և խաղող ուտել:

Այս խոսքն էլ դուր է գալիս թուրքին: Տեսնելով քրդի

կերած ծեծը, «կեցիր, մի՛ խփիր, մի՛ արա, մեղք է ասելու փոխարեն, այգու տիրոջ ամեն մի հարվածի հետ, կրկնում է՝ «Դե՛ առ, դե՛ առ»:

Այգու տերը ծեծելով-ծեծելով քրդին էլ փռում է հայի կողքին:

Հերթը գալիս է թուրքին:

— Տո՛, քեզ հետ միեւնույն լեզուն և միեւնույն կրտսն ունենք: Դուն ինչո՞ւ համար թողեցիր, որ հայն ու քուրդը մտնեն անտեր մի թուրքի այգին:

Այգու տերը վրա է տալիս թուրքի վրա և շուր ու մուր տալով, քիթ-րեբանը խառնում է իրար: Եվ նրան էլ փռում է քրդի կողքին:

Այնուհետև, այգու տերը հերոսաբար հոխորտում է՝

— Ապա ձեզ տեսնեմ, մեկ էլ փորձեք անտեր այգի մտնել և խաղող ուտեր:

Այս լսելով, թուրքը դառնում է քրդի ականջին և փախում:

— Չպիտի թողնեիրք, որ Տեր Հորը ծեծեր: (էջ 333-335):

### ՔԱՀԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՋԻ ԻՐԲԱՀԻՄԸ

— Ես էլ չհասկացա թե ո՞վ եմ ես

Մայրենի լեզուս քրդերեն է: Ես ինձ քուրդ եմ համարում: Մազումս հայ է: Հայրս եւ մայրս զտարչուն հայեր էին: Ես հասակ առա մի քրդական դյուղում: Հայերեն ոչ մի բառ չգիտեմ: Գերմանացիները ինձ հարցնում են՝ «Ինքնությունդ ի՞նչ է, ո՞ր ազգության ես պատկանում»:

— Թուրքիայից եկա: Մայրենի լեզուս քրդերեն է: Մազումս հայ, հափառքս՝ մահմեդական...

...Թուրքերն ու քրդերը մեզ «դէօնմէ» են ասում, բայց այս բառը երբեք չեմ հավանում: Ես հետազայում եմ մահմեդականացել: Մազումը հայ մեր նմաններին ավելի ճիշտ կլինի, եթե «զաղտնի հայ» անվանեն: Մենք մեզ տեսապես

հիշում ենք՝ «մերոնք» ասելով:

Անունս Հաջի Իբրահիմ են գրել: Ոչ ոք բացատրություն չի տվել իմ ինքնություն մասին: Մեր գյուղը, Քաշթալի ենթակայություն տակ գտնվող Թուքարիս անունով քրդական մի գյուղ էր: Մեծ գյուղ էր: Միմիայն երկու հայ ընտանիք կար: Մեկը՝ մերը, մյուսն էլ՝ կոչկակարի ընտանիքը:

Երբ որ իմացա, որ ծագումով հայ եմ, ակտեցի հորս շարժումին առելի ուշադրություն դարձնել: Յերեկները, ժամը 5-ի մոտերը, հայրս «նամազ» էր անում, իսկ գիշերները առանձնանալով իր սենյակը՝ աղոթում:

— Այ հայրիկ, գիշեր-ցերեկ «նամազ» ես անում, ինչ է քո տարտը: Իմ այս հարցումին չէր ջղայնանալ: Դեմքին մի տարօրինակ ժպիտով կը պատասխաներ. «Դուք չգիտեք»: (էջ 341-344):

## Դ. ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

# THE ARMENIAN GENOCIDE AND THE TRIAL OF THE YOUNG TURKS\*

84 years ago the first case of genocide in the 20-th century took place. On April 24, 1915 more than 600 Armenian intellectuals – doctors, poets, teachers, politicians and others – of the Armenian community in Constantinople were arrested, exiled and executed. This tragic event was only the beginning of a cruel policy of deportation and massacre of the Armenian nation in the Ottoman Empire.

The Armenian Genocide was accompanied by a massive program of deportation. The survivors of this horror were forced to march into Syrian deserts and during the march many of them lost their lives due to exhaustion, torture, starvation and disease.

In fact, the deportation was mostly the execution of Western Armenians. As the United States ambassador in Istanbul Henry Morgenthau confirmed; "The real purpose of the deportation was robbery and destruction; it really represented a new method of massacre. When the Turkish authorities gave the orders for these deportations, they were merely

---

*\*This paper delivered by the Author at the Occidental College (Eagle Rock, California), on April 21, 1999, on the occasion of the 84th anniversary of the Armenian Genocide.*

giving the death warrant to a whole race; they understood this well, and, in their conversations with me, they made no particular attempt to conceal the fact"<sup>1</sup>.

Mass deportations and massacres of Armenians from towns and villages in Western Armenia, as well as from localities with Armenian populations in Asia Minor had entirely nothing to do with measures being taken for military reasons, as the question of annihilating the Armenian people had been worked out and settled beforehand by the Central Committee of the "ITTIHAD ve TERAKKI" (Union and Progress) party. To solve the Armenian problem they had chosen the total extermination of Western Armenians. The war presented a suitable occasion for them to annihilate Armenians once and for all, as well as to settle accounts with other peoples so that the Empire became purely Turkish. Soon the news of mass deportation and atrocious massacres of Western Armenians spread all over the world, stirring up a violent wrath and protest everywhere.

I would like to bring some portions, from the articles of American newspapers, which were issued in 1915 during Armenian Genocide. Here is a portion from "THE INDEPENDENT", September 27, 1915. The title of the article is; "THE DEPOPULATION OF ARMENIA".

"The shocking news of the massacre, torture and deportation of Armenian Christians makes a special appeal to American sympathy and helpfulness. From numerous and reliable sources in Turkey it seems certain that this is not a matter of local disorders or petty oppression, but a systematic effort to extirpate the Armenian race. Thousands of families have been driven from their homes to starve upon the roads. Towns and villages have been divested of their inhabitants. Many are being put torture to force them to renounce their Christian faith. Women are interned in harems and children are sold as

slaves”.

Here is another portion from "THE MISSIONARY REVIEW OF THE WORLD", November, 1915. The title of the article is; "THE ASSASSINATION OF ARMENIA"; "The most brutal, the most ruthless, the most inexcusable, and the most widespread massacres of christians in the last thousand years are deluging Armenia with the blood of men, women, and children. Whole villages are wiped out by fire, sword, and deportation. It seems evident that this movement against the Armenians is part of a concerted scheme against all non-Turkish and christian inhabitants of Turkey..."

Representatives of progressive mankind and organizations condemned the policy of barbarous genocide carried out by the Young Turks and demanded putting an immediate end to it, to return the deported Armenians to their homes.

On May 24, 1915, the governments of Great Britain, France and Russia jointly warned the Sublime Porte that they regarded persecutions and massacre of Armenians in Turkey as an appalling action against humanity and civilization, and its perpetrators would be held strictly responsible. Unfortunately, this initiative likewise did not have any results. The Young Turk government continued widely and mercilessly to carry out its adopted policy, the victims of which became more than one a half million Armenians.

When World War I came to an end, broad masses of people all over the world demanded the Turkish criminals to bear responsibility for organizing the slaughter of Western Armenians. Outstanding political figures, men of science and cultural workers of different nationalities in condemning articles and publications, raised their voice of protest.

Yielding to this strong wave of protest and aspiring to detach itself from the discredited Young Turk government, the new cabinet formed just after the Moudros Armistice of 1918,



with the leadership of Ahmed Izzet Pasha, adopted a resolution to institute legal proceedings against the Young Turk government leaders, for drawing the Ottoman Empire into war and organizing the deportation and massacre of Armenians.

Subsequently, upon a decree of December 16, 1918, inquiry courts were formed, which began to collect accusatory evidences concerning the massacre of Western Armenians.

A number of Young Turk ministers and party leaders, district executive secretaries, governors and other officials were arrested. However, the immediate initiators and organizers of Armenian massacres had time to flee, taking refuge in Germany.

On March 8, 1919, a special edict of Sultan Mehmed VI Vahideddin, the Young Turk party leaders and ministers were submitted to investigation at the extraordinary court martial of Istanbul.

The trial of the Young Turk government leaders and members of the Central Committee of the Union and Progress Party began in Istanbul, on April 28, 1919 and went on until June 26.

Documents - cryptographed telegrams and letters brought in the accusatory act, testify that deportations and massacres of Western Armenians had not been military or disciplinary measures of limited and local character; They were aforethought and implemented absolutely on the initiative of the party Central Committee, on the instructions and secret orders of a special Center. In the bills of indictment and during investigatory sessions, the main stress was put upon the massacre of Western Armenians.

Lieutenant-General Vehip Pasha, the former commander of the Third Army at the Caucasian front, stated in his testimony at the trial that the question of exterminating Armenians and plundering their property was resolved by the Central

Committee of the Union and Progress party, and that Behaeddin Shakir was the organizer and leader of blood-thirsty bands, around the third Army, which executed the massacre of Western Armenians.

During the examination of the district executive secretaries, the main stress was likewise placed on the question of deportation and massacres. To alleviate their guilt, the executive secretary of Edirne and other defendants tried to find ways to justify themselves, that deportation was carried out according to the law and governmental orders. Mustafa Nazim pasha, the committee chairman of the court, refuting their false testimony, revealed that deportation was a mere pretext to execute the extermination of Armenians.

In the sentence passed on July 5, 1919, stress was put upon the details of massacres of Western Armenians and plunder of their property, facts were pointed out about violations of the constitution by the Young Turk party Central committee and government leaders.

One of the important pieces of evidence was the question of participation in World War I, without a Medjlis resolution, as well as abuses and speculation in trade and especially provisional matters.

According to the first point under item 45 of the civil criminal code, the court pronounced a death sentence for Talaat, Enver, Djemal, Nazim, Behaeddin Shakir. The others were condemned to exile for 10-15 years. During these trials 11 party figures and statesmen of high standing were accused by default, and twenty present at the proceedings.

The records and resolutions of the proceedings were issued in small circulation in the supplements of the Turkish official newspaper "TAKVIM -I VEKAI" (in arabic script).

Materials of the trial that are connected with the deportation and massacres of Western Armenians are fully translated

into Armenian and were published with commentaries and introduction by me in 1988 for the first time. (The book has been translated and published in the English and Arabic languages as well).

Trial materials give a definite view of the organization and execution of the deportation and massacres of Western Armenians. However, the process did not, in fact, solve and could not solve the retribution for the blood of one-and-a-half million martyred Armenians, and the recompensation of material losses of property abandoned which reached billions. The Armenian people were deprived of their homeland, Western Armenia.

Judges, of course not in all cases, demonstrated necessary consistency. Many of them, being connected with the Young Turks, were often inclined not to delve deep into the accomplished facts, and not to adopt strict restrictions. If there did not arise any doubt in condemning to death defendants brought to trial by default, unwarranted forbearance was shown in inflicting punishment upon those present. It must be noted that the policy of persecuting and annihilating the debris of Western Armenians, continued during the period of Kemalist nationalism, during 1919-1922.

Turkish armies organized new massacres in Western and Eastern Armenia, as well as in some parts of Turkey during which 250.000 Armenians martyred.

Naturally, after the end of the War, the trial of the Young Turk leaders was a great occurrence from the point of view of revealing the persecutions and genocide of Western Armenians for all mankind.

Unfortunately Turkey, after all these years refuses to acknowledge these terrible deeds. In our days, Turkish ruling circles and historians continue to persistently reject the genocide of Western Armenians, and on the whole, and aim at fal-

sifying the history of the Armenian people by various means and anti-academic publications.

All these arguments are profoundly wrong. In reality the whole world knew how the bloody sultan Abdul Hamid and his successors, the Young Turks, committed a policy of genocide to resolve the Armenian question, and how they took advantage of World War I as an opportunity to exterminate completely the Armenian population in the Ottoman Empire.

Today the Turkish government must condemn the Armenian genocide as the US House and many States requested, or as the Russian Duma, France, Belgian, Lebanese, Canadian, Greek and Uruguayan parliamentarists did by passing Armenian resolution.

It will be noted that nowadays the destruction of Armenian churches, monasteries, monuments, and cemeteries are part of a systematic Turkish cultural genocide, to eradicate the name of Armenia and Armenians from their native country.

We the descendants of survivors of the genocide are demanding to stop and save the architectural monuments from further destruction in Historic Armenia.

Besides, we will always struggle for justice and demand to compensate our confiscated lands and properties in Western Armenia.

## ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՎ ԹՈՒՐԻՔ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ\*

Առ այսօր, թուրքական պատմագրությունը, կառավարությունն ու պետական գործիչները պաշտոնապես հերքում և ուրանում են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները: Զարմանալի է, որ նրանք նույնիսկ անտեսում են իրենց նախորդների տվյալներն ու գնահատականները հայերի կոտորածների մասին:

Թուրքական աղբյուրների շարքում Հայերի Ֆեղասպանության վերաբերյալ կարևոր փաստագրական նյութեր կան հատկապես 1919-20 թթ. կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցության ղեկավար գործիչների և կառավարության անդամների դատավարության արձանագրություններում, որոնք լիովին հավաստի են և անվիճելի, քանի որ դրանք հիմնված են թուրքական վավերագրերի և ականատեսների վկայությունների վրա: Բոլոր փաստաթղթերի վավերականությունը հաստատված

\*2002 թ. մայիսի 4 և 5-ին, UCLA-ի համալսարանի Դիվանն դանիլիմում տեղի ունեցավ ՔՊատմական Հայաստանի Բաղաձեռնում ու մահանգները խորագրի տակ կազմակերպված միջազգային 10-րդ գիտաժողովը, որը մվիրած էր Սև Մով-Պոմոսո շրջանի հայկական գաղութների պատմությանը: Այս խորագրով զեկուցումը հեղինակը կարդացել է մայիսի 5-ին կայացած միսսի ընթացքում:

է թուրքական ռազմական ասյանի կողմից:

Այդ դատաքննությունների ընթացքում բերված բոլոր մեղադրական եզրակացություններում, ռազմական արտակարգ ասյանի հանձնաժողովները շեշտը դնում են արևմուտահայության կոտորածների և ունեցվածքի կողոպուտման մանրամասնությունների վրա: Լիովին բացահայտվում է, որ բռնի տեղահանությունն ու կոտորածները կանխամտածված բնույթ են ունեցել, կազմակերպվել են «Իթիֆհատ վե թե-րաքքի» (Միություն և առաջադիմություն) կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից և անմիջականորեն իրականացվել են «Թեշքիլաթ-ը մահաուսե»ի (Հատուկ կազմակերպության) արյունոտ ձեռքերով:

Հարկ է նշել, որ Կ. Պոլսի դատավարությունների նախօրյակին Օսմանյան կայսրության նահանգները բաժանվեցին 10 դատաքննչական շրջանների: Յուրաքանչյուր շրջանի համար նշանակվեցին դատախազներ, հարցաքննող դատավորներ և քարտուղարներ: Այդ 10 շրջանների մեջ էր մտնում նաև «Տրապիզոնի նահանգի և Սամսոնի դավառի հայություն տեղահանության և կոտորածի դատավարություններ, որը տեղի ունեցավ 1919 թ. Ապրիլ-Մայիս ամիսներին»:

Նախքան այս մասին մանրամասն կանգ առնելը ես բերելու եմ տվյալ ժամանակ Տրապիզոնում հանգրվանած Հյուպատոսների և այլ ականատեսների վկայություններից մի շարք քաղվածքներ, որպեսզի պատկերացումը լինի կատարյալ

Այսպես՝ տվյալ ժամանակ Տրապիզոնի ԱՄՆ-ի Հյուպատոս Օսկար Մ. Հեյզերը, 1915 թ. հունիս 28-ին Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին ուղղված զեկուցագրում հայտնել է հետևյալը.

«Պատիվ ունեմ որպես հաղորդադրություն ներփակ դեսպանատուն ուղարկելու Տրապիզոնի Հասարակական վաչրերում տեղական իշխանությունների կողմից փակցված Հայաստանի կուսակցություններից մի օրինակ, որտեղ հայտնվում է որ Տրապիզոնի ու շրջակայքի բոլոր հայերը՝ սղամարդիկ,

կանայք և երեխաները նշված տարեթվից 5 օրերի ընթացքում պարտավոր են կառավարութանը հանձնելու այն բոլոր իրերը, որոնք չեն կարող իրենց հետ վերցնել: Քանի որ Հինգշաբթի հուլիսի 1-ին տեղափոխվելու են երկրի խորքերը, հավանարար էլ Ճեդիրն կամ Մուսույ, որտեղ նրանք մնալու են մինչև պատերազմի ավարտը: Պատերազմից հետո իբր ավյալ իրերը վերադարձնելու են իրենց տերերին(?)<sup>1</sup>: Դժվար է հաղորդել, թե ինչպիսի հուսահատության և ահ ու սարսափի մատնեց հայերին այդ հայաստանի մյուս բովանդակությունը...»<sup>1</sup>:

Տրապիզոնի տեղահանության և կոտորածի փաստերը հաստատում է ավյալ ժամանակ Իտալիայի հյուպատոս Զաքարիո Գորինին, որն այդ ժամանակ նույնպես եղել է քաղաքում:

«Էլ Մեսաջերո» իտալական թերթի 1915 թ. օգոստոսի 25-ի համարում, նա հրապարակել է իր տեսածները: Ահա մի հատված այդ համարից.

«Հունիսի 24-ից սկսած իմ շրջանում գտնվող բոլոր հայերը ենթարկվեցին կալանքի: Այսինքն՝ բանությամբ տեղահանվեցին իրենց բնակավայրերից և ժանդարմաների հսկողության տակ քշվեցին անհայտ ուղղություններով, ավելի ճիշտ՝ Միջագետքի խորքերը: Իրականում այդ նշանակում էր, որ նրանցից 5-ից 4-ը չտեսնված դաժանությունների ուղեկցությամբ դատապարտված էր մահվան... Այն կատարյալ կոտորած և բնաջնջումն էր անմեղ մարդկանց, մի չլիք բան: Այն մի ազգության, քրիստոնեության, մարդկության ամենասուրբ իրավունքների ամենահավոր ոտնահարումն էր, անարգված սև էջը»<sup>2</sup>:

Կարճ ժամանակ անց, ոչ միայն Տրապիզոնում, այլև ամբողջ Օսմանյան կայսրութայնում հայերի նկատմամբ գործադրվող սարսափազդու դաժանությունները, ականատեսների և մամուլի ներկայացուցիչների միջոցներով տարածվեցին աշխարհով մեկ: Ամերիկյան ընթացիկ իրադարձութայններին անդրադարձող «The Outlook» (Տեսակետ) շաբաթաթերթը, 1915 թ. սեպտեմբերի 29-ի համար

րում «Թուրքական կոտորածները Հայաստանում» խորագրի տակ տեղեկացնում էր հետևյալը.

«ԱՄՆ-ում բրիտանական նախկին դեսպան Վիսքոնտ Բրայսը "Associated Press" ի միջոցով մի ազդեցիկ հայաստարարութուն կատարեց, որպեսզի Ամերիկան ջանք գործադրի կանգնեցնելու հայերի կոտորածները: Լորտ Բրայսը այն անձնավորութունը չէ, որ փաստերը չափազանցի և սխալ հայտարարութուն կատարի: Այլ վկայութուններով մեկտեղ, նա նշում է հետևյալը. «Տրապիզոն քաղաքում, ուր հայության թիվը անցնում է 10,000-ից, հրամաններ են եկել Կ. Պոլսից, որպեսզի ձերբակալվեն բոլորը: Զինվորական ջոկատները հալածելով բռնել են հայերին և քշել դեպի ծովեզերք: Այնտեղից նավերով տարել են ծովի խորքերը և չպրտել ջրի մեջ: Եւ այդպես խեղճամահ են արել բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաներին: Այս արարքը անձամբ տեսել և հայտնել է Իտալիայի հյուպատոսը»:

1914 թ. Թուրքիայում գերմանական զինվորական սուսքելության գերագույն հրամանատար մարշալ Լիման Ֆոն Սանդերսի անձնական թարգման Հայնրիխ Ֆիրբյուխերը իր «Հայաստան 1915» խորագրով գրքում հայտնում է.

«Տրապիզոնում դատարկեցին մոտ հազար հայկական տուն: Այնտեղ դիմում էին զանգվածային սպանության մի ձևի, որն օգտագործվել է Ֆրանսիական հեղափոխության ժամանակ և կոչվել «Ընկղմում»: Տղամարդկանց լցնում էին նավերը, որոնք բաց ծովն էին դուրս գալիս, մի քանի ժամ անց դատարկ վերադառնում: Նույն Տրապիզոնում երիտթուրքերի տեղական վարչության անդամները, գինարբուքների ժամանակ, զվարճանալու համար ընտրել են որբանոցների ամենագեղեցիկ աղջիկներին...»<sup>3</sup>:

Հայ ականավոր մտավորական, Հ.Հ.Դ-ի կուսակցության գործիչ՝ Վահան Միրախորյանը, ուսուցչի պաշտոնով 3 տարի (1912-1915 թթ.) դասավանդել է Սամսոնի հայկական դպրոցում և Մեծ Եղեռնի սկզբում, Սամսոնի հայության





րաժների պատասխանատուներին վերաբերող դատավճռին:

Հենց սկզբից նշենք, որ այս դատավճիռը և ընդհանրապես բոլոր դատական նիստերի արձանագրությունները լույս են տեսել 1919-20 թթ. թրքական Takvim-i Vekayi, (Իրադարձությունների օրացույց) պաշտոնական թերթի հավելվածներում (օսմաներեն արաբատառ թուրքերենով): Արևմտահայության տեղահանության և կոտորածին վերաբերող բոլոր նյութերը թարգմանել ենք անհրաժեշտ ծանոթագրություններով, առաջարանով և հրատարակել Երևանում, 1988 թ. հետևյալ խորագրի տակ «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»:

Առաջժամ մեր ձեռքի տակ ունենք Տրապիզոնի դատավարության վերաբերող միայն դատավճիռը: Դատական նիստերի արձանագրությունները պետք է, որ գտնվեն թուրքիայի արխիվներում:

Այնուհանդերձ, այս դատավճիռի սկզբում մանրամասն խոսվում է Տրապիզոնի հայերի տեղահանության և կոտորածների, ինչպես նաև լքյալ գույքի կողպուման փաստերի մասին: Բնականաբար Տրապիզոնի դատավարության հետ առնչվող նյութեր կան նաև մյուս դատավարությունների արձանագրություններում և մեղադրական եզրակացություններում:

Այսպես՝ երիտթուրքական կառավարության ղեկավարներին և «Միություն ու առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը սկսվեց 1919 թ. Ապրիլի 28-ին: Այս դատավարության հարցաքննության նիստերից հայտնի է դառնում, որ հայերի տեղահանության և կոտորածների հրամանները արվել են խիստ զաղտնի:

Կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Թեքթիպ-թը-ը մահսուսե»-ի անդամ Տրապիզոնցի Ռիզա բեյի հարցաքննության ընթացքում, ուղմական Արտակարգ Առյա-

նի նախագահ Մուսթաֆա Նազրմ փաշան մատնանշում է, որ «Թեշքիլաթ-ը մահուսե»-ի նախագահ՝ Բեհաէտտին Շաքիր բեյը մի շարք գավառներ շրջագայելով՝ գաղտնի հրահանգներ է տվել... և այդ շրջագայությունից հետո սկսել են տեղի ունենալ հայերի տեղահանությունն ու կոտորածները<sup>6</sup>։ Իսկ այս դատավարության առաջին մեղադրական եզրակացությունն մեջ մատնանշվում է հետևյալը.

«Տրապիզոնի նախկին պատգամվոր Հաֆիզ Մեհմեդ բեյի տված ցուցմունքից (գործ թիվ 15) բացահայտվում է, թե ինչպես հայերին Սև ծովի ափերին նավ նստեցնելով խեղդամահ են արել։ Նույնիսկ այս ողբերգության մասին, երբ ինքը հայտնել է Թալեաթ բեյին, վերջինս ոչ մի քայլ չի ձեռնարկել Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմիի նկատմամբ։ Այս հանգամանքն առավել ևս ծանրացնում է Թալեաթ բեյի հանցագործությունը<sup>7</sup>։

Այս մեղադրական եզրակացությունն վերջում հայտնվում է նաև հետևյալը.

«Հարցաքննության վերաբերող թղթապանակի 34, 38, 43 էջերում տրված է ելևմտական նախարարության հասույթների բաժնի ընդհանուր տնօրեն՝ Լուսթֆի բեյի ցուցմունքը, որը վերաբերում է կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար՝ Նայիլ բեյի գործունեությանը, ինչպես նաև Տրապիզոնում կատարված ողբերգությանը և նրա պատասխանատուներին<sup>8</sup>»։

Ինչպես նշվեց վերևում, թուրքական կառավարության հրամանով, ամբողջ հայությունը մի քանի օրվա ընթացքում պարտավոր էր թողնել իր բնակավայրերը, անշարժ և շարժական ամբողջ ունեցվածքը և միմիայն ձեռքի ուղերեսով բռնել դեպի Միջագետքի անապատները տանող դաժան աքսորի ուղին։ Հազիվ թե հայերը հեռանում էին իրենց բնակավայրերից, երբ Թուրքիայի այլ կողմերից գաղթած մահմեդականները կառավարության նախաձեռնությամբ, լկտիարար սեփականացնում

էին հայերի աները, խանութները, կողոպտելով և թալանելով նրանց ամբողջ ունեցվածքը:

Թուրքական կառավարութիւնը հայերի լքյալ գույքի բացահայտ կողոպուտն ու թալանը աշխատեց օրինականացնել մի շարք օրենքներով և կանոնադրութիւններով, որոնք բնավ չգործադրվեցին կյանքում և մնացին թղթի վրա:

Տրապիզոնի հայութեան լքյալ գույքի մասին նույնպէս խտովում է 1919 թ. մայիսի 22-ի դատավճռում. այսպէս՝

«Ոստիկանապետ Նուրի էֆենդին, որը այլ պաշտօնատար անձնավորութիւնների հետ նշանակվել է հետևելու քաղաքի կարգուկանոնին, միևնույն ժամանակ ընդգրկված է եղել տեղահանութեան կազմակերպման, գաղտնի ոստիկանութեան և գոհարեղենների պահպանութեան հանձնաժողովների մեջ: Նրան է հանձնարարվել հավաքելու, գրանցելու տեղահանված հայերի լքյալ գույքը: Մինչդեռ նա ոչ մի գործնական միջոց չի ձեռնարկել լքյալ գույքի պահպանման հարցում: Ավելին, նրա թույլտվութեամբ հայերի լքյալ գույքի պահեստավորումը կատարվել է անվստահելի մարդկանց միջոցով, անկազմակերպ և առանց «դափթար» կազմելու: Այսպիսով, նրա մեղավորութեամբ լքյալ գույքը հափշտակվելով մատնվել է կատարյալ կորստի»:

Դեպքերի ժամանակակից Զավեն պատրիարքը հայտնում է, որ «կառավարութիւնը ոչ մեկ տեղ հոգածու չգրտնրվեցավ այդ գույքերը հավաքելու կամ դրամի վերածելու»:

Տրապիզոնի դատավճռի սկզբում բերված հետևյալ հատվածը լրիվ բացահայտում է հայութեան բնաջնջման ծրարը:

«Մի շարք հանցագործ, անառակ մարդկանցից և նույն մակարդակի մի քանի ժանդարմաներից նրանց կազմած հրոսակախումբերը իբրև թե ուղեկցելու էին տեղահանված հայերի քարավանները: Մինչդեռ շատապ տեղահանութեան ենթարկված և սրաշտպանութեան միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացվելուց հետո, ամայի վայրերում աղամարդկանց սուսնանացրել են կանանցից և վե-

բոհիչյալ հանցագործներից կազմված չեթեմների հրոսակա-  
խմբերը հարձակվելով՝ կոտորակ են նրանց իրերը և այ-  
նուհետև աներևակայելի դաժանությամբ սպանել և բը-  
նաջնջել բոլորին: Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տա-  
նելով՝ հափշտակել են նրանց զարգեղեններն ու շորերը և  
ենթարկել բռնաբարություն: Այնուհետև ամիսներով ճա-  
նապարհներին քարշ տալուց հետո, շատերը մահացել են՝  
բոլորովին հյուծված, տառապալի ուղևորությունից, սո-  
վից և ծարավից: Իսկ ողջ մնացածներին, հրգինջանի ճա-  
նապարհով ուղարկել են հեռավոր վայրեր:

Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մա-  
սին իրրև թե սրաշտապաներու պատրվակով տեղավորել են հի-  
վանդանոցներում և դերվիշների աներում: Այնուհետև, ծովա-  
յին ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խըմ-  
բերով նստեցրել են նափերը և տեսողալստից հեռու ծովի խոր-  
քերը տանելով՝ գցել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին<sup>32</sup>:

Տրապիզոնի դատավճռում լիովին հիմնավորվում են  
հայերի կանխամտածված կոտորածները, և գործադրված  
ծանր հանցագործությունների համար դատարանը քրեական  
օրենսգրքի 170, 171-րդ հոդվածների հիման վրա հեռակա  
կարգով մահվան է դատապարտել նահանգապետ Ջեմալ Ազ-  
մի բեյին և կուսակցությունից Տրապիզոնի պատասխանատու  
քարտուղար Նալի բեյին: Դատարանում ներկա Տրապիզոնի  
հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյը դատապարտվել է 10  
տարի ժամկետով տաժանակից աքսորի, իսկ մյուս 5 մե-  
ղադրյալները՝ 1-2 տարվա բանտարկություն:

Եստ տարօրինակ է և անտրամաբանական, որ մի-  
միայն Ջեմալ Ազմի և Նալի բեյերը դատապարտվեցին  
մահվան, իսկ մյուսները թեթև պատիժ ստացան:

Բանն այն է, որ դատավորները, ոչ բոլոր դեպքերում  
անհրաժեշտ հետևողականություն ցուցաբերեցին: Նրան-  
ցից շատերը, կապված լինելով երիտթուրքերի հետ, հա-  
ճախ չեն խորացել կատարված փաստերի մեջ և չեն

ընդունել խիստ որոշումներ: Այսպես՝ եթե Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների նկատմամբ մահվան դատալծիւ կայացնելու խնդրում տարակուսանք չի ստա-  
նանում. ապա ներկա գտնվող Հանցադործների Հանդէպ Հա-  
մապատասխան պատիժ սահմանելու հարցում Հանդես է  
բերվել կատարյալ Հանդուրժողականութուն: Այդ օրերին,  
իթիխիւստականները զանազան նենգ որոշայթներ էին լա-  
րել խանդարելու Համար դատաւարութեան բնականոն ըն-  
թացքը և թեթեւացնելու մեղադրյալների Հանցանքը: Նույնը  
կատարվել է նաև Տրապիզոնի դատաւճռում: Օրինակ ոստի-  
կանապետ Նուրի Էֆենդիի Հանցանքը բալականին ծանր  
էր, բայց դատաւարութիւ է մեկ տարվա բանտարկութեան:

Այնուհանդերձ Տրապիզոնի նահանգի և շրջակայքի  
Հայութեան տեղահանութեան և կոտորածներին վերաբե-  
րող դատալծիւք մասամբ իրականացվեց Հայ վրիժա-  
ւունք: Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի կողմից:  
1922 թ. Ապրիլի 17-ին Բեռլինում նրանք ահաբեկեցին  
Տրապիզոնի նահանգապետ Զեմալ Ազմիին և «Թեշքիւթ-  
ը մահուտե» Նախագահ՝ Բեհաէտին Շաքիրին:

Մենք այստեղ խոսեցինք Տրապիզոնի նահանգի Հայու-  
թեան տեղահանութեանների և կոտորածների մասին: Իրա-  
կանում Հայերի բնաջնջման ծրագիրը իրականացվեց ամբողջ  
Օսմանյան կայսրութեան տարածքում: Այն Հատաստում է  
նաև Տրապիզոնի դատաւճռում բերված Հետևյալ փաստով.

«Կոտորածն ու կողոպուտը մտահղացված է եղել ոչ  
թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ  
կանոնաւոր ու խիստ կազմակերպված»<sup>10</sup>:

Այնպես որ արդի թուրք պատմագրութեանն ու կա-  
ռավարութեանը իզուր են ձգտում ժխտել և ուրանալ  
Հայերի Յեղասպանութեանը Օսմանյան կայսրութեանում:  
Կ. Պոլսի դատաւարութեան արձանագրութեաններում բեր-  
ված բոլոր փաստագրական նյութերը լիովին սարացուցում  
են Հայերի նկատմամբ կատարված ցեղասպանութեանը<sup>11</sup>:

## Ե. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստորև բերված Հայոց Ցեղասպանութեան ճանաչման և դատապարտման «ժամանակագրութիւնը» սկսվում է 1965 թվականից:

Իրականում, դեռևս Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում և հետագայում, տարբեր ազգութիւնների պատմաբաններ, գիտնականներ, հրատարակախոսներ, լրագրողներ, ինչպես նաև պետական գործիչներ, իրենց ելույթներում, հոդվածներում և աշխատութիւններում ցատկով դատապարտել են արևմտահայերի զանգվածային բռնի տեղահանութիւններն ու կոտորածները ամբողջ Օսմանյան կայսրութիւնում:

1915 թ. մայիսի 24-ին, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարութիւնները Բարձրագույն Դռան ներկայացված հուշագրում, խտտագույն դատապարտելով երիտթուրքերի գործադրած բարբարոսային ցեղասպանութեան քաղաքականութիւնը հայերի նկատմամբ, հայտարարել են հետևյալը.

«...Մարդկութեան և քաղաքակրթութեան դեմ Թուրքիայի կատարած այս նոր հանցագործութիւնները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարութիւնները այսու հրատարակով հայտարարում են Բարձրագույն Դռանը, որ իրենք այդ

Հանցագործությունների համար անձնական պատասխանատվութիւնը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների, ինչպես նաև նրա՝ տեղական այն իշխանութիւնների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածներին<sup>1</sup>»:

Պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակայնութիւնը, առաջադեմ մտաւորականութիւնը պահանջեց պատասխանատվութեան ենթարկել և դատապարտել արեւմտահայութեան սպանողը կազմակերպող թուրք ռնրագործներին:

Եղ ահա 1919 թվականի մարտի 8-ին, Սուլթան Մեհմեդ Թ-րդ Վահիդէդէինի հատուկ հրամանագրով, երիտթուրքական կուսակցութեան պարագլուխներն ու նախարարները հանձնվեցին Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ ասյանի քննութեան:

Երիտթուրքերի դատաւարութիւնում բերված մեղադրական փաստաթղթերը անհերքելիորեն ասպարեցեցին, որ Հայերի բռնի տեղահանութիւնն ու կոտորածները տեղի են ունեցել «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցութեան կենտրոնական կոմիտեի նախաձեռնութեամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու զաղտնի հրամաններով: Եվ ինչպես Հայտնի է 1919 թ. հուլիսի 5-ին արձակված դատավճռով դատարանը մահվան վճիռ կայացրեց Հայերի Յեղասպանութիւնը կազմակերպող երիտթուրքական կուսակցութեան և կառավարութեան բարձրաստիճան սպանողներին:

Ծիշտ է՝ այս որոշումները սպասված արդյունքը չարվեցին, այնուհանդերձ պատերազմի ավարտից հետո երիտթուրքերի պարագլուխների դատաւարութիւնը խոշոր երևույթ էր արեւմտահայութեան նկատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու ցեղասպանութիւնը համայն մարդկութեան առաջ բացահայտելու տեսանկյունից:

Հետագայում աստիճանաբար լուսութեան մատնվեց



միջազգային չափանիշով Հայերի ցեղասպանության դատապարտման Հարցը: Միայն Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցի օրերին, Երևանում, Հայ ժողովուրդը միասնաբար բարձրացրեց իր բուռն բողոքը, սթափեցնելով աշխարհի ժողովուրդներին, որ դարասկզբի Հայերի ցեղասպանությունը չի մոռացվել, այն կա, եղել է և ապրում է նոր սերնդի սրտերում:

Թե հետապալում Հայերի Յեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրում ինչպիսի՞նչ հզոր ալիք բարձրացավ, տե՛ս ստորև բերված ժամանակագրությունը:

\* \* \*

1965 թ.

Ապրիլ 20 — Ռուսգոլայի Արևելյան Հանրապետության Մերակույտի և Ներկայացուցիչների Պալատի միացյալ ժողովում ընդունվեց օրենք Հայ նահատակների հիշատակի օրվա առթիվ:

Հուլիս 15 — Հելսինկիում կայացած խաղաղության կողմնակիցների Համաշխարհային վեհաժողովը դատապարտեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած 1915-ի ցեղասպանությունը:

1974 թ.

Մարտ 6 — ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Հանձնաժողովը քննարկումների ընթացքում 1915-ի Մեծ Եղեռնը բնութագրեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

1975 թ.

Ապրիլ 8 — ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների Պալատի ընդունած բանաձևում ճանաչվեց Հայերի Յեղասպանությունը:

Ապրիլ 13-16 — Փարիզում «Ժողովուրդների Միջազգային Առյան»-ի գումարած նիստերում դատապարտվեց

Հայերի Յեղասպանությունը և այն բնութագրվեց որպես միջազգային չափանիշի հանցագործություն:

1985 թ.

Օգոստոս 27 — ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Ենթահանձնաժողովը (Ժնևում) 1915-1917 թթ. թուրքիայում տեղի ունեցած Հայերի Չարեքը որակեց որպես ցեղասպանություն:

1987 թ.

Հունիս 18 — Ծրանախյի Աթրապուրգ քաղաքում Եվրոպական Խորհրդի ընդունած որոշման մեջ դատապարտվեց Հայերի ցեղասպանությունը:

1988 թ.

Նոյեմբեր 22 — Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը ընդունեց օրենք «Օսմանյան թուրքիայում 1915-ի Հայերի Յեղասպանության դատապարտման մասին»:

1990 թ.

Ապրիլ 19 — Կիպրոսի Խորհրդարանը դատապարտեց Հայերի Յեղասպանությունը և Ապրիլ 24-ը հռչակեց Հայերի Յեղասպանության Հիշատակի օր:

1994 թ.

Ապրիլ 22 — Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման, քննարկելով 1915-ի Հայերի Յեղասպանության հարցը, իր հայտարարության մեջ դատապարտեց Օսմանյան կայսրությունում թուրքական կառավարության կողմից գործադրված ցեղասպանությունը և իր կարեկցանքը հայտնեց հայ ժողովրդին:

1995 թ.

Ապրիլ 14 — Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման պաշտոնապես դատապարտեց 1915-1922 թթ. Հայերի բնաջնջման կազմակերպիչներին և Ապրիլի 24-ը հայտարարեց որպես Հայերի Յեղասպանության հիշատակի օր:

1996 թ.

Ապրիլ 23 — Կանադայի Խորհրդարանը, մեկուկես միլիոն գոհ խլած 1915 թ. Ապրիլ 24-ի ցեղասպանության 81-րդ տարելիցի առթիվ և ի հիշատակ մարդկության դեմ կատարված ոճիրների յուրաքանչյուր տարվա Ապրիլ 20-27-ը հռչակեց մարդկության դեմ գործված ոճիրի Հիշատակի Շաբաթ:

Ապրիլ 23-ը, Հայերի Յեղասպանությունը ճանաչվեց ԱՄՆ-ի Վերջինյա, Իլլինոյս, Հյուսիսային Կարոլինա նահանգների Խորհրդարաններում:

Ապրիլ 25 — Հունաստանի Խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայերի Յեղասպանությունը, «1915 Ապրիլ 24-ը ընդունելով Թուրքիայի կողմից Յեղասպանության ենթարկված Հայերի Հիշատակի օր»:

1997 թ.

Ապրիլ 3 — Լիբանանի Հանրապետության Խորհրդարանը բանաձև ընդունեց, Ապրիլ 24-ը հռչակելով Հայ ժողովրդի դեմ գործադրված կոտորածների օր:

Ապրիլ 21 — Կալիֆորնիայի Նահանգային Խորհրդարանը Բանաձև ընդունեց Ապրիլ 24-ը նահանգում հռչակելով «Հայերի Յեղասպանության ողբերգի օր»:

Ապրիլ 24 — Ավստրալիայի Նյու Սաութ Վելս հայաշատ ամենամեծ նահանգի Խորհրդարանը հատուկ բանաձևով դատապարտեց 1915 թ. Հայերի Յեղասպանությունը:

1998 թ.

Մարտ 27 — Բելգիայի ծերակույտը ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունեց, որը ճանաչելով Հայերի Յեղասպանությունը, կոչ է անում Թուրքիային, որպեսզի ընդունի Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից գործադրված Հայերի Յեղասպանության փաստը:

Մարտ 30 — Վենետիկի քաղաքային խորհուրդը միա-

ձայն դատապարտեց և բանաձև ընդունեց 1915 թ. Հայերի Յեղասպանության մասին:

Ապրիլ 23 — Արդենաֆինայի Սենատը բանաձև ընդունեց, դատապարտելով բոլոր տեսակի ցեղասպանություններն ու ոչնչացումները: Բանաձևի նախաբանում վկայակոչվում է 1915 թ. Ապրիլի 24-ին սկսված ցեղասպանությունը՝ այն հռչակելով որպես «Թուրքիայի կողմից իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

Ապրիլ 24 — Նյու Յորքի Նահանգային Խորհրդարանը ճանաչելով Հայերի Յեղասպանությունը, Ապրիլ 24-ը հայտարարեց «Հայ նահատակների հիշատակման օր»:

Մայիս 29 — Ֆրանսիայի Հանրապետության Ազգային Ժողովը ճանաչեց Հայերի Յեղասպանությունը: 1999 թ.

Փետրվար 17 — Ջորջիա (ԱՄՆ) Նահանգի Մերակույտը բանաձև ընդունեց Ապրիլ 24-ը հռչակելով Հայերի Յեղասպանության զոհերի հիշատակի օր:

Ապրիլ 14 — ԱՄՆ-Հարավային Կարոլինա Նահանգի Խորհրդարանը, ճանաչելով Հայերի Յեղասպանությունը, Ապրիլ 24-ը հայտարարեց «Հայ նահատակների հիշատակման օր»:

2000 թ.

Մարտ 6 — Հռոմի Քաղաքային Խորհուրդը միաձայն որոշում ընդունեց 1915 թ. Հայոց Յեղասպանության ճանաչման և դատապարտման մասին: Տարբեր ժամանակներում համանման որոշում են ընդունել նաև իտալական այլ 12 քաղաքապետարաններ: Այդ քաղաքներն են՝ Բանիոկադալլո, Լուկո, Ֆուզինիանո, Ակաթա Սուլ, Սան Թերնո, Կոզինիոլա, Սոլարոլո, Ռուսի, Կոնսեխչե, Կամբոնոկարն, Պադուա, Միլան:

Մարտ 29 — Շվեդիայի Խորհրդարանը ճանաչեց և փոփոխեց Հայերի Յեղասպանության բանաձևը:

Ապրիլ 18 — ԱՄՆ-ի Պենսիլվանիա Նահանգի Խոր-

Հըրդարանը, Ապրիլ 24-ը միաձայն հռչակեց Հայերի Յեղասպանութեան նահատակների ոգեկոչման օր:

Մայիս 2 — ԱՄՆ-ի Վիսքոնսին նահանգի Խորհրդարանը, ճանաչելով Հայերի Յեղասպանութունը, Ապրիլ 24-ը նահանգի տարածքում հայտարարեց Հայ նահատակների հիշատակի օր:

Մայիս 11 — Լիբանանի Խորհրդարանը միաձայն որդեգրեց Հայերի Յեղասպանութեան ճանաչման հետևյալ բանաձևը:

«Օսմանյան իշխանութիւնների կողմից 1915-ին գործադրված Զարդերի 85-րդ տարելիցի առթիվ, Զարդեր՝ որոնց զոհ գնացին մեկուկես միլիոն հայեր, Լիբանանի Խորհրդարանը ճանաչում և դատապարտում է հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանութիւնը և ամբողջական զորակցութիւնն է հայտնում հայ քաղաքացիների պահանջներին, նկատելով, որ այս ցեղասպանութեան միջազգային ճանաչումը նախապայման է ապագայի հավանական նմանօրինակ ոճիրների կանխարգելման»:

Հոկտեմբեր 18 — Ուրուգվայի Արևելյան Հանրապետութեան Մերակույտը միաձայն կրկին ընդունեց օրինագիծ, ըստ որի «Ապրիլի 24-ը հայտարարում է 1915 թ. Հայերի Յեղասպանութեան նահատակների հիշատակութեան օր»:

Նոյեմբեր 8 — Զրանսիայի Խորհրդարանի Մերակույտը ձայների մեծամասնութեամբ՝ 184 կողմ, 40 դեմ և 4 ձեռնպահ, ընդունեց օրենք, որ հրապարակայնորեն ճանաչում է 1915 թվականի Հայերի Յեղասպանութիւնը:

Նոյեմբեր 17 — Իտալիայի Խորհրդարանը ճանաչեց 1915-1923 թթ. Հայերի Յեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում: Միևնույն ժամանակ, Թուրքիայի կառավարութեան և Ազգային Մեծ Ժողովի ուշադրութեանն հրավիրեց, որ էլ ավելի հոգ տարվի Թուրքիայի փոքրամասնութիւնը:

2001 թ.

Հունվար 18 – Ֆրանսիայի Խորհրդարանը միաձայն ճանաչեց և օրենքի ուժ տվեց 2000 թ. նոյեմբեր 8-ին ընդունված 1915 թ. Հայերի Յեղասպանության վերաբերող բանաձևին: Այդպիսով Ֆրանսիան դարձավ առաջին երկիրը, որ Յեղասպանության ճանաչման վերաբերող օրենք ընդունեց:

Հունվար 30 – Ֆրանսիայի նախագահ՝ Ժակ Շիրաք և վարչապետ Լիոնել Ժոսֆեն վավերացրին Խորհրդարանի և Մերակույտի կողմից որդեգրված Հայոց Յեղասպանության բանաձևը:

Մարտ 10 – ԱՄՆ-ի Նյու Մեքսիկոյի Նահանգային Օրենսդիր Խորհուրդը ձայների մեծամասնությամբ վավերացրեց «Ապրիլ 24-ը, որպես Հայերի Յեղասպանության հիշատակի օր» թիվ 34 բանաձևը:

Մարտ 22 – Քալիֆորնիայի Մերակույտը միաձայն ընդունեց «Հայերի Յեղասպանության Հիշատակության Օրվա» SJR-5 բանաձևը: Այս բանաձևով Միացյալ Նահանգների կոնգրեսից պահանջվում է նաև ճանաչել Հայոց Յեղասպանությունը:

Մարտ 26 – ԱՄՆ-ի Մերիլենդ Նահանգի Մերակույտը 34 թեր և 10 դեմ ձայներով ընդունեց Ապրիլ 24-ը Յեղասպանության զոհերի հիշատակի օր ճանչնալու բանաձևը:

Մարտ 27 – ԱՄՆ-ի Արքանսոզ Նահանգի կառավարիչը հատուկ հռչակագրով նահանգից ներս Ապրիլ 24-ը Հայտարարեց Հայերի Յեղասպանության ոգեկոչման օր:

2002 թ.

Ապրիլ 23 – Հայերի Յեղասպանության 87-րդ տարելիցի առթիվ, Քալիֆորնիայի կառավարիչ Գրէյ Դեյվիսը Ապրիլ 24-ը, նահանգում հռչակեց «Հայերի Յեղասպանության հիշատակության օր»:

Մայիս 6 – ԱՄՆ-ի Կոլորադոյի նահանգը ճանաչեց

Հայոց Յեղասպանութիւնը և Ապրիլ 24-ը հռչակեց «Հայոց Յեղատանութեան հիշատակի օր»:

Հունիս 13 — Կանադայի Սենատը ընդունեց Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող բանաձև: Ընդունված օրինագծով կոչ է արվում կառավարութեանը Հայոց Մեծ Եղեռնը ճանաչել որպէս «20-րդ դարի առաջին ցեղասպանութիւն»: Օրինագծի երկրորդ հատվածով, յուրաքանչյուր տարվա Ապրիլի 24-ը ողջ Կանադայի տարածքում հռչակվել է «Հայոց Յեղասպանութեան 1.5 Միլիոն զոհերի հիշատակի օր»:

Օգոստոս — «Երիտասարդ Քրիստոնյաների Միութեան» Մեքսիկայում տեղի ունեցած համաշխարհային խորհրդարանում ընդունվել է Օսմանյան Թուրքիայում 1915 թվականի Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող բանաձև:

Հոկտեմբեր 30 — Մեծն Բրիտանիայի չորս երկրներից (Կալիֆոնիա (Ուեյսթ) Ազգային Խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց Յեղասպանութիւնը: Խորհրդարանի 60 անդամներից 32-ը ստորագրեցին Հայերի Յեղասպանութեան ճանաչման վերաբերող բանաձևը<sup>2</sup>:

## Զ. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ  
ԵՎ ՕՏԱՐ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Ռուրեն Զարդարյանը Գերմանուհի  
մեծ հայասեր՝ Իլգե Ֆրապանի մասին

1. *«Ասպարէզ», օրաթերթ, 26 հետադար, 2000:*

«Անգլիացի պատմաբան Հ.Ա. Գիբոնսը  
Հայոց Տեղասպանության մասին»

1. *Տե՛ս* H.A. Gibbons, Osmanli Imparatorlugunun kurulusu, Istanbul, 1928.
2. *«Նոր Օր» շաբաթաթերթ, եռօրյակ 25, 2000:*

Մի հատված Յոհաննես Լեփսիուսի  
դատական վկայությունից

1. Dr. Johannes Lepsius, "Armenien und Europa", Berlin, 1896.
2. "Deutschland und Armenien, 1914-1918", Potsdam, 1919.
3. *Դատազարույթյուն թաղեաթ փառայի, սղազրական զեկուցում, Վիեննա, Միխիթարյան տպարան, 1921, էջ 210:*
4. *Մանրամասն տե՛ս Ռուրեն Մահակյան, «Տեղասպանության պատմությունից», Երևան, 1990, էջ 288-289: Հայկազուն Գալստյան, «Արևմտյան Հայաստանի բնակչության Ազգային կազմը ըստ Վիտայ Քիենի վիճակագրության», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ»— XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 59:*



5. Դատավարու թշուև թաշեաթ գաշալի... էջ 80-81. («Ապարէզ» 21 Ապրիլ 2001)

## Մարդիկ որ պետք չէ մոռացվեն. Փոլ Գեշանել

1. «Նոր Օր» շաբաթաթերթ, Ապրիլ 21, 2001:

### Գրիգոր Զոհրապի Հայոց Եղեռնը Կանխելու վերջին ճիգերը

1. Տե՛ս Ավետիս Փափազյան, վավերագրական նյութեր արևմտաուսաշերի մասին ԳԱ Հաստատական Գիտությունների Գիտական Տեղեկատվության բաժին), Երևան, 1983, թիվ 2, էջ 5:
2. Տե՛ս Զոհրապի որպարը Եղեռնի նախորդակին, «Նալբերի», մայիս, 1976, թիվ 46-50, էջ 6:
3. Արշակ Ալոյրյանյան «Անհետացող գեները, Գրիգոր Զոհրապ», Կ. Պոլիս, 1919, էջ 240:
4. Տե՛ս Falih Rifki, Atay, Zeytindagi, Istanbul, 1957, s. 78-80.
5. «Նոր Օր», նոյեմբեր 30, 1994:

### Երախտագիտության խոսք Անատոլ Թրանսի ճիշատակին

1. «Ապարէզ» որպթերթ, 29 Հունիս, 1994:

## Բ. ԸԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀԱԿԱՀԱՅ ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1. Gürsoy Solmaz, Erzurum, Sarikamis – Karsta Ermeni Zulumu (1918-1920), 1995, Van.
2. Cemal Kutay, Karabekir Ermenistani nasıl yok etti, Istanbul, 1956.
3. Տե՛ս Erzurum, Sarikamis – Karsta Ermeni Zulumu, s. 23.
4. Նույն տեղում, էջ 3:
5. Նշենք, որ 70-ական թվականներից հետո, Հայերի Ցեղասպանությունը հերքելու և ընդհանրապես հայ ժողովրդի պատմությունը աղավաղելու միտումներով Թուրքիայում բազմաթիվ գրքեր են լույս տեսել, որոնց հեղինակներն են՝ Սալահի Սոնյել, Այհան Յալչըն, Քեմալ

Քարգիսի, Սասի Քոչաշ, Քամուրան Կուրուն, Թարիք Սուեյր, Շիմշիր Պիլալ, Ալի Նաջի Թունջեր, Յազուզ Էրջան, Մեհմեդ Կոնառազու, Արզուլլան Կաման, Ի. Օղբաշյա, Ահմեդ Պանազու, Քերեմ Տեմիր, Ալգիթեքե Մյուսերբիթազու, Միս Բեմալ Էօքե, Կալիլ Բեմալ Թիւրք Էօքու և այլն:

6. Zuhuri Danişman. Osmanlı İmparatorluğu tarihi, C. XIII, Sultan İkinci Abdul Hamid han, İstanbul, 1966, S. 145.

7. Osman Nuri, Abdul Hamid Sani ve devr-i Saltanata, İstanbul, 1327, S. 866 (արարատառ թուրքերեն):

8. Pars Tuglacı, Ermeni edebiyatından seçkiler, İstanbul, 1992, s. 87.

9. Նույն աեղում, էջ 89:

10. Տե՛ս «Ակօս» շաբաթաթերթի թուրքերեն բաժինը, հունիս 20, 2001, էջ 1:

11. Տե՛ս «Ակօս», զեկտեմբեր 7, 2001, էջ 8:

12. Erdal İter, Türk-Ermeni ilişkileri Bibliyografyası, Ankara, 1997, s. 14.

13. Տե՛ս «Ակօս», նոյեմբեր 16, 2001, էջ 8:

14. «Ակօս», հուլիս, 28, 2001:

15. «Ակօս», Ապրիլ 27, 2001:

**Անա թե ինչպե՞ս է խեղաթյուրվում  
Հայոց Տեղապանությունը  
(Իսկ ո՞րն է ճշմարտությունը)**

1. Տե՛ն Takvim-i Vekayi, 3 Haziran, 1335 (1919) No. 3571. Թուրքական պաշտոնական թերթի հավելած արարատառ թուրքերենով:

2. Takvim-i Vekayi, 5 Temmuz 1335 (1919) No. 3604.

3. Տե՛ս Behcet Cemal, Cemal Paşa, Hatıralar, Ankara, 1959, s. 359.

4. Takvim-i Vekayi, 21 Haziran, 1335 (1919), No. 3586.

5. Հարցաքննության գոտաթղթեր, էջ 16. Takvim-i Vekayi, 27 Nisan, 1919, No. 3540.

6. Takvim-i Vekayi, 13 Ocak, 1920, No. 3771.

7. Takvim-i Vekayi, 9 Ocak, 1336 (1920), No. 3772.

8. Հասպանը քաղել ենք Ռիչարդ Տիրան Գոյեանի կազմած «Ռոզոգոսից, տե՛ս "The Armenian Genocide – First 20th Century Holocaust", Richmond, California, 1980, p. 35.

9. Տե՛ս Հայկազուն Գալստյան, Արեմոյան Հայաստանի բնակչության ազգային կազմը ըստ Վրաստանի Գրեյսկոպոլիսյան,

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 59:

10. Մանրամասն տե՛ս Թուրքիե՛ն Մահադյան, Յեղապատմութեան պատմութիւնից, Երևան, 1990, էջ 288-289:

11. «Ապարէզ», 14 նոյեմբեր 1998:

**«Միասնությունից ուժ է ծնվում» երե  
ւան հիմնված է արդարության հողի վրա**

1. «Նոր Հայաստան» օրաթերթ, մայիս 27, 2000:

«Մասիս» շաբաթաթերթ, մայիս 27, 2000:

**Թուրքական «Զաման» թերթը հայկական  
ահաբեկչության մասին**

1. *Söz* Takvim-i Vekayi, 13 Ocak, 1920, No. 3771:

2. «Ապարէզ» օրաթերթ, 17 փետրվար, 1996

**Ծշմարտությունը հնարավոր չէ թաքցնել**

1. *Söz* Taner Akçam, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Istanbul, 1995, s. 125:

2. *Söz* Kemal Yalçın, Seninle Güler Yüreğim, Bohum, 2000:

3. «Նոր Օր», նոյեմբեր 18, 2002:

#### **Գ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Թուրք գրականագետ Հալիդե Էդիթը  
Կոմիտաս Վարդապետի մասին**

1. *Söz* "Memoires of Halide Edip", New York - London:

2. Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անգրիտիկանի մյուս ժողովուրդների մասին, կազմեց՝ Արամ Մաֆրատյան, Հաս. Բ., Երևան, 1984, էջ 137:

3. Թուրքական աղբյուրներ... Հաս. Ա., Երևան, 1961, էջ 46-47:

4. Ahmet Refik, On Altıncı Asırda İstanbul Hayatı, 2-ci basım, Istanbul, 1935, s. 27:

Ե. Տե՛ս ՓԱ. Զիրխաչով, Կամակներ Թուրքիայի մասին, Մոսկվա, 1987, էջ 23, (սուսերեն)

6. «Mor Salkimlı Ev» «Հողկյուր» Հրատարակություն, էջ 212-216: Salkim բառը բացի թիթեռնաձագկից, որը փաթաթվող մի բույս է, ունի նաև հեռակալ իմաստները 1. ողկույզ (խաղողի), 2. ակացիտ:

7. Կհատի ունի 1914-1915 թթ.- Կոմիտաս վարդապետը գործուն մասնակցություն է ունեցել թրքական մշակութային կյանքում: Երգեր է հորինել թուրք բանաստեղծների խոսքերով, դասախոսություններ կարդացել և համերգներ է տվել «թուրքական օճախում», — (թուրքական ազգայնական մշակութային և լուսավորության միություն):

8. Անատոլիա, — Հունարեն նշանակում է արևելք: Բյուզանդական կայսրության փոքրասիական տիրույթներին տրված անունն էր, որը հետագայում թուրքերի կողմից իմաստափոխվեց: Թուրք պատմաբանները նենգափոխելով համաշխարհային ճանաչում ստացած պատմական դեպքերը, փորձեցին ժխտել Հայ ժողովրդի բնօրրանը հանդիսացող պատմական Հայաստանի գոյությունը, այն անվանելով Արևելյան Անատոլիա: Իրականում միջնադարի թուրք աշխարհագիրները իրենց երկիրում ուղտապործել են Արմենիա անվանումը: Թր. 17-րդ դարի թուրք հանրահայտ աշխարհագիր Քյաթիր Զելեբին, իր «Ջիհան Նյումա» աշխատության 43-րդ գլուխը վերնագրել է «Արմենիա երկրի մասին»: Այնպես որ այստեղ խոսքը վերաբերում է պատմական Հայաստանի տարածքին:

9. Այստեղ պետք է կենսագրական հեռակալ նշումներ կատարել: Կոմիտասը (Մոզմոն Գեվորգի Մոզմոնյան, 1869-1935) 1891 թ. որբանալով, Քյոթահիայի հայկական եկեղեցին նրա գեղեցիկ մայրի և երաժշտական ունակությունների համար ուզարկել է էջմիածին: Այստեղ 1893 թ. ավարտել է էջմիածնի Գեվորգյան Հոգևոր նեմարանը և նշանակվել նեմարանի երաժշտության ուսուցիչ և խմբավար: 1894 թ. մեռնադրվել է կուսակրոն արեղա և նրան շնորհվել է 7-րդ դարի բանաստեղծ ու երաժիշտ՝ Կոմիտաս Կաթողիկոսի անունը: 1896 թ. դարձել է վարդապետ և այնուհետև կողմնակալ Կոմիտաս Վարդապետ: 1896-1899 թթ. ուսումը շարունակել և ավարտել է Բեռլինի Արքուեսական համալսարանը: 1910-ին էջմիածնից տեղափոխվել է Կ. Պոլիս:

10. Հաջանաբար նկատի ունի Կոմիտասի «Կարգվի երգը»:

11. Հրեշտակների ավետումը կույս Մարիամ Աստվածածնին:

12. 16-րդ դարի սկզբում բունահյուսված գերմանական ավանդադրույցի շերտ, գիտնական, որը դևի (Մեֆիստոսել) հետ դաշն էր կնքել հանուն գիտության, Հարստության և աշխարհիկ վայելքների:

13. *Խոսքը վերաբերում է երկաթուղիների կառավարությանն ու շրջապատին ընդհանուր կառավարությանը, որոնք կազմակերպեցին Հայերի սեղանակալությանն ու կոտորածը:*

14. *Իմանուիլ Կանո (1724-1804), գերմանացի փիլիսոփա և գիտնական: Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիրը:*

15. *«Նոր Օր», սեպտեմբեր 8, 15, 2001:*

### Յափուզ Էրջան, «Հայերը դիմակազրկվում են»

1. *Այս գրախոսությունը հրատարակված է «Նոր Օր» եւօր-յայում, Հունիս 8, 1994:*

2. *Տե՛ս Yavuz Ercan, Türkiye'de XV ve XVI Yüzyıllarda gayrimüslimlerin hukuki, içtimai ve iktisadi durumu, "Belleten", 1983, No. 188, s. 1120:*

3. *Տե՛ս Ավետիս Փափազյան, Օսմանյան Հնագիտական և գիտնազոտական փաստաթղթերի ուսումնասիրությունը, ՊՔՀ, 1998 No. 4 էջ 241: Ինչպես նաև 1998 թ. սեպտեմբերին Սոֆիայում կարդացված թուրքերեն մեր զեկուցումը՝ "Ermenistan Cumhuriyetinde XVI-XVIII asırlara ait Osmanlı belgesel kaynakların incelemeleri ve yayımı":*

4. *Տե՛ս C.B. Noeman, Armenia and the Campaign of 1877, London, 1878:*

5. *Տե՛ս Հայերի Յեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու ՄԳ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 7:*

6. *Այս կապակցությամբ տե՛ս «Նոր Օր»-ում (մայիս 30, 1994) «Բռնադատված թե՛ Յեղասպանություն» հրատարակած մեր հոդվածը:*

7. *Hatırat-ı Sadr-i esbak Kamil paşa, Kostantınya, 1329, s. 181. (արարատառ օսմունքներն):*

8. *Տե՛ս I.H. Uzunçarşılı, II-ci Abdulhamid devrinde Kamil paşa, "Belleten", No. 78, s. 227:*

9. *Քյամիլի փաշա, էջ 181:*

10. *Osman Nuri, Abdul Hamid Sani ve devr-i saltanati, İstanbul, 1327, s. 838 (արարատառ թուրքերենն):*

11. *(Տե՛ս Behoet Cemal, Cemal Paşanın hatıraları, Ankara, 1959, s. 340):*

12. *Օսման Նուրի, էջ 866:*

### Յափուզ Էրջան, «Հայերը եվ Իրանը»

1. Osman Nuri, Abdul Hamid Sani ve devr-i saltanatı, İstanbul, 1327, s. 866 (թուրքերեն)
2. Pars Tuğlacı, Ermeni edebiyatından seçkiler, İstanbul, 1992, s. 87.
3. Տե՛ս Takvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) No. 3586.
4. Տե՛ս Takvim-i Vekayi, 28 Haziran 1335 (1919) No. 3596.
5. Պատմա-քաղաքագրական Հանդես, Երևան, 1987, No. 2 (117), էջ 232-233.
6. Հ.Հ. Գաղափար, Արևմտյան Հայաստանի ընկալությունների ազդեցության կողմը ըստ Վրտակ Գրիգորի գիտականության Վերածարք և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ... XII, Թուրքիա Երևան, 1985, էջ 50.
7. Մանդաման ան՝ Ռուբեն Մահակյան, Յեղապետություն պատմություն, Երևան, 1990, էջ 288-289.
8. Չափեն Արք. «Պատմագրական հուշեր, վավերագրեր և վկայություններ», Գաշիթ, 1917, էջ 318.
9. Տե՛ս Henry Morgenthau, Ambassador Morgenthau's story, New York, 1918, թ. 311.

### Երվանդ Սարգսյան. Դավադիր Գործարք

1. «Նոր Օր», գեկաներ 13, 1995.

### Նիկոլայ Հովհաննիսյանի դարաբաղյան կոնֆլիկտը

1. Այս աշխատությունը 1999 թ. լույս տեսավ նաև անգլերեն լեզվով. Տե՛ս Nikolay Hovhannissyan, The Karabakh Problem, (Factors, Criteria, Variants of Solution), Yerevan 1999.
2. Տե՛ս «Մեսրոպյանիկա Արմենիկ», նոյեմբեր 21, 1997 (առևտրեն)
3. Տե՛ս Luchterhandt O. Nagorny Karabakh's Right to Independence, According to International Law, Boston, 1993.
4. «Նոր Օր», մարտ 25, 1998.

### Ալիշան Բայրամյան. Ալեքսանդրոսի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը

1. Տե՛ս «Ապարիչ» պրոֆերթ, պատաս 4, 1998.
2. Տե՛ս «Նոր Օր», պատաս 3, 1994.

3. *Տե՛ս «Ընդ Օր», գեկտեմբեր 3, 1998, (Iskenderun Sanjak and the International Court of Justice).*

4. *«Ընդ Օր», զեկտրվար 26, 1999.*

**Գեւորդ Պաղճյան. Պատասխան Օթթավայի  
Մոս Թուրքիո Դեպանին**

1. *«Ընդ Հայաստան» օրաթերթ, հունիս 20, 1998.*

**Լիպարիտ Ազատյան. Հայ որբերը Մեծ Եղեռնի**

1. *«Ընդ Հայաստան» օրաթերթ, մարտ 11, 2000:*

*«Ընդ Կեանք» շաբաթաթերթ, մարտ 8, 2000.*

**Միրզա Յուզուֆ Ներսեսով. Մշմարտացի Պատմություն**

1. *«Ընդ Օր» շաբաթաթերթ, հունվար 20, 2000:*

**Ալիշան Բայրամյան. Կիլիկա, Հայկական Քիլիս**

1. *«Ընդ Օր» շաբաթաթերթ, հունիս 14, 2001:*

*«Ընդ Կեանք» շաբաթաթերթ, սեպտեմբեր 20, 2001.*

**Նիկոլայ Լովհաննիսյանի Հայոց Ցեղասպանության  
և Ցեղասպանագիտության վերաբերող  
երկու գրքերի մասին**

1. *Տե՛ս Moussa Prince, "Un génocide impuni, l'Arménocide", Heidelberg Press – Lebanon, 1967, թ. 26-27.*

2. *Տե՛ս «Պայքար» ամսագիր, 1995, թիւ 4, էջ 26-32.*

3. *«Ընդ Օր», հունիս 20, 2002. «Ընդ Հայաստան», հոկտեմբեր 19, 2002.*

**Փաստագրական անսակարկելի վկայություն  
Հայոց Ցեղասպանության մասին  
Լևսի Դեվիս. սպանդի նահանգը**

1. *Անգլերեն բնագիրը առաջին անգամ լույս տեսավ 1988 թ. և անմիջապես արտահրով վերահրատարակվեց 1989 թ.: Թարգմանվել է*

Լուս Ֆրանսերենի Տժ՝ Leslie A. Davis, The Slaughter House Province  
An American Diplomat's Report on the Armenian Genocide of 1915-1917.  
Edited with an Introduction by Susan Blair, New York. Aristide D.  
Caratzas, 1988, 224 pp., 1989, 216 pp.

2. *Վերջ Հայաստան, Հունիս 11, 2002, Վերջ Օրը, Հունիս 6, 2002.*

### **-Քեմալ Յալչըն. Սիրտս հրճվում է քեզանով**

1. *Վերջ Օրը, սեպտեմբեր 21, 2002.*

*Վերջ Հայաստան, հոկտեմբեր 5, 2002.*

## **The Armenian Genocide and the Trial of the Young Turks**

1. H. Morgenthau, Ambassador Morgenthau's Story, N.Y., 1918, *թ.* 309.

2. *Nor Or*, May 20, 1999.

### **Տրապիզոնի հայության կոտորածը և Քուրթ ունրագործների դատավարությունը**

1. The Armenian Genocide, Compiled and edited by Libarid Azadian, Armen Donoyan, April 1987, Los Angeles, p. 25-27.

2. *Նույն տեղում, էջ 126-127:*

3. *Հայերի Ծիրբյուրեր, Հայաստան 1915, Երևան, 1996, Թարգմ. Գրիգոր Զանդեյանի, էջ 43-44:*

4. *Վահան Մինասյան, 1915 Թվականը, Արևայիրքի ործր, Վենետիկ, Մ. Ղազար, 1949, էջ 141:*

5. *Նույն տեղում, էջ 411:*

6. *Takvim-i Vekayi*, 8 Mayıs, 1335 (1919) No. 3549.

7. *Ազնախ Փափազյան, Հայերի Յեղատապանությունը ըստ Երբտ-Թուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1980, էջ 44:*

8. *Նույն տեղում, էջ 47:*

9. *Նույն տեղում, էջ 160:*

10. *Նույն տեղում, էջ 168:*

11. *Վերջ Օրը, Հունիս 22, 29, 2002 թ.*



## Ե. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Հայոց Յեղասպանության ճանաչման և դատապարտման ժամանակագրություն

1. Տե՛ս Յուրի Բարսեղով, Հայերի Յեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է, «Լրարեք Հասարակական Գիտություններ», Երևան, 1987, թիվ 4, էջ 36 (ռուսերեն)
2. «Փարոս», հունիս 15, 2000:  
«Լոս Թր», Ապրիլ 21, 2001:



ՀԱՎԵԼՎԱԾ



## Ը. ՀԱՎԵԼՎԱԾ

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՆԱՄԱԿՆԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ  
ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐԻ,  
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐԻ ՑԱՆԿԸ  
ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԱՅՐԱՎԱՆՔ  
CONGREGAZIONE MECHITARISTA

S. Lazzaro degli Armeni  
30126 VENEZIA - LIDO  
Tel. (041) 5260104

Ս. Ղազար 1 Յունիս, 1989  
S. Lazzaro

Պատուարժան եւ յարգելի  
Պր. Ա. Փափազեան

Երևան

Արունեստարան Տիկ. Մանիա Ղազարեանի ձեռքով  
ստացայ Զեր պատուական հատորը, «Հայերի Տեղասպա-  
նութիւնը ըստ երիտօրրքերի դատավարութեան փաս-  
տաթղթերի», ՀՍՍՀ ԳԱ Հրտ., Երևան 1989, էջք 256:

Սքանչելի աշխատութիւն, գիտական բարձր որակով,  
այժմեական բնոյթով, ճիշտ մեր օրերուն համար, ուր ման-  
աւանդ հակառակ կողմէն՝ հսկայ եղծումներ կը կա-  
տարուին:

Լաւ խորհեր էք ոուսերէն եւ անգլերէն ամփոփոյքներ  
գետեղել հատորի արարտին: Ո՛ր էր թէ ամբողջ գիրքը

ՄԻՌԱԲԵՆԱՆ ՄԱՅՐԱՎԱՆՆԵՐ

CONGREGAZIONE MECHITARISTA

S. Lazzaro degli Armeni  
30126 VENEZIA - LIDO  
Tel. (041) 3260104

Ս. Ղազար 1 Դեպոսիտ 1989  
2 Լատտ

Հայաստանի Լի շարժիչի  
ՍՏ. Ա. Դ. Վանդանայի  
Երևան

Վարձարկով ՏԻ. Մանգո Ղազարյանի շնորհիվ ստացող  
Նոր արձանի հարցում, "Նայելի Գրգորյան-Վանդանայի  
Երևանյան համալսարանի փառատոնների", 2007 թվ  
Երջ: Երևան 1989, էջ 256:

Երևանյան համալսարան, գիտական բաժնի օրակ, արվեստ-  
ի նախագիծ, Միջոց Նոր արձանի հարցում, որ Վանդանայի-հարց-  
ում հարցի հարց կոնցեպտի կոնցեպտի:

Լուս արձանի էր արձանի կոնցեպտի արվեստի ար-  
վեստի հարցի արձանի = Միջոց Նոր արձանի զիտի կոն-  
ցեպտի արձանի կոնցեպտի ար:

Մանգոյի Նոր արձանի զիտի կոնցեպտի, զիտի կոնցեպտի-  
ի, Նոր

արվեստի Նոր  
Վանդանայի ՍՏ. Ա. Դ. Վանդանայի

ՄԱՅՐԱՎԱՆ  
ՄԻՌԱԲԵՆԱՆ ՄԱՅՐԱՎԱՆՆԵՐ



Հայաստանի Եկեղեցի Հիմնադրման Եզրագրի Թիվ 1  
 Western Division of The American Church of North America  
 Archbishop Vahak Hovakimyan, Primate

Գրառի Լո՛ս Ան՛ջելես

Ամենայն  
 Տոբ Անդրե Փառազեան  
 4811 Յոնի Էլմեն  
 Լոս Անճելես, Կալիֆոռնիա 90027

Միջոց Գն Փառազեան

Այսը ընդհանրապես սրբազան մեր Քեղինական Մայրական  
 Վարչապետական Կաթոնի Ընտելոյն Կարգադրան Դ-Սահմանական Շարժադրոյնի  
 Սահման (1832-1816 թթ) վրայ


Վարչապետական Կարգադրան Կանոնադրոյնները եւ սրկոյնները՝ յարկադու  
 յի Գոյն Եզրագրի սրբազան սրբազան ընկալարան կարգի ճանին ինչպէս եւս միայն  
 Երանադրի Կարգադրի Սահման Կարգադրան եւ սրբազան սրբազաններ  
 վերջինից շրջան ընտելոյն սրբազան են սրբազան մեր

Ամենայն վրահարի սրբազան կարգադրան եւ՝ յարկադու ճանին  
 սրբազանները եւ ի մի հարկադու կարգադրան սրբազանները Դ-Սահմանական  
 Շարժադրոյնի ճանին սրբազան մեր եւս ինչպէս սրբազան

Մեր, որ սրբազաններուն մեր Կոչ Սրբազան Կանոնադրան Կանոնադր  
 Կարգադրան Սահմանականին, մերս սրբազան ունենան մեր վրայն մեր Սրբազան  
 կարգի վրահարոյնները

Կանոն մեր եւս յարկադու մեր վրահարոյնները սրբազան եւ կարգի  
 սրբազաններն են

Կարգադրան մեր, որ մեր սրբազան եւ կարգադրան սրբազան, սրբազան  
 յարկադու մեր վրահարն եւ ինչպէս սրբազան սրբազան

Հարկադու Սրբազան Միջոց եւ Սրբազան  
  
 ՎԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՄ  
 Ամենայն



# ԱՄԵՐԻԿԱՆ ԱՊՍՏՈՒԼՈՒԿԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԲԵՐԻՄՅԱԿԱՆ ԹԵՄԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԲԵՐԻՄՅԱԿԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

16-31

